Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատ

ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՎՃԻՌՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ. ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԴՐԱՆՑ ԿԱՏԱՐՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐՆ ՈՒ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Երևան
«Ասողիկ» հրատարակչություն
2011թ.

Հեղինակային խումբ՝

Ա.Ղազարյան իրավաբան-փորձագետ
Ա.Զեյնալյան իրավաբան-փորձագետ
Ա.Գրիգորյան փաստաբան

The research and publication has been made possible with the support of the OSCE Office in Yerevan. The views expressed herein are those of the authors and do not necessarily reflect the views of the OSCE.

Հետազոտությունը և գրքի հրապարակումը իրականացվել է ԵԱՀԿ երևանյան գրասենյակի աջակցությամբ: Հետազոտությունում արտահայտված տեսակետները, մեկնաբանություններն ու եզրակացությունները պատկանում են հեղինակային խմբին և կարող են չհամընկնել ԵԱՀԿ-ի տեսակետներին:

ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՎՃԻՌՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ. ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԴՐԱՆՑ ԿԱՏԱՐՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐՆ ՈՒ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ/ Ա.Ղազարյան, Ա.Զեյնալյան, Ա.Գրիգորյան.- Երևան.: Ասողիկ, 2011. 208 էջ:

Հետազոտությունն ընդգրկում է Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից Հայաստանի վերաբերյալ կայացված առաջին վճռից մինչև 2010թ. դեկտեմբեր ամիսն ընկած ժամանակահատվածը: Հաշվի առնելով, որ Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի վերահսկողության վարույթը շարունակական գործընթաց է, նշված ժամանակահատվածից հետո կոնկրետ գործերով տեղի ունեցած զարգացումները հետազոտության մեջ արտահայտված չեն:

Հետազոտությունը կարող է օգտակար լինել դատավորների, փաստաբանների, դատախազների, դասախոսների, ՀՀ նախարարությունների, Մարդու իրավունքների եվրոպական դատարանում և ԵԽ-ի Նախարարների կոմիտեում Հայաստանի կառավարությունը ներկայացնող անձանց կամ մարմինների, մարդու իրավունքների պաշտպանությամբ զբաղվող հասարակական կազմակերպությունների և անձանց, ինչպես նաև միջազգային կառույցների համար:

ISBN 978-92-9235-876-1

© Հեղինակային խումբ, 2011թ.
© OSCE, 2011թ.

ԵԱՀԿ Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպություն երևանյան գրասենյակ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն.....6
Մեթոդաբանություն.....7

ԲԱԺԻՆ 1. Նախարարների կոմիտեի վերահսկողությունը Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռների կատարման նկատմամբ

1. Մարդու իրավունքների եվրոպական դատարանի որոշումների բնույթը.....9
2. Վճիռների կատարման վրա վերահսկողության բնույթը.....10
   2.1. Անհատական բնույթի միջոցներ.....13
   2.2. Ընդհանուր բնույթի միջոցներ.....16
3. Համակարգը և ընթացակարգը.....19
4. Նոր հանգամանքներով դատական ակտերի վերանայման ինստիտուտը ՀՀ-ում.....26
   4.1. Դատական ակտի վերանայում և res judicata սկզբունքը.....26
   4.2. Նոր երևան եկած հանգամանքի հիմքով դատական ակտի վերանայումը.....29
   4.3. Նոր հանգամանքի հիմքով դատական ակտի վերանայումը.....30
   4.4. Նոր հանգամանքի հիմքով դատական ակտերի վերանայման օրենսդրական գործող ընթացակարգերը.....33
5. Եվրոպական դատարանի դատական ակտերի թարգմանության և հրապարակման իրավական կարգավորումները.....41

ԲԱԺԻՆ 2. Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից Հայաստանի վերաբերյալ կայացված վճիռների կատարման դիտարկում

1. Մկրտչյանն ընդդեմ Հայաստանի.....44
2. Հարությունյանն ընդդեմ Հայաստանի.....49
3. Գալստյանն ընդդեմ Հայաստանի.....55
4. Նիկողոսյանը և Մելքոնյանն ընդդեմ Հայաստանի.....62
5. «Պայքար և հաղթանակ» ՍՊԸ-ն ընդդեմ Հայաստանի.....66
6. Սարուխանյանն ընդդեմ Հայաստանի.....73
7. «Մելտեքս» ՍՊԸ-ն և Մեսրոպ Մովսեսյանն ընդդեմ Հայաստանի.....78
8. Աշուղյանն ընդդեմ Հայաստանի.....88
9. Կիրակոսյանն ընդդեմ Հայաստանի.....91
10. Սափեյանն ընդդեմ Հայաստանի.....97
11. Մխիթարյանն ընդդեմ Հայաստանի.....100
12. Թադևոսյանն ընդդեմ Հայաստանի.....103
13. Գասպարյանն ընդդեմ Հայաստանի (1).....105

14. Ամիրյանն ընդդեմ Հայաստանի.....108
15. Գասպարյանն ընդդեմ Հայաստանի (2).....112
16. Մինասյանը և Սեմերջյանն ընդդեմ Հայաստանի.....116
17. Բայաթյանն ընդդեմ Հայաստանի.....119
18. Կարապետյանն ընդդեմ Հայաստանի.....121
19. Ստեփանյանն ընդդեմ Հայաստանի.....123
20. Խաչատրյանն ընդդեմ Հայաստանի.....126
21. Ասատրյանն ընդդեմ Հայաստանի.....129
22. Մամիկոնյանն ընդդեմ Հայաստանի.....132
23. Աշոտ Հարությունյանն ընդդեմ Հայաստանի.....134
24. Հովհաննիսյանը և Շիրոյանն ընդդեմ Հայաստանի.....136
25. Երանոսյանն ու այլոք ընդդեմ Հայաստանի.....138
Հետևություններ և առաջարկություններ.....140

ԲԱԺԻՆ 3. Հավելվածներ

Հավելված 1 Նախարարների կոմիտեի վճիռների և բարեկամական կարգավորման պայմանների կատարման վերահսկման կանոնակարգ.....145

Հավելված 2 Նախարարների կոմիտեի թիվ R (2000) 2 հանձնարարականն անդամ պետություններին «Մարդու իրավունքների եվրոպական դատարանում կայացված վճիռների հիման վրա ներպետական մակարդակով որոշակի գործեր վերաքննելու կամ վերաբացելու մասին»….....155

Հավելված 3 Նախարարների կոմիտեի Rec(2002)13 հանձնարարականն անդամ պետություններին «Անդամ պետություններում Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի տեքստի և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի հրապարակման և տարածման մասին»….....157

Հավելված 4 Նախարարների կոմիտեի Res(2004)3 բանաձևը «Համակարգային խնդիր բացահայտող վճիռների մասին».....160

Հավելված 5 Նախարարների կոմիտեի Rec(2004)4 հանձնարարական-առաջարկությունն անդամ պետություններին «Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիան համալսարանական ուսուցման և մասնագիտական պատրաստման մեջ».....162

Հավելված 6 Նախարարների կոմիտեի Rec(2004)5 հանձնարարական-
առաջարկությունն անդամ պետություններին
«Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայով
ամրագրված չափանիշների հետ օրենքի նախագծերի,
գործող օրենքների և վարչական գործելակերպի
համապատասխանության ստուգման մասին».....170

Հավելված 7 Նախարարների կոմիտեի Rec(2004)6 հանձնարարական-
առաջարկությունն անդամ պետություններին
«Իրավական պաշտպանության ներպետական
միջոցների բարելավման մասին».....179

Հավելված 8 Նախարարների կոմիտեի CM/Rec(2008)2
հանձնարարականն անդամ պետություններին «Մարդու
իրավունքների եվրոպական դատարանի վճիռների
արագ կատարման համար արդյունավետ
ներպետական միջոցների մասին».....190

**Execution of judgments of the European Court of Human Rights
by the Republic of Armenia: problems and peculiarities**
(Summary in English).....194

Ներածություն

Այս հետազոտությունն անցկացվել է ՀՀ փաստաբանների պալատի կողմից՝ Եվրոպայի անվտանգության և համագործակցության կազմակերպության երևանյան գրասենյակի աջակցությամբ իրականացվող ծրագրի շրջանակներում: Հետազոտության նպատակը Հայաստանի կողմից Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (այսուհետ՝ Եվրոպական դատարան կամ Դատարան) վճիռների կատարման վիճակի և ընթացքի դիտարկումն է և ուսումնասիրությունը, ներպետական ատյանների ակտերի վերանայման ընթացակարգերի՝ Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին Կոնվենցիային (այսուհետ՝ Կոնվենցիա) համապատասխանության ստուգումն է, Եվրոպական դատարանի դատական ակտերի կատարման օրենսդրական ու կազմակերպական խոչընդոտների հայտնաբերումը և դրանց վերացման կամ շտկման կապակցությամբ անհրաժեշտ առաջարկությունների մշակումը:

Թեև ՀՀ Սահմանադրությունը Հայաստանի իրավազորության ներքո գտնվող անձանց երաշխավորում է ավելի ընդարձակ իրավունքներ քան Կոնվենցիան, սակայն Կոնվենցիայով երաշխավորված իրավունքների հնարավոր խախտումների նկատմամբ հասարակության և պետական մարմինների զգոնությունն ավելի բարձր է, ինչը պայմանավորված է միջազգային դատարանի՝ Եվրոպական դատարանի կողմից այդպիսի խախտումների նկատմամբ վերահսկողությամբ: Միևնույն ժամանակ, Եվրոպական դատարանի վճիռները՝ որպես Կոնվենցիայի մեկնաբանություններ, ինքնին հանդիսանում են իրավունքի աղբյուր Հայաստանում: Առանձնահատուկ ուշադրության են արժանի Եվրոպական դատարանի՝ Հայաստանի մասնակցությամբ կայացված վճիռներում արտահայտած իրավական դիրքորոշումների կյանքի կոչումն ընդհանրապես և իրավունքի խախտման գոհի իրավունքների վերականգնումը մասնավորապես: Եվրոպական դատարանի վճիռների ամբողջությամբ կատարումն այն պարտադիր պայմանն է, որով Հայաստանն ապահովված կլինի իր իրավազորության ներքո գտնվող անձանց ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածով երաշխավորված՝ միջազգային դատարան դիմելու իրավունքը: Եթե վճիռները չկատարվեն կամ ամբողջությամբ չկատարվեն, ապա այդ իրավունքը կդադարի իրական իրավունք լինելուց:

Ուսումնասիրության հիմքում դրվել են մի շարք սուբյեկտիվ չափանիշներ, որոնք հնարավորություն են տվել կատարել անկողմնակալ վերլուծություն և ամփոփումների արդյունքում վեր հանել օրենսդրության մեջ և իրավակիրառ պրակտիկայում առկա առավել էական ու արդիական հիմնախնդիրները: Անհրաժեշտ է նշել, որ նոր Սահմանադրության և օրենքների գործողության պայմաններում Եվրոպական դատարանի վճիռների արդյունավետ կատարմանը նպաստող մեխանիզմները վերջնականապես մշակված չեն, իսկ առանձին դեպքերում օրենքի նորմերն ուղղակիորեն խոչընդոտում են միջազգային դատարան դիմելու անձանց սահմանադրական

և կոնվենցիոն իրավունքի իրականացումն ու մարդու իրավունքների պաշտպանությունը:

Եվրոպական դատարանի վճիռների կատարման ընթացքի մոնիթորինգ Հայաստանում անցկացվում է առաջին անգամ: Մոնիթորինգը թույլ տվեց ոչ միայն հայտնաբերել օրենսդրության թերությունները, արձանագրել իրավական նորմերի խախտումները, դրանց վերլուծության արդյունքում մշակել համապատասխան առաջարկություններ, ինչպես նաև հնարավորություն կընձեռի կանխել տարբեր վարույթների մասնակիցների նկատմամբ կիրառվող հնարավոր կամայականությունները:

Հայաստանի մասնակցությամբ գործերից մի մասով, ինչպես նաև բազմաթիվ նույնանման գործերով, որոնք Եվրոպական դատարանի կողմից մերժվել են միայն գանգատ ներկայացնելու ժամկետի բացթողնման պատճառով, ներպետական ատյաններում իրավունքի խախտումների զոհերի ներկայացուցիչներն ակտիվորեն վկայակոչել են Կոնվենցիան և Եվրոպական դատարանի լավ ձևավորված նախադեպային իրավունքը, սակայն դրանք չեն կիրառվել ու հանգեցրել են Հայաստանի կողմից Կոնվենցիայով երաշխավորված իրավունքի խախտման փաստի արձանագրման:

Հաշվի առնելով մոնիթորինգի արդյունքում բացահայտված Եվրոպական դատարանի վճիռների կատարման ոչ բավարար վիճակը՝ անհրաժեշտություն է առաջանում իրականացնել գործող օրենսդրության շարունակական կատարելագործում և վերջինիս համապատասխանեցումը Հայաստանի մասնակցությամբ միջազգային կազմակերպությունների հանձնարարականների պահանջներին, իրականացնել կրթական ծրագրեր, բացահայտել և վերացնել այն տեսանելի ու անտեսանելի պատճառները, որոնք խոչընդոտում են Եվրոպական դատարանի վճիռների լիարժեք կատարումը՝ պայմաններ ստեղծելով անձի խախտված կոնվենցիոն իրավունքների և օրինական շահերի վերականգնման համար:

Մեթոդաբանություն

Դիտարկումները կատարվել են սույն հետազոտության Բաժին 3-ում տրամադրված Նախարարների կոմիտեի յոթ հանձնարարականների հիման վրա, որոնք ամբողջությամբ կարգավորում են Եվրոպական դատարանի վճիռների կատարման ամբողջ ոլորտը: Հեղինակային խմբի խնդիրն է եղել պարզել, թե արդյոք ՀՀ-ն կատարում է նշված հանձնարարականների պահանջները, որոնք, ի դեպ, թեև իրենց բնույթով որպես իրավական փաստաթղթեր խորհրդատվական-ուղեցույցային բնույթի են, սակայն որպես քաղաքական փաստաթղթեր՝ պարտադիր են: Այդ առումով անհրաժեշտ ենք համարել Բաժին 2-ում համառոտ կերպով շարադրել յուրաքանչյուր գործի փաստերը, այնուհետև Եվրոպական դատարանի որոշումը, նկարագրել, թե Նախարարների կոմիտեում տվյալ գործով վճռի կատարման վերահսկողության վարույթը որ փուլում է գտնվում, և ինչ ընթացակարգա-

յին որոշումներ է կայացրել Նախարարների կոմիտեն մինչև այժմ: Վերջում շարադրել ենք մեր վերլուծությունը յուրաքանչյուր գործով՝ համեմատելով վճռի կատարման համար ձեռնարկված միջոցները համապատասխան հանձնարարականի պահանջների հետ:

Այդուհանդերձ, կարծում ենք, որ աշխատանքը թերի կլիներ, եթե վերլուծությունը կատարելուց հետո ձեռնպահ մնայինք կոնկրետ առաջարկություններ կատարելուց: Այդ պատճառով Բաժին 2-ը եզրափակել ենք առաջարկություններով, որոնք ուղղված են Եվրոպական դատարանի վճիռների կատարման համար ներպետական իրավական համակարգի բարելավմանը:

Որպեսզի հասկանալի լինի Նախարարների կոմիտեի վերահսկողության բնույթը և շրջանակները, որոնք հաճախ դուրս են գալիս դիմումատուների նեղ անձնական շահերի շրջանակներից, Բաժին 1-ում բերել ենք Եվրոպական դատարանի և Նախարարների կոմիտեի որոշումների բնույթի և նպատակների մասին պարզաբանումներ՝ հատկապես ուշադրություն դարձնելով այնպիսի նուրբ հարցերի վրա, ինչպիսին են վճռի կատարման համար եվրոպական մարմինների վերահսկողության և ազգային մարմինների հայեցողության շրջանակները, այս երկու բախվող ոլորտների փոխադարձ հարաբերակցությունը: Այդ խնդիրն ամբողջացնելու համար բաժնի վերջում վերլուծել ենք նաև Եվրոպական դատարանի վճիռների կատարման համար նախատեսված ՀՀ ներպետական իրավական ընթացակարգերը:

ԲԱԺԻՆ 1.

Նախարարների կոմիտեի վերահսկողությունը Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռների կատարման նկատմամբ

1. Մարդու իրավունքների եվրոպական դատարանի որոշումների բնույթը

Եվրոպական դատարանի վճիռներում արտահայտված եզրահանգումները, որպես այդպիսին, դեկլարատիվ բնույթ են կրում, սակայն Կոնվենցիայի 46-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն, պետությունները պարտավորվում են կատարել Դատարանի վերջնական վճիռները ցանկացած գործի վերաբերյալ, որոնցում նրանք կողմ են:[1] Այսինքն, Եվրոպական դատարանի վճիռները Կոնվենցիայի անդամ պետությունների համար պարտադիր են այնքանով, որքանով պետությունները են ընդունում դրանց պարտադիր բնույթը:

2002թ.-ի ապրիլի 26-ին վավերացնելով Կոնվենցիան՝ Հայաստանի Հանրապետությունը ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի ուժով ամրագրեց Կոնվենցիայի դրույթների գերակայությունը և դրանց ուղղակի կիրառությունն ազգային օրենսդրության մեջ ու իրավակիրառ պրակտիկայում, իսկ 2007թ.-ին ընդունված Դատական օրենսգրքի 15-րդ հոդվածով վերահաստատեց Եվրոպական դատարանի որոշումների պարտադիր բնույթն ազգային դատարանների համար: Հետագա զարգացումները իրավակիրառ պրակտիկայում ցույց տվեցին, որ ՀՀ դատարանները (ընդհանուր իրավասության դատարանները, վարչական դատարանները և Սահմանադրական դատարանը) հետևողականորեն ընդունում են Եվրոպական դատարանի որոշումների պարտադիր բնույթը: Մասնավորապես, 2005 թվականից ի վեր[2] ՀՀ վճռաբեկ դատարանն իր բազմաթիվ որոշումներում

---

[1] Verein GegenTierfabriken Schweiz (VgT) ընկերությունն ընդդեմ Շվեյցարիայի (2) (ՄՊ), թիվ 3277202, 30/06/2009թ. պարբ. 61:

[2] Թեև մինչ 2005 թվականն առանձին դեպքերում դատարաններն իրենց որոշումներում վկայակոչել են Կոնվենցիան կամ Եվրոպական դատարանի նախադեպային որոշումները, այդուհանդերձ, դրանք առանձին որոշումներ էին, որոնք պրակտիկայի կամ օրենսդրության վրա որևէ ազդեցություն չէին թողնում: Դրությունը փոխվեց 2005թ.-ի Սահմանադրական բարեփոխումներով, որի 92-րդ հոդվածը Վճռաբեկ դատարանին շնորհեց բարձրագույն ատյանի հատկանիշներով՝ օրենքների միատեսակ կիրառությունն ապահովելու, վերջնական, պարտադիր և նախադեպային որոշումներ կայացնելու արտակարգ լիազորություններով: Սահմանադրական այս նորմի ընդունումից կարճ ժամանակ անց, 2005թ.-ի հուլիսի 22-ին, Վճռաբեկ դատարանն ընդունեց Սալարցոցյանի գործով իր հայտնի որոշումը, որը հիմք հանդիսացավ մի ամբողջ ինստիտուտի՝ վարչական կալանքի վերացմանը թե՛ պրակտիկայում, և թե՛ օրենսդրության մեջ: Նախկինում դեռ երբեք դատական ատյանի մեկ որոշումն այդ աստիճան մեծ ազդեցություն չէր ունեցել ազգային իրավունքի զարգացման վրա: Նշված որոշումն ընդունելիս Վճռաբեկ դատարանը լայնորեն վկայակոչել է Եվրոպական դատարանի մի քանի նախադեպեր՝ դրանց տալով գերակայություն և ուղղակի կիրառություն: Այս որոշումից հետո

վկայակոչել է Եվրոպական դատարանի նախադեպերը՝ դրանց տալով գերակայություն և ապահովելով դրանց ուղղակի կիրառությունը տվյալ գործով: Նույնը կարելի է ասել նաև ՀՀ սահմանադրական դատարանի մասին: Այսպիսով, Հայաստանի Հանրապետությունը թե՛ օրենսդրությամբ և թե՛ պրակտիկայում ընդունում է Եվրոպական դատարանի որոշումների պարտադիր բնույթը:

2. Վճիռների կատարման վրա վերահսկողության բնույթը

Կոնվենցիայի 46-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն, «*դատարանի վերջնական վճիռն ուղարկվում է Նախարարների կոմիտե, որը վերահսկողություն է իրականացնում դրա կատարման նկատմամբ*»:[3] Անդամ պետությունը պարտավորություն է կրում Նախարարների կոմիտեին (այսուհետ՝ ՆԿ) պարբերաբար տեղեկացնել վճռի կատարումն իրականացնելու ուղղությամբ իր կողմից ձեռնարկվելիք միջոցների մասին: Այս կապակցությամբ Եվրոպական դատարանը նշում է, որ այդ պարտականությունը բխում է Միջազգային պայմանագրերի իրավունքի մասին Վիեննայի կոնվենցիայից[4], որի խորագրի երրորդ պարբերության և 26-րդ հոդվածի համաձայն, միջազգային պայմանագրի մասնակից պետությունները պարտավորություն են կրում պայմանագիրը կատարել բարեխղճորեն:[5] Այդուհանդերձ, դա չի նշանակում, որ վճռի կատարման հարցում ՆԿ-ն ունի վերահսկողության անսահմանափակ լիազորություն: Ինչպես բազմիցս նշվել է, ՆԿ-ի վերահսկողությունը «քայլում է ձեռք-ձեռքի տված» մասնակից պետության հետ, որտեղ մասնակից պետությունն ունի որոշակի հայեցողություն վճռի կատարման նպատակով միջոցների ընտրության հարցում: Սա բխում է Կոնվենցիայի սուբսիդիարության ընդհանուր սկզբունքից, ըստ որի Կոնվենցիայով ամրագրված իր պարտավորությունները կատարելու հարցում պատասխանող պետությունն ունի միջոցների ընտրության հարցում որոշակի ազատություն: Ավելին, միջոցների ընտրության հարցում պատասխանող պետությունն ունի առաջնահերթություն, որն հստակորեն արտահայտվում է նաև ՆԿ-ի ընթացակարգերում, բազմաթիվ կանոնակարգերում և փաստաթղթերում. նախ պատասխանող պետությունն է

Վճռաբեկ դատարանը սկսեց հետևողականորեն վկայակոչել Կոնվենցիայի դրույթները և Եվրոպական դատարանի նախադեպերն իր որոշումներում: Դա է պատճառը, որ հեղինակները գտնում են, որ հենց Սալարցոցյանի գործով սկսվեց Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի ինստիտուցիոնալ մուտքը ՀՀ ներպետական իրավունք:

[3] Նախարարների կոմիտեն Եվրոպայի խորհրդի որոշում կայացնող մարմինն է, որն իր բնույթով քաղաքական մարմին է: Այն կազմված է Կոնվենցիայի անդամ պետությունների արտաքին գործոց նախարարներից կամ դիվանագիտական կարգավիճակ ունեցող մշտական ներկայացուցիչներից: Նախարարների կոմիտեն ունի բազմաթիվ գործառույթներ, որոնցից մեկը Եվրոպական դատարանի որոշումների կատարման վերահսկողությունն է:

[4] Հայաստանի Հանրապետությունում ուժի մեջ է մտել 2005թ.-ի հունիսի 16-ին:

[5] Verein GegenTierfabriken Schweiz (VgT) ընկերությունն ընդդեմ Շվեյցարիայի (2) (ՄՊ), վկայակոչված վերևում, պարբ. 87: Այսուհետ համառոտ՝ Verein-ի գործով վճիռ:

որոշում, թե ինչպիսի միջոցներ են անհրաժեշտ կիրառել տվյալ գործով վճռի կատարման համար, իսկ ՆԿ-ն, վերահսկելով դրանց կատարումը, կարող է արտահայտել իր համաձայնությունը կամ անհամաձայնությունը միջոցի ընտրության հարցում:[6]

Սուբսիդիարության ընդհանուր սկզբունքի տեսանկյունից առանձնահատուկ կարևորություն է ձեռք բերում այն հարցը, թե արդյո՞ք ՆԿ-ն կամ Եվրոպական դատարանն իրավասու է ուղղորդել, ցուցում տալ կամ հրահանգել պատասխանող պետությանը, որը, միևնույն ժամանակ, միջազգային իրավունքի սուվերեն միավոր է, թե ինչպես պետք է կատարել վճիռը: Եվրոպական դատարանը գտնում է, որ իր վճիռներում խախտման հայտնաբերումն ըստ էության դեկլարատիվ բնույթի է, այսինքն, Դատարանը կարող է միայն արձանագրել խախտման փաստը, իսկ խախտված իրավունքը վերականգնելու նպատակով միջոցների ընտրության հարցը հիմնականում գտնվում է պատասխանող պետության իրավասության ներքո, որը, սակայն, արվում է ՆԿ-ի վերահսկողության ներքո: Հետևաբար, թեև պետությունը ենթարկվում է ՆԿ-ի վերահսկողությանը, սակայն Կոնվենցիայի 46-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված իր պարտականությունները կատարելու հարցում սկզբունքորեն ազատ է միջոցների ընտրության հարցում: Այսինքն, և՛ Եվրոպական դատարանը, և՛ ՆԿ-ն հետևողականորեն հարգում են սուբսիդիարության սկզբունքը և գտնում, որ պատասխանող պետությունը վճռի կատարման հարցում ունի հայեցողության լայն իրավունք:

Այդուհանդերձ, չնայած նշվածին, Եվրոպական դատարանը միևնույն ժամանակ գտնում է, որ որոշ առանձնահատուկ հանգամանքների դեպքում կարող է անհրաժեշտ համարել և պատասխանող պետության համար վճռում նշել, թե ինչ կոնկրետ միջոց(ներ) կարելի է կիրառել, որպեսզի տվյալ գործով վերջ տրվի այն իրավիճակին, որն առաջացնում է Կոնվենցիայի խախտում՝ պայմանով, որ նման միջոցը համահունչ լինի Եվրոպական դատարանի վճռում արված եզրահանգումների հետ: Նման մոտեցումը, թվում է, հակասում է սուբսիդիարության սկզբունքին, սակայն Եվրոպական դատարանը դա բացատրում է հետևյալ կերպ.

> *«… Ջուտ այն նպատակով, որպեսզի պատասխանող պետությանը օգնի կատարել 46-րդ հոդվածով իր պարտականությունները, Դատարանը կարող է մատնացույց անել այն միջոցը, որը պետք է կիրառվի, որպեսզի վերջ դրվի գոյություն ունեցող համակարգային իրավիճակին: Նման հանգամանքներում, այն կարող է առաջարկել բազմաթիվ տարբերակներ, իսկ միջոցների ընտրությունը և դրա կիրառությունը թողնել տվյալ պետության հայեցողությանը: … Այլ առանձնահատուկ դեպքերում արձանագրված խախտման բնույթը կարող է այնպիսին լինել, որ իրա-*

[6] Այդ մասին մանրամասնորեն խոսվում է ներքևում:

վունքը վերականգնելու համար միջոցի ընտրության հարցում Դատարանին այլընտրանք չի մնա և նման դեպքերում Դատարանը կարող է իր որոշման մեջ մատնացույց անել միայն այդ միջոցի վրա»:[7]

Այսպիսով, վճռի կատարման շրջանակները յուրաքանչյուր գործով կարող են տարբերվել. կախված իրավախախտման բնույթից՝ Եվրոպական դատարանը կարող է իր որոշման մեջ ցուցում տալ կոնկրետ միջոցի կիրառության մասին:

Վերևում նշված մեջբերման մեջ արտահայտվում է այն միտքը, որ վճռի կատարման համար կոնկրետ միջոցի վկայակոչումն արվում է պետության ներսում համակարգային խնդրին լուծում տալու նպատակով: Այս գաղափարը լավագույն կերպով բացատրվում է ՆԿ-ի Իրավական պաշտպանության ներպետական միջոցների բարելավման մասին թիվ (2004)6 հանձնարարականում:[8] Հաշվի առնելով, որ Կոնվենցիան դարձել է ԵԽ անդամ պետությունների ներպետական իրավունքի բաղկացուցիչ մասը, և որ Կոնվենցիայի 13-րդ հոդվածը պահանջում է պետություններից յուրաքանչյուրի համար ապահովել ներպետական իրավական պաշտպանության արդյունավետ մեխանիզմներ, հանձնարարականն անդամ պետություններից պահանջում է իրենց ներպետական իրավական համակարգում յուրաքանչյուրի համար, ով ունի Կոնվենցիայի խախտման առումով հիմնավոր վեճ, ապահովել իրավական պաշտպանության արդյունավետ համակարգ: Հանձնարարականը չի շեշտում, որ այդպիսի պաշտպանությունը լինի միայն դատական. կարևոր է, որ այն լինի արդյունավետ: Հանձնարարականը հետապնդում է ոչ միայն այն նպատակը, որ նման միջոցների կիրառումով վերականգնվի տվյալ անձի խախտված իրավունքը, այլ նաև, որ պետության ներսում լուծվեն այնպիսի համակարգային խնդիրներ (օրենսդրության մեջ և դատական պրակտիկայում), որոնց առկայության պատճառով չի դադարում նմանատիպ գանգատների հոսքը Եվրոպական դատարան: Այսինքն, համակարգային խնդիրների լուծումով ՆԿ-ն ցանկանում է լուծել Եվրոպական դատարանի ամենահրատապ խնդիրը՝ գերծանրաբեռնվածությունը: Այդ նպատակով առաջին հերթին անհրաժեշտ է լուծել կրկնվող գործերի խնդիրը, քանի որ դրանք կազմում են ՄԻԵԴ մուտք եղած գործերի 90 տոկոսը[9]: Իսկ կրկնվող գործերի շարժը

[7] Աբբասովն ընդդեմ Ադրբեջանի, թիվ 24271/04, 17/01/2008թ., պարբ. 37:
[8] Տե՛ս Հավելված 7:
[9] Կրկնվող (կամ այլ կերպ՝ կլոն) գործեր են համարվում բոլոր այն նմանատիպ գանգատները, որոնցում բարձրացված իրավունքի մասին հարցերն իրենց լուծումը ստացել են Եվրոպական դատարանի կողմից վաղուց հաստատված նախադեպային իրավունքում: Օրինակ՝ այդպիսին են գանգատները, որոնցում անձը գանգատվում է օրինական ուժի մեջ մտած վճռի չկատարման դեմ կամ տարիներ շարունակ ձգձգվող դատավարության անողջամիտ ժամկետների դեմ և այլն: ՆԿ մուտք եղած կրկնվող գործերի վիճակագրությունը ներկայացված է ՆԿ-ի տարեկան զեկույցի Հավելված 2-ում, էջ 44:

կարելի է կանգնեցնել, եթե պետության ներսում վերացվեն այն համակարգային խնդիրները, որոնք հարուցում են նման գործերի շարունակական հոսքը Եվրոպական դատարան: Այս նպատակով Եվրոպական դատարանը վերջին ժամանակներս սկսել է ավելի հաճախ ընդունել այսպես կոչված «պիլոտային» որոշումներ, երբ տվյալ պետության դեմ ներկայացված նույնանման գանգատների խմբաքանակից Եվրոպական դատարանն ընտրում է մեկը և կայացնում այնպիսի որոշում, որում անդրադառնում է նաև պետության ներսում՝ օրենսդրության մեջ կամ պրակտիկայում, առկա համակարգային խնդրին: Դրանով Եվրոպական դատարանն առաջարկում է լուծում և՛ տվյալ գործով, և՛ ներկայացված նմանատիպ գործերով, և՛ այն գանգատներով, որոնք թեև դեռ չեն ներկայացվել, սակայն, ամենայն հավանականությամբ, կներկայացվեն: Հանձնարարականով ՆԿ-ն պետություններից պահանջվում է, որպեսզի պիլոտային որոշում ընդունելիս պետություններն իրենց ներպետական իրավունքում ապահովեն իրավական պաշտպանության այնպիսի համակարգ, որով նման գործերով պոտենցիալ դիմողները հնարավորություն ունենան դիմել և ստանալ արդյունավետ իրավական պաշտպանություն[10]:

Այսպիսով, իր վերահսկողության շրջանակներում ՆԿ-ն նպատակ է հետապնդում, որպեսզի վերականգնվի և՛ տվյալ անձի խախտված իրավունքները, և՛ լուծվեն համակարգային խնդիրները: Այս նպատակով ՆԿ-ն պահանջում է կիրառել անհատական և ընդհանուր բնույթի միջոցներ:

2.1. Անհատական բնույթի միջոցներ

Որպես կանոն, արդարացի փոխհատուցման նվազագույն եղանակը խախտված իրավունքի ճանաչումն է: Հաճախ Եվրոպական դատարանը հենց սրանով էլ բավարարվում է՝ նշելով, որ իր վճիռը և դրանում Կոնվենցիայի խախտման ճանաչման փաստն ինքնին հանդիսանում են բավարար արդարացի փոխհատուցում դիմումատուի կրած ոչ նյութական վնասի համար[11]: Ավելի հաճախ, ելնելով խախտման բնույթից և դրա՝ դիմումատուի վրա թողած ազդեցությունից (օրինակ՝ ֆիզիկական սուր ցավ, հոգեկան տառապանք, հիասթափություն, անելանելիության և անորոշության զգացում, նվաստացում, առողջության կորուստ, հեղինակության կամ գործարար համբավի կորուստ, ընկերության կառավարման խարխլում և այլն), Եվրոպական դատարանը ոչ նյութական (բարոյական) վնասի դիմաց սահմանում է դրամական փոխհատուցում՝ նշելով, որ նման բացասական ազդեցությունների դիմաց չի կարող բավարար կերպով արդարացի փոխհատուցել սոսկ խախտման փաստի ճանաչումով[12]: Ինչ վերաբերում է

[10] Տե՛ս Հավելված 7-ում Rec(2004)6 Հանձնարարականի հավելվածի 13-րդ կետը:
[11] Արման Սկրտչյանն ընդդեմ Հայաստանի, թիվ 6562/03, 11/01/2007թ., պարբ. 49:
[12] «Մելտեքս» ՍՊԸ-ն և Մեսրոպ Մովսեսյանն ընդդեմ Հայաստանի, թիվ 32283/04, 17/06/2008թ., էջ 31, պարբ. 7:

նյութական վնասի և դատական ծախսերի ու ծախքերի դիմաց դրամական փոխհատուցմանը, ապա սա մեծապես կախված է նրանից, թե արդյոք դիմողը կարողացել է փաստաթղթերով և դրանց հիման վրա կատարված հաշվարկներով ապացուցել, որ նշված ծախսերը կատարվել են անհրաժեշտորեն, հաշվարկները՝ ողջամտորեն և առանց չափազանցության և, ամենակարևորը, որ ներկայացված նյութական վնասը կրել է Եվրոպական դատարանի կողմից արձանագրված խախտման պատճառով: Դրամական փոխհատուցման մասին հարցերը, որպես կանոն, մանրամասնորեն կարգավորվում են վճռում (վճարման չափը, ժամկետները, արտարժույթը և ուշացման դիմաց տոկոսավճարները և այլն): Դրամական փոխհատուցման նպատակը խախտված իրավունքը հնարավորինս փոխհատուցելն է:

Առավել կարևորություն ունի այնպիսի անհատական միջոցի կիրառումը, որը կնպաստի խախտված իրավունքի վերականգնմանը *restitutio in integrum* [13] սկզբունքի հիման վրա, որի բնորոշումը տրվել է Նախարարների կոմիտեի թիվ R (2000) 2 հանձնարարականում, ըստ որի, ի լրումն նշանակված արդարացի փոխհատուցման և/կամ ընդհանուր բնույթի միջոցառումների, անհրաժեշտ է կիրառել այնպիսի միջոցներ, որպեսզի տուժող կողմը հնարավորինս վերադարձվի նույն իրավիճակի մեջ, որում նա գտնվել է նախքան Կոնվենցիայի խախտումը[14]: Այս բնորոշումը համահունչ է Նիկողոսյանը և Մելքոնյանն ընդդեմ Հայաստանի գործով վճռում արված հետևյալ ձևակերպմանը.

> *«… Դատարանն անհրաժեշտ է համարում նշել, որ վճիռը, որում այն արձանագրում է Կոնվենցիայի կամ դրան կից Արձանագրությունների խախտում, պատասխանող պետության վրա իրավական պարտավորություն է դնում ոչ միայն վճարել այն գումարները, որոնք վճռվել է տրամադրել որպես արդարացի փոխհատուցում, եթե այդպիսիք առկա են, այլ նաև Նախարարների կոմիտեի վերահսկողությամբ ընտրել, թե ինչպիսի ընդհանուր և/կամ եթե կիրառելի է, մասնավոր միջոցառումներ պետք է ընդունվեն ներպետական իրավական համակարգում՝ Դատարանի կողմից արձանագրված խախտմանը վերջ դնելում և դրա հետևանքները վերացնելում ուղղված հնարավոր այնպիսի փոխհատուցում տրամադրելու համար, որոնք հնարավորինս կվերականգնեն այն իրավիճակը, որ առկա էր մինչև խախտումը»[15]:*

---

[13] Լատինական արտահայտություն է, որը նշանակում է «վերականգնել նախնական իրավիճակում»: Ընդհանուր իրավունքի համակարգից բխող սկզբունք է, որը կիրառվում էր անզգուշորեն հասցրած վնասի փոխհատուցման հիմքով դատական վարույթներում:

[14] Թիվ R (2000) 2 հանձնարարականը Մարդու իրավունքների եվրոպական դատարանում կայացված վճիռների հիման վրա ներպետական մակարդակով որոշակի գործեր վերաքննելու կամ վերաբացելու մասին: Տե՛ս Հանձնարարականի նախաբանի 5-րդ պարբերությունը:

[15] Նիկողոսյանը և Մելքոնյանն ընդդեմ Հայաստանի, թիվ 11724 և 13350/04, 8/04/2004թ., պարբ. 57:

Ուշադրություն դարձնենք, որ օգտագործվում է «հնարավորինս» եզրույթը, քանի որ որոշ դեպքերում հնարավոր չէ ամբողջությամբ վերականգնել խախտված իրավունքը, իսկ որոշ դեպքերում էլ բոլորովին հնարավոր չէ անձին վերադարձնել այն իրավիճակը, որ գոյություն ուներ մինչև նրա իրավունքի խախտումը: Օրինակ, եթե Եվրոպական դատարանն արձանագրել է ընտրվելու իրավունքի կամ հանրահավաքի իրավունքի խախտում, ապա, բնականաբար, վճռի կատարման ապահովման համար չի նշանակում, որ պատասխանող պետությունից կպահանջվի տարիներ հետո նորից կազմակերպել հանրահավաք կամ նորից կազմակերպել ընտրություններ, որպեսզի դիմումատուները ի վերջո իրացնեն իրենց այդ իրավունքները[16]: Բնականաբար, նման դեպքերում այլ միջոցներ պետք է փնտրել *restitution in integrum*-ը հնարավորինս բավարար չափով ապահովելու համար:

Խախտված իրավունքը վերականգնելու անհատական միջոցի հարցում կենտրոնական տեղ է գրավում վարույթի վերաբացման կամ գործի վերաքննության հնարավորության ապահովումն ազգային դատարանի կողմից: Թիվ R (2000) 2 հանձնարարականը նվիրված է հենց այս միջոցին՝ որպես *restitution in integrum* սկզբունքի ապահովման *«ամենաարդյունավետ, եթե ոչ միակ միջոցը»*.[17] Եվրոպական դատարանը նույնպես գտնում է, որ թեև իրավազորություն չունի իր վճռում հրահանգելու վարույթի վերաբացման մասին, սակայն, արտահայտելով իրավական դիրքորոշում, միևնույն ժամանակ գտնում է, որ *«եթե անձի դատապարտումը կատարվել է այնպիսի դատական վարույթի կիրառությամբ, որը հանգեցրել է Կոնվենցիայի 6-րդ հոդվածի պահանջների խախտմանը, ապա Դատարանը կարող է ցուցում տալ այն մասին, որ վերաքննությունը կամ գործի վերաբացումը, այդպիսի պահանջ ներկայացվելու դեպքում, սկզբունքորեն հանդիսանում է խախտումը վերականգնելու պատշաճ միջոց»*[18]: Նման ընդհանուր դիրքորոշումից ելնելով՝ Եվրոպական դատարանը կարող է արդեն ավելի կոնկրետ փաստացի հանգամանքներում սահմանել, որ, օրինակ, *«փոխհատուցման ամենապատշաճ եղանակն այն դեպքերում, երբ արձանագրվել է, որ դատական նիստն անց է կացվել դիմումատուի բացակայությամբ, այն է՝ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի խախտմամբ, որպես կանոն հանդիսանում է վարույթի պատշաճ վերաբացումը և արդար դատաքննության բոլոր պահանջների պահպանմամբ գործի վերաքննության անցկացումը»*[19]: Սակայն սա չի նշանակում, որ գործի վերաբացման կամ վերաքննության պահանջը կամ նպատակահարմարությունը պետք է

[16] Այս իմաստով, տե՛ս, օրինակ, *Մարուխանյանն ընդդեմ Հայաստանի,* թիվ 38978/03, 27/05/2008թ.: *Ամիրյանն ընդդեմ Հայաստանի,* թիվ 31553/03, 13/01/2009թ.:

[17] Հանձնարարականի նախաբանի 7-րդ պարբերություն:

[18] Verein-ի գործով վճիռը, պարբ. 89:

[19] *Նիկոռոսյանը և Մելքոնյանն ընդդեմ Հայաստանի,* վկայակոչված վերևում, պարբ. 58:

սահմանափակվի միայն այնպիսի վճիռներով, որտեղ արձանագրվել են միայն Կոնվենցիայի 6-րդ հոդվածի խախտում: Վերաբացման կամ վերաքննության հնարավորությունը պետք է տրամադրվի ցանկացած դեպքում, եթե ազգային իրավական համակարգը տրամադրում է իրավական պաշտպանության նման հնարավորություն և մեխանիզմներ, հակառակ դեպքում *restitution in integrum* սկզբունքը կսահմանափակվի անթույլատրելիության աստիճանի, որից լրջորեն կտուժի Կոնվենցիայի և Եվրոպական դատարանի արդյունավետությունը որպես իրավական պաշտպանության միջոց:

Արդեն նշվեց, որ բացի գործի վերաբացումից կամ վերաքննությունից, որոշ դեպքերում, Եվրոպական դատարանը կարող է իր վճռում հրահանգել այլ, խիստ անհատական բնույթի միջոցի կիրառում՝ ելնելով գործի առանձնահատկությունից: Օրինակ՝ Դատարանը կարող է վճռում պահանջել, որպեսզի խափանման միջոց կալանքը փոխարինվի խափանման այլ միջոցով,[20] դատապարտված կալանավորն ազատ արձակվի,[21] դիմումատուն անմիջապես կալանավայրից տեղափոխվի մասնագիտացված բժշկական հաստատություն,[22] օտարված հողատարածքը վերադարձվի դիմումատուին՝ բաց թողած եկամտի և փոխհատուցման վճարումներով,[23] ազգային դատարանում վեց ամսվա ընթացքում դատավարություն վերսկսվի[24] և այլն:

Բոլոր դեպքերում անհրաժեշտ է հիշել, որ Եվրոպական դատարանը հազվադեպ է իր վճռում մատնանշում կոնկրետ միջոցի ընտրության մասին և, հիմնականում, իր վճիռներում բավարարվում է միայն խախտման փաստի արձանագրումով, իսկ միջոցի ընտրության հարցը հիմնականում գտնվում է պետության իրավասության ներքո, որը, սակայն, վերահսկվում է ՆԿ-ի կողմից: ՆԿ-ն կարող է միջամտել միայն այն ժամանակ, երբ համոզվում է, որ պետության առաջարկած միջոցն արդյունավետ չէ կամ երբ համոզվում է, որ պետությունը միտումնավոր ձգձգում է վճռի կատարումը՝ տարբեր միջոցներով խուսանավելով կիրառել կոնկրետ և արդյունավետ միջոցներ տվյալ անձի խախտված իրավունքը վերականգնելու նպատակով: Այս դեպքում ՆԿ-ն կարող է նախաձեռնությունը վերցնել իր ձեռքը և մատնանշել կոնկրետ գործողության վրա, որն անհրաժեշտ է կատարել խախտված իրավունքը վերականգնելու համար՝ սահմանելով դրա կատարման համար վերջնաժամկետ:

2.2. Ընդհանուր բնույթի միջոցներ

[20] *Ալեքսանյանն ընդդեմ Ռուսաստանի,* թիվ 46468/06, 22/12/2008թ., պարբ. 240:
[21] *Ֆատուլլաևն ընդդեմ Ադրբեջանի,* թիվ 40984/07, 22/04/2010թ., պարբ. 176-177:
[22] *Սլավոմիրն ու Մուսիալն ընդդեմ Լեհաստանի,* թիվ 28300/06, 20/01/2009թ., պարբ. 108:
[23] *Դրիզան ընդդեմ Ալբանիայի,* թիվ 33771/02, 13/11/2007թ., պարբ. 135:
[24] *Մուջանիկն ընդդեմ Բոսնիա և Հերցոգովինայի,* թիվ 27912/02, 3/11/2009թ., պարբ. 65(i):

Ընդհանուր բնույթի միջոցների կիրառումը նպատակ է հետապնդում ներպետական օրենսդրության մեջ և պրակտիկայում լուծել այնպիսի համակարգային խնդիրներ, որոնց առկայության պայմաններում նմանատիպ գործերի հոսքը Եվրոպական դատարան չի դադարում:[25] Այլ կերպ ասած, ընդհանուր բնույթի միջոցների նպատակն է, որպեսզի տվյալ գործով բարձրացված խախտումներն այլևս չկրկնվեն տվյալ պետությունում: Որպես կանոն, ընդհանուր բնույթի միջոցներն ուղղված են կոնկրետ ոլորտներում օրենսդրական, ենթաօրենսդրական դաշտի կամ դատական պրակտիկայի բարելավմանը: Ինչպես անհատական բնույթի, այնպես էլ ընդհանուր բնույթի կոնկրետ միջոցի կիրառումը կարող է, բացառության կարգով, ընդգծվել Եվրոպական դատարանի վճռում: Սակայն, որպես կանոն, ընդհանուր միջոցի ընտրության հարցը նույնպես հիմնականում գտնվում է պատասխանող պետության իրավասության ներքո, որի իրականացումը կատարվում է ՆԿ-ի վերահսկողությամբ: Եթե ՆԿ-ն նկատում է, որ պետությունը ձգձգում է ընդհանուր միջոցի կիրառումը կամ չի ցանկանում վերացնել համակարգային խնդիրը պետության ներսում, իր նախաձեռնությամբ կարող է ընդգծել այն բարեփոխումները, որոնք պետությունը պարտավոր է իրականացնել օրենսդրական դաշտում կամ պրակտիկայում: Օրինակ՝ հաշվի առնելով, որ ԵԴ-ն նախկինում կայացրել է բազմաթիվ վճիռներ վարչական գործերով դատավարությունների երկարատև ժամկետների առումով՝ սահմանելով Կոնվենցիայի 6-րդ հոդվածի խախտում, և հաշվի առնելով, որ ԵԴ ներկայացված կրկնվող գործերի մեծ քանակը պայմանավորված է վարչական դատավարությունում համակարգային բնույթի լուրջ խնդիրներով, ՆԿ-ն Հունաստանից պահանջեց արագացնել վարչական դատավարության օրենսդրական բարեփոխումների ընթացքը և, ի հավելումն, նախատեսել այլընտրանքային այնպիսի միջոցների կիրառում, ինչպիսին է վարչական դատարաններում դատավորների և դատական ծառայողների թվի ավելացումը:[26] Մեկ այլ օրինակ. հաշվի առնելով, որ ԵԴ-ն ընդհանուր առմամբ քառասուներկու վճիռ էր կայացրել Թուրքիայի դեմ անվտանգության ուժերի կողմից քաղաքացիների ենթարկված արգելված վերաբերմունքի, գույքային իրավունքի միջամտության, կյանքի իրավունքի խախտումներով և հաշվի առնելով, որ որոշ խախտումներ ունեին համակարգային հիմնապատճառներ, ինչպես օրինակ, նշված խախտումների առումով արդյունավետ քննության բացակայությունը, որն իր հերթին պայմանավորված էր, ի թիվս այլի, նաև այն հանգամանքով, որ օրենսդրական մի շարք նորմեր արգելում էին դատախազներին քրեական հետապնդում իրականացնել պետական պաշտոնյաների նկատմամբ, ՆԿ-

[25] Սրանից էլ բխում է պիլոտային վճիռներ կայացնելու մարտավարությունը, որի նպատակն է մեկ վճռով համակարգային լուծում առաջարկել բազմաթիվ նմանատիպ գործերի համար, որոնք կամ արդեն ներկայացվել են Եվրոպական դատարան, կամ էլ ամենայն հավանականությամբ ներկայացվելու են, քանի որ տվյալ համակարգային խնդիրը պետության ներսում դեռ չի վերացել:

[26] Միջանկյալ բանաձև թիվ CM/ResDH(2007)74:

և Թուրքիայից պահանջեց առանց հապաղելու վերացնել քրեական դատավարության օրենսդրության այդ սահմանափակումները, ինչպես նաև քրեական իրավունքում սահմանել ազատազրկման հետ կապված պատժատեսակներ քաղաքացիներին խոշտանգելու կամ անմարդկային վերաբերմունքի ենթարկելու մեջ մեղադրվող պետական պաշտոնյաների համար:[27]

Ընդհանուր բնույթի միջոցը կարող է կիրառվել նաև տվյալ գործով անհատական միջոցի կիրառումն ապահովելու նպատակով: Օրինակ՝ *Հուլկի Գյունեշի*[28] գործով վճռի կատարման համար ՆԿ-ն Թուրքիայից պահանջեց վերացնել քրեական դատավարության օրենքի դրույթը, որն արգելում էր ԵԴ-ի վճռի հիման վրա գործի վերաբացման և վերանայման նպատակով վարույթ հարուցել ներպետական դատարանում:[29]

Երբեմն կարող են պահանջվել նաև խիստ առանձնահատուկ ընդհանուր միջոցների կիրառում, օրինակ՝ կալանավայրերի պայմանների բարելավում:[30]

Ինչ վերաբերում է Հայաստանին, ապա վերջինս նույնպես մի շարք գործերի կատարման ընթացքում իրականացրել է ընդհանուր բնույթի միջոցներ: Օրինակ, «*Պայքար և հաղթանակ*» ՍՊԸ-ն ընդդեմ Հայաստանի (թիվ 21638/03) վճռի կատարման ընթացքում վերացվեց ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 70-րդ հոդվածի 3-րդ մասով և «*Պետական տուրքի մասին*» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածով սահմանված դրույթը, որը սահմանում էր, որ առևտրային կազմակերպությունները չէին կարող ազատվել դատարաններում պետական տուրքի վճարումից: ԵԴ-ն դա համարել էր խտրական մոտեցում ֆիզիկական անձանց համեմատ:[31]

ՆԿ-ին այսօր առանձնապես հետաքրքրում է վճիռների կատարման համար ներպետական մակարդակով արդյունավետ մեխանիզմների առկայության մասին հարցը, հատկապես, եթե վճիռը մատնանշում է պետության ներսում համակարգային խնդիրների առկայություն: ԵԴ-ին հանգիստ չի տալիս այն միտքը, որ որքան շատ է վճիռ կայացնում, այնքան ավելանում է դիմումների թիվը[32]: Ընդ որում, բոլոր դիմումների 73 տոկոսը կազմում են կրկնվող գործերը, որոնցում Եվրոպական դատարանը ստիպված է եղել անդրադառնալ այնպիսի խնդիրների, որոնց արդեն անդրադարձել է նախկինում կայացված վճիռներում և որոնք, լինելով համակարգային

---

[27] Միջանկյալ բանաձև թիվ CM/ResDH(2002)98:

[28] Գանգատ թիվ 28490/95, 19/06/2003:

[29] Միջանկյալ բանաձև թիվ CM/ResDH(2007)150:

[30] *Կուպշինիկովն ընդդեմ Ռուսաստանի* (թիվ 47095/99) գործով վճռից հետո ՆԿ-ն թիվ (2003)123 միջանկյալ բանաձևով Ռուսաստանից պահանջեց բարելավել բոլոր կալանավայրերի պայմանները, որի հիմքով Ռուսաստանն ընդունեց հատուկ ֆեդերալ ծրագիր, որն իրականացվում է առ այսօր:

[31] Տե՛ս նշված գործով վճռի կատարման վարույթի նկարագրությունը և համապատասխան եզրակացությունը Բաժին 2-ում:

[32] Եթե 1959-1998 թվականների ընթացքում կայացրել է 837 վճիռ, ապա միայն 2009թ.-ի ընթացքում կայացրել է 1625 վճիռ:

խնդիրներ, զարկ են տալիս կրկնվող, նմանատիպ գանգատների, չեն վերացվել[33]: Սա հիմք է տալիս կարծելու, որ պետություններն առավել հակված են կիրառելու անհատական, քան թե ընդհանուր բնույթի միջոցները և որ հաճախ այնքան էլ շահագրգռված չեն վերացնելու այն համակարգային խնդիրները, որոնք զարկ են տալիս նույնանման գանգատների մեծ հոսքի Եվրոպական դատարան: Դա է պատճառը, որ 2006 թվականին ՆԿ-ն ընդունեց թիվ Rec(2004)6 հանձնարարականը վճիռների կատարման նպատակով ներպետական միջոցները զարգացնելու մասին, որում հիմնական շեշտադրումն արվում էր ներպետական իրավական պաշտպանության այնպիսի ընթացակարգեր ստեղծելու վրա, որոնց միջոցով հնարավոր կլինի վերացնել օրենսդրության մեջ կամ պրակտիկայում առկա համակարգային խնդիրները:

3. Համակարգը և ընթացակարգերը

Վերահսկողության ընթացակարգը կառավարվում է Նախարարների կոմիտեի՝ «Վճիռների և բարեկամական կարգավորման պայմանների կատարման վերահսկման» կանոնակարգով (այսուհետ՝ Կանոնակարգ)[34] և «Նախարարների կոմիտեի աշխատանքային մեթոդի մասին ուղեցույցային փաստաթղթով» (այսուհետ՝ Ուղեցույց)[35], իսկ բուն գործընթացն իրականացվում է տարեկան չորս անգամ գումարվող Մարդու իրավունքների նիստերի միջոցով (DH/HR meetings), որի ժամանակ քննարկվում է յուրաքանչյուր վճռի կատարման ընթացքը և ընդունվում համապատասխան որոշում[36]: Վճիռն ընդգրկվում է նիստերի օրակարգ դրա օրինական ուժի մեջ մտնելուց անմիջապես հետո (վճիռը մտնում է օրինական ուժի մեջ Եվրոպական դատարանի կողմից դրա հրապարակումից երեք ամիս հետո, եթե կողմերից մեկը չի բողոքարկում այն, իսկ օրակարգը հրապարակվում է յուրաքանչյուր նիստից մոտ մեկ ամիս առաջ):

Նիստերում գործերի քննությունն ուղեկցվում է հիմնականում պատասխանող պետության կողմից ներկայացված տեղեկատվության հիման վրա, սակայն Կանոնակարգի համաձայն, իրավախախտման զոհը[37] և ցանկացած այլ ֆիզիկական կամ իրավաբանական անձ[38]կարող են գրավոր հաղորդագրություն ուղարկել ՆԿ-ին պատասխանող պետության կողմից վճիռը կատարելու կամ չկատարելու վերաբերյալ իրենց նկատառում-

[33] ԵԽԽՎ փաստաթուղթ թիվ 12370, կետ 2:
[34] Տե՛ս Հավելված 1:
[35] Փաստաթուղթ թիվ CM/Inf(2004)8final կամ http://www.coe.int/t/dghl/monitoring/execution/Documents/Default_en.asp ինտերնետ կայքում: Այս փաստաթուղթն հավելվեց 2006թ.-ին ընդունված նոր՝ թիվ (CM/Inf/DH(2006)9rev3) փաստաթղթով, որի տեքստը կարելի է գտնել նշված կայքում:
[36] Կանոնակարգի 2-րդ և 3-րդ կետեր:
[37] Կանոնակարգի 9-րդ կետի 1-ին մաս:
[38] Կանոնակարգի 9-րդ կետի 2-րդ մաս:

ների մասին: Նշված հաղորդագրությունները պետք է ներկայացվեն ՆԿ-ի կառույցում գործող Մարդու իրավունքների եվրոպական դատարանի որոշումների կատարման հարցերով ստորաբաժանմանը, որն էլ պատասխանատու է ստացված հաղորդագրությունների մշակման և դրանք առաջիկա նիստի օրակարգում ընդգրկելու համար:

Այդուհանդերձ, յուրաքանչյուր գործի նախապատրաստումը նիստում քննարկելու համար իրականացվում է նախ և առաջ ՆԿ-ի Քարտուղարության կողմից: Եվրոպական դատարանից տվյալ գործը ստանալուց անմիջապես հետո Քարտուղարությունը սկսում է իրականացնել վճռի կատարման «նախնական փուլի» համար սահմանված ընթացակարգերը: Մասնավորապես, վճիռը Եվրոպական դատարանից ստանալուց անմիջապես հետո Քարտուղարությունը տվյալ գործով պատասխանող պետությանն է ուղարկում ձևաթուղթ, որը ներառում է հարցեր պետության կողմից նախատեսվող միջոցների կիրառության մասին: Լրացված ձևաթղթի հետ միասին պատասխանող պետության կառավարությունը Քարտուղարությանն է ուղարկում նաև իր կողմից առաջարկվող միջոցների կիրառության գործողությունների ծրագիր՝ ժամանակացույց[39]: Այնուհետև Քարտուղարությունը տվյալ գործն ընդգրկում է նիստերի օրակարգում, սակայն նախնական փուլի ժամանակահատվածում, որը, որպես կանոն, տևում է վեց ամիս, գործի ընդգրկումն օրակարգում արվում է զուտ տեղեկատվական, այլ ոչ թե դրա քննության նպատակով: Սա արվում է այն նպատակով, որպեսզի Քարտուղարության և պատասխանող պետության կողմից նախնական փուլն օգտագործվի քննարկումների, խորհրդակցությունների համար, որպեսզի մինչև գործի բուն քննությունը կողմերը ճշգրտեն իրենց դիրքորոշումները վճռի կատարման ուղղությամբ առաջարկվող միջոցների և դրանց կիրառության հարցերում[40]: Վճռի ընդունումից մոտ մեկ տարի անց Նախարարների կոմիտեում արդեն ձևավորվում է կարծիք, թե արդյոք տվյալ գործի կատարման վարույթը պահանջում է կարճաժամկետ, թե երկարաժամկետ միջոցների կիրառում: Այս ժամանակահատվածի վերջում նիստի պատվիրակներն արդեն պետք է քննեն, թե ինչ կոնկրետ միջոցներ կարելի է կիրառել վճռի կատարման համար[41]:

Գործերի քննությունն ընթանում է տարբեր արագությամբ: Համաձայն վիճակագրության, վճիռների կատարման վարույթները տևում են մինչև երկու տարի, երկուսից մինչև հինգ տարի կամ հինգ տարուց ավել: Մինչև երկու տարի տևում են գործերի 63%, երկու տարուց մինչև հինգ տա-

[39] Փաստաթուղթ թիվ CM/Inf/DH(2009)29rev: Այս փաստաթղթով Նախարարների կոմիտեն սահմանել է գործողությունների ծրագրի բովանդակային մասը և ծրագրին առնչվող ընթացակարգերը: Փաստաթղթի ամբողջական տեքստը հասու է նշված ինտերնետ կայքում:
[40] Ուղեցույցի կետ 2.4:
[41] Ուղեցույցի կետ 2.7:

րի՝ 22%, հինգ տարուց ավել՝ 15%[42]: Սա պայմանավորված է տարբեր պատճառներով, որից մեկը գործերի քննության առաջնակարգության համակարգն է: Գործերի քննությունը, թեև հիմնականում կատարվում է ըստ օրակարգում ընդգրկվելու հերթականության, սակայն որոշ դեպքերում ՆԿ-ն կարող է առաջնակարգություն տալ այս կամ այն գործին, եթե գտնում է, որ տվյալ գործը բարձրացնում է ներպետական համակարգային խնդիր(ներ)՝ համաձայն ՆԿ-ի թիվ Res (2004)3 հանձնարարականի պահանջների, կամ երբ իրավախախտումն անձի նկատմամբ առաջացրել է «ծանր հետևանք»[43]: Դա է պատճառը, որ ըստ իրենց բնույթի, ՆԿ-ն բոլոր գործերը բաժանում է երկու խմբերի՝ «առաջնակարգ» գործեր և «կրկնվող» կամ այլ կերպ ասած՝ «կլոն» գործեր: Առաջնակարգ են այն գործերը, որոնք, ինչպես նշվեց, բարձրացնում են համակարգային խնդիրներ ներպետական իրավական համակարգում կամ պրակտիկայում, կամ որտեղ իրավախախտումը խիստ բացասական հետևանք է առաջացրել կամ շարունակում է առաջացնել դիմումատուի համար: Կրկնվող կամ կլոն գործերի շարքին են դասվում այն վճիռները, որոնցում բարձրացված իրավունքի մասին հարցերի վերաբերյալ Եվրոպական դատարանն ունի կայուն հաստատված նախադեպային իրավունք և որոնց հիմքով Եվրոպական դատարանը կայացրել է բազմաթիվ նույնանման վճիռներ տվյալ կամ Կոնվենցիայի անդամ այլ պետության դեմ:

Գործերի քննությունն հիմնականում ընթանում է գրավոր ընթացակարգով, սակայն ՆԿ-ն կարող է որոշել որոշ գործերով, հիմնականում առաջնակարգության հերթով քննվող գործերով, հրավիրել «հավաքական բանավեճ» նիստի ընթացքում: Ուղեցույցը սահմանում է հավաքական բանավեճ անցկացնելու գործերի ընտրության օբյեկտիվ չափանիշներ, որոնք հետևյալն են.

- դիմողի իրավիճակը, որում նա հայտնվել է իրավախախտման պատճառով, պահանջում է հատուկ վերահսկողություն,
- Եվրոպական դատարանը կայացրել է այնպիսի որոշում, որով հեռացել է հաստատված նախադեպային իրավունքից,
- գործը վերհանում է համակարգային խնդիր ներպետական իրավական համակարգում, որը նման գործերի շարունակական հոսքի խթան կհանդիսանա,
- գործը Կոնվենցիայի անդամ պետությունների միջև է,

[42]Նախարարների կոմիտե: Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռների կատարման վերահսկողությունը: Երրորդ տարեկան զեկույց 2009թ.: ԵԽ 2010թ., էջ 61, ենթաբաժին C6, պարբ. 2:

[43] Տե՛ս Հավելված 4: Այդուհանդերձ, համակարգային խնդիր բարձրացնելու հիմքով տվյալ գործին առաջնակարգություն տալը չպետք է արվի ի վնաս ծանր հետևանքի հիմքով մեկ այլ գործին առաջնակարգություն տալու արտոնության:

- Քարտուղարության և պատասխանող պետության միջև առկա է տարաձայնություն կիրառվելիք միջոցների մասին,
- վճռի կատարումն իրականացվում է պետության կողմից առաջարկված գործողությունների ծրագրի և ժամանակացույցի նշանակալից ձգձգումներով,
- Քարտուղարությունը կամ պատասխանող պետությունը ներկայացրել են պահանջ հավաքական բանավեճ անցկացնելու մասին, սակայն բանավեճի անցկացումը մերժվում է, եթե մյուս պետությունների պատվիրակներն արտահայտում են մտահոգություն, իսկ Քարտուղարությունն էլ առարկում է:

Ինչպես տեսանք, վարույթի նախնական փուլում ՆԿ-ն դրսևորում է չեզոքություն՝ պատասխանող պետությունից զուտ պահանջելով ներկայացնել վճռի կատարման գործողությունների ծրագիր և դրանց կիրառության ժամանակացույց: Սակայն վարույթի հետագա փուլերում հատկապես համոզվելով, որ պետության կողմից առաջարկված միջոցների կիրառումը ձգձգվում է կամ չի կատարվում, կամ հասկանալով, որ առաջարկված գործողությունների ծրագիրն արդյունավետ միջոցներ չի կիրառում վճռի կատարման համար, ՆԿ-ն կարող է միջամտել և առաջարկել իր սեփական նկատառումները կամ կոնկրետ գործողությունները: Նման միջամտությունը կարող է դրսևորվել տարբեր ձևերով, որից մեկն արդեն նշվեց վերևում. հավաքական բանավեճ անցկացնելու առաջարկն է, եթե Քարտուղարության և պատասխանող պետության միջև առկա է տարաձայնություններ կիրառվելիք միջոցների մասին: Միջամտության այլ ձևերից կարող է հանդիսանալ նաև նախագահության կողմից պատրաստած հուշագիրը[44] կամ մամլո հաղորդագրության տարածումը[45], որի միջոցով ՆԿ-ն արտահայտում է իր մտահոգությունը պետության կողմից վճռի կատարման թերացումների վերաբերյալ և ընդգծում վճիռը կատարելու համար անհրաժեշտ ընդհանուր կամ անհատական բնույթի միջոցների մասին: Ավելի տարածված եղանակը Միջանկյալ բանաձևի ընդունումն է, որով ՆԿ-ն կատարում է կոնկրետ առաջարկություններ վճռի կատարման միջոցների վերաբերյալ: Միջանկյալ բանաձևով ՆԿ-ն, գնահատելով մինչ այդ կիրառված միջոցները, կարող է իր մտահոգությունը արտահայտել կիրառված այս կամ այն միջոցի անարդյունավետության մասին և, օգտագործելով դիվանագիտական լեզվաոճ («քաջալերել», «կոչ անել», «խնդրելով»), պատասխանող պետությունից կարող է պահանջել կիրառել արդեն իսկ իր կողմից սահմանված կոնկրետ միջոցներ, որոնք կարող են վերա-

[44] Տե՛ս, օրինակ, թիվ CMInf(2008)33 փաստաթուղթը. «Չեչնիայում Ռուսաստանի դաշնության զինված ուժերի կատարած գործողությունների մասին: Ընդհանուր միջոցները Մարդու իրավունքների եվրոպական դատարանի որոշումների կատարումն ապահովելու նպատակով»:
[45] `Տե՛ս http://www.coe.int/t/cm/adoptedTexts_en.asp#P89_8764:

բերել օրենսդրական բարեփոխումներ կատարելու[46], կալանավայրերի պայմանները բարելավելու[47], Եվրոպական դատարանի որոշման հիման վրա գործի վերաքննման համար օրենսդրական խոչընդոտների վերացման[48], Եվրոպական դատարանի կողմից սահմանված դրամական փոխհատուցման վճարման (անկախ դրա չափից և բյուջետային միջոցների առկայությունից)[49], տասնչորս տարի ձգձգվող սնանկացման գործերով դատական վարույթներն ավարտելու[50] մասին պահանջներին և այլն: Ընդ որում, ՆԿ-ն սահմանում է կոնկրետ վերջնաժամկետ նշված պահանջները կատարելու համար՝ նշելով, թե հաջորդ անգամ որ նիստում է անդրադառնալու բանաձևի պահանջների կատարման հարցին: Երբ ՆԿ-ն համոզվում է, որ պետությունն ամբողջությամբ կատարել է Եվրոպական դատարանի վճիռը, ընդունում է բանաձև[51]: Նման բանաձևի ընդունումով վճռի կատարման վարույթը համարվում է ավարտված:

Նախարարների կոմիտեն պարբերաբար վերանայում է վերահսկողության իր ընթացակարգերը՝ դրանք շարունակ բարելավելով և, միաժամանակ, մի կողմից ընդարձակելով վերահսկողության իր շրջանակները, իսկ մյուս կողմից ապահովելով ընթացակարգերի և փաստաթղթերի ավելի լայն թափանցիկություն: Օրինակ՝ մինչև 2000 թվականը վերահսկողութ-

---

[46] Տե՛ս, օրինակ, *Ռյաբիխի* և *Վոլկովայի* գործերով թիվ DH(2006) միջանկյալ բանաձևը Ռուսաստանի վերաբերյալ *«Ռուսաստանի Դաշնության քաղաքացիական դատավարությունում հսկողական կարգով վերանայման ընթացակարգի հետևանքով իրավական որոշակիության սկզբունքի խախտումների վերաբերյալ ձեռնարկված ընդհանուր բնույթի միջոցների և առանձին հարցերի մասին»*, որով ՆԿ-ն, փաստորեն, իր անբավարարությունը հայտնեց մինչ այդ Ռուսաստանի Դաշնության կողմից իրականացված օրենսդրական բարեփոխումների վերաբերյալ, որով թեև նկատելիորեն նեղացվել էին հսկողական վարույթի շրջանակներում գանգատ ներկայացնող սուբյեկտների շրջանակները և այդպիսով նկատելիորեն բարելավվել *res judicata* սկզբունքի ապահովումը քաղաքացիական դատավարությունում, այդուհանդերձ, ՆԿ-ն նկատեց, որ դեռևս պահպանվել էին այնպիսի նեղ դատավարական հնարավորություններ, որոնք դեռևս կասկածների տեղիք էին տալիս առ այն, «թե արդյոք հսկողական վարույթը արդյունավետ կերպով կանխում է Կոնվենցիայով երաշխավորված իրավական որաշակիության պահանջի նոր խախտումները»: Այնուհետև, Բանաձևի երկրորդ մասում ՆԿ-ն արդեն շարադրեց կոնկրետ դատավարական բարեփոխումներ, որոնք նա Ռուսաստանի իշխանություններին «քաջալերում» էր իրականացնել: Իսկ Բանաձևի վերջում սահմանեց կոնկրետ ժամկետային սահմանափակում, որի ընթացքում անհրաժեշտ էր իրականացնել նշված միջոցառումները:

[47] Միջանկյալ բանաձև թիվ CM/ResDH(2010)35 Ռուսաստանի դեմ կայացված 31 վճիռներով:

[48] Միջանկյալ բանաձև թիվ CM/ResDH(2007)26 Թուրքիայի դեմ Հուկի Գյունեշի գործով կայացված վճռի կապակցությամբ:

[49] Միջանկյալ բանաձև թիվ CM/ResDH(96)251:

[50] Միջանկյալ բանաձև թիվ CM/ResDH(2007)27:

[51] Հայաստանի առնչությամբ ՆԿ-ն մինչև այժմ ընդունել է մեկ նման բանաձև՝ Արմեն Սկրտչյանի գործով (տե՛ս փաստաթուղթ CM/ResDH(2008)2), որով ՆԿ-ն հայտարարեց, որ «Ժողովներ, հանրահավաքներ, երթեր և ցույցեր անցկացնելու մասին» ՀՀ օրենքի ընդունումով ՀՀ-ն վերջնականապես կատարել է Եվրոպական դատարանի վճիռը, քանի որ իրավախախտման բնույթը կայանում էր նրանում, որ դիմողի՝ հանրահավաքների իրավունքների միջամտությունը չէր կատարվել օրենքով սահմանված կարգով, քանի որ տվյալ ժամանակահատվածում նման օրենք չկար:

յան ընթացակարգերը գաղտնի էին, սակայն Թիվ 11 արձանագրությունը, ուժի մեջ մտնելով, արգելվեց վճռի վերաբերյալ ըստ էության կարծիք հայտնելու ՆԿ-ի լիազորությունը, սակայն մյուս կողմից ՆԿ-ն ստացավ վճռի կատարման վերահսկողության հիմնական և առաջնային լիազորություն: Դա հանգեցրեց նրան, որ ընթացակարգերը և փաստաթղթերի մատչելիությունը դարձան նշանակալիորեն թափանցիկ: 2010 թվականի հունիսի 1-ից, երբ ուժի մեջ մտավ Թիվ 14-րդ արձանագրությունը, ՆԿ-ն ստացավ երկու նոր, արտակարգ լիազորություններ, ըստ որոնց՝ առաջինն, եթե ՆԿ-ն գտնում է, որ վերջնական վճռի կատարման վերահսկումը խոչընդոտվում է վճռի մեկնաբանման խնդրով պայմանավորված, վերջինս կարող է դիմում ներկայացնել Եվրոպական դատարան վճիռը մեկնաբանելու խնդրանքով: Երկրորդ, եթե ՆԿ-ն գտնում է, որ պետությունը հրաժարվում է կատարել Եվրոպական դատարանի վճիռը, այն կարող է դիմել Եվրոպական դատարան, որպեսզի վերջինս որոշում կայացնի, որ պետությունը հրաժարվում է կատարել Եվրոպական դատարանի վճիռը[52]: Ի հավելումն, ՆԿ-ն ստացավ ևս մեկ լիազորություն, ըստ որի ՆԿ-ն իրավունք ստացավ վերահսկել նաև բարեկամական կարգավորման (հաշտության) վերաբերյալ Եվրոպական դատարանի որոշման կատարումը: ՆԿ-ի հետագա բարելավումները վերաբերում են վերահսկողության վարույթը մանրամասնությամբ կարգավորող աշխատանքային փաստաթղթերի ընդունմանը, ինչպես օրինակ Կանոնակարգը և Ուղեցույցը, որոնց մասին արդեն նշվեց:

Իր ընթացակարգերը բարելավելու նպատակով ՆԿ-ն 2000 թվականից ի վեր ընդունել է անդամ պետություններին հասցեագրված յոթ հանձնարարական[53] և Եվրոպական դատարանին հասցեագրված երեք բա-

---

[52] Եվրոպական կոնվենցիայի Թիվ 14 արձանագրության 16-րդ հոդվածը, որով փոփոխության ենթարկվեց Կոնվենցիայի 46-րդ հոդվածը:

[53] Հավելված 2. R (2000) 2 հանձնարարականն անդամ պետություններին «Մարդու իրավունքների եվրոպական դատարանում կայացված վճիռների հիման վրա ներպետական մակարդակով որոշակի գործեր վերաքննելու կամ վերաբացելու մասին»:

Հավելված 3. Rec(2002)13 հանձնարարականն անդամ պետություններին «Անդամ պետությունների Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի տեքստի և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպերի հրապարակման և տարածման մասին»:

Հավելված 5. Rec(2004)4 հանձնարարական-առաջարկությունը անդամ պետություններին «Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիան համալսարանական ուսուցման և մասնագիտական պատրաստման մեջ»:

Հավելված 6. Rec(2004)5 հանձնարարական-առաջարկությունը անդամ պետություններին «Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայով ամրագրված չափանիշների հետ օրենքի նախագծերի, գործող օրենքների և վարչական գործելակերպի համապատասխանության ստուգման մասին»:

Հավելված 7. Rec(2004)6 հանձնարարական-առաջարկությունը անդամ պետություններին «Իրավական պաշտպանության ներպետական միջոցների բարելավման մասին»:

Հավելված 8. CM/Rec(2008)2 հանձնարարականն անդամ պետություններին «Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռների արագ կատարման համար արդյունավետ ներպետական միջոցների մասին»:

Թիվ Rec(2010)3 հանձնարարականն անդամ պետություններին «Երկարատև դատական վարույթների նկատմամբ արդյունավետ իրավական պաշտպանության միջոցների մասին»:

նաձև[54], որոնք բոլորն էլ կարգավորում են վճիռների կատարման առանձին ոլորտներ: Այս ամենին զուգահեռ ՆԿ-ն շարունակ կատարելագործում է վերահսկողության ամբողջ վարույթի թափանցիկությունը՝ ապահովելով ընթացակարգերի և փաստաթղթերի ավելի ու ավելի լայն հրապարակայնություն: ՆԿ-ի ինտերնետ կայքում բացված է առանձին էջ վճիռների կատարման վերահսկողության մասին, որտեղ հանրության համար հասանելի են բոլոր նիստերի օրակարգերը, ՆԿ-ի աշխատանքային փաստաթղթերը (օրինակ՝ Կանոնակարգը և Ուղեցույցը), կայացրած որոշումները (միջանկյալ և վերջնական բանաձևերը), Կանոնակարգի 9.1 և 9.2 կետերի հիմքով դիմումատուի և ցանկացած իրավաբանական կամ ֆիզիկական անձի ներկայացրած պնդումները և փաստաթղթերը,[55] պետության կողմից ներկայացված պնդումները և փաստաթղթերը, ՆԿ-ի տարեկան հաշվետվությունները, վիճակագրական բազմաթիվ տվյալներ և այլն:

ԵԴ վճիռների կատարման գործընթացին աջակցում է նաև ԵԽ Խորհրդարանական Վեհաժողովը (ԵԽԽՎ): Վերջինս 2011թ.-ի հունվարի 26-ին ընդունել է Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռների կատարման մասին թիվ 1787 բանաձևը՝ նշելով, որ թեև վճիռների կատարման վերահսկողությունը հիմնականում ՆԿ-ի իրավասության ոլորտն է, սակայն ԵԽԽՎ-ն այսուհետ պետք է առավել ակտիվ դերակատարում ունենա այդ գործընթացում: Նման նախաձեռնության պատճառը, ըստ ԵԽԽՎ-ի, այն հանգամանքն է, որ եթե դա չարվի, ապա Կոնվենցիայի հիմնական դերը, դրա վերահսկողական մեխանիզմները և Եվրոպայի խորհրդի գոյությունն ամբողջությամբ կվտանգվեն: Բանաձևում անդրադարձներ են եղել մի շարք համակարգային խնդիրների, որոնք, չնայած ԵԴ բազմաթիվ վճիռների, իրենց լուծումը չեն գտել ազգային համակարգերում, և կրկնվող գործերի հոսքն այդպիսով չի դադարել: Մասնավորապես, նշվել է դատավարությունների երկար ժամկետների պրակտիկան Իտալիայում, ներպետական վճիռների չկատարման համատարած պրակտիկան Ռուսաստանում և Ուկրաինայում, կալանավայրերում իրավապահ մարմինների կողմից արգելված վերաբերմունքի շարունակվող պրակտիկան Ռուսաստանում և Մոլդովայում, անօրինական ու երկարատև ժամկետներով կալանքների պրակտիկան Մոլդովայում, Լեհաստանում, Ռուսաստանում և Ուկրաինայում:[56] Անդրադարձ է եղել նաև Հայաստանին այն համատեքստում, որ վճիռները չկատարելու խնդիր նկատվում է նաև

[54] Թիվ Res(2002)58 բանաձևը «Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպերի հրապարակման և տարածման մասին»:
Թիվ Res(2002)59 բանաձևը «Բարեկամական կարգավորման պրակտիկայի մասին»:
Հավելված 4. Res(2004)3 բանաձևը «Համակարգային խնդիր բացահայտող վճիռների մասին»:

[55] Օրինակ, Մելտեքս ընկերության ներկայացուցիչների՝ Կանոնակարգի 9.1 կետի համաձայն ուղարկած երկու հաղորդագրությունները և կից փաստաթղթերը տեղադրված են ՆԿ-ի ինտերնետ կայքում և յուրաքանչյուր ոք կարող է դրանց ծանոթանալ:

[56] Տե՛ս ԵԽԽՎ թիվ 1787 (2011) բանաձևը, կետ 5.1-5.4:

Ալբանիայի, Հայաստանի, Ադրբեջանի, Բոսնիայի, Վրաստանի և Սերբիայի կողմից և որ այդ խնդրի լուծմանը նույնպես պետք է առաջնակարգություն տրվի:[57] Բանաճնի համար հիմք է հանդիսացել ԵԽԽՎ թիվ 12455 փաստաթուղթը՝ Իրավական և մարդու իրավունքների հարցերով կոմիտեի զեկույցը, որն ընդունվել է ԵԽԽՎ-ի 2011թ.-ի հունվարի 26-ի նիստում: Այս փաստաթղթում, որն ավելի ընդարձակ է, Հայաստանի առնչությամբ հղում է արվում երկու համակարգային խնդիրների վրա, որոնք իրենց լուծումը չեն ստանում ԵԴ վճիռներով. կալանավայրերի պայմանների բարելավումը և խոսքի ազատության ոլորտը: Առաջինի կապակցությամբ վկայակոչվել է վարչական կալանքների մասին վճիռների շարքից Լավրենտի Կիրակոսյանի գործով վճիռը, իսկ երկրորդի կապակցությամբ՝ Մելտեքսի (հանրությանը ավելի շատ հայտնի Ա1+ հեռուստաընկերության) գործով վճիռը:

Թիվ 1787 բանաճնի հիման վրա նույն օրն ընդունվել է նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռների կատարման մասին թիվ 1955 հանձնարարականը՝ ուղղված ՆԿ-ին, որում, ի թիվս այլ հանձնարարականների, ՆԿ-ին հրահանգվել է ԵԴ վճիռների կատարման նկատմամբ շարունակական և կոպիտ արհամարհանք դրսևորելու դեպքում գործի դնել Եվրոպայի խորհրդի կանոնակարգի 8-րդ հոդվածով սահմանված ընթացակարգը՝ պետության անդամակցության կասեցումը կամ անդամակցությունից հեռացնելը:

4. Նոր հանգամանքներով դատական ակտերի վերանայման ինստիտուտը ՀՀ-ում

4.1. Դատական ակտի վերանայում և *res judicata* սկզբունքը

ՆԿ վերահսկողության մեխանիզմները պահանջում են Եվրոպական դատարանի վճիռների հիման վրա որոշ դեպքերում վերանայել ազգային դատարանի օրինական ուժի մեջ մտած վճիռները: Նման պահանջն ինքնին բախվում է *res judicata* (դատական ակտերի վերջնական լինելու) սկզբունքի հետ, որը իրավական որոշակիության հիմնարար սկզբունքի բաղկացուցիչ տարր է: Արդյո՞ք նման պահանջը չի հակասում ՀՀ սահմանադրությանը:

Հայաստանի ժողովուրդը Հայաստանի Հանրապետությունը հռչակել է որպես իրավական պետություն (ՀՀ Սահմանադրություն՝ 1-ին հոդված): Իրավական պետության հիմնարար արժեքները, իրավունքի գերակայության սկզբունքները[58] բնութագրող կարևորագույն դրույթներն ամփոփված են ՀՀ Սահմանադրության 3, 6, 43-րդ հոդվածներում.

[57] Տե՛ս ԵԽԽՎ թիվ 1787 (2011) բանաճնը, կետ 4:

[58] Տես՝ ՀՀ սահմանադրական դատարանի 2000 թվականի դեկտեմբերի 26-ի «1949 թվականի մայիսի 5-ին Լոնդոնում ստորագրված՝ Եվրոպայի խորհրդի կանոնադրության մեջ ամրագր-

- Մարդը, նրա արժանապատվությունը, հիմնական իրավունքները և ազատությունները բարձրագույն արժեքներ են:
- Պետությունն ապահովում է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանությունը՝ միջազգային իրավունքի սկզբունքներին ու նորմերին համապատասխան:
- Պետությունը սահմանափակված է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներով և ազատություններով՝ որպես անմիջականորեն գործող իրավունք:
- Օրենքները պետք է համապատասխանեն Սահմանադրությանը: Այլ իրավական ակտերը պետք է համապատասխանեն Սահմանադրությանը և օրենքներին:
- Օրենքներն ուժի մեջ են մտնում պաշտոնական հրապարակվելուց հետո և այլն[59]:

Այս դրույթներն իրենց փոխկապվածության մեջ երաշխավորում են իրավունքի գերակայությունը և հստակ բնորոշում մարդու իրավունքների տեղն ու դերը սահմանադրահիրավական հարաբերություններում[60]:

Իրավունքի գերակայության բաղադրատարրերից է իրավական որոշակիության սկզբունքը[61]: Համաձայն իրավական որոշակիության սկզբունքի, յուրաքանչյուր իրավական ակտ, այդ թվում՝ դատական ակտ, իրավունքի աղբյուր է հանդիսանում այն դեպքում, երբ որոշակի է, արդյունավետ կերպով կարգավորում է իրավահարաբերությունները և բովանդակում է իրավական կարգավորման իրավաչափ միջոցներ: ՀՀ սահմանադրական դատարանն իրավական ակտի «որոշակիության», «մատչելիության» իրավական չափորոշիչների նորմատիվ բովանդակության ապահովումը գնա-

---

ված պարտավորությունների՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործով» ՍԴՈ-271 որոշումը:

[59] Տես՝ ՀՀ սահմանադրական դատարանի 2007 թվականի հունվարի 16-ի «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» ՀՀ օրենքի 12 հոդվածի երկրորդ նախադասությունում ամրագրված նորմի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործով» ՍԴՈ-673 որոշումը:

[60] Տես՝ ՀՀ սահմանադրական դատարանի 2006 թվականի ապրիլի 18-ի «Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքի 218 հոդվածի, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 104, 106 և 108 հոդվածների, Հայաստանի Հանրապետության Կառավարության կողմից 2002 թվականի օգոստոսի 1-ին ընդունված՝ «Երևանի կենտրոն թաղային համայնքի վարչական սահմանում կառուցապատման ծրագրերի իրականացման միջոցառումների մասին» թիվ 1151-ն որոշման՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 31 հոդվածին համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործով» ՍԴՈ-630 որոշումը:

[61] Տես՝ ՀՀ սահմանադրական դատարանի 2008 թվականի նոյեմբերի 25-ի «Քաղաքացի Արամ Շմավոնյանի դիմումի հիման վրա՝ ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 2-րդ հոդվածի, «Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 26-րդ հոդվածի 5-րդ մասի, «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածի 2-րդ մասի, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 115-րդ հոդվածի և 118-րդ հոդվածի 1-ին մասի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործով» ՍԴՈ-780 որոշումը:

հատել է որպես իրավական ակտի միասնական ըմբռնման, հետևաբար՝ հասարակական հարաբերությունների արդյունավետ կարգավորման առաջնահերթ երաշխիք[62]: Ռուսաստանի իրավագիտության վառ ներկայացուցիչներից մեկը՝ Պակլոնսկին, իր «Քաղաքացիական իրավունքի հիմնական խնդիրները» գրքում այսպիսի գնահատական է տվել իրավական որոշակիության սկզբունքին. *«տրամաբանորեն, իրավական նորմերի որոշակիության իրավունքը մարդ արարածի ամենաանօտարելի իրավունքներից մեկն է, որը կարելի է միայն երևակայել. առանց դրա, ըստ էության, ոչ մի «իրավունքի» մասին ընդհանրապես խոսք լինել չի կարող»:*

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը մի շարք վճիռներում ձևակերպել է իրավական որոշակիության սկզբունքը (Ռյաբիխին ընդդեմ Ռուսաստանի (գանգատ № 52854/99) 24.06.2003թ. վճիռ, Բրումարեսկուն ընդդեմ Ռումինիայի (գանգատ № 28342/95) 28.10.1999թ. վճիռ և այլն):

Եվրոպական դատարանն իրավական որոշակիության սկզբունքի բովանդակության մեջ ներառել է հետևյալ դրույթները.

- դատարանի կողմից «վերջնական», այսինքն՝ օրինական ուժի մեջ մտած դատական ակտերը վերաձայման ենթակա չեն,
- անընդունելի է դատարանի կողմից մեկ անգամ արդեն քննված գործերի կրկին քննությունը,
- կողմերից և ոչ մեկը չի կարող պահանջել «վերջնական», այսինքն՝ օրինական ուժի մեջ մտած դատական ակտի վերաձայում՝ գործի կրկնակի դատաքննության անցկացման և նոր որոշում ստանալու նպատակով,
- «վերջնական» դատական ակտի վերաձայումն իրավական որոշակիության սկզբունքից նահանջ չէ, եթե այն իրականացվում է դատական սխալի, սխալ արդարադատության շտկման նպատակով,
- վերաձայումը չի կարող լինել քողարկված գանգատարկում, իսկ գործի նկատմամբ կողմերի հակասական տեսակետներն ինքնըստինքյան հիմք չեն «վերջնական» դատական ակտի վերաձայման համար,
- անթույլատրելի է պետական պաշտոնատար անձի դիմումի հիման վրա վերադաս դատարանի կողմից կողմերի համար պարտադիր դարձած դատական ակտի վերաձայումը՝ քաղաքացիական գործերով,

[62] Տես՝ ՀՀ սահմանադրական դատարանի 2007 թվականի ապրիլի 11-ի «ՀՀ գլխավոր դատախազի, Քաղաքացի Տ. Սահակյանի և ՀՀ տարածքային կառավարման նախարարության Հայաստանի փրկարար ծառայության դիմումների հիման վրա՝ ՀՀ Քրեական դատավարության օրենսգրքի 414.1. հոդվածի 2-րդ մասի, 414.2. հոդվածի 1-ին մասի 1-ին և 3-րդ կետերի դրույթների՝ ՀՀ սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործով» ՍԴՈ-691 որոշումը:

- քաղաքացիական գործերով «վերջնական» դատական ակտի վերանայումը, երբ այն թույլատրելի է, պետք է սահմանափակված լինի որոշակի ժամանակահատվածով,

Res judicata սկզբունքը («Դատարանը կրկին չի որոշի արդեն որոշված գործը») ամրագրված է նաև Հայաստանի քրեական և քաղաքացիական արդարադատության վերաբերյալ օրենսդրության մեջ: ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 14-րդ հոդվածի համաձայն՝ օրինական ուժի մեջ մտած դատական ակտը պարտադիր է բոլոր պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, դրանց պաշտոնատար անձանց, իրավաբանական և ֆիզիկական անձանց համար ու ենթակա է կատարման ՀՀ ամբողջ տարածքում: Սա նշանակում է, որ օրենսդիրը բացառում է նույն հիմքով, նույն առարկայի շուրջ, նույն անձանց միջև օրինական ուժ ստացած դատական ակտի առկայության պայմաններում նույն պահանջով կրկին դատաքննության իրականացումը և նոր դատական ակտի ընդունումը: Ընդ որում, դատական ակտի կայունության նշված պահանջի ապահովումն իր հետագա ամրապնդումն է ստացել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 91-րդ և 109-րդ հոդվածներում:

Նշված սկզբունքն իր ամբողջական և տրամաբանական դրսևորումն է գտել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 407-րդ հոդվածի 4-րդ մասում, որի համաձայն՝ բողոքը թողնվում է առանց քննության այն դեպքում, երբ Վճռաբեկ դատարանն այդ բողոքում **նշված հիմքով նույն գործով** արդեն իսկ որոշում է կայացրել:

Այսպիսով, res judicata սկզբունքը բացարձակ չէ: Օրինական ուժի մեջ մտած դատական ակտերը կարող են ենթարկվել վերանայման՝ օրենսդրորեն կարգավորված որոշակի պայմանների առկայության դեպքում:

4.2. Նոր երևան եկած հանգամանքի հիմքով դատական ակտի վերանայումը

Նոր երևան եկած հանգամանքի հիմքով դատական ակտերի վերանայման ինստիտուտը Հայաստանի իրավական համակարգում գործել է վաղուց: Այդ ինստիտուտը եղել է թե՛ ՀԽՍՀ քրեական դատավարության 07.03.1961թ. օրենսգրքում (գլուխ 34-րդ), ՀԽՍՀ Քաղաքացիական դատավարության 04.06.1964թ. օրենսգրքում (գլուխ 37-րդ), թե՛ ՀՀ քրեական դատավարության 13.12.1995թ. օրենսգրքում (գլուխ 34-րդ), և թե՛ ներկայիս գործող դատավարական օրենսգրքում:

2004 թվականի փետրվարի 18-ին «Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» (2004թ. մարտի 15, ՀՕ-39-Ն) ՀՀ օրենքով Հայաստանի իրավական համակարգում ներդրվեց դատական ակտերի վերանայման նոր (գոյություն ունեցող «նոր երևան եկած հանգամանքից» տարբերվող) ինստիտուտ՝ նոր հանգամանքներով վճիռների և որոշումների

վերաանայման ինստիտուտը: Այս ինստիտուտն իր ձևակերպումը ստացավ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի հինգերորդ[1] բաժնում: Այս ինստիտուտի ներմուծմամբ պետք է իրագործելի դառնար Կոնվենցիայի 46-րդ հոդվածով ստանձնած պարտավորությունը: Համաձայն Քաղաքացիական դատավարական օրենսգրքի 241[1]-րդ հոդվածի.

> *«1. Նոր հանգամանքներով վճիռների և որոշումների վերանայման համար հիմք են՝*
> *1) Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի՝ ուժի մեջ մտած որոշումը, որով ամբողջությամբ կամ մի մասով հակասահմանադրական է ճանաչվել այն օրենքը կամ իրավական այլ ակտը, որը կիրառել է դատարանը.*
> *2) Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ գործող միջազգային դատարանի՝ ուժի մեջ մտած վճիռը կամ որոշումը, որով հիմնավորվել է անձի՝ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրով նախատեսված իրավունքի (իրավունքների) խախտման հանգամանքը»:*

Օրենսդիրը, որոշակի պահանջների առկայության պայմաններում օրինական ուժ ստացած դատական ակտի կայունությունն ապահովելու նպատակով նույնանման պահանջով կրկին գործի դատական քննության իրականացումն ուղղակիորեն պայմանավորել է արդեն իսկ օրինական ուժ ստացած դատական ակտի վերանայմամբ: Ընդ որում, այնպիսի վավերապայմանների առկայությամբ, երբ՝

ա. առկա է գործին մասնակից չդարձած անձի պահանջ (ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 205-րդ հոդվածի 2-րդ մաս).

բ. առկա է նոր երևան եկած հանգամանք, որը կարող է իրավական հնարավորություն տալ օրինական ուժի մեջ մտած դատական ակտը վերանայել նոր երևան եկած հանգամանքներով (ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 204.32-րդ, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426.3-րդ հոդվածներում ամրագրված դեպքերում).

գ. առկա է նոր հանգամանք, որը կարող է հիմք հանդիսանալ նոր հանգամանքներով օրինական ուժի մեջ մտած դատական ակտը վերանայելու համար (ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 204.20-րդ, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426.4-րդ հոդվածների ուժով):

4.3. Նոր հանգամանքի հիմքով դատական ակտի վերանայումը

Հայաստանի իրավական համակարգում համեմատաբար նոր ինստիտուտ է օրինական ուժի մեջ մտած դատական ակտերի վերանայումը «նոր հանգամանքի» հիմքով: Իրավական համակարգ այն ներմուծվել է «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության

օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ 18.02.2004թ. ՀՕ-39-Ն և «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 18.01.2005թ. ՀՕ-57-Ն օրենքներով: Դատավարական օրենսգրքում իրավական այդ ինստիտուտը, դրա ներդրումից ի վեր, չորս անգամ ենթարկվել է փոփոխությունների, որից երկուսը՝ հիմնովին. ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում՝ 15.03.2007թ. ՀՕ-98-Ն, 20.12.2007թ. ՀՕ-277-Ն, 29.12.2008թ. ՀՕ-233-Ն, 20.05.2010թ. ՀՕ-94-Ն ՀՀ օրենքներով, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում 20.06.2006թ. ՀՕ-91-Ն, 18.12.2007թ. ՀՕ-270-Ն, 29.12.2008թ. ՀՕ-237-Ն, 14.06.2010թ. ՀՕ-96-Ն ՀՀ օրենքներով:

Նոր հանգամանքի հիմքով դատական ակտերի վերանայումը կարգավորող նորմերի դրույթներն առնվազն չորս գործով դարձել են սահմանադրահրավական վեճի կամ Սահմանադրական դատարանի իրավական գնահատականի առարկա: Մասնավորապես՝ ՀՀ սահմանադրական դատարանն իր՝ 11.05.2007թ. ՍԴՈ-701, 09.09.2008թ. ՍԴՈ-758, 23.02.2010թ. ՍԴՈ-866, 14.10.2008թ. ՍԴՈ-767, 13.10.2009թ. ՍԴՈ-833 որոշումներում իրավական գնահատականներ է տվել նոր հանգամանքի ինստիտուտի իրավակարգավորող նորմերի դրույթներին կամ դրանք ճանաչել է ՀՀ Սահմանադրությանը հակասող և անվավեր:

Հայաստանում որպես «նոր հանգամանք» էր (դրա ներդրման պահին) դիտարկվում.

1) ՀՀ սահմանադրական դատարանի՝ ուժի մեջ մտած որոշումը, որով ամբողջությամբ կամ մի մասով հակասահմանադրական է ճանաչվել այն օրենքը կամ իրավական այլ ակտը, որը կիրառել է դատարանը.

2) ՀՀ մասնակցությամբ գործող միջազգային դատարանի՝ ուժի մեջ մտած վճիռը կամ որոշումը, որով հիմնավորվել է անձի՝ ՀՀ միջազգային պայմանագրով նախատեսված իրավունքի (իրավունքների) խախտման հանգամանքը:

Պարզունակ ձևակերպված՝ սահմանվեց երկու «նոր հանգամանք»՝ հակասահմանադրական նորմը և Կոնվենցիայով երաշխավորված իրավունքի խախտումը: Առաջինը կարող էր տեղի ունենալ ՀՀ սահմանադրական դատարանի կողմից իրավական ակտն ամբողջությամբ կամ դրա մի մասի հակասահմանադրական ճանաչելուց հետո՝ դրանց անվավեր դառնալու դեպքում, իսկ երկրորդը՝ անհատական գանգատի հիման վրա Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կայացրած վճիռն ուժի մեջ մտնելու դեպքում (որով ճանաչվել է իրավունքի խախտման փաստը): Փաստորեն, նոր հանգամանքը ճանաչվեց գործոն, որի առկայության պարագայում կարելի է «խախտել» իրավական կայունության տարր հանդիսացող դատական ակտերի կայունությունը: Միևնույն ժամանակ հավասարակշռությունն ապահովվեց ժամկետի սահմանումով՝ ուժի մեջ մտած դատական ակտերի վերանայման պահանջ ներկայացնելու համար, այն է՝

համապատասխան հանգամանքներն առաջանալու օրվանից եռամսյա ժամկետ:

«Երկու նոր հանգամանքները» դատական ակտերի վերանայման իրավակարգավորումը սահմանող այլ տարբերություն չունեն, բացի դրանց ծագման աղբյուրի տարբերությունից[63]: Ուստի դատողություններ կատարելիս կհենվենք ՀՀ սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումների վրա, որոնք իրենց արձանագրումն են ստացել սահմանադրական դատարանի կողմից նորմի հակասահմանադրական և անվավեր ճանաչելու արդյունքում դատական ակտերի վերանայման իրավական ինստիտուտի դրույթների սահմանադրականությունը որոշելու գործերով կայացված որոշումներում:

Միջազգային դատարան դիմելու իրավունքի երաշխիքը ՀՀ Սահմանադրության մեջ սահմանված է 18-րդ հոդվածով, իսկ Կոնվենցիայում՝ 34-րդ հոդվածով.

> *«Յուրաքանչյուր ոք, Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերին համապատասխան, իրավունք ունի իր իրավունքների ու ազատությունների պաշտպանության խնդրով դիմելու մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության միջազգային մարմիններին:»*

և

> *«Դատարանը կարող է գանգատներ ընդունել ցանկացած անձից, հասարակական կազմակերպությունից կամ անձանց խմբից, որոնք պնդում են, թե դարձել են սույն Կոնվենցիայով կամ նրան կից Արձանագրություններով ճանաչված իրենց իրավունքների՝ որևէ Բարձր պայմանավորվող կողմի թույլ տված խախտման զոհ: Բարձր պայմանավորվող կողմերը պարտավորվում են որևէ կերպ չխոչընդոտել այդ իրավունքի արդյունավետ իրականացմանը:»*

Դատավարական օրենքները պետք է երաշխավորեն ու ապահովեն Սահմանադրությամբ և Կոնվենցիայով երաշխավորված միջազգային դատարան դիմելու Հայաստանի իրավազորության ներքո գտնվող մարդու իրավունքը:

Այս պահին գործող իրավակարգավորման համաձայն նոր հանգամանքներով առաջին ատյանի դատարանի դատական ակտը վերանայելու

---

[63] Տե՛ս Վարդան Խաչատրյանի՝ 19.05.2009թ. ՀՀ սահմանադրական դատարանին ուղղված ՀՀ Քրեական դատավարության օրենսգրքի 426^2-րդ հոդվածի 2-րդ մասի և 426^4-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի ՀՀ Սահմանադրության 22, 18, 19-րդ կամ 1-ին, 3, 6, 43-րդ հոդվածներին հակասող և անվավեր ճանաչելու վերաբերյալ դիմումի փաստարկներն ու եզրահանգումները:

լիազորություն ունի Վերաքննիչ դատարանը, իսկ Վերաքննիչ և Վճռաբեկ դատարանների դատական ակտերը՝ Վճռաբեկ դատարանը (Քաղ. դատ. օր. հ. 204.30 և Քր. դատ. օր. հ. 426.1):

Նոր հանգամանքներով դատական ակտի վերանայման բողոք ներկայացնելու իրավունք է վերապահված գործին մասնակցող անձանց և նրանց իրավահաջորդներին և այն անձանց, ովքեր Հայաստանի մասնակցությամբ գործող միջազգային դատարանի կողմից համապատասխան դատական ակտի կայացման պահին ունեցել են միջազգային պայմանագրի պահանջներին (ժամկետներին) համապատասխան միջազգային դատարան դիմելու իրավունք (Քաղ. դատ. օր. հ. 204.31 և Քր. դատ. օր. հ. 426.2), ինչպես նաև՝ գլխավոր դատախազը և նրա տեղակալները՝ քրեական գործերով:

Այս նորմերով ընդլայնված է անձանց շրջանակը, ովքեր պոտենցիալ հնարավորություն ունեն դիմել դատարան՝ իրենց նկատմամբ ուժի մեջ մտած դատական ակտերը վերանայելու պահանջով: Վերանայման պահանջով դատարան կարող են դիմել նաև այն անձինք, ովքեր չեն հասցրել կամ չեն դիմել միջազգային դատարան, տվյալ դեպքում՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարան, սակայն նրանք դարձել են Կոնվենցիայով երաշխավորված իրավունքի խախտման այնպիսի զոհ, ինչպիսին որ եղել է Մարդու իրավունքների եվրոպական դատարանում Հայաստանի դեմ գործը շահած այլ անձը: Այս սկզբունքը Հայաստանի իրավական համակարգ ներմուծվել է ՀՀ սահմանադրական դատարանի 13.10.2009թ. ՍԴՈ-833 որոշմամբ: Եվրոպական դատարանի վճիռների հիման վրա նոր հանգամանքով դատական ակտերը վերանայելու պահանջ ներկայացնելու իրավունք ունեցող անձանց շրջանակն ընդլայնելը կոմպենսացնում է Եվրոպական դատարանի կողմից քննված գործերի թվի ցածր ցուցանիշը, ինչն ունակ է արագ տեմպերով զարգացնել ներպետական իրավունքը և արագացնել ՀՀ Սահմանադրության նախաբանում ու 1-ին հոդվածում արձանագրված նոր նպատակներին հասնելը:

4.4. Նոր հանգամանքի հիմքով դատական ակտերի վերանայման օրենսդրական գործող ընթացակարգերը

Նոր հանգամանքներով դատական ակտի վերանայման բողոք բերելու ժամկետը սահմանափակված է. այն կարող է բերվել 3 ամսվա ընթացքում այն պահից, երբ բողոք բերող անձն իմացել է կամ կարող էր իմանալ դրանց ի հայտ գալու մասին: Եռամսյա ժամկետի հաշվարկը սկսվում է Հայաստանի մասնակցությամբ գործող միջազգային դատարանի՝ ուժի մեջ մտած վճիռը կամ որոշումն այդ դատարանի կանոնակարգերով սահմանած կարգով այդ դատարան դիմած անձին հանձնելու օրվանից (Քաղ. դատ. օր. հ. 204.34 և Քր. դատ. օր. հ. 426.4): Ի տարբերություն քրեական գործերի՝ քաղաքացիական գործերով այս ժամկետը բոլոր դեպքերում սահմանափակված է նաև քսան տարով:

Այս դրույթներով սահմանափակված ժամկետը վերաբերում է միայն միջազգային դատարան դիմած անձին, սակայն, ինչպես նշվեց, դատական ակտը վերանայելու պահանջով դատարան դիմելու իրավունք ունեցող անձանց շրջանակն ավելի ընդգրկուն է, իսկ քրեական գործերով՝ դրանց թվում են նաև գլխավոր դատախազը և նրա տեղակալները, որոնց միջազգային դատարանը չի ուղարկում իր դատական ակտի օրինակ: Ուստի, սահմանափակող ժամկետի հաշվարկի սկիզբը սահմանելու իրավակարգավորումը լրացուցիչ հստակեցման և ընդլայնման կարիք ունի: Բացի դրանից, միջազգային դատարանի դատական ակտը, որպես կանոն, կայացվում է ոչ հայերենով, իսկ դատավարական օրենքներով սահմանված է, որ փաստաթղթերը դատարաններ պետք է ներկայացվեն հայերեն պատշաճ թարգմանությամբ: Միջազգային դատարանի դատական ակտի թարգմանության պարտականությունը դիմող սուբյեկտի վրա թողնելը անհամաչափ ծանրաբեռնվածություն կդնի անձի վրա, ինչը միջազգային դատարան դիմելու իրավունքը կիմաստազրկի և կզրկի անձին դատարանի մատչելիության իրավունքից: Միևնույն ժամանակ, Կոնվենցիայի 46-րդ հոդվածով սահմանված պետության պարտավորությունների մեջ է մտնում ՄԻԵԴ դատական ակտերի մայրենի լեզվով թարգմանությունն ու հրապարակումը (տես՝ Նախարարների կոմիտեի «Կոնվենցիայի և Դատարանի դատական նախադեպի հրապարակման և տարածման մասին» թիվ Rec(2002)13 հանձնարարականը), հետևաբար առկա է այս խնդրի կարգավորման իրավական բաց:

Քրեական գործերով նոր հանգամանքի հիմքով վերանայման դիմում ներկայացվելու ընդհանուր սահմանափակման բացակայությունը, մեր կարծիքով, պայմանավորված է քրեական իրավունքում գործող սկզբունքով, համաձայն որի՝ այն դատական ակտի վերանայումը, որով մեղադրական դատավճիռ է կայացված այնպիսի հանգամանքներ ի հայտ գալու հետևանքով, որոնք ցույց են տալիս դատապարտյալի անմեղությունը կամ նրա կողմից ավելի թեթև հանցանք կատարելը, քան այն, որի համար նա դատապարտվել է, ժամկետներով սահմանափակված չէ, և որ նույնիսկ դատապարտյալի մահը արգելք չէ նոր երևան եկած հանգամանքների հետևանքով դատական ակտը վերանայելու համար՝ դատապարտյալի կամ այլ անձանց իրավունքների վերականգնման նպատակով (Քր. դատ. օր. հ. 426.3):

Այս սկզբունքներն ամրագրված են քրեական գործերով դատական ակտերը «նոր երևան եկած հանգամանքներով» վերանայելու դատավարական ընթացակարգերում, սակայն տեղ չեն գտել «նոր հանգամանքների» համապատասխան ընթացակարգում, ինչն ըստ մեզ խախտում է միջազգայնորեն ընդունված վերոգրյալ սկզբունքները:

Վերանայման պահանջի մասին դատարաններ ուղղված անձանց բողոքը, ի թիվս այլոց, պետք է համապատասխանի դատավարական օրենքով նախատեսված վավերապայմաններին կամ ձևական պահանջներին՝ լինի գրավոր, պետք է պարունակի այն դատարանի անվանումը, որին բո-

ղոքը հասցեագրվում է, վերաձայման ենթակա դատական ակտի կայացման տարին, ամիսը, ամսաթիվը, դատական ակտի վերաձայման համար հիմք դարձած նոր հանգամանքի շարադրանքը, բողոքով ներկայացվող պահանջը՝ ըստ համապատասխան նոր հանգամանքի, բողոք ներկայացրած անձի անունը, ազգանունը (անվանումը), բողոքին կցվող փաստաթղթերի ցանկը:

Այս վավերապայմանների մեջ ուշագրավ է այն, որ բողոքի պահանջը պետք է համապատասխանի՝ բխի նոր հանգամանքից: Սա նշանակում է, որ նոր հանգամանքով դատական ակտը վերաձայելու դիմումի (բողոքի) առարկան՝ պահանջը, հավանական է, որ տարբերվի օրինական ուժի մեջ մտած դատական ակտի համար հիմք հանդիսացած դիմումի (հայցի, բողոքի) առարկայից՝ պահանջից: Այս հանգամանքը պայմանավորված է թե՛ ՄԻԵԴ, թե՛ Սահմանադրական դատարանի կողմից գործն ի պաշտոնե քննելու լիազորություններով: Բացի դրանից, Կոնվենցիայով երաշխավորված իրավունքի խախտման փաստի ճանաչումն առաջին հերթին պետության պարտավորությունն է, ուստի և ՄԻԵԴ-ի կողմից իրավունքի խախտման փաստի ճանաչումն առնվազն ենթադրում է վերաձայման բողոքում՝ Կոնվենցիայով երաշխավորված իրավունքի խախտման փաստի ճանաչման պահանջ և դրանից ածանցվող այլ պահանջներ:

Վերոգրյալ սկզբունքը տեղ չի գտել Քրեական դատավարության օրենսգրքում, ինչն ըստ մեզ, չի ապահովում միջազգային դատարանների և Սահմանադրական դատարանի դատական ակտերի կատարման պետության երաշխավորված պարտականությունը:

Քրեական դատավարության կարգով ներկայացված վերաձայման պահանջի մասին բողոքը պետք է, ի տարբերություն քաղաքացիական դատավարության կարգով ներկայացրածի, պարունակի բողոք ներկայացրած անձի պաշտոնը, ապացույց այն մասին, որ բողոքի պատճենը, նոր հանգամանքը հաստատող նյութերի պատճենների հետ պատշաճորեն ուղարկվել են դատավարության մասնակիցներին (բացառությամբ քննիչի և հետաքննության մարմնի):

Դիմումին ներկայացվող թվարկված ձևական պահանջների և վավերապայմանների առկայության դեպքում դատարանը՝ քաղաքացիական գործերով ոչ ուշ քան եռօրյա ժամկետում, որոշում է կայացնում դատական ակտի վերաձայման վարույթ հարուցելու մասին (Քաղ. դատ. օր. հ. 204.37, մ. 1): Բացի դրանից, օրենքը սպառիչ կերպով թվարկել է այն նախապայմանները, որոնց առկայության դեպքում դատական ակտի վերաձայման վերաբերյալ բողոքը կարող է մերժվել: Դրանք են՝ բողոքում նշված դատական ակտը չի կայացրել այն դատարանը, որին հասցեագրվել է բողոքը, բողոքը ներկայացվել է դրա համար օրենսգրքով նախատեսված ժամկետի խախտմամբ, և բողոք ներկայացրած անձը միջնորդություն չի ներկայացրել դա վերականգնելու մասին, դատական ակտը վերաձայելու համար հիմք դարձած նոր հանգամանքը հաստատող ապացույց չի ներկայացվել, և դատարանը լրացուցիչ պարզել է, որ այդպիսի հանգամանք չկա: Վերջին

նախապայմանը դատարանի կողմից ապահովելը հնարավոր է միայն, եթե պետությունը պաշտոնապես հրապարակի միջազգային դատարանի դատական ակտի պաշտոնական թարգմանությունը:

Քրեական դատավարությունում, ի տարբերություն քաղաքացիականի, դատարանը դատական ակտի վերանայման վարույթ հարուցելու կամ մերժելու մասին որոշում կայացնում է տասնօրյա ժամկետում (Քր. դատ. օր. հ. 426.8, մ. 3): Այլ էական տարբերություններ այս երկու վարույթները չունեն:

Դատարանը դատական ակտի վերանայման վարույթ հարուցելուց հետո լիազորված է դատական ակտ կայացնել դատավարական օրենսգրքերով նախատեսված ընդհանուր կարգով: Իսկ ընդհանուր կարգը, ի թիվս այլոց, ենթադրում է, որ դատարանն իրավասու է մերժել բողոքը՝ դատական ակտը թողնելով օրինական ուժի մեջ (Քաղ. դատ. օր. հ. 221, մ. 1, հ. 240, մ. 1 և Քր. դատ. օր. հ. 394, մ. 1, հ. 419, մ. 1):

Վերը բերված իրավակարգավորումը հնարավորություն է տալիս դատարաններին դատական ակտի վերանայման արդյունքում ուժի մեջ թողնել նախորդ դատական ակտը, իսկ բողոքը՝ մերժել:

Խոսքը հավասարապես վերաբերում է այնպիսի դատական ակտերին, որոնցով կիրառվել են հակասահմանադրական ու անվավեր ճանաչված օրենքների կամ իրավական այլ ակտերի դրույթներ և դատական ակտեր, որոնցով սպառվել են իրավական պաշտպանության ներպետական միջոցները, և հնարավոր չի եղել վերականգնել դիմողի՝ Կոնվենցիայով երաշխավորված իրավունքի խախտումը, երբ դատարանները չեն արձանագրել Կոնվենցիայի խախտում:

Սկզբունքորեն նույն իրավական կարգավորման վերաբերյալ իրավական դիրքորոշումներ է արտահայտել ՀՀ սահմանադրական դատարանն իր՝ 15.04.2008թ. ՍԴՈ-751, 09.09.2008թ. ՍԴՈ-758, 23.02.2010թ. ՍԴՈ-866 որոշումներում, ըստ որոնց.

> *««9. ... Սահմանադրական դատարանը գտնում է, որ Սահմանադրության 101 հոդվածի 6-րդ կետով երաշխավորված՝ սահմանադրական դատարան դիմելու անձի իրավունքի արդյունավետ իրացումը պահանջում է սահմանադրական դատարանի որոշման հիման վրա դատական ակտերի վերանայման այնպիսի լիարժեք օրենսդրական կարգավորում, որը հնարավորություն կտա անձին վերականգնելու սահմանադրական դատարանի կողմից Սահմանադրությանը հակասող ճանաչված նորմատիվ ակտի կիրառման արդյունքում խախտված իր սահմանադրական իրավունքը: Դա նաև «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68 հոդվածի 7-րդ մասի պահանջն է, քանի որ նորմատիվ ակտերի սահմանադրականությունը գնահատելիս պետք է հաշվի առնվեն նաև մարդու և քաղաքացու՝ Սահմանադրությամբ ամրագրված իրավունքների ու ազատությունների ապահովման*

և պաշտպանության ազատ իրականացման անհրաժեշտությունը, դրանց սահմանափակումների թույլատրելիությունը, Սահմանադրության անմիջական գործողության ապահովման անհրաժեշտությունը: Ուստի սահմանադրական դատարանը գտնում է, որ նոր հանգամանքների հիման վրա դատական ակտի վերանայման հետ կապված իրավահարաբերությունների օրենսդրական կարգավորման նպատակը պետք է լինի ինչպես արդարադատության մատչելիությունը, այնպես էլ անձանց սահմանադրական իրավունքների դատական պաշտպանության արդյունավետության ապահովումը, որոնց օրենսդրորեն հստակեցնելը կմեծացնի վստահությունն արդարադատության նկատմամբ, մարդկանց հնարավորություն կտա առավել երաշխավորված ու արդյունավետ իրացնել դատական պաշտպանության իրենց սահմանադրական իրավունքը:

Հետևաբար, օրենսդիրը պարտավոր է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 3.2 բաժնում սահմանել նոր հանգամանքների հիման վրա դատական ակտերի վերանայման այնպիսի հստակ իրավակարգավորում, որը կերաշխավորի անձի՝ Սահմանադրության 101 հոդվածի 6-րդ կետով ամրագրված՝ սահմանադրական դատարան դիմելու իրավունքի, ինչպես նաև Սահմանադրության 19 հոդվածում ամրագրված իրավունքների արդյունավետ իրացման հնարավորությունը ...:

«12. ... Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին Եվրոպական կոնվենցիայի 46 հոդվածն ամրագրում է պայմանավորվող կողմերի՝ Եվրոպական դատարանի վճիռները կատարելու պարտավորությունը: Ի կատարումն Եվրոպական դատարանի վճիռների՝ պայմանավորվող պետություններից, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետությունից, պահանջվում է, ի թիվս այլոց, ձեռնարկել անհատական բնույթի միջոցառումներ: Վերջիններիս խնդիրն է վերացնել ժամանակի մեջ շարունակվող իրավախախտումը և այդ իրավախախտման հետևանքները՝ մինչև կոնվենցիոն իրավունքի խախտումը գոյություն ունեցած վիճակը հնարավորինս վերականգնելու նպատակով (restitutio in integrum): Անհատական բնույթի միջոցառումները, որպես կանոն, ներառում են Եվրոպական դատարանի վճռի հիման վրա ներպետական դատական ակտերի վերանայումը: Ի կատարումն Եվրոպական դատարանի վճռի՝ նման անհատական բնույթի միջոցառումն անխուսափելի է լինում բոլոր այն դեպքերում, երբ կոնվենցիոն իրավունքի խախտման պատճառը ներպետական դատական վարույթի ընթացքում դատավարական նորմերի խախտումն է:

.....

Սահմանադրական դատարանն այս կապակցությամբ հարկ է համարում վկայակոչել նաև Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի 19.01.2000թ. Նախարարների ներկայացուցիչների 694 նստաշրջանում ընդունված «Մարդու իրավունքների եվրոպական դատարանի որոշումների հիման վրա ներպետական մակարդակով գործերի վերանայման և վարույթի նորոգման մասին» N R (2000) 2 հանձնարարականը: Վերջինս, մասնավորապես, ամրագրում է. «Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեն ... նկատի ունենալով, որ Դատարանի վճիռների կատարման նկատմամբ վերահսկողություն իրականացնելում ուղղված Նախարարների կոմիտեի պրակտիկան ցույց է տալիս, որ որոշակի հանգամանքներում գործերի վերանայումը կամ վարույթի նորոգումը հանդիսանում է ամենաարդյունավետ, եթե ոչ միակ միջոցը restitutio in integrum-ի հասնելու համար....»:

« ... նոր հանգամանքներով դատական ակտի վերանայման արդյունքում նախորդ դատական ակտն ուժի մեջ թողնելու դատարանի լիազորության օրենսդրական կարգավորման դեպքում պետք է հաշվի առնվի, որ օրենքի դրույթը Սահմանադրությանը հակասող և անվավեր ճանաչելու մասին սահմանադրական դատարանի որոշման առկայության պարագայում նոր հանգամանքների հիմքով վերանայվող դատական ակտը բոլոր դեպքերում ուժի մեջ մնալ չի կարող, քանի որ այդ ակտով կիրառվել է հակասահմանադրական իրավանորմ, հետևաբար, այդպիսի իրավակարգավորման բացակայությամբ էլ հիմնավորվել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի վերոհիշյալ հոդվածի հակասությունը ՀՀ Սահմանադրությանը: Իսկ Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ գործող միջազգային դատարանի՝ ուժի մեջ մտած վճռի կամ որոշման հիմքով (մասնավորապես՝ ՄԻԵԴ-ի) դատական ակտերը նոր հանգամանքներով վերանայելու իրավակարգավորման սահմանադրականության խնդրում սահմանադրական դատարանը գտել էր, որ այդ ակտերն ուժի մեջ թողնելու հարցը լուծելիս ՀՀ համապատասխան դատարանը հիմք է ընդունում այդ դատարանի վճռով (որոշմամբ) մարդու իրավունքների խախտման փաստը հաստատված կամ չհաստատված համարվելու իրողությունը»:

ՄԻԵԴ վճիռների կատարումն ապահովելու կոչված նորմի՝ որպես այդպիսին հանդիսանալու հարցը լուծելիս պետք է պատասխանել հետևյալ հարցին. օրենսգրքի թվարկված պահանջների պահպանման և պայմանականությունների համընկնման պարագայում, արդյո՞ք ուժի մեջ թողնված դատական ակտի գոյությամբ պետությունն ապահովում է անձի

իրավունքի խախտման փաստի ճանաչումը և/կամ խախտված իրավունքների վերականգնումը:

Այս հարցին պատասխանելիս սկզբունքային նշանակություն է ստանում այն հանգամանքը, որ Մարդու իրավունքների եվրոպական դատարանն իր վճիռներում բազմիցս կրկնել է, որ Կոնվենցիայով սահմանված պաշտպանության մեխանիզմն օժանդակ է մարդու իրավունքների պաշտպանության ներպետական համակարգերի առնչությամբ (տես, inter alia, Հենդիսայդն ընդդեմ Միացյալ Թագավորության 1976թ. դեկտեմբերի 7-ի վճիռը, Շարքեր Ա, թիվ 24, էջ 22, կետ 48 և Աքսոյն ընդդեմ Թուրքիայի 1996թ. դեկտեմբերի 18-ի վճիռը, Վճիռների և որոշումների ժողովածուներ, 1996-VI, էջեր 2275, 2276, կետ 51):

Գործող իրավակարգավորումը հնարավորություն է ստեղծում չկատարել ՄԻԵԴ վճիռը, չճանաչել Կոնվենցիայով երաշխավորված իրավունքի խախտման փաստը, իսկ իրավունքի խախտման փաստի ճանաչում հնարավոր է միայն դատական ակտի բեկանելու և նոր հանգամանքին համապատասխան ներկայացված պահանջով բողոքի բավարարման դեպքում:

Նախարարների կոմիտեի 19.01.2000թ. Նախարարների ներկայացուցիչների 694 նստաշրջանում ընդունված «Մարդու իրավունքների եվրոպական դատարանի որոշումների հիման վրա ներպետական մակարդակով գործերի վերանայման և վարույթի նորոգման մասին» թիվ R(2000) 2 հանձնարարականում նշվում է, որ ՄԻԵԴ վճիռը կատարելու պարտականությունը կարող է հանգեցնել այնպիսի միջոցառումների կատարման, որոնք տարբերվում են Կոնվենցիայի 41-րդ հոդվածով սահմանված՝ Դատարանի կողմից տրամադրված արդարացի փոխհատուցումից: Հանձնարարականը բոլոր մասնակից պետություններին կոչ է անում.

> *«...երաշխավորել ազգային մակարդակով «restitution in integrum» հնարավորինս ապահովելու համար անհրաժեշտ համարժեք հնարավորությունների առկայությունը»,*
> *«վերլուծել իրենց ազգային իրավական համակարգերը՝ նպատակ հետապնդելով երաշխավորել գործի վերաքննության համար անհրաժեշտ համարժեք հնարավորությունների գոյությունն այն դեպքերի համար, երբ Դատարանը հայտնաբերել է Կոնվենցիայի խախտում, հատկապես երբ.*
>
> *(i) Տուժող կողմը շարունակում է համապատասխան ներպետական որոշման ելքի պատճառով կրել շատ ծանր բացասական հետևանքներ, որոնք համարժեքորեն չեն շտկվում արդարացի հատուցման տրամադրմամբ և չեն կարող շտկվել, բացառությամբ գործի վերաքննության կամ վերաբացման միջոցով,*
> *և*
> *(ii) Դատարանի վճիռը հանգեցնում է այն եզրակացության, որ.*

ա) վիճարկվող ներպետական որոշումն ըստ էության հակասում է Կոնվենցիային,

բ) հայտնաբերած խախտումը հիմնված է այնպիսի ծանրության դատավարական սխալների կամ թերությունների վրա, որ լուրջ կասկածի տակ է հայտնվում բողոքի առարկա ներպետական վարույթի ելքը»:

Ուշագրավ է Նախարարների կոմիտեի թիվ R(2000) 2 հանձնարարականի «Հանձնարարականին կից պարզաբանող գրության» «Հանձնարարականի անգուցային դրույթների մեկնաբանության» 10-րդ կետը, որտեղ ասված է.

«10. Կոնվենցիայի շրջանակներում ստեղծված մարմինների փորձը ցույց է տալիս, որ գործերի վերանայումը, այդ թվում՝ ներպետական մակարդակում գործի վարույթի նորոգումը, առանձնահատուկ կարևորություն ունի քրեական իրավունքում: Սակայն Հանձնարարականը չի սահմանափակվում բացառապես քրեական իրավունքով: Դրա գործողության ոլորտում է գտնվում I և II ենթակետերում շարադրված չափանիշներին բավարարող ցանկացած տեսակի գործ: Լրացուցիչ չափանիշների ներմուծման նպատակն այն բացառիկ դեպքերի որոշումն է, երբ անձի իրավունքների պաշտպանությունը և Դատարանի որոշումների կատարումը գերակայում են res judicata տեսության հիմքում ընկած հատկապես իրավական որոշակիության սկզբունքի նկատմամբ՝ ընդսմին չնվազեցնելով նշված սկզբունքների կարևորությունը»:

«Restitutio in integrum» սկզբունքի կիրառման անհրաժեշտության մասին նշվում է նաև ԵԽ Նախարարների կոմիտեի՝ Եվրոպական դատարանի վճիռների կատարումը վերահսկելու նպատակով ընդունած Կանոնակարգի 3(b) Կանոնի երրորդ պարբերությունում, համաձայն որի.

«վճռի կատարումը վերահսկելիս, համաձայն Կոնվենցիայի 46-րդ հոդվածի 1-ի պարբերության, Նախարարների կոմիտեն պետք է քննության առնի, թե արդյո՞ք.

- *կիրառվել են անհատական բնույթի միջոցառումներ խախտումը դադարեցնելու նպատակով, ինչպես նաև, որպեսզի տուժողը դրվի հնարավորինս նույն իրավիճակում, ինչ գտնվել էր մինչև Կոնվենցիայի խախտման պահը»:*

Իրավակարգավորող դրույթի գոյության պարագայում, ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածով երաշխավորված անձի իրավունքը, որով «Յուրաքանչյուր ոք, Հայաստանի Հանրապետության միջազգային պայ-

մանագրերին համապատասխան, իրավունք ունի իր իրավունքների ու ազատությունների պաշտպանության խնդրով դիմելու մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության միջազգային մարմիններին», իմաստազրկվում է, քանզի անձի իրավունքը շարունակում է խախտված մնալ, այնպես ինչպես խախտված էր մինչև իր այդ իրավունքով Մարդու իրավունքների եվրոպական դատարան դիմելը և դրա կողմից իր իրավունքի խախտման փաստի ճանաչումը: ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածով և 101-րդ հոդվածի 6-րդ կետով սահմանված Մարդու իրավունքների եվրոպական դատարանի և ՀՀ սահմանադրական դատարան դիմելու իրավունքները կլինեն տեսական կամ երևակայական (թվացյալ, իլիուզիոն), եթե այդ դատարանների կայացրած դատական ակտերից հետո չդադարեցվեն իրավունքի խախտման զոհի իրավունքների խախտումը (ընդհանուր միջոցներն ուղղված են ապագային, ուստի շոշափելի չեն զոհի համար) և չվերացվեն այդ խախտման հետևանքներն այնպես, որ հնարավորինս վերականգնվի մինչև իրավունքի խախտումը գոյություն ունեցած վիճակը: Իհարկե, կան իրավունքներ, որոնց խախտման դեպքում մինչև իրավունքի խախտումը եղած դրության վերականգնումը գործնականում անհնար է (կյանքի իրավունքի խախտման, հրապարակային միջոցառումն արգելելու գործերով և այլն) կամ դրանց վերականգնումը կհանգեցնի անհամեմատ մեծ վնասների, կխաթարի պետության իրավական անվտանգությունը ու կայունությունը (համապետական ընտրությունների գործերով և այլն): Սակայն, իրավունքի խախտման փաստի ճանաչումը և իրավունքին միջամըտած ակտերը ուժի մեջ թողնելը, որոնց ոչ իրավաչափ լինելը (տվյալ դեպքում՝ Կոնվենցիայով սահմանված օրինականության պահանջին չբավարարելը) հաստատվել է Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճռով, չի կարող բավարարել ՀՀ Սահմանադրության 18-րդ և 19-րդ հոդվածների պահանջներին՝ ՀՀ Սահմանադրության 1-ին հոդվածի լույսի ներքո և Կոնվենցիայի 34-րդ հոդվածների պահանջներին՝ Կոնվենցիայի 1-ին հոդվածի լույսի ներքո:

5. Եվրոպական դատական ակտերի թարգմանության և հրապարակման իրավական կարգավորումները

Անհրաժեշտ ենք համարում լրացուցիչ ուշադրություն դարձնել ՄԻԵԴ դատական ակտերի թարգմանության և հրապարակման խնդիրների իրավական կարգավորումներին:

Այսպես. «Միջազգային պայմանագրերի մասին» ՀՀ օրենքի 56-րդ հոդվածում ամրագրված է, որ.

> «*Արտաքին գործերի նախարարությունը հետևում է Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրի կատարմանը: Այդ նպատակով արտաքին գործերի նախարարությունն իրա-*

վունք ունի օրենսդրությամբ սահմանված կարգով պատասխանատու գերատեսչություններից տեղեկատվություն ստանալու Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրի կատարման վիճակի և ընթացքի վերաբերյալ, համակարգելու միջազգային պայմանագրի կատարման ուղղությամբ նշված գերատեսչությունների կողմից կատարվող աշխատանքները»:

ՄԻԵԴ դատական ակտերը՝ որպես Կոնվենցիայի բաղկացուցիչ մաս, պետք է գտնվեն Արտաքին գործերի նախարարության վերահսկողության ներքո նաև այն պատճառով, որ Արտաքին գործերի նախարարն ի պաշտոնե Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի անդամ է: «Միջազգային պայմանագրերի մասին» ՀՀ օրենքով Արտաքին գործերի նախարարության վրա է դրված նաև միջազգային պայմանագրերի պաշտոնական թարգմանության խնդիրը, ուստի ՄԻԵԴ վճիռների թարգմանության հարցը պետք է գտնվի Արտաքին գործերի նախարարության լիազորությունների շրջանակներում:

Նախարարների կոմիտեի կողմից Դատարանի վճիռների կատարման նկատմամբ վերահսկողության շրջանակներում նախարարների կոմիտեն, ի թիվս այլոց, պետք է քննի, թե ձեռնարկվել են արդյոք անհատական միջոցներ, խախտումը դադարեցվել է, տուժող կողմը, որքան որ դա հնարավոր է, դրվել է այն վիճակում ինչ այն կողմը, որը նախկինում օգտվել էր Կոնվենցիայի խախտումից: Այստեղ բարձրանում է Կոնվենցիայի խախտումից օգտված կողմի ձեռք բերած բարիքների օրինականության և հիմնավորվածության հարց:

Այս խնդիրն իր լուծումը կարող է գտնել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 61-րդ՝ «Անհիմն հարստացման հետևանքով ծագած պարտավորություններ» գլխի իրավակարգավորումներով: ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 61-րդ գլխով սահմանված անհիմն հարստացման հետևանքների կիրառման անհրաժեշտությանն է հղում կատարում նաև «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 64-րդ հոդվածի 2-րդ մասը. ըստ որի՝

«Բարենպաստ ոչ իրավաչափ վարչական ակտը, որի հիման վրա ծագում են միաժամանակյա կամ ընթացիկ գույքային պարտականություններ, կամ որն այդպիսի պարտականությունների համար նախադրյալ է համարվում, կարող է ուժը կորցնել միայն դրա անվավեր ճանաչվելու պահից, եթե այդ ակտով օգուտ ստացողը վարչական ակտի անկատմամբ վստահության իրավունքի ուժով արդեն ձեռք է բերել տրամադրված օգուտները կամ տնօրինել է գույքը, որի հետևանքով դրանք չեն կարող վերադարձվել կամ վերադարձվելու դեպքում կարող է էական վնաս պատճառվել օգուտ ստացողին: Այս դեպքում կիրառվում են Հայաստանի

Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի անհիմն հարստացման վերաբերյալ դրույթները:

Հատուցման ենթակա օգուտի չափը պետք է սահմանի այն վարչական մարմինը, որն անվավեր է ճանաչել ոչ իրավաչափ վարչական ակտը: ... »

ԲԱԺԻՆ 2.

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից Հայաստանի վերաբերյալ կայացված վճիռների կատարման դիտարկում

1

Մկրտչյանն ընդդեմ Հայաստանի

Գործի համարը. 6562/03
Վճիռը կայացվել է. 11.01.2007
Ուժի մեջ է մտել. 11.04.2007

Պաշտոնապես
Հրապարակվել է. ՀՀՊՏ 2007.09.12/46(570)

Փաստերը

Ա. Մկրտչյանը հանդիսացել է «Հանրապետություն» կուսակցության անդամ: 2002թ.-ի մայիսի 14-ին մասնակցել է Ազատության հրապարակում անցկացված հանրահավաքին: Այն կազմակերպված էր «Հանրապետություն» կուսակցության և թվով վեց այլ քաղաքական կուսակցությունների կողմից: Հանրահավաքից հետո Ա. Մկրտչյանը կոչ է արել մասնակիցներին Բաղրամյան պողոտայով քայլարշավ կատարել դեպի Ազգային ժողովի շենք: Հանրահավաքի մասնակիցները շարժվել են նրա հետևից պողոտայով վեր: Նույն օրը՝ ժամը 23:10-ին, Ա. Մկրտչյանը ձերբակալվել և բերման է ենթարկվել ՀՀ Ոստիկանության Երևան քաղաքի Արաբկիրի բաժին: Ոստիկանության աշխատակիցների կողմից կազմված վարչական իրավախախտման արձանագրությունում նշվել է, որ Ա. Մկրտչյանը «չարտոնված երթ է կազմակերպել և խախտել է փողոցային երթերի և ցույցերի անցկացման կարգը»: 2002թ.-ի մայիսի 15-ին Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանը նրա նկատմամբ նշանակել է վարչական տույժ 500 ՀՀ դրամ տուգանքի ձևով՝ ՎԻՎՕ-ի 180.1-րդ հոդվածի հիմքով, որով սահմանված էր վարչական պատասխանատվություն «Հավաքների, ժողովների, երթերի և ցույցերի անցկացման սահմանված կարգի» խախտման համար: Վերաքննիչ դատարանն ուժի մեջ է թողել առաջին ատյանի դատարանի որոշումը, իսկ Վճռաբեկ դատարանը նամակով տեղեկացրել է, որ օրենսդրությունը նրան որոշումը բողոքարկելու իրավունք չի ընձեռում:

Դատարանի որոշումը

Դատարանը նշել է, որ վեճի առարկան հանդիսանում է այն հարցը, թե արդյոք նշված ժամանակահատվածում Հայաստանում գործել է որևէ իրավական ակտ, որը կնախատեսեր այն «սահմանված կարգը»-ը, որոնց հղում է կատարում ՎԻՎՕ-ի 180.1-րդ հոդվածը: Այս առումով կառավարությունը պնդում էր, որ «սահմանված կարգը» նախատեսված էր Օրենքով և Հրամանագրով, մյուս կողմից՝ դիմումատուն պնդում էր, որ նշված ակտերը նախկին ԽՍՀՄ իրավական ակտեր են, որոնք ուժը կորցրած են և չեն կարող գործել Հայաստանում անկախացումից հետո: Հետևաբար, համաձայն Ա. Մկրտչյանի, բացակայում էր որևէ «սահմանված կարգ», որը, վճռի համաձայն, նա խախտել է: Դատարանը նախ նկատել է, որ խնդրո առարկա հարցի վերաբերյալ բացակայում է ներպետական դատական պրակտիկա: Ավելին՝ ներպետական դատարանները սույն գործում ևս չէին կարողացել հղում կատարել որևէ իրավական ակտի, որում նշված կլիներ ցույցերի և փողոցային երթերի համար սահմանված այն կարգը, որը վճռի համաձայն դիմումատուն խախտել էր: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ներպետական դատարանները հղում չեն կատարել որևէ իրավական ակտի, որը կսահմաներ խնդրո առարկա կարգը և այն հանգամանքը, որ անկախացումից հետո Հայաստանի տարածքում ԽՍՀՄ օրենքների կիրառելիության վերաբերյալ չկա որևէ նախադեպ՝ Դատարանը հանգել է այն եզրակացության, որ քննարկվող օրենքը, մասնավորապես «սահմանված կարգը», որին հղում է կատարում ՎԻՎՕ-ի 180.1-րդ հոդվածը, ձևակերպված չէր այնպիսի ճշգրտությամբ, որ հնարավորություն տար Ա. Մկրտչյանին կանխատեսելու իր գործողությունների հնարավոր հետևանքները: Ավելին, Դատարանը նշել է, որ ԽՍՀՄ փլուզումից հետո չկար որևէ իրավական ակտ՝ կիրառելի Հայաստանում, որը կպարունակեր խնդրո առարկա կարգը և որ համապատասխան օրենքը ընդունվել էր միայն 2004 թվականի ապրիլի 28-ին: Դատարանն ընդունում է, որ անցումային շրջանում գտնվող պետության համար ժամանակ է պահանջվում օրենսդրական համակարգ ստեղծելու համար, սակայն, երբ խոսքը վերաբերում է այնպիսի հիմնարար իրավունքին, ինչպիսին է հավաքներին մասնակցելու ազատությունը, Դատարանը չի կարող մոտ տասներեք տարվա ձգձգումը համարել ողջամիտ: Հետևաբար, հաշվի առնելով, որ խնդրո առարկա ժամանակահատվածում նման օրենք չկար, հետևաբար, խաղաղ հավաքներին մասնակցելու իրավունքին միջամտությունը չի եղել օրենքով սահմանված կարգով: Այդ պատճառով տեղի է ունեցել Կոնվենցիայի 11-րդ հոդվածի խախտում: Արդարացի փոխհատուցման առումով Դատարանը նշել է, որ վճռի կայացումն ինքնին արդարացի փոխհատուցման բավարար եղանակ է:

Վարույթը Նախարարների կոմիտեում

ՆԿ-ի որոշումը

Իր 1082-րդ նիստում (27 մարտ 2008թ.) ՆԿ-ն ընդունել է թիվ CM/ResDH(2008)2 բանաձևը, որում նշել է, որ, ուսումնասիրելով պատասխանող պետության կողմից կիրառված բոլոր միջոցները՝ կարելի է հայտարարել, որ պատասխանող պետությունն ամբողջությամբ կատարել է Կոնվենցիայի 46-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված իր գործառույթները: Նշվածի հիման վրա ՆԿ-ն նույն փաստաթղթով որոշել է փակել սույն գործի քննությունը:

Եզրահանգում

Անհատական միջոցներ

Յուրաքանչյուր վճռի կատարման վարույթի բնույթն ու շրջանակները կախված են այն հանգամանքից, թե ինչ խախտում է արձանագրել Եվրոպական դատարանը: Տվյալ դեպքում Դատարանն արձանագրել է, որ Արմեն Մկրտչյանի խաղաղ հավաքների ազատության իրավունքի միջամտությունը (վարչական տույժի ենթարկելը) չի կատարվել օրենքով սահմանված կարգով, քանի որ տվյալ ժամանակահատվածում չի եղել այս իրավունքի իրագործումը կարգավորող որևէ օրենք. բացակայել է ՎԻՎՕ 180[1]-րդ հատվածում վկայակոչված կարգը: Այս առումով Դատարանն ուղղակի վկայակոչել է Արմեն Մկրտչյանի գործով կայացրած իր վճիռը: Հետևաբար, սույն գործով անհատական և ընդհանուր բնույթի յուրաքանչյուր միջոցի ընտրության և դրա վերաբերելիության հարցը կախված է նշված խախտումի բնույթից:

Դիմողը չի ներկայացրել գործի վերաբացման դիմում նոր հանգամանքի հիմքով, իսկ պատասխանող պետությունն էլ պարտավորություն չի կրում նման վարույթ հարուցել իր սեփական նախաձեռնությամբ՝ առավել ևս, որ արձանագրվել է խաղաղ հավաքների իրավունքի միջամտություն, քանի որ հնարավոր չէ պատկերացնել որևէ դատական վարույթ, որն հնարավորություն կտա ամբողջությամբ վերականգնել խաղաղ հավաքների մասնակցության իրավունքը, որը խախտվել է տարիներ առաջ: Նույնիսկ եթե Հայաստանն իր նախաձեռնությամբ նախաձեռնի նման վարույթ հարուցել, ապա առավելագույնը, որ կարելի է հասնել նման վարույթի միջոցով, դա կլինի իրավունքի խախտման փաստի ճանաչումը և հնարավոր ներպետական ակտերի (վարչական, դատական) բեկանումը ներպետական ատյանների կողմից:

Քանի որ սա մեր դիտարկման առաջին դատական ակտն է, կարծում ենք տեղին է անդրադառնալ մի երևույթի, որը տարածված պրակտիկա է և ընդգրկում է Հայաստանի կողմից վճիռների կատարման և՛ անհա-

տական, և՛ ընդհանուր միջոցների հարցը: Տվյալ դեպքում խոսքը վերաբերում է Եվրոպական դատարանի վճռի թարգմանության խնդրին: Որպես կանոն, վճիռների թարգմանության և պաշտոնական հրապարակման ժամկետները չեն համընկնում նոր հանգամանքի հիմքով դիմում ներկայացնելու օրենսդրորեն սահմանված ժամկետային միջակայքի հետ: Դրա արդյունքում այն անձը, ով ցանկանում է նոր հանգամանքի հիմքով դիմում ներկայացնել ազգային դատարան և այդ նպատակով իր տրամադրության տակ ունի եռամսյա ժամկետ Եվրոպական դատարանի որոշումը ուժի մեջ մտնելուց հետո, գրեթե միշտ իր ձեռքի տակ չի ունենում վճռի հայերեն պաշտոնական թարգմանությունը: Թարգմանությունների պաշտոնական հրապարակումը տեղի է ունենում վերաանայման վարույթ հարուցելու ժամկետի լրանալուց հետո: Այսինքն, եթե տվյալ դեպքում Արմեն Սկրտչյանը ցանկանար վերաանայման վարույթ հարուցելու մասին դիմում ներկայացնել, ապա նա այդ դիմումը պետք է ներկայացներ մինչև 11.07.2007թ., մինչդեռ վճռի պաշտոնական թարգմանության տեքստը հրապարակվել է 09.12.2007թ.՝ դիմում ներկայացնելու վերջնաժամկետից շուրջ երկու ամիս անց: Նման հանգամանքում Արմեն Սկրտչյանի համար միակ ելքը կլիներ սեփական միջոցներով ապահովել վճռի թարգմանությունը և նոտարական վավերացումը, որը, նախ և առաջ, հավելյալ ֆինանսական բեռ կհանդիսանար, երկրորդ, Եվրոպական դատարանի վճիռն իրավական ակտ է, և դրա ճշգրիտ ու պաշտոնական թարգմանությունը կարող է էական նշանակություն ունենալ իրավունքի հարցի շուրջ վեճի լուծման հարցում: Կարծում ենք, որ սա մի խնդիր է, որի վրա պետք է ուշադրություն դարձնեն իշխանությունները, և այս առումով մեր առաջարկությունները ներկայացրել ենք նաև սույն հետազոտության վերջին բաժնում:

Ընդհանուր միջոցներ

Վճիռը թարգմանվել ու հրապարակվել է պաշտոնական տեղեկագրում և առաքվել է Սահմանադրական դատարան, ՀՀ վճռաբեկ դատարան, ՀՀ վերաքննիչ դատարան և ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարաններ: Վճռի հայերեն տարբերակը հրապարակվել է ՀՀ արդարադատության նախարարության ինտերնետ կայքում և ՀՀ դատական համակարգի ինտերնետ կայքում: Այս ամենը վկայում է, որ Հայաստանը կատարել է թիվ Rec(2002)13 հանձնարարականի պահանջները: Այդուհանդերձ, անհրաժեշտ է հաշվի առնել նշված մեր նկատառումները թարգմանության և պաշտոնական հրապարակման ժամկետների վերաբերյալ:

Վճիռը ներառված է ՀՀ դատական դպրոցի և ՀՀ դատախազության դպրոցի ուսումնական ծրագրերում: Դատախազության դպրոցում դասընթացները մատուցվում են դատախազներին, Հատուկ Քննչական Ծառայության քննիչներին և թեկնածուներին: Դատական դպրոցում դասընթացները մատուցվում են դատավորներին, դատական ծառայողներին և թեկնածուներին: Դասախոսական կազմի կողմից երկու դպրոցներում վճիռը

ներկայացվում է քննարկումների, թեստերի, իրավիճակային խնդիրների միջոցով: Վճռում բարձրացված հարցերը ներառված են նաև նշված խմբերի քննությունների հարցաթերթիկներում: Հետևաբար, սույն գործով Հայաստանը կատարել է թիվ Rec(2004)4 հանձնարարականի պահանջները:

Ինչ վերաբերում է վճռի հետ կապված համակարգային փոփոխություններին, ապա մինչև վճռի ընդունումը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովն արդեն ընդունել էր «ժողովներ, հավաքներ, երթեր և ցույցներ անցկացնելու մասին» ՀՀ օրենքը, և վճռի ընդունման պահի դրությամբ համակարգային խնդիրը, որն արձանագրել էր Եվրոպական դատարանն, արդեն լուծված էր: Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի բոլոր հոդվածները, այդ թվում նաև ՎԻՎՕ 180[1]-րդ հոդվածը, որը կիրառվել է Արմեն Սկրտչյանի նկատմամբ, վերացվել են: Սահմանադրության 16-րդ հոդվածի հիման վրա 16.12.2005թ. փոփոխության է ենթարկվել ՎԻՎ օրենսգիրքը, և վարչական կալանք հասկացությունն ամբողջությամբ վերացվել է օրենսգրքում: Սահմանադրական բարեփոխումներից հետո անձին կարելի է ազատությունից զրկել միայն հանցագործություն կատարելու կասկածի հիման վրա: Այսինքն, բացի քրեական բնույթի արարք կատարելուց, վարչական կամ կարգապահական բնույթի իրավախախտման համար արգելվում է անձին ազատությունից զրկելը: Ավելին, թեև վարչական կալանքի պրակտիկան ինքնին չի խախտում Կոնվենցիայի պահանջները, Հայաստանը որոշել է ներպետական իրավունքից իսպառ վերացնել օրենսդրական բոլոր այն հիմքերը, որոնք նախատեսում են ժողովներ, հանրահավաքներ, երթեր և ցույցեր անցկացնելու կարգի խախտման դեպքում կիրառել վարչական տույժ՝ ազատությունից զրկելու տեսքով:

Հիմք ընդունելով նշված համակարգային փոփոխությունները օրենսդրության մեջ՝ կարծում ենք, որ Հայաստանը կատարել է թիվ Rec(2004)5 հանձնարարականի, մասնավորապես՝ հանձնարարականի երկրորդ և երրորդ սկզբունքների պահանջները:

2

Հարությունյանն ընդդեմ Հայաստանի

Գործի համարը. 36549/03
Վճիռը կայացվել է. 28.06.2007
Ուժի մեջ է մտել. 28.09.2007

Պաշտոնապես
Հրապարակվել է. ՀՀՊՏ 2007.12.19/65(589)

Փաստերը

1998 թվականի հունիսին Միշա Հարությունյանը զորակոչվել է Հայաստանի Հանրապետության զինված ուժեր և ծառայությունն անցկացրել սահմանամերձ գոտում: 1999 թվականի ապրիլին նրան առաջադրվել է մեղադրանք՝ զինծառայողի սպանության հիմքով: Նա դատապարտվել է կանխամտածված սպանության համար և դատապարտվել յոթ տարվա ազատազրկման: Նախաքննության ընթացքում նա և երկու վկաներ ենթարկվել են խոշտանգումների, որը բացահայտվել է և խոշտանգումների իրականացրած ոստիկանները դատապարտվել են: Ազգային դատարանները խոշտանգումով ստացված ապացույցները՝ Մ. Հարությունյանի ինքնախոստովանական ցուցմունքները և երկու վկաների ցուցմունքները չեն հանել գործի նյութերից, այլ դրանք, ի թիվս այլ, օրինական հիմքերով ստացված ապացույցների, օգտագործել են Մ. Հարությունյանի մեղքը հաստատելու և նրան դատապարտելու համար:

Դատարանի որոշումը

Դատարանը սահմանել է, որ ներպետական դատարանները Մ. Հարությունյանին մեղավոր ճանաչելու ապացույցների շարքում որպես ապացույց օգտագործել են նաև նրա՝ բռնությունների ազդեցության տակ տված խոստովանական ցուցմունքները և երկու վկաների ցուցմունքները: Թեև դրանք միակ ապացույցները չէին, որոնց վրա հիմնվել էին ներպետական դատարանները Մ. Հարությունյանին դատապարտելիս, և այդ ապացույցները ավազ նշանակություն են ունեցել մեղքը հաստատված համարելու համար, այդուհանդերձ, պետք է հաշվի առնել, որ զինվորական ծառայության տակ գտնվելիս տված ցուցմունքների արժանահավատությունը պետք է կասկածի տակ առնվեր, և այդ ցուցմունքները չպետք է վկայակոչվեին դատարանների կողմից խոշտանգումների ազդեցության հետևանքով տրված ցուցմունքների արժանահավատության հիմնավորման համար: Այն փաստը, որ Մ. Հարությունյանը խոստովանել է իր մեղքը ճնշումների ազդեցության տակ, սակայն հետո նույն հայտարարությունը կատարել է քննիչի ներ-

կայությամբ, երբ ճնշումներ չեն եղել, չի կարող արդարացնող հանգամանք հանդիսանալ (որի վրա հիմնվել են ազգային դատարանները բռնություններով ստացված ապացույցները գործի նյութերում թողնելը արդարացնելու համար), չպետք է մեխանիկորեն հանգեցնի այն եզրակացությանը, որ նման խոստովանությունը կամ հետագա ցուցմունքները չեն հանդիսացել հետևանք՝ նրա նկատմամբ ցուցաբերված վատ վերաբերմունքի և նրա հետագա ապրումների վերաբերյալ հնարավոր վախի: Մեղադրող ապացույցը, լինի դա խոստովանական կամ իրեղեն ապացույցի տեսքով, որը ձեռք է բերվել բռնությունների գործադրման միջոցով կամ դաժանությունների կամ այլ վերաբերմունքի, որը կարելի է բնութագրել որպես խոշտանգում, երբեք չպետք է դրվի մեղքի ապացույցի հիմքում՝ անկախ դրա ապացուցողական նշանակությունից: Տվյալ դեպքում, անկախ նրանից, թե ինչ ազդեցություն են ունեցել խոշտանգումների միջոցով ձեռք բերված ցուցմունքները Մ. Հարությունյանի դատական գործի ելքի վրա, և նույնիսկ եթե այդ ապացույցները եղել են նվազ նշանակության ապացույցներ, նման ապացույցի օգտագործումն ամբողջ դատավարությունը դարձրել է անարդար՝ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասում շարադրված «արդարացիության» ընդհանուր սկզբունքի իմաստով: Արդարացի փոխհատուցման մասով Դատարանը սահմանել է 4,000 եվրո ոչ նյութական վնասի դիմաց:

Վարույթը Նախարարների կոմիտեում

Անհատական միջոցներ

ՀՀ իշխանությունների կողմից տրամադրվել է հետևյալ տեղեկությունը. 30.06.2008թ.-ի իշխանությունները հայտնել են ՆԿ-ին, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 408-րդ հոդվածը հնարավորություն է տալիս անձի դիմումի հիման վրա վերաբացել վարույթը՝ նոր հանգամանքների հիմունքով:

Մ. Հարությունյանի փաստաբանի նամակը. 20.11.2008թ.-ին Մ. Հարությունյանի փաստաբանը հայտնել է ՆԿ-ին, որ 25.12.2007թ.-ին ներկայացրել է գործի վերաբացման դիմում ՀՀ վճռաբեկ դատարան ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426^1-րդ հոդվածի հիման վրա, որը սահմանում էր, որ գործի վերաբացման դիմումը պետք է ներկայացվի ՀՀ վճռաբեկ դատարանին «նոր հանգամանքի» հիմքով: Ըստ օրենսգրքի նոր դրույթների, որոնք ուժի մեջ են մտել 27.12.2007թ.-ին, նոր հանգամանքի հիմքով դիմումները պետք է ներկայացնել առաջին ատյանի այն դատարանին, որը քննել է գործը: Հետևաբար, Մ. Հարությունյանի փաստաբանը դիմում է ներկայացրել նաև Սյունիքի մարզի առաջին ատյանի դատարան: Այս դիմումը մերժվել է այն հիմքով, որ համաձայն օրենսգրքի 426^1-րդ հոդվածի, վերանայման համար դիմում ընդունելու իրավազորություն ունի այն դատարանը, որը կայացրել է գործով վերջին որոշումը: Իր հերթին, ՀՀ վճռաբեկ դատարանը 21.01.2008թ.-ին դիմումը վերահասցեագրել է Հա-

րավային քրեական դատարան՝ օրենսգրքի 426[1]-րդ հոդվածի հիման վրա: Դիմողի փաստաբանը կասկած է հայտնել, որ սույն դատարանն իրավասու է վերացնելու Վերաքննիչ քրեական դատարանի կամ Վճռաբեկ դատարանի որոշումը:

16.03.2009թ.-ին Մ. Հարությունյանի փաստաբանը նամակով տեղեկացրել է, որ դիմել է ՀՀ սահմանադրական դատարան՝ վիճարկելով օրենսգրքի 426[1]-րդ հոդվածի սահմանադրականությունը: 21.10.2008թ.-ի որոշումով Սահմանադրական դատարանը նշված հոդվածը ճանաչել է Սահմանադրությանը հակասող և անվավեր: 21.01.2009թ.-ին փաստաբանը դիմել է Վճռաբեկ դատարան՝ խնդրելով վերանայել իր 21.01.2008թ.-ի որոշումը: 09.03.2009թ.-ին Վճռաբեկ դատարանը վերադարձրել է դիմումը իր մեկ այլ՝ 25.02.2009թ.-ին հասցեագրած որոշման հետ, որով մերժել է դիմումը «նոր հանգամանքի» բացակայության հիմքով, ինչպես նաև այն հիմքով, որ տրամադրված է եղել Եվրոպական դատարանի վճռի անգլերեն տեքստը: Մ. Հարությունյանի փաստաբանը նշում է, որ Եվրոպական դատարանի վճռի թարգմանությունը կարելի է գտնել Արդարադատության նախարարության ինտերնետ կայքում և որ ինքը, որպես նոր հանգամանք, Վճռաբեկ դատարան էր ուղարկել Սահմանադրական դատարանի 21.10.2008թ.-ի վճիռը և ոչ թե Եվրոպական դատարանի վճիռը:
Մ. Հարությունյանի փաստաբանի կողմից ներկայացված նշված երկու նամակներն ուղարկվել են Հայաստանի իշխանություններին:

ՀՀ իշխանությունների տրամադրած տեղեկությունը. ՆԿ թիվ 1059-րդ նիստին ընդառաջ (հունիս 2009թ.) Հայաստանի իշխանությունները նամակով հայտնել են, որ 25.02.2009թ. ՀՀ վճռաբեկ դատարանի որոշումից հետո դիմողի փաստաբանը կրկին դիմել է ՀՀ վճռաբեկ դատարան 30.03.2009թ. և որ 10.04.2009թ. Վճռաբեկ դատարանը կայացրել է դիմումն ընդունելու մասին որոշում, որով բեկանել է Սյունիքի մարզի առաջին ատյանի դատարանի 19.06.2002թ. դատավճիռը, Զինվորական և քրեական գործերով վերաքննիչ դատարանի 01.04.2003թ. որոշումը և Վճռաբեկ դատարանի 08.05.2003թ. որոշումը: Վճռաբեկ դատարանը հայտարարել է, որ օրինական ստացված ապացույցները բավարար չէին մեղքը կամ անմեղությունն հաստատելու համար, և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 419-րդ հոդվածի հիմքով ուղարկել է գործը Սյունիքի մարզի առաջին ատյանի դատարան՝ նոր քննության:

Թիվ 1059-րդ նիստում ՆԿ-ն վերահաստատել է իր դիրքորոշումը նոր դատավարություն անցկացնելու անհրաժեշտության մասին և հրավիրել է Հայաստանի իշխանություններին պարբերաբար տեղեկացնել վարույթի զարգացումների մասին: Ավելին, ՆԿ-ն նաև պահանջել է տրամադրել քրեական գործերով վարույթի վերաբացման վերաբերյալ օրենսգրքի համապատասխան հոդվածների ճշգրիտ տեքստը, որը տվյալ պահին ուժի մեջ էր, և թե ի՞նչ փոփոխություն էին դրանք կրել Սահմանադրական դատարանի որոշումից հետո:

ՀՀ իշխանությունների տրամադրած տեղեկությունը. ՀՀ իշխանությունները 12.01.2010թ. և 07.04.2010թ. տրամադրել են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426^{1}-րդ հոդվածի և 426^{8}-րդ հոդվածի 1-ին մասի տեքստերը: Իշխանությունները նաև հայտնել են, որ օրենսգրքի հետագա փոփոխություններն ընթացքի մեջ են, որով նախատեսվում է բարելավել գործի վերաբացման վարույթը՝ փոփոխության ենթարկելով 426^{2}-րդ հոդվածը:

Ընդհանուր միջոցներ

ՀՀ իշխանությունների տրամադրած տեղեկությունը. ՀՀ իշխանությունները տրամադրել են հետևյալ տեղեկությունը 23.01.2008թ. և 30.06.2008թ. Քրեական դատավարության օրենսգրքի 105-րդ հոդվածի համաձայն, որը վերաբերում է «որպես ապացույց չթույլատրվող նյութերին[64], *«քրեական գործով վարույթում անօրինական է որպես ապացույց օգտագործել կամ մեղադրանքի հիմքում դնել այն նյութերը, որոնք ձեռք են բերվել. բռնությամբ, սպառնալիքով, խաբեությամբ, անձին ծաղրի ենթարկելով, ինչպես նաև այլ անօրինական գործողություններով, … քննչական կամ այլ դատավարական գործողության կատարման կարգի էական խախտմամբ: Ապացույցներ ձեռք բերելիս էական են այն խախտումները, որոնք, դրսևորվելով մարդու և քաղաքացու սահմանադրական իրավունքների և ազատությունների կամ տույն օրենսգրքի որևէ պահանջի խախտմամբ, դատավարության մասնակիցներին՝ օրենքով երաշխավորված իրավունքների զրկմամբ կամ սահմանափակմամբ կամ որևէ այլ կերպ ազդել են կամ կարող էին ազդել ստացված փաստական տվյալների հավաստիության վրա»:*

Եվրոպական դատարանի վճիռը թարգմանվել և հրապարակվել է ՀՀ Պաշտոնական տեղեկագրում, ՀՀ արդարադատության նախարարության ինտերնետ կայքում (www.moj.am), ՀՀ գլխավոր դատախազության ինտերնետ կայքում (www.genproc.am) և ՀՀ դատական իշխանության ինտերնետ կայքում (www.court.am): Վճռի տեքստը տրամադրվել է ՀՀ սահմանադրական դատարանին, ՀՀ վճռաբեկ դատարանին, վերաքննիչ դատարաններին, առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարաններին, Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակին, ՀՀ գլխավոր դատախազությանը, ՀՀ ոստիկանությանը, ՀՀ Ազգային ժողովի Պետական-իրավական հարցերի մշտական հանձնաժողովին և Մարդու իրավունքների պաշտպանության և հանրային հարցերի մշտական հանձնաժողովին:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքը և, մասնավորապես, Հարությունյանի գործով վճիռը ներառված է ՀՀ ոստիկանության ակադեմիայի, ՀՀ դատախազության դպրոցի և ՀՀ դատական դպրոցի ուսուցման ծրագրերում:

[64] ՆԿ-ի անգլերեն տեքստում նշվում է «fact» բառը, որը բառացիորեն նշանակում է «փաստ»:

ՆԿ-ի որոշումը

- Անհատական միջոցներ.
  ՆԿ-ն սպասում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426[2]-րդ հոդվածի վերջնական տեքստի և դիմողի գործով՝ Սյունիքի մարզի առաջին ատյանի դատարանում հարուցված նոր վարույթի զարգացումների վերաբերյալ տեղեկությունների:
- Ընդհանուր միջոցները.
  Քանի որ տվյալ ժամանակահատվածում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 105-րդ հոդվածն ուժի մեջ էր, ՆԿ-ն սպասում է վերջին ժամանակաշրջանում այս հոդվածի արդյունավետ կիրառության օրինակների վերաբերյալ տեղեկության: ՆԿ-ն վերհիշում է, որ պահանջվել էր տարածել Եվրոպական դատարանի վճիռը, որպեսզի զինվորական և քաղաքացիական դատարանների, ինչպես նաև ոստիկանության ուշադրությունը հրավիրվեր Կոնվենցիայի պահանջների վրա:
- Գործի հետագա քննարկում.
  Տեղակալները որոշեցին սույն գործին անդրադառնալ 2010թ.-ի դեկտեմբերի 1100-րդ նիստում՝ անհատական և ընդհանուր միջոցների մասին տրամադրվելիք տեղեկությունների լույսի ներքո:

Եզրահանգում

Անհատական միջոցներ

ՀՀ կառավարությունը տրամադրել է վճռով սահմանված ոչ նյութական վնասի դիմաց փոխհատուցումը: Հետևաբար, Հայաստանը կատարել է վճռով սահմանված դրամական փոխհատուցում տրամադրելու պարտավորությունը:

Սույն գործով ընթացքի մեջ է վիճահարույց դատական ակտերը վերանայելու վարույթը: Վճռաբեկ դատարանը 10.04.2009թ.-ին բեկանել է Սյունիքի մարզի առաջին ատյանի դատարանի 19.06.2002թ.-ի դատավճիռը, Քրեական և քրեական գործերով վերաքննիչ դատարանի 01.04.2003թ. որոշումը և Վճռաբեկ դատարանի 08.05.2003թ.-ի որոշումը: Ներկայումս վերանայման վարույթը գտնվում է ՀՀ քրեական վերաքննիչ դատարանում, որտեղ բողոք է տարվել դիմողի փաստաբանի կողմից՝ առաջին ատյանի մեղադրական դատավճռի դեմ: Առաջին ատյանում գործը նորից քննվել է, սակայն այն ապացույցների բացակայությամբ, որոնք ձեռք էին բերվել Կոնվենցիայի խախտմամբ և որոնց առումով էլ արձանագրվել էր Կոնվենցիայի 6-րդ հոդվածի խախտում: Հայաստանի իրավասու մարմինները (դատախազություն) ներկայացրել են նոր մեղադրանք

նշված ապացույցների բացակայությամբ, որն էլ տևական դատաքննությունից հետո հաստատել է Սյունիքի մարզի առաջին ատյանի դատարանը: Չեռնպահ մնալով առաջին ատյանում դատավարության ընթացքում ուսումնասիրված ապացույցները գնահատելու վերաբերյալ դիրքորոշում հայտնելուց՝ ցանկանում ենք մատնանշել, որ այնքանով, որքանով որ Հայաստանի իրավասու դատարանը կատարել է գործի վերաբացման որոշում և ապահովել է գործի վերաքննություն, Հայաստանը կատարել է թիվ R (2000) 2 հանձնարարականի պահանջները: Այդուհանդերձ, անհրաժեշտ է հաշվի առնել, որ վերանայման վարույթում տեղի ունեցած որոշ խախտումներ նույնպես կարող են Եվրոպական դատարան նոր գանգատ ներկայացնելու հիմք հանդիսանալ «նոր փաստի» հիմքով, որից տեղյակ չէր Եվրոպական դատարանը, երբ կայացնում էր իր սկզբնական վճիռը:[65] Կարծում ենք, որ սույն հարցին անհրաժեշտ կլինի անդրադառնալ ապագայում, երբ կավարտվի վերանայման վարույթը:

Ընդհանուր միջոցներ

Վճիռը թարգմանվել ու հրապարակվել է ՀՀ Պաշտոնական տեղեկագրում, ՀՀ արդարադատության նախարարության ինտերնետ կայքում, ՀՀ գլխավոր դատախազության ինտերնետ կայքում և ՀՀ դատական իշխանության ինտերնետ կայքում: Վճռի տեքստը տրամադրվել է ՀՀ սահմանադրական դատարանին, ՀՀ վճռաբեկ դատարանին, վերաքննիչ դատարաններին, առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարաններին, Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակին, ՀՀ գլխավոր դատախազությանը, ՀՀ ոստիկանությանը, ՀՀ Ազգային ժողովի Պետական-իրավական հարցերի մշտական հանձնաժողովին և Մարդու իրավունքների պաշտպանության և հաղորդակցության հարցերի մշտական հանձնաժողովին: Այս ամենը վկայում է, որ Հայաստանը կատարել է թիվ Rec(2002)13 հանձնարարականի պահանջները:

Վճիռը ներառված է ՀՀ դատական դպրոցի և ՀՀ դատախազության դպրոցի ուսումնական ծրագրերում: Դասախոսական կազմի կողմից երկու դպրոցներում վճիռը պարբերաբար ներկայացվում է քննարկումների, թեստերի, իրավիճակային խնդիրների և դատ-խաղերի միջոցով: Վճռում բարձրացված հարցերը ներառված են նաև նշված խմբերի քննությունների հարցաթերթիկներում: Հետևաբար, սույն գործով Հայաստանը կատարել է թիվ Rec(2004)4 հանձնարարականի պահանջները:

Կարծում ենք, որ սույն գործով ընդհանուր բնույթի այլ միջոցների կիրառության անհրաժեշտություն չկա:

---

[65] *Verein Gegen Tierfabriken Schweiz (VgT-ն ընդդեմ Շվեյցարիայի* (ՄՊ)» թիվ 32772/02, 30/06/2009, պարբ. 97:

3

Գալստյանն ընդդեմ Հայաստանի

Գործի համարը. 26986/03
Վճիռը կայացվել է. 15.11.2007
Ուժի մեջ է մտել. 15.02.2008

Պաշտոնապես
Հրապարակվել է. ՀՀՊՏ 2008.05.29/32(622)

Փաստերը

Արշամ Գալստյանը 2003 թվականին մարտի 5-ին նախագահական ընտրությունների երկրորդ փուլում հանդիսացել է ընտրատարածքային տեղամասային հանձնաժողովներից մեկի անդամ և ընդդիմադիր հիմնական թեկնածուի վստահված անձը: Նա մասնակցել է 2003թ.-ի ապրիլի 7-ին Երևանի կենտրոնում տեղի ունեցող հանրահավաքին: Հանրահավաքը եղել է քաղաքական բնույթի, հնչել են կառավարության և նախագահական ընտրություններին վերաբերող քննադատություններ: Հանրահավաքից հետո տուն գնալու ճանապարհին նա բերման է ենթարկվել ոստիկանություն, որտեղ ձերբակալող ոստիկանները կազմել են բերման ենթարկելու արձանագրություն և նշել, որ Ա. Գալստյանը *«ձերբակալվել է մոտավորապես 17:30-ի սահմաններում Մաշտոցի պողոտայում՝ ճանապարհային երթևեկությանը խոչընդոտելու և հանրահավաքի ընթացքում հասարակական կարգը խախտելու համար»:* Այնուհետև ոստիկանները կազմել են վարչական իրավախախտման արձանագրություն, որում նշել են, որ Ա. Գալստյանը «մասնակցել է հանրահավաքի, որի ընթացքում խախտել է հասարակական կարգը»: Նրա գործողությունները որակվել են ՎԻՎՕ 172-րդ հոդվածով՝ որպես մանր խուլիգանություն: Նույն օրը Ա. Գալստյանը տարվել է դատարան, որտեղ դատավորը կարճատև լսումներից հետո Ա. Գալստյանին դատապարտել է 3 օրվա վարչական կալանքի: Ա. Գալստյանը պնդել է, որ դատական նիստը տևել է 5 րոպե և տեղի է ունեցել դատավորի աշխատասենյակում: Ա. Գալստյանը փորձել է ներկայացնել գործի հանգամանքները՝ միջնորդելով դատավորին կանչել վկաների և պաշտպան է պահանջել, սակայն դատավորը լուռ լսել է, ստորագրել է որոշ թղթեր և համարել է դատական նիստը փակված, որից հետո Ա. Գալստյանին տարել են կալանավայր: 2003թ.-ի ապրիլի 28-ին «Փետրվարի 22» հասարակական կազմակերպությունը դիմումատուի անունից բողոքել է ՀՀ գլխավոր դատախազին դատավճռի դեմ: 2003թ.-ի մայիսի 27-ի նամակով Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների դատախազը տեղեկացրել է հասարակական կազմակերպությանը, որ 2003թ.-ի ապրիլի 7-ի որոշումը հիմնավորված է, և հիմքեր չկան այն բողոքարկելու համար:

Դատարանի որոշումը

Դատարանը որոշել է, որ խախտվել է Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասը սույն հոդվածի 3-րդ մասի բ-կետի զուգակցությամբ, քանի որ Ա. Գալստյանին չի տրամադրվել պատշաճ ժամանակ և հնարավորություններ իր պաշտպանությունը նախապատրաստելու համար, մասնավորապես, նախաքննության փուլում առանց արտաքին աշխարհի հետ կապ ունենալու պահվել է ոստիկանության բաժնում և այդտեղ գտնվելու կարճ ժամանակահատվածում նա ենթարկվել է մի շարք քննչական գործողությունների, ներառյալ հարցաքննության և խուզարկության, սակայն նրան հնարավորություն չի տրվել պատշաճ կերպով ծանոթանալու և գնահատելու իրեն ներկայացված մեղադրանքը և իր դեմ ներկայացված ապացույցները և իր պաշտպանությունը իրականացնելու նպատակով մշակելու արդյունավետ իրավաբանական ռազմավարություն: Դատարանը սահմանել է նաև Կոնվենցիայի 10-րդ հոդվածի խախտում, քանի որ ՎԻՎՕ 172-րդ հոդվածը, որի հիման նա դատապարտվել էր, չէր համապատասխանում իրավական հստակության պահանջին: Նշված նորմը նախատեսում էր պատիժ «հասարակական կարգը և քաղաքացիների անդորրը խախտելու համար», որը խիստ ընդհանրական ձևակերպում էր և հաշվի առնելով, որ հասարակական կարգին առնչվող իրավախախտումները բազմազան են, նման ընդհանրացված ձևակերպումը չէր կարող համապատասխանել Կոնվենցիայի 11-րդ հոդվածով նախատեսված «օրենքով սահմանված կարգով» արտահայտության իրավական որոշակիության սկզբունքի պահանջներին: Բացի այդ, դատարանը հաշվի առավ նաև, որ դիմումատուն պատժվել էր սոսկ հանրահավաքին ներկա գտնվելու և ակտիվություն ցուցաբերելու համար, այլ ոչ թե դրա ընթացքում որևէ հակաօրինական, բռնի կամ անպարկեշտ գործողություն կատարելու համար: Քանի դեռ անձը չի կատարել նման գործողություններ հանրահավաքի ընթացքում, սոսկ հանրահավաքին մասնակցելու համար անձին պատասխանատվության ենթարկելը չի կարող անհրաժեշտ համարվել ժողովրդավարական հասարակությունում՝ Կոնվենցիայի 11-րդ հոդվածի երկրորդ մասի իմաստով: Հետևաբար, տեղի է ունեցել նաև Կոնվենցիայի այս դրույթի խախտում: Արդարացի փոխհատուցման մասով Դատարանը սահմանել է 3,000 եվրո ոչ նյութական վնասի դիմաց:

Վարույթը Նախարարների կոմիտեում

Գործը փոխանցվել է ՆԿ 2008 թվականի փետրվարին: Առաջին լսումները ՆԿ-ում կայացել են 2008թ.-ի հունիսին՝ Մարդու իրավունքների հարցերով 1028-րդ նիստում: ՆԿ-ն արձանագրել է հետևյալը.

Անհատական միջոցներ

ՆԿ-ն Հայաստանի կառավարությունից պահանջել է ներկայացնել Գործողությունների ծրագիր, ինչպես նաև տեղեկատվություն Ա. Գալստյանի դատապարտման մասին և նրա նկատմամբ կիրառվելիք ցանկացած անհատական բնույթի միջոցների մասին: 09.14.2010թ. դրությամբ ՆԿ-ն արձանագրում է, որ նշված տեղեկատվությունը Հայաստանի կառավարության կողմից դեռ չի տրամադրվել:

Ընդհանուր միջոցներ

Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասի բ-կետ, ինչպես նաև Թիվ 7 արձանագրության 2-րդ հոդված. ՆԿ-ն նկատում է, որ Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի բոլոր հոդվածները, որոնք կիրառվել են Ա. Գալստյանի նկատմամբ, վերացվել են: 01.04.2010թ. Հայաստանի կառավարությունը հայտնել է, որ 16.12.2005թ. օրենսգիրքը ենթարկվել է փոփոխությունների և վարչական կալանք հասկացությունն ամբողջությամբ վերացվել է օրենսգրքում: Իշխանությունները նաև հայտնել են, որ քանի որ վարչական կալանքը որպես տույժի տեսակ այլևս գոյություն չունի, ապա Կոնվենցիայի Թիվ 7-րդ արձանագրության 2-րդ հոդվածի խախտում նույնպես այլևս չի կարող տեղի ունենալ: Նշվածը հաշվի առնելով՝ ՆԿ-ն արձանագրել է, որ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին, 3-րդ մասի բ-կետի և Թիվ 7-րդ արձանագրության 2-րդ մասի հիմքերով արձանագրված խախտումների մասով ընդհանուր միջոց կիրառելու անհրաժեշտություն այլևս չկա:

Կոնվենցիայի 11-րդ հոդված. 11.06.2008թ.-ին կատարվել են փոփոխություններ «Ժողովների, հանրահավաքների, երթերի և ցույցերի մասին» ՀՀ օրենքում: Նախարարների կոմիտեում անցկացված վիճաբանությունների ընթացքում, որի նպատակը սույն օրենքի կիրառության մոնիթորինգի հատուկ համակարգի ստեղծումն էր, հայկական պատվիրակությունը հայտարարել է, որ օրենքի կիրառությունը և մոնիթորինգն իրավապահ մարմինների և դատարանների իրավասության մեջ են մտնում: Հետևաբար, պատվիրակությունը հայտարարել է, որ որևէ անհրաժեշտություն չկա ստեղծել մոնիթորինգի հատուկ համակարգ կամ մարմին: Ինչ վերաբերում է հանրահավաքի մասնակիցների նկատմամբ պատիժներ կիրառելուն, ապա իշխանություններն ընդգծել են, որ ներկայումս պատիժ կարող է կիրառվել միայն այն դեպքում, երբ անձը կատարում է իրավախախտում հանրահավաքին մասնակցելու ընթացքում: Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգիրքը և Քրեական օրենսգիրքը սահմանում են հետևյալ իրավախախտումները և դրանց համար սահմանված պատիժները.

- ժողովներ, հանրահավաքներ, երթեր և ցույցեր անցկացնելու կարգի խախտում,
- ժողովների, հանրահավաքների, երթերի և ցույցերի անցկացման խոչընդոտում,
- մասսայական անկարգությունների կազմակերպում,
- օրենքով սահմանված կարգի խախտման մասսայական միջոցառումների կազմակերպում կամ անցկացում:

Կառավարությունը նաև տեղեկացրել է, որ օրենսգիրքը և այլ համապատասխան նորմերի Կոնվենցիայի և Եվրոպական դատարանի նախադեպերի համապատասխան կիրառումն ապահովելու նպատակով վճիռը թարգմանվել ու հրապարակվել է ՀՀ Պաշտոնական տեղեկագրում և առաքվել է, մասնավորապես, Սահմանադրական դատարան, Վճռաբեկ դատարան, Վերաքննիչ դատարան և ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարաններ: Վճռի հայերեն տարբերակը 15.05.2008թ.-ին հրապարակվել է նաև ՀՀ արդարադատության նախարարության ինտերնետ կայքում (www.moj.am), իսկ 15.05.2008թ.-ին ՀՀ դատական համակարգի կայքում (www.court.am): Կառավարությունը գտնում է, որ պատշաճ կարգով թույլատրված հանրահավաքին մասնակցելու համար դրա մասնակիցներն այլևս չեն կարող ենթարկվել որևէ պատժի, եթե չեն կատարում որևէ իրավախախտում:

ՆԿ-ի որոշումը

Հաշվի առնելով, որ սույն գործով ՀՀ կառավարությանը հանձնարարվել է տրամադրել տեղեկատվություն անհատական բնույթի միջոցների մասին, ՆԿ-ն որոշել է սույն գործով հաջորդ քննարկումն անցկացնել իր հաջորդ՝ թիվ 1100-րդ նիստում, որն անցկացվելու է 2010 թվականի դեկտեմբեր ամսին: Այդուհանդերձ, 1100-րդ նիստում նշված տեղեկատվությունը նույնպես չի տրամադրվել և ՆԿ-ն որոշել է հարցի հետաձգումը տեղափոխել 2011թ.-ի մարտի գարնանային նստաշրջան: ՆԿ-ն իր 2010թ.-ի դեկտեմբերի նիստում նշել է, որ վճռի կատարման վարույթի սկսվելուց ի վեր՝ 2008թ.-ի հունիսից Հայաստանի կառավարությունը պահանջվող տեղեկատվությունը չի տրամադրել:

Եզրահանգում

Անհատական միջոցներ

ՀՀ կառավարությունը կատարել է Արշամ Գալստյանի գործով Եվրոպական դատարանի սահմանած նյութական վնասի փոխհատուց-

ման պարտավորությունը (ՀՀ կառավարության 17.04.2008թ. N 363-Ա որոշում):

Արշամ Գալստյանը «նոր հանգամանքի» հիմքով գործի վերաբացման դիմում չի ներկայացրել: Միևչդեռ, ինչպես արդեն նշվել է, հաշվի առնելով, որ սույն գործում Եվրոպական դատարանը սահմանել է նաև արդար դատաքննության մի շարք սկզբունքների խախտում (հատկապես հաշվի առնելով նաև այն հանգամանքը, որ սույն վճիռը վարչական կալանքի կրկնվող գործերի համար ծառայել է որպես «պիլոտային վճիռ», որից ավելի է մեծացել վճռի դերն ու նշանակությունը և՛ Ա. Գալստյանի, և՛ ՀՀ ներպետական իրավունքի զարգացման համար), նման դիմումի ներկայացնելը խիստ ցանկալի կլիներ: Ինչևէ, նման դիմումի բացակայությունը չի կարող հիմք հանդիսանալ, որպեսզի ՀՀ իշխանություններն իրենց նախաձեռնությամբ հարուցեն նման վարույթ, քանի որ ներպետական օրենսդրությունը ոչ մի մարմնի նման իրավազորությամբ չի օժտել (տե՛ս նաև, այս առումով, մեր դիտարկումները Հետևություններ և առաջարկություններ բաժնում):

ՀՀ կառավարությունը խախտում է ՆԿ կանոնակարգը՝ 2008թ.-ի հունիսից ի վեր չտրամադրելով անհատական բնույթի միջոցների մասին տեղեկատվություն:

Ընդհանուր միջոցներ

Ի կատարումը թիվ Rec(2002)13 և թիվ Rec(2004)4 հանձնարարականների պահանջների, վճիռը թարգմանվել ու հրապարակվել է ՀՀ Պաշտոնական տեղեկագրում, ՀՀ արդարադատության նախարարության և դատական համակարգի ինտերնետ կայքերում: Հաշվի առնելով սույն վճռի պիլոտային բնույթը (Դատարանի եզրահանգումների ընդարձակությունը և ամբողջ խորությամբ բոլոր բարձրացված խնդիրներին անդրադառնալու հանգամանքը, ինչը չի կարելի ասել սույն որոշումից հետո կրկնվող գործերով կայացված հետագա վճիռների մասին), ՀՀ դատական դպրոցում և ՀՀ դատախազության դպրոցում Եվրոպական դատարանի նախադեպերի մասին բոլոր խմբերի հետ անցկացվող դասընթացներում սույն վճիռն ամենաշատ օգտագործված ուսումնական նյութերից մեկն է: Ա. Գալստյանի վճռի փաստերի և Դատարանի եզրահանգումների հիման վրա կազմվել են բազմաթիվ հարցեր, թեստեր, իրավիճակային խնդիրներ և քննական հարցեր: Ավելին, սույն վճիռը բավականին ուսանելի է Եվրոպական դատարանի վերահսկողության շրջանակների մասին հատուկ դասընթացներ անցկացնելու համար:

Ինչ վերաբերում է Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասի բ-կետի և թիվ 7 արձանագրության 2-րդ հոդվածի հիմքով վճռի կատարման համար անհրաժեշտ համակարգային փոփոխություններին, ապա այս առումով կարծում ենք, որ ՀՀ-ն կատարել է իր պարտավորությունները՝ համաձայն թիվ Rec(2004)5 հանձնարարականի: Մասնավորապես.

ազատությունից զրկել որպես տույժի տեսակ, վերացվել է Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի բոլոր հոդվածներից՝ այդ թվում նաև ՎԻՎՕ 182-րդ հոդվածը, որը կիրառվել է Ա. Մխիթարյանի նկատմամբ: Սահմանադրության 16-րդ հոդվածի հիման վրա 16.12.2005թ.-ին փոփոխության է ենթարկվել ՎԻՎ օրենսգիրքը, և վարչական կալանք հասկացությունն ամբողջությամբ վերացվել է օրենսգրքում: Սահմանադրական բարեփոխումներից հետո անձին կարելի է ազատությունից զրկել միայն հանցագործություն կատարելու կասկածի հիման վրա: Այսինքն, բացի քրեական բնույթի արարք կատարելուց, վարչական կամ կարգապահական բնույթի իրավախախտման համար արգելվում է անձին ազատությունից զրկելը: Ավելին, թեև վարչական կալանքի պրակտիկան ինքնին չի խախտում Կոնվենցիայի պահանջները, ՀՀ-ն որոշել է ներպետական իրավունքից իսպառ վերացնել օրենսդրական բոլոր այն հիմքերը, որոնք նախատեսում են ժողովներ, հանրահավաքներ, երթեր և ցույցեր անցկացնելու կարգի խախտման դեպքում կիրառել վարչական տույժ ազատությունից զրկելու տեսքով:

Ինչ վերաբերում է Կոնվենցիայի 11-րդ հոդվածի հիմքով արձանագրված խախտման ուղղությամբ կիրառված ընդհանուր միջոցների մասին, ապա մեկ անգամ էլ շեշտենք, որ Հայաստանում այլևս անհնարին է անձին ենթարկել ազատությունից զրկելու հետ կապված վարչական պատասխանատվության, քանի որ նման պատժատեսակն ամբողջությամբ վերացվել է ՎԻՎՕ-ից, որը պայմանավորված էր 2005թ.-ի սահմանադրական բարեփոխումներով: Ինչ վերաբերում է զանգվածային միջոցառումներին մասնակցելու համար նախատեսված պատասխանատվության այլ հիմքերին, ապա Քրեական օրենսգիրքը և Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգիրքը սահմանում են նշված չորս հիմքերը, որոնք բոլորն էլ սկզբունքորեն համահունչ են Եվրոպական կոնվենցիայի պահանջներին: Բոլորովին այլ իրավիճակ է, երբ կարգավորող օրենքները, օրենսդրական դրույթները չարաշահվում են իրավապահ մարմինների, վարչական մարմինների և դատական մարմինների կողմից: Սակայն դա իրավակիրառ պրակտիկայի թերություն է, որը սույն գործով ընդհանուր միջոց կիրառելու շրջանակներից դուրս է:

Ինչ վերաբերում է ՆԿ-ի առաջարկությանը «Ժողովներ, երթեր, հավաքներ և ցույցեր անցկացնելու մասին» ՀՀ օրենքի կիրառության մոնիթորինգի հատուկ համակարգ ստեղծելու մասին և որին դեմ է արտահայտվել Հայաստանի պատվիրակությունը, ապա կարծում ենք, որ նման համակարգի ստեղծումը խիստ օգտակար կլիներ, քանի որ օրենքի կիրառումը շարունակվում է լրջորեն չարաշահվել իրավասու մարմինների կողմից:[66] Այդուհանդերձ, դա իրավակիրառ պրակտիկայի հարց է, իսկ ինչ վերաբերում է այն հանգամանքին, թե արդյոք Հայաստանը կատարել է սույն վճռից բխող

[66] Այդ մասին արվել են բազմաթիվ ուսումնասիրություններ և դիտարկումներ, ինչպես նաև անդրադարձներ կան ԵԽ բազմաթիվ վերահսկող մարմինների գնահատականներում:

ընդհանուր բնույթի միջոցներ կիրառելու իր պարտավորությունները թիվ Rec(2004)5 ներքո, ապա կարծում ենք, որ նման պարտավորությունները կատարվել են. առնվազն մինչև 2008թ.-ի մարտի 17-ի փոփոխությունները սույն օրենքն ապահովում էր արդյունավետ իրավական պաշտպանության մեխանիզմներ (Հանձնարարականի 1-ին սկզբունք), դրանում վերացվել էին համակարգային բացերը, որոնք զարկ կտային կրկնվող, նմանատիպ խախտումներով գանգատների հոսքի Եվրոպական դատարան (Հանձնարարականի 2-րդ սկզբունք) և՛ վարչական, և՛ դատական ընթացակարգերը ապահովում են խախտված իրավունքների վերականգնման արագացված ընթացակարգեր (Հանձնարարականի 3-րդ սկզբունք): Սակայն, 2008թ.-ի մարտի 17-ի փոփոխություններով, ըստ Մարդու իրավունքների պաշտպանի և ԵԽ մի շարք մարմինների, օրենքն անհրաժեշտ է կրկին բարեփոխել, որպեսզի այն բերվի մինչև մարտի 17-ի փոփոխությունները եղած իրավիճակի:[67]

[67] Տե՛ս, մասնավորապես, ԵԽԽՎ թիվ 1609 բանաձևի 7-րդ կետը:

4
Նիկողոսյանը և Մելքոնյանն ընդդեմ Հայաստանի

Գործի համարը. 11724/043
Վճիռը կայացվել է. 06.12.2007
Ուժի մեջ է մտել. 06.03.2008

Պաշտոնապես
Հրապարակվել է. ՀՀՊՏ 2009.02.11/8(674)

Փաստերը

Դիմումատուներ Մելքոնյանը և Նիկողոսյանն Արագածոտնի մարզի առաջին ատյանի դատարանում որպես պատասխանողներ ներգրավված են եղել քաղաքացիական գործով դատական վարույթում, որի շրջանակներում հայցվորները պահանջել են չեղյալ հայտարարել Մելքոնյանի և Նիկողոսյանի հետ կնքած առուվաճառքի պայմանագիրը և համատեղ սեփականության իրավունքի գրանցման վկայականը: 2003թ.-ի ապրիլի 25-ին Արագածոտնի մարզի առաջին ատյանի դատարանը բավարարել է հայցվորի պահանջները և չեղյալ է հայտարարել նշված փաստաթղթերը: Մելքոնյանն ու Նիկողոսյանը բողոքարկել են վճիռը: 2003թ.-ի մայիսի 30-ին ՀՀ քաղաքացիական վերաքննիչ դատարանը ծանուցագիր է ուղարկել երկու դիմումատուներին՝ նրանց տեղեկացնելով, որ գործի վերաքննիչ բողոքի վերաբերյալ նիստը տեղի կունենա 2003թ.-ի հունիս 10-ին, ժամը՝ 11:00-ին, Երևանում: 2003թ.-ի հունիսի 10-ին Քաղաքացիական վերաքննիչ դատարանը որոշել է ուժի մեջ թողնել 2003թ.-ի ապրիլի 25-ի վճիռը: Պատասխանողի ներկայացուցիչը ներկա էր գտնվում նիստին և ներկայացրել էր իր բանավոր փաստարկները և բացատրությունները, իսկ դիմողները ներկա չեն եղել նիստին: Դատական նիստը բացելիս Վերաքննիչ դատարանը նշել է, որ դիմողներն անձամբ ստացել են դատական նիստի մասին ծանուցագիրը, սակայն դատարան չեն ներկայացել: Նիկողոսյանն ու Մելքոնյանը բողոքարկել են Վճռաբեկ դատարան, նշելով, ի թիվս այլ պնդումների, որ պատշաճ ծանուցված չեն եղել դատական նիստի մասին և այդ պատճառով հնարավորություն չեն ունեցել ներկա գտնվել նիստին ու ներկայացնել փաստարկներ: Նրանք պնդել են, որ ծանուցագրերը նրանց են հանձնվել միայն 2003թ.-ի հունիսի 17-ին, ինչը հաստատվում է նաև համապատասխան ծրարով, որի վրա դրված կնիքը վկայում էր, որ ծրարը ստացվել էր հունիսի 17-ին: 2003թ.-ի սեպտեմբերի 26-ին Վճռաբեկ դատարանը, կողմերի բացակայությամբ, քննել ու մերժել է բողոքը և ուժի մեջ է թողել Վերաքննիչ դատարանի վճիռը: Վճռաբեկ դատարանն իր որոշման

մեջ չի անդրադարձել 2003թ.-ի հունիս 10-ի նիստին դիմումատուների բացակայության հարցին:

Դատարանի որոշումը

Քաղաքացիական վերաքննիչ դատարանը, դիմումատուների բացակայությամբ նիստ գումարելով, ինչպես հարկն է չի ստուգել, թե արդյոք նրանք պատշաճ կերպով տեղեկացված են եղել նիստի վերաբերյալ: Պատասխանողի ներկայացուցիչը ներկա է եղել նիստին և բանավոր ներկայացրել է իր փաստարկները ու բացատրությունները, որոնց վերաբերյալ դիմումատուները հնարավորություն չեն ունեցել ներկայացնելու իրենց դիրքորոշումը: Նրանք նաև հնարավորություն չեն ունեցել, ի պաշտպանություն իրենց հայցի, ներկայացնել իրենց բանավոր փաստարկները: Այս բացթողումը չի շտկվել նաև փաստով, որ դիմումատուները կարող էին վճիռը բողոքարկել Վճռաբեկ դատարանում, քանի որ վերջինս՝ ի տարբերություն Քաղաքացիական վերաքննիչ դատարանի, չի իրականացնում գործի ամբողջական վերաքննություն: Այս հանգամանքն ավելի է հիմնավորվում, եթե հաշվի առնենք, որ Վճռաբեկ դատարանը լիազորված էր հետ ուղարկել գործը նոր քննության՝ դատավարական իրավունքների խախտման առկայության հիմքով, ինչը և նրանք պահանջել էին իրենց վճռաբեկ բողոքում, և ինչը Վճռաբեկ դատարանը չի արել: Այստեղից հետևում է, որ սույն գործի հանգամանքներում, կողմերի հավասարության սկզբունքը չի հարգվել: Հետևաբար, տեղի է ունեցել Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասով երաշխավորված արդար դատաքննության իրավունքի խախտում:

Վարույթը Նախարարների կոմիտեում

Անհատական միջոցներ

ՆԿ-ն արձանագրել է, որ Եվրոպական դատարանի վճռի հիման վրա դիմումատուները դիմել են Վճռաբեկ դատարան՝ խնդրելով վերաբացել վարույթը և վերանայել խնդրո առարկա դատական ակտերը: Վճռաբեկ դատարանը 13.03.2009թ. բեկանել է Վճռաբեկ դատարանի 26.09.2003թ. և Քաղաքացիական վերաքննիչ դատարանի 10.06.2003թ. որոշումները և գործն ուղարկել է Արագածոտնի մարզի առաջին ատյանի դատարան նոր քննության: Առաջին ատյանի դատարանն անցկացրել է գործի նոր քննություն՝ *«հաշվի առնելով Եվրոպական դատարանի 33-41 կետերում նշված իրավական եզրահանգումները պատշաճ ծանուցելու մասին»*: 13.08.2009թ. առաջին ատյանի դատարանը վերահաստատել է իր նախկին որոշումն՝ ընդդեմ դիմումատուների:

Ընդհանուր միջոցներ

Եվրոպական դատարանի վճիռը թարգմանվել և հրապարակվել է ՀՀ Պաշտոնական տեղեկագրում, իսկ 04.06.2008թ.՝ ՀՀ արդարադատության նախարարության ինտերնետ կայքում (www.moj.am) և ՀՀ դատական իշխանության ինտերնետ կայքում (www.court.am): Ավելին, որպեսզի ներպետական դատարանների ուշադրությունը հրավիրվի դատական ծանուցագրերը պատշաճ ծանուցելու խնդրի վրա, վճռի տեքստն էլեկտրոնային միջոցներով տրամադրվել է բոլոր դատարաններին, մասնավորապես՝ ՀՀ վճռաբեկ դատարանին և Քաղաքացիական վերաքննիչ դատարանին: Հետևաբար, ակնկալվում է, որ նմանատիպ իրավիճակ ծագելու դեպքում ներպետական դատարանները կկիրառեն Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքը:

ՆԿ-ի որոշումը

Անհատական միջոցներ.

Անհրաժեշտ է ներկայացնել 13.08.2009թ. առաջին ատյանի դատարանի որոշման պատճենը, ինչպես նաև տեղեկություն այն մասին, թե վարույթի ընթացքում ինչպես է հաշվի առնվել մյուս կողմից իրավական որոշակիության սկզբունքը և դրա հնարավոր հետևանքները դիմողների վրա: Գործի հետագա քննությունը.

- Տեղակալները որոշեցին սույն գործին անդրադառնալ 2010թ.-ի դեկտեմբերի 1100-րդ նիստում՝ անհատական միջոցների մասին սպասվելիք տեղեկության համատեքստում:

Եզրահանգում

Անհատական միջոցներ

Եվրոպական դատարանը դրամական փոխհատուցում չի սահմանել: Հետևաբար, Հայաստանը դրամական փոխհատուցում տրամադրելու պարտավորություն չունի:

Կրկին ուշադրություն ենք դարձնում վճիռն ուժի մեջ մտնելու և վճռի հրապարակման (թարգմանության) ամսաթվերի միջև տարբերությանը, որը տվյալ դեպքում կազմում է մոտ տասնմեկ ամիս, մինչդեռ դիմումատուն ունի ընդամենը երեք ամիս վճիռն ուժի մեջ մտնելուց հետո նոր հանգամանքի հիմքով գանգատ ներկայացնելու համար:

Սույն գործով սկսվել ու ավարտվել է գործի վերաբացման վարույթը: Թեև դատարանները չեն փոփոխել 2003 թվականին ընդունված դատական ակտերում գործի էության վերաբերյալ արտահայտած իրենց դիրքորոշումները, սակայն էական է այն հանգամանքը, որ վերանայման վարույթում դատարաններն ապահովել են դիմումատուների ներկայությունը,

քանի որ Եվրոպական դատարանի կողմից արձանագրված խախտումը կայանում էր նրանում, որ ՀՀ վերաքննիչ դատարանը պատշաճ չէր ծանուցել դիմողներին, որի պատճառով վերջիններս զրկվել էին դատաքննության ներկա գտնվելու և իրենց բանավոր պնդումները ներկայացնելու հնարավորությունից: Հետևաբար, վերանայման վարույթում ապահովվել է restitution in integrum սկզբունքը՝ իրավախախտման զոհը դրվել է այնպիսի իրավիճակում, որում կգտնվեր, եթե խախտումը տեղի ունեցած չլիներ (եթե դիմումատուները պատշաճ ծանուցված լինեին դատական նիստի մասին, ապա ներկա կգտնվեին և իրենց բանավոր պնդումները կներկայացնեին նիստի ընթացքում): Քանի որ վերանայման վարույթում նշված իրավունքների իրագործումն ապահովվել է, Հայաստանը կատարել է թիվ R (2000) 2 հանձնարարականի պահանջները:

Թեև ՆԿ-ն ՀՀ-ից պահանջել էր ներկայացնել վերանայման արդյունքում դատարանի կայացրած վճռի պատճենը, այդ պահանջը չի կատարվել և ՆԿ-ն իր դեկտեմբերյան նիստում ստիպված է եղել նորից կրկնել, նախկին պահանջը՝ որոշելով հարցին անդրադառնալ 2011թ.-ի մարտի նիստում: Այսինքն, Հայաստանը խախտում է ՆԿ-ի կանոնակարգը՝ տեղեկությունը չտրամադրելով:

Ընդհանուր միջոցներ

Եվրոպական դատարանի վճիռը թարգմանվել և հրապարակվել է ՀՀ Պաշտոնական տեղեկագրում, ՀՀ արդարադատության նախարարության ինտերնետ կայքում, ՀՀ դատական իշխանության ինտերնետ կայքում: Վճիռը ներառված է ՀՀ դատական դպրոցի և ՀՀ դատախազության դպրոցի ուսումնական ծրագրերում և պարբերաբար ներկայացվում է դասընթացների մասնակիցներին: Հետևաբար, սույն գործով Հայաստանը կատարել է թիվ Rec(2004)4 հանձնարարականի պահանջները:

Վճռի հիման վրա փոփոխության է ենթարկել դատական նիստի մասին ծանուցելու ներպետական պրակտիկան: Եթե նախկինում պատշաճ ծանուցելու պահանջն ապահովելու համար դատարանի կողմից բավարար էր կողմերին դատական նիստի վայրի և ժամի մասին ծանուցագրի զուտ առաքումը, ապա փոփոխված պրակտիկայի համաձայն պահանջվում է նաև համոզվել, որ կողմը ստացել է ծանուցագիրը: Այդպիսի համոզմունք կարող է դրսևորվել ներկայումս միայն այն դեպքում, երբ դատարանը ստացել է ծանուցված անձի կողմից ստորագրված ստացականը առ այն, որ նա ստացել է ծանուցագիրը: Այդուհանդերձ, այս պահանջը ոչ միշտ է պահպանվում, մասնավորապես, ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից: Այսինքն, Հայաստանը թիվ Rec(2004)5 հանձնարարականի պահանջները կատարում է մասնակիորեն:

5
«Պայքար և հաղթանակ» ՍՊԸ-ն ընդդեմ Հայաստանի

Գործի համարը. 21638/03
Վճիռը կայացվել է. 20.12.2007
Ուժի մեջ է մտել. 02.06.2008

Պաշտոնապես
Հրապարակվել է. ՀՀՊՏ 2009.02.11/8(674)

Փաստերը

2001թվականի հունվարի 29-ին Հարկային պետական ծառայությունը ստուգումներ է կատարել «Պայքար և հաղթանակ» ՍՊԸ-ում, որի հիման վրա 2001թ.-ի ապրիլի 2-ին ՀՀ պետական եկամուտների նախարարությունը կատարել է գնահատում, ըստ գնահատման՝ ընկերության հարկային պարտքը կազմել է 3,797,281 ՀՀ դրամ (մոտ 5,400 եվրո)՝ ներառյալ համապատասխան հարկային օրենքներով սահմանված տույժերը և տուգանքները: Երևան քաղաքի դատախազությունը և Երևանի Մյասնիկյանի տարածքային հարկային տեսչությունը հայց են ներկայացրել ընկերության նշված հարկային պարտքի գումարը բռնագանձելու նպատակով՝ պնդելով, որ այն ժամանակին և պատշաճ ձևով ընկերությունը չի կատարել իր հարկային պարտավորությունները: 2001թ.-ի հուլիսի 13-ին Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանը վճիռ է կայացրել ընկերության դեմ: Ընկերությունը վերաքննիչ բողոք է ներկայացրել այդ ժամանակ գործող ՀՀ տնտեսական գործերով վերաքննիչ դատարան: Ընկերությունը խնդրել է նաև դատարանի պետական տուրքի վճարման ժամկետը հետաձգել: 2001թ.-ի օգոստոսի 31-ին ՀՀ տնտեսական գործերով վերաքննիչ դատարանը բավարարել է ընկերության՝ պետական տուրքի վճարման ժամկետը հետաձգելու միջնորդությունը և վերաքննիչ բողոքն ընդունել է վարույթ: 2001թ.-ի սեպտեմբերի 11-ին Հայաստանում տեղի ունեցած դատական համակարգի բարեփոխման արդյունքում ստեղծվել է ՀՀ տնտեսական դատարանը, որտեղ էլ քննության է ուղարկվել ընկերության գործը: 2001թ.-ի դեկտեմբերի 24-ին ՀՀ տնտեսական դատարանը դատախազի դիմումի հիման վրա որոշել է հայցի բավարարման միջոց կիրառել՝ արգելանք դնելով ընկերության գույքի ու դրամական միջոցների վրա 3,797,281 ՀՀ դրամի չափով: Ընկերությունը ՀՀ տնտեսական դատարան է ներկայացրել հակընդդեմ հայց՝ փորձելով անօրինական ճանաչել 2001թ.-ի ապրիլի 2-ի որոշումը: Դիմումատու ընկերությունը դիմել է պետական տուրքի վճարումը նույն հիմքով հետաձգելու խնդրանքով: 2002թ.-ի հունվարի 18-ին ՀՀ տնտեսական դատարանը բավարարել է պետական տուրքի վճարումը հետաձգելու մասին դիմումատու ընկերության միջնոր-

դությունը և վարույթ է ընդունել ընկերության հակընդդեմ հայցը: 2003թ.-ի հունվարի 20-ին ՀՀ տնտեսական դատարանը բավարարել է իշխանությունների հայցը և մերժել դիմումատու ընկերության հայցը: 2003թ.-ի փետրվարի 3-ին ընկերությունը ներկայացրել է վճռաբեկ բողոք, որի հետ մեկտեղ միջնորդել է հետաձգել պետական տուրքի վճարումը՝ պնդելով, որ ընկերությունն ունի ֆինանսական խնդիրներ, մասնավորապես, որ իր բանկային հաշվին ունի միայն 770 ՀՀ դրամ: 2003թ.-ի փետրվարի 14-ի նամակով ՀՀ վճռաբեկ դատարանը տեղեկացրել է ընկերությանը, որ վերջինիս վճռաբեկ բողոքը քննության է առնվելու 2003թ.-ի փետրվարի 28-ին, սակայն նամակում նշվել է, որ բողոքը կթողնվի առանց քննության, եթե մինչև 2003թ.-ի փետրվարի 24-ը ընկերությունը չվճարի պետական տուրքը: 2003թ.-ի փետրվարի 27-ի նամակով ՀՀ վճռաբեկ դատարանը վերադարձրել է ընկերության վճռաբեկ բողոքը պետական տուրքը վճարված չլինելու պատճառաբանությամբ: 2003թ.-ի մարտի 25-ին կատարողական վարույթ է հարուցվել ընկերության նկատմամբ, և վերջինիս գույքի վրա արգելանք է դրվել: 2004թ.-ի ապրիլի 22-ին ՀՀ տնտեսական դատարանը սնանկության վարույթ է հարուցել՝ Հարկային ծառայության հայցի հիման վրա: 2004թ.-ի մայիսի 20-ին ՀՀ տնտեսական դատարանը որոշում է կայացրել կասեցնել այդ վարույթը մինչև դիմումատու ընկերության կողմից Եվրոպական դատարան ներկայացված դիմումի առնչությամբ որոշում կայացվելը: Եվրոպական դատարանի կողմից վճռի կայացման պահին սնանկության վարույթը եղել է կասեցված վիճակում: Արդարացի փոխհատուցման մասով Դատարանը սահմանել է 1,200 եվրո ոչ նյութական և 25 եվրո դատական ծախսերի ու ծախքերի դիմաց:

Դատարանի որոշումը

Պետական տուրքը վճարելու պարտավորությունը չի կարող դիտարկվել որպես դատարանի մատչելիության իրավունքի սահմանափակում ըստ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի: Սակայն, այդ տուրքերի գումարը գնահատելը որոշակի գործի հատուկ հանգամանքների տեսանկյունից, ներառյալ դրանք վճարելու դիմումատուի ունակությունը և դատավարության այն փուլը, որում նման սահմանափակումը կիրառվել է, հանգամանքներ են, որոնք էական են որոշելու համար, թե արդյոք անձն օժտված է եղել դատարանի մատչելիության իրավունքով, թե՝ ոչ: Հետևաբար, անհրաժեշտ է քննել, թե արդյոք պետական տուրքի վճարումը հետաձգելու մասին ընկերության դիմումը մերժելով՝ ՀՀ վճռաբեկ դատարանը հաշվի է առել ընկերության գործի հատուկ հանգամանքները, մասնավորապես՝ նրա վճարելու ունակությունը: Գործի փաստերից երևում է, որ ՀՀ վճռաբեկ դատարանը չի քննել պետական տուրքի վճարումը հետաձգելու մասին դիմումատու ընկերության միջնորդությունը, որում դիմումատու ընկերությունը փաստարկներ էր ներկայացրել վճարելու իր անկարողության վերաբերյալ: Այդ պատճառով ՀՀ վճռաբեկ դատարանը հստակ տեղեկացված չէր դիմու-

մատու ընկերության ֆինանսական դրության մասին: Հետևաբար, խախտվել է ընկերության՝ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված դատարանի մատչելիության իրավունքը: Իսկ ինչ վերաբերում է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 70-րդ հոդվածի 3-րդ մասին, որի վրա էլ հիմնվել է վճռաբեկ դատարանը դիմումը մերժելիս, ապա նշված նորմը հստակորեն արգելում է առևտրային կազմակերպություններին ազատել պետական տուրքի վճարումից և այդ իմաստով Վճռաբեկ դատարանին լիազորություն չէր տալիս գնահատելու ընկերության վճարելու ունակությունը: Նշվածի առումով դատարանն արձանագրել է, որ դա ինքնին խնդիր է առաջացնում Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի հետ կապված:

Վարույթը Նախարարների կոմիտեում

Անհատական միջոցներ

ՆԿ-ն հաշվի է առել, որ ՀՀ քաղաքացիական դատավարության 241.1-րդ հոդվածը թույլատրում է գործի վերաբացում Եվրոպական դատարանի վճռի հիման վրա՝ նոր հանգամանքի հիմքով:

ՀՀ իշխանությունների կողմից տրամադրված տեղեկությունը. 16.03.2010թ. ՀՀ կառավարությունը տեղեկացրել է, որ դիմումատու ընկերությունը գործի վերաբացման դիմում է ներկայացրել Վարչական դատարան, որը 03.11.2008թ. ընդունել է դիմումը և կայացրել գործի վերաբացման մասին որոշում «նոր հանգամանքի» հիմքով: 13.02.2009թ. Վարչական դատարանը փոխանցել է գործը Վճռաբեկ դատարանին, որն էլ ի վերջո մերժել է դիմումը:

Գործի վերաբացման ընթացակարգերը կարգավորող օրենսդրական նորմերի առումով ՆԿ-ն արձանագրել է հետևյալը.

> *ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրքը ենթարկվել է մի շարք փոփոխությունների: 09.09.2008թ. ՀՀ սահմանադրական դատարանը հայտարարել է, որ 204.[20]-րդ և 204.[26]-րդ հոդվածները հակասահմանադրական են: Սահմանադրական դատարանը գտել է, որ Եվրոպական դատարանի վճիռները կատարելու համար անդամ պետությունները պարտավոր են, inter alia, կիրառել անհատական միջոցներ դիմողների օգտին: Անհատական միջոցները, որպես կանոն, հանգեցնում են ներպետական դատական ակտերի վերանայմանը Եվրոպական դատարանի վճիռների հիման վրա: Ներպետական դատական ակտերի վերանայումը հիմնարար կարևորություն ունի Եվրոպական դատարանի վճիռների կատարման համար, եթե դատավարական նորմերի խախտումը հանգեցրել է իրավունքների խախտմանը:*

Դատավարական նորմերի խախտում կարող է տեղի ունենալ ցանկացած ներպետական դատական համակարգի ցանկացած ատյանում, և Եվրոպական դատարանի վճիռների կատարման առումով անհրաժեշտ է վերանայել դատարանի դատական այն ակտը, որով տեղի է ունեցել դատավարական նորմերի խախտում: Սահմանադրական դատարանը գտել է, որ Եվրոպական դատարանի վճիռների հիման վրա դատական ակտերը վերանայելու ներկայիս իրավակարգավորումը որևէ հնարավորություն չի ընձեռում անհատների խախտված իրավունքները վերականգնելու համար: Դրանք նաև խոչընդոտում են Հայաստանի Հանրապետության կողմից Եվրոպական դատարանի վճիռների կատարմանը և խնդիրներ են հարուցում Կոնվենցիայի ներքո ՀՀ-ի կողմից պարտականությունների կատարմանը: Որպեսզի հնարավոր լինի Եվրոպական դատարանի վճիռների հիման վրա հասնել անձանց խախտված իրավունքների վերականգնմանը, անհրաժեշտ է ներպետական իրավունքում դատական ակտերի վերանայման [մեխանիզմները] ամրագրել հստակորեն:

Այդ որոշման հիման վրա 26.12.2008թ. փոփոխության են ենթարկվել Քաղաքացիական դատավարության օրենսգրքի 204.[20]-րդ և 204.[26]-րդ հոդվածները: Ըստ փոփոխված հոդվածների, միջազգային ատյանի վերջնական որոշումը/վճիռը, որով հիմնավորվել է ՀՀ-ի կողմից վավերացված միջազգային պայմանագրով սահմանված մարդու իրավունքների խախտում, համարվում է օրինական հիմք ներպետական վարույթի վերաբացման համար: Երբ տեղի է ունենում վարույթի վերաբացում նման հիմքերով, առաջին ատյանի դատական ակտը վերանայվում է վերաքննիչ դատարանի կողմից, իսկ վերաքննիչ դատարանի դատական ակտն էլ վերանայվում է վճռաբեկ դատարանի կողմից:

24.12.2009թ. ՀՀ կառավարության կողմից պատրաստվել և Ազգային ժողով է ներկայացվել Քաղաքացիական դատավարության օրենսգրքի փոփոխության նոր նախագիծ, որով նախատեսվում է բարելավել գործի վերաբացման դրույթները:

Ընդհանուր միջոցներ

ՆԿ-ն արձանագրել է, որ Եվրոպական դատարանն իր որոշման մեջ անդրադարձել է ՀՀ քաղաքացիական դատավարության 70-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված դրույթին, որով բացարձակ արգելք էր սահմանվում առևտրային կազմակերպություններին պետական տուրքի վճարումից ազատելու համար և որ այս արգելքն ինքին խնդիր էր առաջացնում Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասով:

ՀՀ իշխանությունների կողմից տրամադրված տեղեկությունը. Վճիռը թարգմանվել է հայերեն ու հրապարակվել է ՀՀ արդարադատության նախարարության (www.moj.am), ՀՀ գլխավոր դատախազության (www.genproc.am), դատական համակարգի (www.court.am) և ՀՀ ոստիկանության (www.police.am) ինտերնետ կայքերում:

15.10.2010թ.-ին ՀՀ իշխանությունները հայտնել են, որ 07.04.2009թ.-ին ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 70-րդ հոդվածի 3-րդ մասը վերացվել է ՀՕ-85-Ն օրենքով: Միաժամանակ, ՀՕ-84-Ն փոփոխությամբ «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 4-րդ մասը վերացվել է, քանի որ ուներ նույնաբովանդակ տեքստ՝ երկու դրույթներով էլ առևտրային կազմակերպություններին ուղղակիորեն արգելված էր ազատել դատարան դիմելու պետական տուրքի վճարումից: Կառավարությունը գտնում է, որ նշված բարեփոխումների արդյունքում դատարանները կարող են իրենք կատարել պետական տուրքը վճարելու առևտրային ընկերությունների հնարավորությունների գնահատում:

ՆԿ-ի որոշումը

Անհատական միջոցներ.

- ՆԿ-ն սպասում է գործի վերաբացման համար նոր հանգամանքի հիմքով ընկերության կողմից ներկայացրած դիմումը մերժելու մասին Վճռաբեկ դատարանի որոշման պատճենին և թարգմանությանը:
- ՆԿ-ն սպասում է 24.12.2009թ. ՀՀ կառավարության կողմից նախաձեռնված օրենսդրական բարեփոխումների և դրանց արդյունքի մասին տեղեկատվության: ՆԿ-ն նշել է, որ ցանկալի է նաև ունենալ Քաղաքացիական դատավարության օրենսգրքի վարույթի վերաբացման վերաբերյալ համապատասխան գլխի պատճենը և թարգմանությունը:

Ընդհանուր միջոցների առումով ՆԿ-ն գտնում է, որ.

- այլ միջոցներ կիրառելու անհրաժեշտություն չկա:

Գործի հետագա քննարկում.

- Տեղակալները որոշեցին սույն գործին անդրադառնալ 2010թ.-ի դեկտեմբերի 1100-րդ նիստում՝ անհատական միջոցների մասին տրամադրվելիք տեղեկության լույսի ներքո:

Եզրահանգում

Անհատական միջոցներ

Վճիռն ուժի մեջ է մտել 02.06.2008թ.-ին, իսկ ՀՀ Պաշտոնական տեղեկագրում հրապարակվել է 11.02.2009թ.-ին՝ մոտ ութ ամիս անց, որն ավե-

լին է, քան նոր հանգամանքի հիմքով գանգատ ներկայացնելու ժամկետը: Դա նշանակում է, որ դիմողները, ամենայն հավանականությամբ, սեփական ուժերով պետք է ապահովեին վճռի պատշաճ թարգմանությունը՝ նոր հանգամանքի հիմքով դիմումին կցելու համար:

Դատարանի կողից սահմանված դրամական փոխհատուցումը տրամադրվել է:

Սկսվել ու ավարտվել է գործի վերաբացման վարույթը: ՀՀ վճռաբեկ դատարանը, հիմք ընդունելով Եվրոպական դատարանի վճիռը և վկայակոչելով restitution in integrum սկզբունքը, մասնավորապես, որ ընկերությունը պետք է հնարավորինս դրվի այնպիսի իրավիճակում, որում կգտնվեր, եթե այդ հոդվածի պահանջներն անտեսված չլինեին, որոշել է, որ անհրաժեշտ է վճռաբեկության կարգով քննել Տնտեսական դատարանի 20.01.2003 թվականի թիվ S-102 վճռի դեմ բերված վճռաբեկ բողոքը (Վճռաբեկ դատարանի ՎԴ/5438/05/08 2009թ.-ի որոշումը): Սա միանգամայն իրավացի մոտեցում է, քանի որ Եվրոպական դատարանի կողմից արձանագրված խախտումը կայանում էր նրանում, որ Վճռաբեկ դատարանը 2003 թվականին հրաժարվել էր քննել ընկերության վճռաբեկ բողոքը, որի պատճառով էլ ընկերությունը զրկվել էր դատարան դիմելու իրավունքից Կոնվենցիայի 6-րդ հոդվածի հիմքով: Հետևաբար, անհրաժեշտ էր ընկերության համար ապահովել խախտումից անմիջապես առաջ գոյություն ունեցող իրավիճակը, այն է՝ վճռաբեկ բողոքի վարույթի ընդունումը և քննությունը: Հաշվի առնելով, որ ապահովվել է վարույթի վերաբացումը և վիճահարույց դատական ակտի վերանայումը, Հայաստանը կատարել է թիվ R (2000) 2 և Rec(2008)2 հանձնարարականների պահանջները:

Անհատական միջոցների վերաբերյալ տեղեկատվությունը, որը ՆԿ-ն պահանջել էր ՀՀ կառավարությունից ներկայացնել 2010 թվականի սեպտեմբերի նիստին, չի ներկայացվել: Տեղեկատվությունը չի ներկայացվել նաև 2010 թվականի դեկտեմբերի նիստին, որի պատճառով ՆԿ-ն որոշել է նշված հարցերին անդրադառնալ 2011թվականի մարտի նիստում:

Ընդհանուր միջոցներ

Եվրոպական դատարանի վճիռը թարգմանվել և հրապարակվել է ՀՀ Պաշտոնական տեղեկագրում, ՀՀ արդարադատության նախարարության ինտերնետ կայքում և ՀՀ դատական իշխանության ինտերնետ կայքում: Վճիռը ներառված է ՀՀ դատական դպրոցի և ՀՀ դատախազության դպրոցի ուսումնական ծրագրերում և պարբերաբար ներկայացվում է դասընթացների մասնակիցներին: Հետևաբար, սույն գործով ՀՀ-ն կատարել է թիվ Rec(2004)4 և Rec(2002)13 հանձնարարականների պահանջները:

Վճռի հիման վրա փոփոխության են ենթարկվել ներպետական օրենքները ու պրակտիկան: Մասնավորապես, եթե նախկինում արգելված էր առևտրային կազմակերպություններին ազատել դատարան դիմելու համար պետական տուրքի վճարումից (ի տարբերություն ֆիզիկական ան-

ձանց), ապա ներկայումս այդ արգելքը հանված է, և առևտրային կազմակերպությունները նույնպես կարող են ազատվել պետական տուրքի վճարումից: Ավելին, օրենքների փոփոխության համաձայն դատարանները իրենք կարող են կատարել պետական տուրքը վճարելու առևտրային ընկերությունների հնարավորությունների գնահատում: Նշվածից հետևում է, որ թիվ Rec(2004)5 հանձնարարականի պահանջները կատարված են:

6

Սարուխանյանն ընդդեմ Հայաստանի

Գործի համարը. 38978/03
Վճիռը կայացվել է. 27.05.2008
Ուժի մեջ է մտել. 27.08.2008

Պաշտոնապես
Հրապարակվել է. ՀՀՊՏ 2009.02.11/8(674)

Փաստերը

2003 թվականի մարտի 15-ին դիմումատուն գրանցվել է թիվ 12 ընտրատարածքում ՀՀ Ազգային ժողովի ընտրություններում մեծամասնական ընտրակարգով թեկնածու գրանցվելու համար: Ընտրատարածքային հանձնաժողովին ներկայացրել է անհրաժեշտ փաստաթղթեր, ներառյալ՝ սեփականության մասին հայտարարագիրը: 2003թ.-ի ապրիլի 28-ին թիվ 12 Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը հարցում է կատարել ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեին դիմումատուի անվամբ սեփականության իրավունքով գրանցված անշարժ գույքի վերաբերյալ: 2003թ.-ի ապրիլի 29-ին ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեն՝ ի պատասխան Ընտրական հանձնաժողովի կողմից ուղարկված գրության, տեղեկացրել է, որ բնակարանում, որտեղ բնակվում է դիմումատուն, գրանցված են վեց անձ, ներառյալ՝ դիմումատուն և հանդիսանում են բնակարանի համասեփականատեր: Սույն գրության հիման վրա ընտրական հանձնաժողովը որոշել է դիմումատուի թեկնածության գրանցումը ճանաչել անվավեր, քանի որ դիմումատուն գույքի սեփականության վերաբերյալ հայտարարագրի մեջ չէր նշել բնակարանում համասեփականատեր լինելու փաստի մասին: Դիմումատուն որոշումը բողոքարկել է Երևան քաղաքի Շենգավիթ համայնքի առաջին ատյանի դատարանում: Նա նշել է, որ չի կեղծել որևէ փաստաթուղթ և բացատրել է, որ 1973թ.-ից բնակվել է բնակարանում և, որ բնակարանը Երևան քաղաքի ժողովրդական պատգամավորների Շահումյանի շրջանային խորհրդի գործադիր կոմիտեի 1994թ.-ի հոկտեմբերի 27-ի որոշմամբ սեփականաշնորհվել է իր մոր անունով: 1994թ.-ի նոյեմբերի 18-ի սեփականության վկայագրի համաձայն՝ բնակարանն ամբողջովին պատկանում է իր մորը: 2003թ.-ի ապրիլի 29-ի գրությունը հակասում է այդ երկու փաստաթղթերին և չի համապատասխանում իրականությանը: Իր ընտանիքը բաղկացած չի եղել վեց անձից, քանի որ իր հայրը մահացել է 1982թ.-ին: Այնուհետև, նա նշել է, որ տեղյակ չի եղել այդ անհամապատասխանության մասին և իր հայտարարագիրը լրացրել է իր մոտ առկա պաշտոնական փաստաթղթերի հիման վրա: Ընտրատարածքային ընտրա-

կան հանճնաժողովը սխալմամբ նույնացրել է կեղծարարություն և անճշտություն հասկացությունները: 2003թ.-ի մայիսի 8-ին Երևան քաղաքի Շենգավիթ համայնքի առաջին ատյանի դատարանը մերժել է դիմումատուի հայցը՝ հիմնավորված համարելով, որ դիմումատուն, իր հայտարարագրում կեղծիք կատարելով, թաքցրել է բնակարանի նկատմամբ իր համատեղ ընդհանուր սեփականության իրավունքի փաստը: Վճիռն օրինական ուժի մեջ է մտել հրապարակման պահից և ենթակա չի եղել բողոքարկման:

Դատարանի որոշումը

Իրավաչափ նպատակի տեսանկյունից անհրաժեշտ է խուսափել այնպիսի իրավիճակներից, երբ թեկնածուների կողմից ներկայացված սխալ տեղեկատվությունը կարող է մոլորության մեջ գցել ընտրողներին, այս առումով Դատարանը եզրակացրել է, որ նշվածը վերաբերում է նույնիսկ այն դեպքերին, երբ թեկնածուների կողմից ներկայացված տեղեկատվությունը ոչ միտումնավոր կերպով է պարունակում օբյեկտիվ անճշտություն: Այդուհանդերձ, Դատարանը նաև գտել է, որ չի կարելի տվյալ դեպքում դիմումատուի գործողությունները գնահատել անբարեխիղճ, քանի որ նա ունեցել է բոլոր հիմքերը ենթադրելու, որ ներկայացված տեղեկությունը ճշգրիտ է, առավել ևս՝ հաշվի առնելով այն, որ իր կողմից թույլ տրված սխալը մոլորության մեջ գցող սեփականաշնորհման կանոնների և պրակտիկայի արդյունք է, և որ դա չի կարող ողջամտորեն դիտվել որպես դիմումատուի մեղավորություն: Ավելին, տեղեկատվությունը, որը դիմումատուն ենթադրաբար թաքցրել է, վերաբերում է 64.7 քմ մակերեսի ընդամենը մի փոքր մասի սեփականատեր լինելու փաստին, և չի կարելի համարել, որ կար իրական վտանգ, որ նման փոքր նշանակություն ունեցող տեղեկությունը կարող է մոլորության մեջ գցել ընտրազանգվածին: Հաշվի առնելով դիտավորությունը հիմնավորող համոզիչ ապացույցների բացակայությունը, նրա սխալն արդարացնող օբյեկտիվ և բավարար պատճառների առկայությունը և նրա սեփականության իրավունքի չնչին բաժինը՝ Դատարանը եզրակացրել է, որ դիմումատուի թեկնածությունն անվավեր ճանաչելն անհամաչափ է եղել հետապնդվող իրավաչափ նպատակին: Հետևաբար, խախտվել է Կոնվենցիայի Թիվ 1 արձանագրության 3-րդ հոդվածով սահմանված ընտրվելու իրավունքը: Դատարանը սահմանել է 3,000 եվրո ոչ նյութական վնասի և 1,000 եվրո դատական ծախսերի դիմաց:

Վարույթը Նախարարների կոմիտեում

Անհատական միջոցներ

ՀՀ կառավարությունը գտնում է, որ ընտրական հանճնաժողովի 03.05.2003թ. որոշումը չի կարող որևէ ազդեցություն ունենալ հետագա ընտրություններում դիմողի ընտրվելու իրավունքի իրականացման վրա:

Այդ որոշումն իրավական հետևանք կարող էր առաջացնել միայն տվյալ ժամանակահատվածի համար՝ 2003 թվականի մայիսի խորհրդարանական ընտրությունների առնչությամբ (2003 թվականին ընտրված խորհրդարանականների մանդատն ավարտվել է 2007 թվականի ընտրություններով):

Ընդհանուր միջոցներ

Ընտրաթեկնածուի գրանցումը կարգավորող նորմերը փոփոխության են ենթարկվել սույն գործի փաստերից հետո ընկած ժամանակահատվածում:

Եվրոպական դատարանի վճիռը թարգմանվել և հրապարակվել է ՀՀ արդարադատության նախարարության (www.moj.am), ՀՀ գլխավոր դատախազության (www.genproc.am), ՀՀ դատական իշխանության (www.court.am) և ՀՀ ոստիկանության (www.police.am) ինտերնետ կայքերում: Վճռի տեքստը տրամադրվել է ՀՀ սահմանադրական դատարանին, ՀՀ վճռաբեկ դատարանին, վերաքննիչ դատարաններին, առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարաններին՝ այդ թվում նաև Երևանի Շենգավիթի շրջանի ընդհանուր իրավասության դատարանին:

ՆԿ-ի որոշումը

Ընդհանուր միջոցներ.

- անհրաժեշտ է ներկայացնել հետևյալ տեղեկությունները.
  - իշխանությունների գնահատականը, թե արդյոք անհրաժեշտություն կա հստակեցնելու գույքի գրանցման ընթացակարգը,
  - պարզաբանում, թե արդյոք գոյություն ունի թեկնածուների գրանցման վեճերի հետ կապված առաջին ատյանի դատարանների որոշումների վիճարկման արդյունավետ իրավական պաշտպանության միջոց՝ հաշվի առնելով, որ Շենգավիթի տարածքի դատարանի վճռում և ՀՀ կառավարության կողմից Եվրոպական դատարանի վարույթի ընթացքում արտահայտված են հակասական դիրքորոշումներ:

Գործի հետագա քննությունը.

- Տեղակալները որոշեցին սույն գործին անդրադառնալ 2010թ.-ի դեկտեմբերի 1100-րդ նիստում՝ ընդհանուր բնույթի միջոցների մասին տրամադրվելիք տեղեկության համատեքստում:

Եզրահանգում

Անհատական միջոցներ

Վճիռն ուժի մեջ է մտել 27.08.2008թ.-ին, իսկ ՀՀ Պաշտոնական տեղեկագրում հրապարակվել է 11.02.2009թ.-ին՝ մոտ վեց ամիս անց, որն ավելին է, քան նոր հանգամանքի հիմքով գանգատ ներկայացնելու ժամկետը:

Դատարանի կողից սահմանված դրամական փոխհատուցումը տրամադրվել է (ՀՀ կառավարության 20.11.2008թ. N 1341-Ա որոշում):

Գործի վերաբացման վարույթ չի հարուցվել: Այս առնչությամբ պետք է նկատել կառավարության տեսակետը, ըստ որի՝ արձանագրված խախտումը որևէ հետևանք չի առաջացրել դիմումատուի ընտրվելու իրավունքի վրա ապագա ընտրություններում: Ստացվում է, որ տվյալ հանգամանքներում խախտված իրավունքի արդարացի փոխհատուցման համեմատաբար նպատակահարմար միջոցն իրավունքի խախտման փաստի ճանաչումն է ներպետական ատյանների կողմից և բարոյական վնասի փոխհատուցումն է: Երկրորդը կատարվել է Եվրոպական դատարանի կողմից: Այդուհանդերձ, քանի որ, մի կողմից, դիմումատուն չի դիմել գործի վերաբացման վարույթ հարուցելու դիմումով, իսկ մյուս կողմից, սույն գործը քրեական բնույթի գործ չէ, պետությունը վերանայման վարույթ հարուցելու և իրավունքի խախտման փաստը ճանաչելու պարտականություն չի կրում:

Ընդհանուր միջոցներ

ՆԿ-ին հետաքրքրել է ընտրաթեկնածուի գույքի գրանցման ընթացակարգերի հստակության մասին հարցը և այդ առումով ՀՀ իշխանություններից խնդրել է տրամադրել եզրակացություն, թե արդյոք կարիք կա հստակեցնել ընթացակարգերը: Ըստ երևույթին, ՆԿ-ն ցանկանում է, որպեսզի իշխանությունները բարելավումներ կատարեն ընտրաթեկնածուների գրանցման այն ընթացակարգերում, որոնք վերաբերում են գույքային հարցերին: Այդուհանդերձ, նկատելի է, որ ՆԿ-ն զգուշավոր է այս հարցում և մինչև որևէ պահանջ առաջադրելը ցանկանում է իշխանություններից ստանալ նրանց դիրքորոշումը տվյալ հարցի առնչությամբ: Հետևաբար, մենք նույնպես ձեռնպահ ենք մնում որևէ եզրահանգում անելուց թիվ Rec(2004)5 հանձնարարականի ներքո մի խնդրի վերաբերյալ, որը ՆԿ-ի կողմից առաջ է քաշվել խիստ մեծ վերապահումներով:

Եվրոպական դատարանի վճիռը թարգմանվել և հրապարակվել է ՀՀ Պաշտոնական տեղեկագրում, ՀՀ արդարադատության նախարարության, ՀՀ գլխավոր դատախազության, ՀՀ դատական իշխանության և ՀՀ ոստիկանության ինտերնետ կայքերում: Վճռի տեքստը տրամադրվել է ՀՀ սահմանադրական դատարանին, ՀՀ վճռաբեկ դատարանին, վերաքննիչ դատարաններին, առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարաննե-

րին՝ այդ թվում նաև Երևանի Շենգավիթի շրջանի ընդհանուր իրավասության դատարանին: Վճիռը ներառված է ՀՀ դատական դպրոցի ուսումնական ծրագրերում և պարբերաբար ներկայացվում է դասընթացների մասնակիցներին: Հետևաբար, սույն գործով Հայաստանը կատարել է թիվ Rec(2004)4 և Rec(2002)13 հանձնարարականների պահանջները:

Ընդհանուր միջոցի վերաբերյալ կառավարությունից պահանջված տեղեկատվությունը չի ստացվել ո՛չ 2010թվականի սեպտեմբերի, և ո՛չ էլ դեկտեմբերի նստաշրջանին: Կրկնելով պահանջը, ՆԿ-ն որոշել է հարցին անդրադառնալ 2011 թվականի մարտի նստաշրջանին:

7
«Մելտեքս» ՍՊԸ-ն և Մեսրոպ Մովսեսյանն ընդդեմ Հայաստանի

Գործի համարը. 32283/04
Վճիռը կայացվել է. 17.06.2008
Ուժի մեջ է մտել. 17.09.2008

Պաշտոնապես
Հրապարակվել է. ՀՀՊՏ 2009.02.11/8(674)

Փաստերը

1991 թվականին «Մելտեքս» ՍՊԸ-ն հիմնադրել է «A1+» հեռուստաընկերությունը, որը համարվում է առաջին անկախ հեռուստաընկերությունը Հայաստանի Հանրապետությունում: Մինչև 2002 թվականը գործել է թիվ 37 հաճախականության տիրույթում՝ հեռարձակման արտոնագրի հիման վրա: 2002 թվականի ապրիլին ընկերությունը զրկվել է արտոնագրից, քանի որ Հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովի կազմակերպած մրցույթում պարտվել է մրցակից ընկերությանը: 2003 թվականի ընթացքում ընկերությունը մասնակցել է յոթ լիցենզավորման մրցույթների տարբեր հաճախականության տիրույթներում, սակայն բոլոր մրցույթներում ՀՌԱՀ-ի որոշումներով համարվել է պարտված: Բոլոր մրցույթներում ՀՌԱՀ-ը հրաժարվել է ընկերությանը տրամադրել լիցենզիայի դիմումները մերժելու մասին առանձին որոշումներ: ՀՌԱՀ-ը բավարարվել է միայն հաղթող կազմակերպության վերաբերյալ կայացրած իր որոշման պատճենն ընկերությանը ուղարկելով՝ պատճառաբանելով, որ այդ որոշումը միաժամանակ հանդիսանում է նաև լիցենզիան մերժելու մասին որոշում, որի մեջ, սակայն որևէ պատճառաբանություն չի տրամադրվել: Ընկերությունը ներպետական դատարաններում վիճարկել է մրցույթի անցկացման օրինականության հետ կապված բազմաթիվ հարցեր, այդ թվում նաև որոշումները չպատճառաբանելու ՀՌԱՀ-ի պրակտիկայի օրինականության հարցը «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի և Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 10-րդ հոդվածի հիմքերով: Ընկերության բոլոր դիմումները մերժվել են դատարանների կողմից:

Դատարանի որոշումը

Եվրոպական դատարանը որոշել է, որ արտոնագրման այն ընթացակարգը, որով արտոնագրող մարմինը չի պատճառաբանում իր որոշումները, պետական մարմնի կողմից խոսքի ազատության հիմնարար իրավունքին կամայական միջամտություններից բավարար պաշտպանություն չի ապահովում: Հետևաբար, արտոնագիր տրամադրելու թվով յոթ մեր-

ժումները չեն բավարարել Կոնվենցիայի 10-րդ հոդվածի 2-րդ մասի առաջին նախադասությամբ սահմանված օրինականության պահանջը: Արդարացի փոխհատուցման մասով Դատարանը սահմանել է 20,000 եվրո ոչ նյութական վնասի և 10,000 եվրո դատական ծախսերի ու ծախքերի դիմաց:

Վարույթը Նախարարների կոմիտեում

Անհատական միջոցներ

ՀՀ կառավարության հայտարարությունը. Իր թիվ 1043-րդ նիստում (դեկտեմբեր 2008) ՀՀ մշտական ներկայացուցիչը հայտարարել է, որ սույն գործում անհատական բնույթի միջոցների կիրառումը մեծամասամբ կապված է ընդհանուր բնույթի միջոցների կիրառման հետ, քանի որ նոր մրցույթների անցկացումը չի կարող բավարարել Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի պահանջները, եթե նախապես փոփոխության չենթարկվի «Ռադիոյի և հեռուստատեսության մասին» ՀՀ օրենքը: ՀՀ կառավարության ներկայացուցիչը հղում է կատարել նաև հեռուստատեսության ոլորտը թվայնացնելու հետ կապված որոշ «տեխնիկական խնդիրների» վրա՝ որպես տվյալ պահին անհատական կամ ընդհանուր միջոցներ կիրառելը խոչընդոտող հավելյալ հանգամանքներ (ՆԿ-ն այս առումով հղում է կատարել ՀՀ կառավարության ներկայացրած փաստաթղթի վրա, որն արձանագրված է DD(2008)679 համարի ներքո):

Գործի վերաբացման դատական վարույթները. Մելտեքս ընկերությունը թիվ DD(2009)307E նամակով ՆԿ-ի թիվ 1059-րդ նիստի մասնակիցներին տեղեկացրել է, որ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճռի և «նոր հանգամանքի» ընթացակարգի հիման վրա երկու դիմում է ներկայացրել ՀՀ վճռաբեկ դատարան՝ պահանջելով վերաբացել և վերանայել 2004 թվականին վերջինիս կայացրած երկու որոշումները, որով դատական ստուգման էր ենթարկել ՀՌԱՀ-ի որոշումները երկու առանձին դատական վարույթների շրջանակներում: Ընկերությունը տեղեկացրել է, որ երկու դիմումներն էլ մերժվել են 2009 թվականի փետրվարին: Ընկերությունը հայտնել է, որ բացի փոխհատուցման վճարները կատարելուց, այլ անհատական միջոցներ դեռ չեն կիրառվել խախտված իրավունքները վերականգնելու նպատակով: Ընկերության փաստաբանը 15.02.2010թ. թիվ DD(2010)72 փաստաթղթով տեղեկացրել է Նախարարների կոմիտեին, որ Սահմանադրական դատարանում բարձրացրել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 204[28]-րդ հոդվածի սահմանադրականության հարցը, որի հիման վրա Վճռաբեկ դատարանը 2009թ.-ի փետրվարին մերժել է վերաբացման երկու դիմումները: Ընկերության փաստաբանը գտնում է, որ այս հոդվածը հակասահմանադրական է:

2010 թվականի թիվ 1078-րդ նիստում ՀՀ իշխանությունները հայտնել են, որ հաշվի առնելով, որ նոր մրցույթների անցկացման գործընթացը դեռ ընթացքի մեջ է, դիմումատու ընկերության նկատմամբ հնարավոր չէ կիրառել որևէ այլ միջոց, քան *«արդյունավետ և թափանցիկ մրցույթի անցկացումը, քանի որ ցանկացած այլ միջոցի կիրառումը կհանգեցնի մի իրավիճակի, որի պայմաններում կխախտվեն երրորդ անձանց իրավունքները:* Նախարարների կոմիտեն ի գիտություն է ընդունել Հայաստանի Հանրապետության այս դիրքորոշումը:

Հաշվի առնելով, որ 14.09.2009թ. թիվ 1092 և 02.03.2010թ. թիվ 1078-րդ նիստերում Նախարարների կոմիտեն ՀՀ կառավարությունից պահանջել էր ներկայացնել ամբողջական տեղեկատվություն «Մելտեքս» ընկերության կողմից նախաձեռնած վերանայման դատական վարույթների մասին, 09.04.2010թ. ՀՀ կառավարությունը ՆԿ-ին է ուղարկել ՀՀ սահմանադրական դատարանի 09.04.2010թ. որոշման թարգմանությունը և նշել, որ նշված որոշումով որպես «նոր երևան եկած հանգամանք» ընկերությունը նորից կարող է դիմել Վճռաբեկ դատարան գործի վերաբացման դիմումով:

Նոր գանգատ Եվրոպական դատարան. ՆԿ-ն արձանագրել է, որ ընկերությունն իր հաղորդագրությամբ ՆԿ-ին տեղեկացրել է, որ 2009 թվականի հոկտեմբերին նոր գանգատ է ներկայացրել Եվրոպական դատարան՝ պահանջելով սահմանել, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի 10-րդ հոդվածի կրկնակի խախտում, երբ ՀՀ վճռաբեկ դատարանը 2009 թվականի փետրվարին մերժել է գործի վերաբացման իր դիմումները:

Հեռահաղորդակցության լիցենզիայի նոր մրցույթները. ՆԿ-ն արձանագրել է, որ ՀՀ իշխանությունները 1065-րդ նիստում (2009թ.-ի սեպտեմբեր) հայտարարել են, որ 2010 թվականին անցկացվելու են նոր մրցույթներ, և որ ընկերությունը հնարավորություն կունենա մասնակցել այդ մրցույթներին: Նույն նիստում ՆԿ-ն ընդունել է որոշում, որով ՀՀ կառավարությանը հրավիրել է տեղյակ պահել մրցույթի կազմակերպման բոլոր զարգացումների վերաբերյալ՝ ներառյալ նաև բոլոր այն միջանկյալ միջոցների մասին, որ իշխանությունները կարող են ձեռնարկել՝ հօգուտ «Մելտեքս» ընկերության:

Ընկերության ներկայացուցիչները 02.08.2010թ. DH-DD(2010)369E փաստաթղթով ՆԿ-ին գանգատվել են, որ ««Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին» 10.06.2010թ. ՀՀ օրենքով ՀՌԱՀ-ից այլևս չի պահանջվում պատճառաբանել իր որոշումները հեռարձակման արտոնագրի դիմումը մերժելիս, և որ նույն օրենքով կատարվել են մի շարք այլ փոփոխություններ, որոնցով ընկերությունը մրցույթներին մասնակցելիս կհայտնվի էապես անբարենպաստ իրավիճակում իր մրցակիցների նկատմամբ: ՀՀ իշխանությունները նշվածի առումով տեղեկատվություն չեն ներկայացրել:

ՆԿ-ն արձանագրել է, որ սկսած այն պահից, երբ ընկերությունը զրկվել է հեռարձակման արտոնագրից, «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքը ենթարկվել է մի շարք փոփոխությունների: 03.12.2003թ. օրենքում ավելացվեց հետևյալ դրույթը. *«…Հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովը պետք է պատշաճ կերպով հիմնավորի արտոնագրատիրոջն ընտրելու, արտոնագիրը տալը մերժելու և արտոնագիրն ուժը կորցրած ճանաչելու մասին որոշումները»:*

Թիվ 1043-րդ (դեկտեմբեր 2008թ.) և թիվ 1065-րդ նիստերում (սեպտեմբեր 2009թ.) ՀՀ իշխանությունները ներկայացրել են հետևյալ պարզաբանումները. «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքում կատարվել են փոփոխություններ, որպեսզի օրենքը համապատասխանեցվի թվային հեռարձակման անցումային պահանջներին և Կոնվենցիայի պահանջներին: Նոր փոփոխություններն ընդունվել են 28.04.2009թ.-ին: Որոշումները պատճառաբանելու ՀՌԱՀ-ի պարտավորության մասին նոր դրույթը ներկայացված է հետևյալ կերպ. «Ազգային հանձնաժողովը պետք է պատշաճ կերպով հիմնավորի արտոնագրատիրոջն ընտրելու, արտոնագիր տալը մերժելու և արտոնագիրն ուժը կորցրած ճանաչելու մասին որոշումները և ապահովի բոլոր հիմնավորումների հրապարակայնությունն ու մատչելիությունը»:

ՀՀ կառավարությունը նաև տեղեկացրել է, որ Եվրոպական դատարանի որոշումը թարգմանվել է հայերեն ու հրապարակվել է տպագիր և էլեկտրոնային պաշտոնական տեղեկագրերում, այդ թվում նաև ՀՀ արդարադատության նախարարության կայքում (www.moj.am) և ՀՀ դատական իշխանության կայքում (www.court.am): Վճիռն առաքվել է ՀՌԱՀ և ՀՀ վճռաբեկ դատարան:

Երկու հասարակական կազմակերպություններ տեղեկացրել են ՆԿ-ին (տե՛ս DH_DD(2010)375E փաստաթուղթը, որը ներկայացվել է 10.08.2010թ.-ին), որ ««Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքում, որն ընդունվել է 10.06.2010թ.-ին, սահմանվել են այնպիսի դրույթներ, որոնք հակասում են Կոնվենցիայի 10-րդ հոդվածին և «Մելտեքսի»-ի, գործով Եվրոպական դատարանի վճռին: Կազմակերպությունները, մասնավորապես, ընդգծել են հետևյալը.

- ՀՌԱՀ-ը պարտավորված չէ պատճառաբանելու իր որոշումները հեռարձակման արտոնագրի դիմումը մերժելիս,
- երբ երկու ընկերություններ ստանում են հավասար թվով վարկանիշներ լիցենզավորման մրցույթում, նախապատվությունը պետք է տրվի այն ընկերությանը, որն այն պահին ունի արտոնագիր:

ՆԿ-ի որոշումը

Իր վերջին՝ 2010թ.-ի սեպտեմբերի 14-ի նիստում ՆԿ-ն, արձանագրելով շարադրվածը, կայացրել է հետևյալ որոշումը.

Տեղակալները,

1. մտահոգությամբ ի գիտություն ընդունեցին «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» օրենքում վերջերս կատարված փոփոխությունները, որի դրույթներն այլև հստակորեն չեն պահանջում, որպեսզի պատճառաբանված որոշում կայացվի հեռարձակման արտոնագրի անհաջողակ դիմողի կամ մրցակցի վերաբերյալ,
2. ողջունում են կառավարության լիազոր ներկայացուցչի հայտարարությունն առ այն, որ «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» օրենքի 49-րդ հոդվածի 3-րդ մասը պետք է մեկնաբանվի Կոնվենցիայի 10-րդ հոդվածի և «Մելտեքսի» գործով վճռի լույսի ներքո, մասնավորապես, որ հանճնաժողովի յուրաքանչյուր որոշում տրամադրում է ամբողջական և պատշաճ հիմնավորում վարկանիշային քվեարկության արդյունքների մասին՝ և՛ մրցույթի հաղթողի, և՛ այլ մասնակիցների առնչությամբ,
3. հրավիրում է Հայաստանի իշխանություններին, որպեսզի Նախարարների կոմիտեին ներկայացնեն օրենսդրական և ենթաօրենսդրական կարգավորման մասին ամբողջական վերլուծություն, որով կհիմնավորվի, որ ՀՀ օրենքների համաձայն ՀՌԱՀ-ը հստակորեն պարտավորություն է կրում պատճառաբանելու իր որոշումներն արտոնագիր տրամադրելու կամ չտրամադրելու մասին կամ վերանայելու հեռարձակման արտոնագիր տրամադրելու իր որոշումները՝ մրցույթների կամ հեռարձակման արտոնագրի շրջանակներում, ինչպես նաև տեղեկատվություն նշվածն ընթացիկ արտոնագրային մրցույթներում կիրառելու մասին,
4. վերհիշում է, որ պատասխանող պետությունը պարտավորություն է կրում պատշաճ ժամկետներում տեղեկատվություն տրամադրել Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռների կատարման զարգացումների մասին,
5. որոշում է վերսկսել սույն գործի քննությունն իր 1100-րդ նիստում (նոյեմբեր-դեկտեմբեր 2010թ.) իշխանությունների կողմից հետագայում տրամադրվելիք տեղեկությունների, մասնավորապես՝ տարվա վերջում կայանալիք մրցույթների վերաբերյալ տեղեկությունների լույսի ներքո:

Եզրահանգում

Անհատական միջոցներ

Դատարանի կողմից սահմանված դրամական փոխհատուցումը տրամադրվել է (ՀՀ կառավարության 06.11.2008թ. N 1276-Ա որոշում):

1. Գործի վերաբացման վարույթը

Ընկերությունն ընդհանուր առմամբ չորս դիմում է ներկայացրել Վճռաբեկ դատարան նոր հանգամանքների հիմքով Վճռաբեկ դատարանի 2004 թվականի որոշումները վերանայելու պահանջով: Դիմումներով Վճռաբեկ դատարանից պահանջել է հարուցել վերանայման վարույթ և վերանայել 2004թվականի իր որոշումները, որոնցով մերժել էր Տնտեսական դատարանի որոշումների դեմ ընկերության բերած վճռաբեկ բողոքները: Վճռաբեկ դատարանը բոլոր չորս դիմումների կապակցությամբ հարուցել է վերանայման վարույթներ, դիմումներն ընդունել է վարույթ, սակայն հետագա քննության ընթացքում մերժել է դիմումները և հրաժարվել է վերանայել Տնտեսական դատարանի որոշումները: Վճռաբեկ դատարանը գտել է, որ, առաջին, Կոնվենցիայի 10-րդ հոդվածը խախտվել է ոչ թե վիճահարույց մրցույթների ընթացքում, այլ մրցույթներից հետո՝ ՀՌԱՀ-ի կողմից որոշում կայացնելիս պատշաճ պատճառաբանություն չներկայացնելով, հետևաբար, նման հանգամանքներում անհրաժեշտություն չկա վերանայել Տնտեսական դատարանի որոշումները: Երկրորդ, քանի որ Եվրոպական դատարանը գտել է, որ ՀՀ դատարանները Կոնվենցիայի խախտում թույլ չեն տվել (6-րդ հոդվածով խախտում չի արձանագրվել), հետևաբար նույնպես հիմք չկա Տնտեսական դատարանի որոշումները վերանայելու համար: Այսպիսով, թեև հարուցվել են վերաբացման վարույթներ, սակայն դատական ակտերի վերանայում, վերաքննություն տեղի չի ունեցել: Միայն վերաքննության արդյունքում ընկերությունն իրական, արդյունավետ հնարավորություն կստանար վիճարկելու ՀՌԱՀ միջամտող բնույթի վարչական ակտերի էության մասին հարցերը: Նման հանգամանքներում հարց է բարձրանում, թե արդյոք դատական ակտերի վերանայման վարույթ հարուցելով, սակայն վերաքննություն չանցկացնելով կարելի է ասել, որ Հայաստանը կատարել է ՆԿ թիվ R (2000) 2 հանձնարարականի պահանջները: Մենք կարծում ենք, որ վերանայման վարույթ հարուցելն ինքնին restitution in integrum չէ:

2. Գործի վերանայման վարույթը ՀՀ սահմանադրական դատարանի որոշման հիման վրա

Վճռաբեկ դատարանը, ընկերության ներկայացուցիչների երկու դիմումների հիման վրա հարուցել էր ներպետական դատական ակտերի վե-

րաձայման վարույթ, սակայն վերաձայման վարույթի արդյունքում 19.01.2009թ. մերժել էր վերաձայել իր՝ 2004 թվականի դատական ակտերը՝ կիրառելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 204[28]-րդ հոդվածի դրույթները: Ըստ այդ դրույթների՝ նոր հանգամանքներով դատական ակտը վերաձայելու արդյունքում դատարանն, inter alia, իրավասու է նախորդ դատական ակտը թողնել ուժի մեջ, բողոքը՝ առանց բավարարման:

Ընկերության նկատմամբ կիրառված դրույթները, մի շարք հոդվածների հետ միասին, ՀՀ սահմանադրական դատարանի կողմից ՀՀ Սահմանադրությանը հակասող և անվավեր էին ճանաչված եղել՝ 09.09.2008թ. ՍԴՈ-758 որոշմամբ (տես՝ վերևում):

Սահմանադրական դատարանը 23.02.2010թ. ՍԴՈ-866 որոշմամբ վերահաստատել է 09.09.2008թ. ՍԴՈ-758 որոշման մեջ արտահայտած իրավական դիրքորոշումները և կարճել է «Մելտեքս» ՍՊԸ-ի՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 204[28]-րդ հոդվածի դրույթները ՀՀ Սահմանադրությանը հակասող և անվավեր ճանաչելու պահանջով գործի վարույթը: Միևնույն ժամանակ, Սահմանադրական դատարանն արձանագրել էր, որ սպառված չպետք է համարվի այդ գործի առարկայի շրջանակներում նոր հանգամանքներով իրավասու դատարան դիմելու ընկերության իրավունքը:

Ընկերության ներկայացուցիչները Սահմանադրական դատարանի 23.02.2010թ. ՍԴՈ-866 որոշումը նոր հանգամանք կամ նոր երևան եկած հանգամանք են դիտել, Վճռաբեկ դատարանի 19.01.2009թ. որոշումները և հետևաբար՝ 2004 թվականի որոշումների, վերաձայելու վարույթ հարուցելու համար և այդպիսի պահանջով 09.03.2010թ. կրկին երկու դիմում են ներկայացրել Վճռաբեկ դատարան:

Վճռաբեկ դատարանը 24.03.2010թ. կրկին հարուցել է դատական ակտերի վերաձայման վարույթ: Սակայն, Վճռաբեկ դատարանը 13.08.2010թ. որոշումներով մերժել է ընկերության բողոքը և իր դատական ակտերը թողել է ուժի մեջ: Վճռաբեկ դատարանն օգտվել է նոր հանգամանքով վերաձայման վարույթի արդյունքում նախկին դատական ակտն ուժի մեջ թողնելու և բողոքը մերժելու իր լիազորություններից, որն Ազգային ժողովը, ի հեճուկս Սահմանադրական դատարանի իրավական գնահատականների, ներմուծել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրք՝ այլ հոդվածների ձևով: Մասնավորապես, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 204[38]-րդ հոդվածով նախատեսված է, որ նոր հանգամանքներով դատական ակտի վերաձայման վարույթի վրա տարածվում են օրենսգրքի ընդհանուր կանոնները, իսկ ընդհանուր կանոնները թույլ են տալիս՝ բողոքը մերժել՝ դատական ակտը թողնելով օրինական ուժի մեջ:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի նշված իրավակարգավորումը, որը ներմուծվել է 14.06.2010թ. ՀՕ-94-Ն օրենքով, հակասության մեջ է գտնվում Սահմանադրական դատարանի սույն հետազո-

տության տեսական բաժնում վկայակոչված որոշումներում արտահայտած իրավական դիրքորոշումների հետ:

3. Նոր մրցույթը որպես խախտված իրավունքը վերականգնելու միջոց

Ինչ վերաբերում է նոր մրցույթ անցկացնելը որպես անհատական բնույթի միջոց դիտելու մասին ՀՀ կառավարության դիրքորոշմանը, ապա թեև նոր մրցույթի անցկացումն ինքնին կարող է հանգեցնել հեռուստաընկերության կողմից կապուղի ստանալուն, սակայն դա չի բխում *restitution in integrum* սկզբունքից, քանի որ դրանով չի ապահովվում հեռուստաընկերության համար այն նույն պայմանները, ինչ գոյություն ունեին 2003 թվականի մրցույթների ընթացքում: Մենք գտնում ենք, որ եթե խոսքը վերաբերում է նոր մրցույթի անցկացմանը, ապա դա պետք է արվի նախկին մրցույթների ընթացքում ՀՌԱՀ-ի կողմից գնահատված մրցութային փաթեթների վերագնահատումով, այսինքն՝ վերանայումով: Այսինքն ՀՌԱՀ-ը պետք է վերանայի իր որոշումները և վերագնահատի մրցակիցների մրցութային փաթեթներն ու կայացնի որոշում, սակայն այս անգամ պատճառաբանելով՝ ընդ որում պատճառաբանելով այնպես, ինչպես պահանջվում է ներկայիս ներպետական օրենսդրությամբ և ԵԽ չափանիշներով, քանի որ հենց չպատճառաբանելն էր կասկածի տակ դրել մրցույթների օրինականության հարցը և հենց չպատճառաբանելն էր հանգեցրել Կոնվենցիայի 10-րդ հոդվածով երաշխավորված խոսքի ազատության իրավունքի խախտման փաստի ճանաչմանը ՄԻԵԴ-ի կողմից: Այս դեպքում Հայաստանի Հանրապետությունը կարող է հայտարարել, որ ապահովել է խախտված իրավունքները վերականգնելու արդյունավետ միջոց: Սակայն ՀՀ կառավարությունը ՆԿ 1078-րդ նիստում հայտարարել է, որ բացի նոր մրցույթի անցկացումից ցանկացած այլ միջոց անհնարին է կիրառել, քանի որ դա կհանգեցնի այնպիսի իրավիճակի, որի դեպքում կխախտվեն երրորդ անձանց շահերը: Մենք կարծում ենք, որ նման մոտեցումը չի բխում իրավունքի գերակայության հիմնարար սկզբունքից, քանի որ այդ դեպքում իրավունքի գերակայության սկզբունքը ստորադասվում է երրորդ անձի շահերին: Ընկերության Կոնվենցիայի 10-րդ հոդվածով երաշխավորված խոսքի ազատության իրավունքին միջամտած ներպետական վարչական 7 ակտերը կայացվել են Կոնվենցիայի կամ, որ նույն է, օրենքի խախտմամբ, ինչն այդ ակտերի անվավերության հիմք է: Միևնույն ժամանակ, այստեղ բարձրանում է Կոնվենցիայի խախտումից օգտված կողմի ձեռք բերած բարիքների օրինականության և հիմնավորվածության հարց:

Ինչպես արդեն նշել ենք, մեր կարծիքով սույն գործով ընկերության իրավունքները վերականգնելու ամենաարդյունավետ, որոշակի, իրավունքի գերակայության սկզբունքից և թիվ R (2000) 2 հանձնարարականի առարկայից ու նպատակից բխող restitution in integrum եղանակը դա նախ ընկերության Կոնվենցիայի 10-րդ հոդվածով երաշխավորված խոսքի ազատության իրավունքի խախտման փաստի ճանաչումն է, այնուհետև՝ վիճա-

հարույց դատական ակտերը վերանայելու վարույթ հարուցելու միջոցով այդ ակտերը վերանայելու դատավարական եղանակ է: Կամ ընկերությանը հաշտության առաջարկություն կատարելը և հաշտության համաձայնություն կնքելն է:

Օրենսդրական և ենթաօրենսդրական կարգավորման մասին ամբողջական վերլուծությունը, որը ՆԿ-ն պահանջել էր ՀՀ իշխանություններից ներկայացնել իր 2010 թվականի սեպտեմբերի նիստում, 2010 թվականի դեկտեմբերի նիստում չի տրամադրվել: ՆԿ-ն կրկնել է իր պահանջը և այդ իմաստով որոշել անդրադառնալ սույն հարցին 2011 թվականի մարտի նիստին: Նմանապես, Կառավարությունը չի տրամադրել ամբողջական տեղեկատվություն ընկերության կողմից հարուցված դատական գործընթացների մասին: Կառավարությունը ՆԿ-ին հաղորդել է միայն, որ Սահմանադրական դատարանի որոշումից հետո ընկերությունը վերստին հնարավորություն է ստացել դիմել Վճռաբեկ դատարան, սակայն չի հայտնել, որ Վճռաբեկ դատարանը կրկին մերժել է վերանայման համար ներկայացված դիմումը:

Ընդհանուր միջոցներ

ՀՀ Կառավարությունը որպես Եվրոպական դատարանի վճռի կատարման ընդհանուր միջոց է ներկայացրել այն, որ վճիռը թարգմանվել և հրապարակվել է ՀՀ արդարադատության նախարարության և ՀՀ դատական իշխանության ինտերնետ կայքերում, ինչպես նաև պաշտոնական տեղեկագրում: Վճիռը ներառված է ՀՀ դատական դպրոցի ուսումնական ծրագրում և պարբերաբար ներկայացվում է դասընթացների մասնակիցներին՝ դատավորներին, թեկնածուներին և դատական ծառայողներին: Հետևաբար, սույն գործով Հայաստանը կատարել է թիվ Rec(2004)4 և Rec(2002)13 հանձնարարականների պահանջները:

Ինչ վերաբերում է օրենսդրական բարեփոխումներին, որոնք կատարվել են վճռի հիման վրա, ապա դրանք բավարար չեն: Այդ մասին իր մտահոգությունն է հայտնել նաև ՆԿ-ն, ընդգծելով, որ 06.10.2010թ. փոփոխություններն այլև չեն պահանջում, որպեսզի ՀՌԱՀ-ը պատճառաբանված որոշում կայացնի հեռարձակման արտոնագրի դիմումը մերժելիս: Թեև ՀՀ կառավարությունը հավաստիացրել է ՆԿ-ին վերջին նիստում, որ հաղթողի մասին որոշումը կներառի նաև մանրամասն պատճառաբանություն պարտվողի մասին, այդուհանդերձ, խնդիրը դիտելով «ընդհանուր միջոցներ» հասկացության, ինչպես նաև Եվրոպական դատարանի վճռի լույսի ներքո՝ ՀՀ կառավարության հավաստիացումը չի կարող երաշխիք հանդիսանալ, որ հեռուստահաղորդման լիցենզավորման մրցույթներում ՀՌԱՀ-ը մրցույթի մասնակիցների համար կապահովի պետական մարմնի կողմից խոսքի ազատության հիմնարար իրավունքին կամայական միջամտություններից բավարար պաշտպանություն: Ըստ երևույթին, ՆԿ-ն ցանկանում է, որպեսզի պաշտպանության նման իրավունք ապահովված լինի օրենքով,

այլ ոչ թե պետության բանավոր հավաստիացումով, քանի որ դա բխում է իրավունքի գերակայության տեսությունից՝ որպես իրավական որոշակիության դրսևորում:

Նշվածի հիմքով մենք եզրակացնում ենք, որ թիվ Rec(2004)5 և Rec(2008)2 հանձնարարականների պահանջները չեն կատարվում:

8

Աշուղյանն ընդդեմ Հայաստանի

Գործի համարը. 33268/03
Վճիռը կայացվել է. 17.07.2008
Ուժի մեջ է մտել. 01.12.2008

Պաշտոնապես
Հրապարակվել է. ՀՀՊՏ 2010.10.13/50(784)

Փաստերը

Գայանե Աշուղյանը ենթարկվել է վարչական տուգանքի, իսկ այնուհետև 5-օրյա վարչական կալանքի 2003թ.-ի ապրիլի 7-ին և 9-ին ընդդիմության հրավիրված հանրահավաքներին մասնակցելու համար, որոնք նվիրված էին 2003թ.-ի փետրվարի 19-ին և մարտի 5-ին անցկացված նախագահական ընտրությունների արդյունքներին: Երկու դեպքում էլ վարչական տույժը սահմանվել է ՎԻՎՕ 172-րդ հոդվածի հիման վրա՝ մանր խուլիգանություն: Երկու դեպքում էլ Գ. Աշուղյանը բերման է ենթարկվել փողոցից, տարվել ոստիկանություն, որտեղ կազմվել է վարչական տույժի ենթարկելու արձանագրություն, որից հետո անմիջապես տարվել է Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարան: Դատական նիստերը երկու դեպքում էլ ընթացել են առանց փաստաբանի, դատավորի առանձնասենյակում, որտեղ ներկա էին միայն Գ. Աշուղյանը, դատավորը, ուղեկցող ոստիկանը և դատական նիստերի քարտուղարը: Նախաքննական և դատական վարույթները երկու դեպքում էլ տևել են մի քանի ժամ: 2003թ.-ի ապրիլի 18-ին «Փետրվարի 22» հասարակական կազմակերպությունը Գ. Աշուղյանի անունից բողոք է ներկայացրել Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների դատախազին: 2003թ.-ի մայիսի 12-ի գրությամբ Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների դատախազը հասարակական կազմակերպությանը տեղեկացրել է, որ 2003թ.-ի ապրիլի 7-ի և 9-ի որոշումները հիմնավորված են եղել, և բացակայում են դրանք բողոքարկելու հիմքերը:

Դատարանի որոշումը

Եվրոպական դատարանն անընդունելի է համարել Գ. Աշուղյանի գանգատը Կոնվենցիայի 5-րդ հոդվածի հիմքով՝ կապված նրա բերման ենթարկելու և ձերբակալելու հետ, ինչպես նաև Կոնվենցիայի 6-րդ հոդվածի այն հատվածը, որտեղ նա վիճարկում էր դատարանի անկախությունը: Դատարանը գտել է, որ ներկայացված պնդումներն ակնհայտորեն անհիմն են: Դատարանը միաձայն որոշել է, որ խախտվել է Գ. Աշուղյանի՝ 6-

րդ հոդվածի 1-ին մասով սահմանված արդար դատաքննության իրավունքը՝ մասնավորապես, նշված դրույթը նույն հոդվածի 3-րդ մասի «բ» կետի զուգակցությամբ, քանի որ Գ. Աշուղյանին չի տրամադրվել բավարար ժամանակ ու հնարավորություն ապրիլի 7-ի և 9-ի նախաքննական ու դատական վարույթներում իր պաշտպանությունը նախապատրաստելու համար: Դատարանը նաև որոշել է, որ անհրաժեշտություն չկա քննելու Կոնվենցիայի 10-րդ հոդվածի (ազատ արտահայտվելու իրավունք) ներքո ներկայացված պնդումները, քանի որ այս հոդվածը տվյալ դեպքում հանդիսանում է lex generalis Կոնվենցիայի 11-րդ հոդվածով սահմանված իրավունքների նկատմամբ: Կոնվենցիայի 11-րդ հոդվածի ներքո (հանրահավաքների իրավունք) Դատարանը միաձայն որոշել է, որ տեղի է ունեցել խախտում երկու հանրահավաքների կապակցությամբ, քանի որ խաղաղ հավաքների ազատության Գ. Աշուղյանի իրավունքի սահմանափակումը չի եղել «անհրաժեշտ ժողովրդավարական հասարակությունում»՝ նշված հոդվածի 2-րդ մասի իմաստով: Եվ վերջում, հաշվի առնելով, որ Գ. Աշուղյանը իր տրամադրության տակ չի ունեցել երկու դատավճիռները բողոքարկելու ընթացակարգ, Դատարանը միաձայն որոշել է, որ խախտվել է Կոնվենցիայի Թիվ 7 արձանագրության 2-րդ հոդվածով սահմանված քրեական գործերով գանգատարկման իրավունքը: Քանի որ Գ. Աշուղյանն չէր ներկայացրել արդարացի փոխհատուցման պահանջ, Դատարանն այս հարցի վերաբերյալ որոշում չի կայացրել:

Վարույթը Նախարարների կոմիտեում

Տե՛ս Գալստյանի գործով վարույթը ՆԿ-ում: Սույն գործով վարույթն իրականացվում է Գալստյանի գործով վճռի կատարողական վարույթի հետ համատեղ:

Եզրահանգում

Անհատական միջոցներ

Եվրոպական դատարանը դրամական փոխհատուցում չի սահմանել: Հետևաբար, Հայաստանը դրամական փոխհատուցում տրամադրելու պարտավորություն չունի:

Վճիռն ուժի մեջ է մտել 01.12.2008թ.-ին, իսկ ՀՀ Պաշտոնական տեղեկագրում հրապարակվել է 13.10.2010թ.-ին՝ մոտ մեկ տարի և տասը ամիս անց, որն ավելին է, քան նոր հանգամանքի հիմքով գանգատ ներկայացնելու ժամկետը: Դա նշանակում է, որ դիմողը, ամենայն հավանականությամբ, սեփական ուժերով պետք է ապահովեր վճռի պատշաճ թարգմանությունը՝ նոր հանգամանքի հիմքով դիմումին կցելու համար: Այդուհանդերձ, դիմողը կարող է վկայակոչել պաշտոնական տեղեկագրում հրապարակելու օրը և դիմում ներկայացնելու ժամկետը հաշվարկել այդ օրվանից: Այդ

դեպքում ներկա օրվա դրությամբ Գ. Աշուղյանը դեռ հնարավորություն ունի նոր հանգամանքի հիմքով վարույթ վերաբացելու դիմում ներկայացնել:

Ի տարբերություն Ս. Ամիրյանի գործի՝ սույն գործում արձանագրվել է նաև 6-րդ հոդվածի՝ արդար դատաքննության իրավունքի խախտում, քանի որ ՎԻՎՕ-ի 277-րդ հոդվածով նախատեսված արագացված կարգով երկու դատաքննությունների ընթացքում Գ. Աշուղյանին հնարավորություն չի տրվել ունենալ պաշտպան և նախապատրաստել իր պաշտպանությունը: Սա մի հանգամանք է, որը կարող էր ազդել գործի ելքի վրա, եթե նշված խախտումը տեղի ունեցած չլիներ: Հետևաբար, Գ. Աշուղյանը իրեն դատապարտող դատական ակտերը «նոր հանգամանքի» հիմքով վերանայելու և գործի վերաբացման վարույթ հարուցելու և հաջողության հասնելու հիմքեր ունի, եթե այդպիսի գանգատ առաջիկայում ներկայացնի:

Տե՛ս Գալստյանի գործով համապատասխան եզրահանգումը՝ ՀՀ կառավարությունը խախտում է ՆԿ կանոնակարգը՝ 2008թվականի հունիսից ի վեր չտրամադրելով անհատական բնույթի միջոցների մասին տեղեկատվություն:

Ընդհանուր միջոցներ

Տե՛ս Ս. Ամիրյանի և Ա. Գալստյանի գործերով համապատասխան եզրակացությունները:

9
Կիրակոսյանն ընդդեմ Հայաստանի

Գործի համարը. 31237/03
Վճիռը կայացվել է. 02.12.2008
Ուժի մեջ է մտել. 04.05.2009

Պաշտոնապես
Հրապարակվել է. ՀՀՊՏ 2009.08.12/40(706)

Փաստերը

Լավրենտի Կիրակոսյանը հանդիսանում էր Ազգային Ժողովրդավարական Միության (ԱԺՄ) ընդդիմադիր կուսակցության անդամ: 2003թ.-ի մարտի 21-ին մասնակցել է Երևանում կայացած երթի, որը համաժողովրդական հանրահավաքի մի մասն էր կազմում և որը հրավիրվել էր ընդդիմության կողմից՝ 2003 թվականի փետրվար և մարտ ամիսներին կայացած նախագահական ընտրությունների արդյունքները բողոքելու կապակցությամբ: Հաջորդ օրը նա բերման է ենթարկվել ոստիկանության բաժին, որտեղ նրան հայտնել են, որ ենթարկելու են վարչական տույժի այն բանի համար, որ *«2003թ.-ի մարտի 21-ին մասնակցել է Երևանում տեղի ունեցած հանրահավաքին և ոստիկանության բաժին բերման ենթարկելիս չի ենթարկվել ոստիկանության աշխատողների օրինական պահանջներին և զազրախոսել է»*՝ ՎԻՎՕ 182-րդ հոդվածի հիմքով: Ձերբակալությունից մոտ երկու ժամ հետո Լ. Կիրակոսյանը բերվել է Արմավիրի մարզի առաջին ատյանի դատարան: Կարճատև նիստից հետո դատարանը նրան ենթարկել է վարչական կալանքի տասն օր ժամկետով ՎԻՎՕ-ի 182-րդ հոդվածի հիման վրա, որից հետո նա տարվել է ոստիկանության Արմավիրի մարզի տարածքային ստորաբաժանումում գտնվող Արմավիրի ժամանակավոր պահման վայր՝ պատիժը կրելու համար: Արմավիրի ժամանակավոր պահման վայրում նրան տեղավորել են մի խցում յոթ այլ անձանց հետ: Խցի մակերեսը 8.75 քմ էր և այն ուներ շատ փոքր, կեղտոտ մի պատուհան, որը պատված էր երկաթյա կեղտոտ ճաղերով, որոնք խանգարում էին, որպեսզի բնական լույսը ներթափանցեր խուց: Խցում չկային մահճակալներ, և կալանավորները ստիպված էին քնել հատակին: Խուցը լի էր մակաբույծներով և միջատներով: 2003թ.-ի մարտի 23-ին Լ. Կիրակոսյանը խցի բոլոր կալանավորների անունից նամակ է ուղարկում Արմավիրի մարզի դատախազին և ոստիկանության մարզային ստորաբաժանման պետին՝ խնդրելով իրենց ազատ արձակել կամ որպես այլընտրանք իրենց տեղափոխել ավելի լավ բանտախուց: 2003թ.-ի մարտի 25-ին նրան երեք այլ կալանավորների հետ տեղափոխել են մեկ այլ խուց: Նոր խցի մակերեսը նույնպես 8.75 քմ էր և պատուհանը նույնանման վիճակում էր: Խցում կար միայն

երկու մահճակալ, և այդ պատճառով կալանավորները ստիպված էին հերթով քնել: Մահճակալների ներքնակները շատ կեղտոտ էին, և նրանց չէին տրամադրվել սպիտակեղեն կամ վերմակներ: Խուցը լի էր մակաբույծներով և միջատներով: Խցում լույսը միշտ՝ օր ու գիշեր, միացած էր, և կալանավորները չէին կարող անջատել այն: Զուգարանը տեղակայված էր խցից դուրս և նախատեսված էր ժամանակավոր պահման վայրի այդ հարկում գտնվող բոլոր կալանավորների ընդհանուր օգտագործման համար: Այն շատ կեղտոտ էր, քանի որ հոսող ջուր չկար: Կալանավորներին թույլատրվում էր զուգարանից օգտվել օրվա ընթացքում միայն երեք անգամ՝ առավոտյան, կեսօրին և երեկոյան:

Դատարանի որոշումը

Կալանքի պայմանների առումով Դատարանը որոշել է, որ հաշվի առնելով կալանքի պայմանների ընդհանուր ազդեցությունը, կալանավորի կրած դժվարությունները, դրա արդյունքում առաջացած տառապանքն ու վիրավորանքի ու ճնշվածության զգացումները անկասկած գերազանցել են այն ճնշազգույն թույլատրելի սահմանը, որով կալանքի պայմանները անխուսափելիորեն կարող են բացասական ազդեցություն ունենալ անձի թե՛ հոգեկան, թե՛ ֆիզիկական բարօրության վրա: Հետևաբար, Դատարանը սահմանել է Կոնվենցիայի 3-րդ հոդվածի խախտում, քանի որ Լ. Գարապետյանը ենթարկվել էր անմարդկային վերաբերմունքի: Վկայակոչելով Գալստյանի գործով վճիռը՝ Դատարանը հայտարարել է, որ խախտվել էր նաև Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասը՝ նույն հոդվածի 3-րդ մասի զուգակցությամբ, քանի որ այս գործում էլ անձը տարվել և պահվել է ոստիկանության բաժնում՝ առանց արտաքին աշխարհի հետ շփման հնարավորության, որտեղ էլ նրան մեղադրանք է առաջադրվել և մի քանի ժամ անց նա տարվել է դատարան և դատապարտվել: Հետևաբար, սույն գործով Դատարանը որևէ պատճառ չի տեսել այլ եզրահանգման հանգելու համար, քան հանգել էր Գալստյանի գործով և եզրակացրել է, որ խախտվել է Լ. Կիրակոսյանի արդար դատաքննության իրավունքը, մասնավորապես կապված այն բանի հետ, որ վերջինիս չի տրամադրվել պատշաճ ժամանակ և հնարավորություն իր պաշտպանությունը նախապատրաստելու համար: Եվ վերջում, դարձյալ հղում կատարելով Գալստյանի գործով վճռի վրա՝ Դատարանը որոշել է, որ խախտվել էր նաև Թիվ 7-րդ արձանագրության 2-րդ հոդվածը, քանի որ Լ. Կիրակոսյանի տրամադրության տակ չի եղել դատավարական ընթացակարգ առաջին ատյանի դատարանի դատավճիռը բողոքարկելու համար: Արդարացի փոխհատուցման մասով Դատարանը սահմանել է 4,500 եվրո ոչ նյութական վնասի և 3,000 եվրո դատական ծախսերի ու ծախքերի դիմաց:

Վարույթը Նախարարների կոմիտեում

Անհատական միջոցներ

ՆԿ-ն ՀՀ կառավարությունից սպասում է տեղեկատվություն Լ. Կիրակոսյանի դատապարտման և անհատական բնույթի այն միջոցների մասին, որ ՀՀ կառավարությունը նպատակ ունի կիրառել նրա նկատմամբ խախտված իրավունքները վերականգնելու նպատակով: 09.14.2010թ.-ի դրությամբ ՆԿ-ն արձանագրել է, որ նշված տեղեկատվությունը ՀՀ կառավարության կողմից դեռ չի տրամադրվել:

Ընդհանուր միջոցներ

1) Կալանքի պայմաններ. ՀՀ կառավարությունը տրամադրել է հետևյալ տեղեկությունը ՆԿ-ին. Վճիռը թարգմանվել և հրապարակվել է Արդարադատության նախարարության ինտերնետ կայքում (www.moj.am), ինչպես նաև պաշտոնական տեղեկագրում: Վճռի տեքստն ուղարկվել է Սահմանադրական դատարան, Վճռաբեկ դատարան, վերաքննիչ դատարաններ, ընդհանուր իրավասության առաջին ատյանի բոլոր դատարանները, Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակ, ՀՀ գլխավոր դատախազություն, ՀՀ Ոստիկանություն, ՀՀ Ազգային ժողովի պետական-իրավական հարցերով մշտական հանձնաժողով և Մարդու իրավունքների պաշտպանության և հանրային հարցերի մշտական հանձնաժողով:

Քրեակատարողական բոլոր հիմնարկներում նախաձեռնվել է լայնամասշտաբ վերանորոգման ծրագիր ՀՀ նախագահի 28.12.2004թ.-ի թիվ ՆԿ-328. կարգադրության հիման վրա: 08.07.2005թ.-ին փոփոխության է ենթարկվել «Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» ՀՀ օրենքը, որի արդյունքում մեծացվել է ոստիկանության բաժանմունքներում ձերբակալված անձանց պահելու տարածքը մինչև 4 քմ:

2) Կալանքի պայմանների դեմ իրավական պաշտպանության միջոցներ. Դեռ տեղեկություն չի տրամադրվել:

ՆԿ-ն արձանագրում է, որ ըստ Խոշտանգումների կանխարգելման կոմիտեի (ԽԿԿ) 2006 թվականի ապրիլին Հայաստան կատարած այցելության արդյունքում արված Քարտուղարության գնահատականի, ոստիկանության բաժանմունքներում ձերբակալված անձանց պահելու համար յուրաքանչյուր անձին հատկացված 4 քմ տարածքը կարելի է համարել ընդունելի, եթե անձը պահվում է մեկից ավելի անձանցով բնակեցված խցում, սակայն չի կարելի համարել ընդունելի այն դեպքում, երբ անձը միայնակ է պահվում 4 քմ տարածք ունեցող խցում:

ՆԿ-ն սպասում է հետևյալ տեղեկատվությանը.

ա. Կալանավայրերի պայմանները բարելավելու 2004 թվականի ծրագրի ազդեցությունը ոստիկանության բաժանմունքներում ձերբակալված անձանց պահելու վայրերի վրա՝ հատկապես Արմավիրի և Էջմիածնի ոստիկանության բաժանմունքների առնչությամբ:

բ. Ինչ միջոցներ են ձեռնարկվել կամ նախատեսվում են ձեռնարկվել մեկ կալանավորով բնակեցված խուցերի տարածքների առնչությամբ:

գ. Ինչ ներպետական իրավական պաշտպանության միջոցներ են առկա և՛ տեսականորեն, և՛ պրակտիկայում, որոնք հնարավորություն են տալիս պաշտպանվել 3-րդ հոդվածի այն խախտումներից, որոնք բխում են կալանքի պայմաններից:

3) 6-րդ հոդվածի 3-րդ մասի բ կետի խախտումը 6-րդ հոդվածի 1-ին մասին զուգակցությամբ, ինչպես նաև Թիվ 7 արձանագրության 2-րդ հոդվածի խախտումը. Այս առումով ՆԿ-ն վկայակոչում է Գալստյանի գործով վճռի կատարման վարույթը, մասնավորապես՝ ՆԿ-ի 2010թ.-ի սեպտեմբերի թիվ 1092 նիստի եզրահանգումը նշված գործով[68]:

ՆԿ-ի որոշումը

ՆԿ-ն որոշել է սույն գործով դեռ չլուծված հարցերին անդրադառնալ իր հաջորդ՝ 2010 թվականի դեկտեմբերի թիվ 1100 նիստում՝ հաշվի առնելով, որ ՀՀ-ից պահանջվել է ներկայացնել հավելյալ տեղեկություններ և՛ անհատական, և՛ ընդհանուր բնույթի միջոցների առումով: Այդուհանդերձ, 1100-րդ նիստում նշված տեղեկատվությունը նույնպես չի տրամադրվել և ՆԿ-ն որոշել է հարցի քննարկումը տեղափոխել 2011 թվականի մարտի գարնանային նստաշրջան: ՆԿ-ն իր 2010 թվականի դեկտեմբերի նիստում վկայակոչել է Գալստյանի և այդ գործի հետ միասին քննվող հինգ գործերով վարույթը այն իմաստով, որ նշված վճիռների կատարման վարույթի սկսվելուց ի վեր Հայաստանի կառավարությունը պահանջվող տեղեկատվությունը չի տրամադրել ՆԿ-ին:

Եզրահանգում

Անհատական միջոցներ

ՀՀ կառավարությունը տրամադրել է վճռով սահմանված ոչ նյութական վնասի դիմաց փոխհատուցումը (ՀՀ կառավարության 09.07.2009թ. N 748-Ա որոշում): Հետևաբար, ՀՀ-ն կատարել է վճռով սահմանված դրամական փոխհատուցում կատարելու պարտավորությունը:

[68] Տե՛ս էջ 58:

Լ. Կիրակոսյանը «նոր հանգամանքի» հիմքով գործի վերաբացման դիմում չի ներկայացրել: Նման դիմումի բացակայությունը չի կարող հիմք հանդիսանալ, որպեսզի ՀՀ իշխանություններն իրենց նախաձեռնությամբ հարուցեն գործի վերաբացման վարույթ, քանի որ ներպետական օրենսդրությունը որևէ մարմնի (օրինակ՝ դատախազությանը) նման լիազորությամբ չի օժտել (տե՛ս Գալստյանի գործով եզրահանգումը):

ՀՀ կառավարությունը խախտում է ՆԿ կանոնակարգը՝ նախկին մի քանի նիստերին չտրամադրելով անհատական բնույթի միջոցների մասին տեղեկատվություն:

Ընդհանուր միջոցներ

Ի կատարումն թիվ Rec(2002)13 և թիվ Rec(2004)4 հանձնարարականների պահանջների՝ վճիռը թարգմանվել ու հրապարակվել է ՀՀ Պաշտոնական տեղեկագրում, ՀՀ արդարադատության նախարարության և դատական համակարգի ինտերնետ կայքերում, ինչպես նաև ներառվել է ՀՀ դատական դպրոցի և ՀՀ դատախազության դպրոցի ուսումնական ծրագրերում:

Ընդհանուր միջոցների կատարման շրջանակներում կարևոր տեղ է զբաղեցնում կալանավայրերի պայմանների բարելավման ուղղությամբ իրականացվող պետական ծրագրի ընթացքը: Հաշվի առնելով ԽԿԿ-ի 2006 թվականի եզրահանգումները, ներպետական բազմաթիվ դիտորդական խմբերի դիտարկումները և կոնկրետ գործերում մեր անմիջական շփումները՝ գտնում ենք, որ թեև կալանավայրերում զգալի բարեփոխումներ են իրականացվել, այդուհանդերձ, ներկա պայմանները դեռ հեռու են նվազագույն եվրոպական չափանիշներին համապատասխանելուց: Ընդ որում, պայմանների բարելավումն առավելապես կախված է ավելի շատ ոչ թե պետության սահմանափակ ռեսուրսներից, ինչպես հաճախ վկայակոչվում է, այլ մի շարք համակարգային փոփոխություններ կատարելու անհրաժեշտությունից: Օրինակ՝ բավարար է նշել կալանավայրերում ներկայումս լայնորեն տարածված այն իրողությունը, ըստ որի՝ ինչպես Լավրեցի Կիրակոսյանը, այնպես էլ ներկայումս կալանավորված անձինք ստիպված են հերթով քնել՝ մահճակալների անբավարար լինելու պատճառով: Այս ուսումնասիրությունից հետո մոտ կես տարի անց՝ 2011թ.-ի հունվարի 26-ին ԵԽԽՎ-ի կողմից ընդունված թիվ 1878 բանաձևում անդրադարձ է եղել ՀՀ-ի կողմից վճիռների չկատարման հանգամանքի վրա: Բանաձևի նախապատրաստական փաստաթղթում՝ ԵԽԽՎ թիվ 12455 փաստաթղթում (ԵԽԽՎ Իրավական և մարդու իրավունքների հարցերով կոմիտեի զեկույցը ԵԴ վճիռների կատարման պրակտիկայի մասին) վկայակոչվել են երկու համակարգային խնդիրներ, որոնք իրենց լուծումը չեն ստացել ԵԴ վճիռներով: Դրանցից մեկը կալանավայրերի պայմանների բարելավումն է, որի առնչությամբ փաստաթղթում վկայակոչվել է Կիրակոսյանի գործով վճիռը՝ որպես ՀՀ-ի կողմից ԵԴ վճիռը չկատարելու հիմ-

նավորում: Մասնավորապես, վկայակոչվել է այն հանգամանքը, որ Հայաստանը 2010 թվականի դեկտեմբերի նստաշրջանի դրությամբ դեռ չի տրամադրել ՆԿ-ին կալանավայրերի պայմանները բարելավելու ուղղությամբ ՆԿ-ի կողմից շարադրված հարցերի պատասխանները (տե՛ս 2-րդ ենթակետի (ա-գ) կետերում շարադրված պահանջները): Քանի որ Կիրակոսյանի գործով վճռի վերահսկողությունն իրականացվում է նաև երեք այլ գործերի հետ միասին (Կարապետյան (27.01.2010թ.), Մսխիթարյան (04.05.2009թ.) և Թադևոսյան (04.05.2009թ.)), զեկույցում կատարված անդրադարձը վերաբերելի է նաև նշված երեք գործերին:

Հաշվի առնելով նշվածը՝ գտնում ենք, որ վճռի այս մասը ոչ բավարար կերպով է կատարվում Հայաստանի կողմից և կարիք ունի երկարաժամկետ մոնիթորինգի ՆԿ-ի կողմից՝ և՛ սույն գործի, և՛ հետագայում կայացվելիք վճիռների շրջանակներում:

Ինչ վերաբերում է Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասի բ-կետի և Թիվ 7 արձանագրության 2-րդ հոդվածի հիմքով վճռի կատարման համար անհրաժեշտ համակարգային փոփոխություններին, ապա այս առումով կարծում ենք, որ Հայաստանը կատարել է իր պարտավորությունները՝ համաձայն թիվ Rec(2004)5 հանձնարարականի: Մասնավորապես, ազատությունից զրկելը որպես տույժի տեսակ վերացվել է Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի բոլոր հոդվածներից, այդ թվում նաև ՎԻՎՕ 182-րդ հոդվածը, որը կիրառվել է Ա. Մսխիթարյանի նկատմամբ: Սահմանադրության 16-րդ հոդվածի հիման վրա 16.12.2005թ.-ին փոփոխության է ենթարկվել ՎԻՎ օրենսգիրքը և վարչական կալանք հասկացությունն ամբողջությամբ վերացվել է օրենսգրքում: Սահմանադրական բարեփոխումներից հետո անձին կարելի է ազատությունից զրկել միայն հանցագործություն կատարելու կասկածի հիման վրա: Այսինքն, բացի քրեական բնույթի արարք կատարելուց, վարչական կամ կարգապահական բնույթի իրավախախտման համար արգելվում է անձին ազատությունից զրկելը: Ավելին, թեև վարչական կալանքի պրակտիկան ինքնին չի խախտում Կոնվենցիայի պահանջները, Հայաստանը որոշել է ներպետական իրավունքից իսպառ վերացնել օրենսդրական բոլոր այն հիմքերը, որոնք նախատեսում են ժողովներ, հանրահավաքներ, երթեր և ցույցեր անցկացնելու կարգի խախտման դեպքում կիրառել վարչական տույժ՝ ազատությունից զրկելու տեսքով:

10
Սափեյանն ընդդեմ Հայաստանի

Գործի համարը. 35738/03
Վճիռը կայացվել է. 13.01.2009
Ուժի մեջ է մտել. 13.04.2009

Պաշտոնապես
Հրապարակվել է. ՀՀՊՏ 2009.08.19/41(707)

Փաստերը

2003 թվականի փետրվարի 26-ին Ժոռա Սափեյանն իր ընկերների հետ միասին ուղևորվում էր Աշնակ գյուղից դեպի Երևան՝ մասնակցելու ընդդիմության հրավիրած հանրահավաքին՝ կախված փետրվարի 19-ին անցկացված նախագահական ընտրություններ առաջին փուլի հետ: Երևան տանող ճանապարհին նրանց մեքենան կանգնեցրել են քաղաքացիական հագուստով մի քանի անձինք, որոնք ներկայացել են որպես Արագածոտնի մարզային ոստիկանության բաժանմունքի աշխատակիցներ: Ժ. Սափեյանն ու նրա գործընկերները տարվել են մարզային ոստիկանության բաժանմունք, իսկ այնտեղից էլ տեղափոխվել են ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի կենտրոն բաժանմունք, որտեղ որոշվել է նրան ենթարկել վարչական պատասխանատվության 2003թ.-ի փետրվարի 20-ին կայացած հանրահավաքին մասնակցելու համար: Մի քանի ժամ անց նա տարվել է Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարան, որտեղ կարճատև նիստից հետո դատարանը որոշել է Ժ. Սափեյանին ենթարկել 10-օրյա վարչական կալանքի ՎԻՎՕ 180.1-րդ հոդվածի հիմքով՝ չարտոնագրված երթին մասնակցելու համար, որով խախտել է փողոցային երթերի ու ցույցերի կազմակերպման և անցկացման սահմանված կարգը: 2003թ.-ի փետրվարի 27-ին Ժ. Սափեյանի փաստաբանը վերաքննիչ բողոք է բերել ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարան և դիմել ՀՀ գլխավոր դատախազին՝ խնդրելով բողոքարկել առաջին ատյանի դատարանի որոշումը: 2003թ.-ի մարտի 2-ին ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանի նախագահը վերանայել է Ժ. Սափեյանի դատապարտումը և որոշել է փոխել պատժամիջոցը՝ նշանակելով վարչական տուգանք 1,000 դրամի չափով: Նույն օրը, պատիժը 4 օր կրելուց հետո, Ժ. Սափեյանը ազատ է արձակվել կալանքից:

Դատարանի որոշումը

Դատարանը որոշել է, որ Ժ. Սափեյանի բոլոր բողոքները՝ կապված նրան ձերբակալելու, կալանավորելու և դատավարության հետ, ժամկե-

տանց են, քանի որ ներկայացվել են Կոնվենցիայիով սահմանված 6-ամսյա ժամկետի խախտումով: Իսկ հանրահավաքների մասով ներկայացված գանգատը համարել է ընդունելի, քանի որ 6-ամսյա ժամկետը պահպանվել է: Գանգատի էության հարցին Դատարանն անդրադարձել է նույնանման հիմնավորումով, ինչ արել էր Գասպարյանի (երկրորդ վճիռը) և Ամիրյանի գործերով վճիռներում: Մասնավորապես, վկայակոչելով Արմեն Մկրտչյանի գործով վճիռը՝ Դատարանը գտել է, որ նշված ժամանակահատվածում Հայաստանում չի եղել օրենք, որով սահմանված կլիներ այն կարգը, որի վրա հղում է արված ՎԻՎՕ 180.1-րդ հոդվածում: Հետևաբար, հանրահավաքին մասնակցելու համար Ժ. Սափեյանին պատասխանատվության ենթարկելը, որն ինքնին համարվում է միջամտություն անձի հանրահավաքի իրավունքին, չի արվել օրենքով սահմանված կարգով, քանի որ չի եղել նման օրենք՝ օրենքն ընդունվել է շատ ավելի ուշ՝ 2004թ.-ի ապրիլի 27-ին: Հետևաբար, Դատարանը սահմանել է Կոնվենցիայի 11-րդ հոդվածի խախտում և արդարացի փոխհատուցման մասով սահմանել է 1,000 եվրո ոչ նյութական և 2,000 եվրո դատական ծախսերի դիմաց:

Վարույթը Նախարարների կոմիտեում

Տե՛ս Գալստյանի գործով վարույթը ՆԿ-ում: Սույն գործով վարույթն իրականացվում է Գալստյանի գործով վճռի կատարողական վարույթի հետ համատեղ:

Եզրահանգում

Անհատական միջոցներ

ՀՀ կառավարությունը տրամադրել է վճռով սահմանված ոչ նյութական վնասի դիմաց փոխհատուցումը: Հետևաբար, Հայաստանը կատարել է վճռով սահմանված դրամական փոխհատուցում կատարելու պարտավորությունը (ՀՀ կառավարության 09.07.2009թ. N 748-Ա որոշում):

Գործի վերաբացման վարույթ չի հարուցվել: Նման դիմումի բացակայությունը չի կարող հիմք հանդիսանալ, որպեսզի ՀՀ իշխանություններն իրենց նախաձեռնությամբ հարուցեն նման վարույթ, քանի որ ներպետական օրենսդրությունը ոչ մի մարմնի նման իրավազորությամբ չի օժտել (տե՛ս նաև, այս առումով, մեր դիտարկումները Հետևություններ և առաջարկություններ բաժնում):

Տե՛ս Գալստյանի գործով համապատասխան եզրահանգումը՝ ՀՀ կառավարությունը խախտում է ՆԿ կանոնակարգը՝ 2008 թվականի հունիսից ի վեր չտրամադրելով անհատական բնույթի միջոցների մասին տեղեկատվություն:

Վճիռը թարգմանվել ու հրապարակվել է պաշտոնական տեղեկագրում և ՀՀ արդարադատության նախարարության ինտերնետ կայքում և ՀՀ դատական համակարգի ինտերնետ կայքում: Այս ամենը վկայում է, որ ՀՀ-ն կատարել է թիվ Rec(2002)13 հանձնարարականի պահանջները:

Վճիռը ներառված է ՀՀ դատական դպրոցի և ՀՀ դատախազության դպրոցի ուսումնական ծրագրերում: Հետևաբար, սույն գործով Հայաստանը կատարել է թիվ Rec(2004)4 հանձնարարականի պահանջները:

ՎԻՎՀՕ 180[1]-րդ հոդվածի վերաբերյալ՝ տե՛ս Արմեն Մկրտչյանի գործով համապատասխան եզրահանգումը:

11

Մխիթարյանն ընդդեմ Հայաստանի

Գործի համարը. 22390/05
Վճիռը կայացվել է. 02.12.2008
Ուժի մեջ է մտել. 04.05.2009

Պաշտոնապես
Հրապարակվել է. ՀՀՊՏ 2009.08.12/40(706)

Փաստերը

Սույն գործի փաստերը, մասնավորապես՝ ձերբակալվելու և դատապարտվելու հանգամանքները նման են Լ. Կիրակոսյանի և Զ. Կարապետյանի գործի փաստերին, քանի որ նրանք համագյուղացիներ էին և ձերբակալվել, դատապարտվել ու պատիժը կրել են միասին:

Դատարանի որոշումը

Դատարանը սահմանել է, որ կալանքի պայմանների նկարագրումը Ա. Մխիթարյանի կողմից մեծամասամբ համապատասխանում է Խոշտանգումների կանխարգելման կոմիտեի եզրահանգումներին, որը 2002 թվականի Հայաստան կատարած այցի ժամանակ ստուգել է ոստիկանության մի շարք ժամանակավոր պահման վայրեր, որտեղ պահվում էին վարչական կալանավորները: Նույնիսկ եթե այս այցը նախորդել է սույն գործի հանգամանքներին, ԽԿԿ-ի նյութերից երևում է, որ այս ոլորտում էական բարելավումներ տեղի չեն ունեցել մինչև 2004 թվականի դեկտեմբերին լայնածավալ բարեփոխումների ծրագիր սկսելը: Հետևաբար, Դատարանն ընդունել է դիմումատուի պնդումների ճշմարտացիությունը և որևէ պատճառ չի տեսել դրանք կասկածի տակ դնելու համար: Դատարանը սահմանել է Կոնվենցիայի 3-րդ հոդվածի խախտում, քանի որ կալանքի պայմանները հավասարազոր էին անմարդկային վերաբերմունքի:

Վկայակոչելով Մ. Գալստյանի և Գ. Աշուղյանի գործով վճիռը՝ Դատարանը հայտարարել է, որ խախտվել էր նաև Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասը՝ նույն հոդվածի 3-րդ մասի զուգակցությամբ, քանի որ այս գործում էլ անձը տարվել և պահվել է ոստիկանության բաժնում՝ առանց արտաքին աշխարհի հետ շփման հնարավորության, որտեղ էլ նրան մեղադրանք է առաջադրվել և մի քանի ժամ անց նա տարվել է դատարան ու դատապարտվել: Հետևաբար, սույն գործով Դատարանը որևէ պատճառ չի տեսել այլ եզրահանգման հանգելու համար և եզրակացրել է, որ խախտվել է Ա. Մխիթարյանի արդար դատաքննության իրավունքը, մասնավորապես կապված այն բանի հետ, որ վերջինիս չի տրամադրվել պատշաճ ժամա-

նակ և հնարավորություն իր պաշտպանությունը նախապատրաստելու համար: Եվ վերջում, նորից հղում կատարելով Գալստյանի գործով վճռի վրա՝ Դատարանը որոշել է, որ խախտվել էր նաև Թիվ 7-րդ արձանագրության 2-րդ հոդվածը, քանի որ Ա. Մխիթարյանի տրամադրության տակ չի եղել դատավարական ընթացակարգ առաջին ատյանի դատարանի դատավճիռը բողոքարկելու համար: Արդարացի փոխհատուցման մասով Դատարանը սահմանել է 4,500 եվրո ոչ նյութական վնասի և 3,000 եվրո դատական ծախսերի ու ծախքերի դիմաց:

Վարույթը Նախարարների կոմիտեում

Սույն գործով վարույթն իրականացվում է Լ. Կիրակոսյանի վճռի կատարողական վարույթի հետ համատեղ: Տե՛ս Լ. Կիրակոսյանի գործով վարույթը ՆԿ-ում:

Եզրահանգում

Անհատական միջոցներ

ՀՀ կառավարությունը տրամադրել է վճռով սահմանված ոչ նյութական վնասի դիմաց փոխհատուցումը (ՀՀ կառավարության 09.07.2009թ. N 748-Ա որոշում): Հետևաբար, ՀՀ-ն կատարել է վճռով սահմանված դրամական փոխհատուցում կատարելու պարտավորությունը:

Արման Մխիթարյանը «նոր հանգամանքի» հիմքով գործի վերաբացման դիմում չի ներկայացրել: Նման դիմումի բացակայությունը չի կարող հիմք հանդիսանալ, որպեսզի Հայաստանի իշխանություններն իրենց նախաձեռնությամբ հարուցեն գործի վերաբացման վարույթ, քանի որ ներպետական օրենսդրությունը որևէ մարմնի (օրինակ՝ դատախազությանը) նման լիազորությամբ չի օժտել (Տե՛ս Գալստյանի գործը: Տե՛ս նաև, այս առումով, մեր դիտարկումները Հետևություններ և առաջարկություններ բաժնում):

ՀՀ կառավարությունը խախտում է ՆԿ կանոնակարգը՝ տևական ժամանակ ՆԿ-ին չտրամադրելով անհատական բնույթի միջոցների մասին տեղեկատվություն:

Ընդհանուր միջոցներ

Ի կատարումն թիվ Rec(2002)13 և թիվ Rec(2004)4 հանձնարարականների պահանջների՝ վճիռը թարգմանվել ու հրապարակվել է ՀՀ Պաշտոնական տեղեկագրում, ՀՀ արդարադատության նախարարության և դատական համակարգի ինտերնետ կայքերում, ինչպես նաև ներառվել է ՀՀ դատական դպրոցի և ՀՀ դատախազության դպրոցի ուսումնական ծրագրերում:

Հաշվի առնելով, որ Լ. Կիրակոսյանի վճիռը հանդիսանում է պիլոտային վճիռ սույն գործի համար, ընդհանուր միջոցների կատարման մասին հետագա եզրահանգումների համար տե՛ս Լ. Կիրակոսյանի գործով համապատասխան եզրահանգումները վերևում:

12
Թադևոսյանն ընդդեմ Հայաստանի

Գործի համարը. 41698/04
Վճիռը կայացվել է. 02.12.2008
Ուժի մեջ է մտել. 04.05.2009

Պաշտոնապես
Հրապարակվել է. ՀՀՊՏ 2009.08.12/40(706)

Փաստերը

Մյասնիկ Թադևոսյանը 2004 թվականի մարտ-ապրիլ ամիսների ընթացքում երկու անգամ ենթարկվել է 10-օրյա վարչական կալանքի՝ ոստիկանի օրինական պահանջներին չենթարկվելու համար: Իրականում նրա վարչական կալանքը պայմանավորված էր այն հանգամանքով, որ նա հանդիսանում էր «Ազգային Միաբանություն» կուսակցության Արմավիրի մարզի տարածքային մասնաճյուղի նախագահը և ակտիվ գործունեություն էր ծավալել ընդդիմադիր կուսակցությունների կողմից 2003 թվականի փետրվար-մարտ ամիսներին կայացած նախագահական ընտրություններ ժամանակ տեղի ունեցած ենթադրյալ անօրինականությունների դեմ ընդդիմադիր կուսակցությունների կողմից կազմակերպված հանրային բողոքի հանրահավաքներին, որոնք շարունակվել էին նաև 2004 թվականի մարտ-ապրիլ ամիսներին: Երկու պատիժն էլ Մ. Թադևոսյանը կրել է ՀՀ ոստիկանության Էրեբունու բաժնի ժամանակավոր պահման վայրում: 2004թ.-ի ապրիլի 14-ին կալանքից ազատվելուց հետո նրան պարբերաբար այցելել են ոստիկանության աշխատակիցները և խուզարկություններ են կատարել իր բնակարանում: Յուրաքանչյուր նման այցելության ժամանակ նա ստիպված է եղել թաքնվել՝ վախենալով, որ նրան նորից կտանեն ոստիկանություն: Երկու վարույթներն էլ իրականացվել են առանց պաշտպանի ներկայության, որից նա սակայն չի հրաժարվել: Դատաքննության ժամանակ դատավորը չի հարցաքննել Մ. Թադևոսյանին, չի ընդունել նրա կողմից ներկայացված ապացույցները, չի տրամադրել անհրաժեշտ ժամանակ պաշտպանական կողմի վկաներին հրավիրելու, ինչպես նաև ոստիկանության աշխատակիցների և մեղադրական կողմի վկաների հետ առերեսման համար:

Դատարանի որոշումը

Կալանքի պայմանների առումով Դատարանը որոշել է, որ հաշվի առնելով կալանքի պայմանների ընդհանուր ազդեցությունը, կալանավորի կրած դժվարությունները, դրա արդյունքում առաջացած տառապանքն ու

վիրավորանքի ու նվաստացման զգացումներն անկասկած գերազանցել են այն նվազագույն թույլատրելի սահմանը, որ կալանքի պայմաններն անխուսափելիորեն կարող են բացասական ազդեցություն ունենալ անձի թե՛ հոգեկան, թե՛ ֆիզիկական բարօրության վրա: Հետևաբար, Դատարանը սահմանել է Կոնվենցիայի 3-րդ հոդվածի խախտում, քանի որ Մ. Թադևոսյանը ենթարկվել էր անմարդկային վերաբերմունքի (տե՛ս Լ. Կարապետյանի գործով վճիռը):

Վկայակոչելով Գալստյանի գործով վճիռը՝ Դատարանը սահմանել է, որ խախտվել էր նաև Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասը՝ նույն հոդվածի 3-րդ մասի զուգակցությամբ, քանի որ այս գործում էլ անձը տարվել և պահվել է ոստիկանության բաժնում՝ առանց արտաքին աշխարհի հետ շփման հնարավորության, որտեղ էլ նրան մեղադրանք է առաջադրվել, և մի քանի ժամ անց նա տարվել է դատարան և դատապարտվել: Հետևաբար, սույն գործով Դատարանը որևէ պատճառ չի տեսել այլ եզրահանգման հանգելու համար և եզրակացրել է, որ խախտվել է Մ. Թադևոսյանի արդար դատաքննության իրավունքը, մասնավորապես կապված այն բանի հետ, որ վերջինիս չի տրամադրվել պատշաճ ժամանակ և հնարավորություն իր պաշտպանությունը նախապատրաստելու համար: Եվ վերջում, նորից հղում կատարելով Գալստյանի գործով վճռի վրա՝ Դատարանը որոշել է, որ խախտվել էր նաև Թիվ 7-րդ արձանագրության 2-րդ հոդվածը, քանի որ Մ. Թադևոսյանի տրամադրության տակ չի եղել դատավարական ընթացակարգ առաջին ատյանի դատարանի դատավճիռը բողոքարկելու համար: Արդարացի փոխհատուցման մասով Դատարանը սահմանել է 4,500 եվրո ոչ նյութական վնասի և 3,000 եվրո դատական ծախսերի ու ծախքերի դիմաց (տե՛ս նաև Լ. Կիրակոսյանի գործով նույնանման վճիռը):

Վարույթը Նախարարների կոմիտեում

Սույն գործով վարույթն իրականացվում է Լ. Կիրակոսյանի վճռի կատարողական վարույթի հետ համատեղ: Տե՛ս Լ. Կիրակոսյանի գործով վարույթը ՆԿ-ում:

Եզրահանգում

Հաշվի առնելով, որ Լ. Կիրակոսյանի վճիռը հանդիսանում է պիլոտային վճիռ սույն գործի համար, անհատական և ընդհանուր միջոցների կատարման եզրահանգումների համար տե՛ս Լ. Կիրակոսյանի գործով համապատասխան եզրահանգումները:

ՀՀ կառավարությունը խախտում է ՆԿ կանոնակարգը՝ տևական ժամանակ ՆԿ-ին չտրամադրելով անհատական բնույթի միջոցների մասին տեղեկատվություն:

13
Գասպարյանն ընդդեմ Հայաստանի (1)

Գործի համարը. 35944/03
Վճիռը կայացվել է. 13.01.2009
Ուժի մեջ է մտել. 13.04.2009

Պաշտոնապես
Հրապարակվել է. ՀՀՊՏ 2009.08.19/41(707)

Փաստերը

Մաքսիմ Գասպարյանը հանդիսացել է ՀՀ նախագահի թեկնածուի վստահված անձ 2003թ.-ի փետրվարի 19-ի և մարտի 5-ի նախագահական ընտրություններում: 2003թ.-ի փետրվարի 26-ին նրան այցելել են ոստիկանության երկու աշխատակիցներ և հրավիրել ոստիկանություն: Ոստիկանությունում տեղեկացել է, որ իր դեմ հարուցվել է վարչական վարույթ՝ Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 172-րդ հոդվածի հիմքով՝ 23.02.2003թ. արգելված հանրահավաքին մասնակցելու և հասարակական կարգը խախտելու հիմքերով: Նույն օրը Կենտրոն և Նորք-Մարաշ առաջին ատյանի դատարանի կողմից ենթարկվել է տասն օրվա վարչական կալանքի: Որոշման մեջ նշվել է, որ այն ենթակա էր բողոքարկման ՎԻՎՕ 289-րդ հոդվածով սահմանված կարգով: Կալանավայրում նրան առաջարկվել է լրացնել մի ձևաթուղթ, որը հասցեագրված էր ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանի նախագահին, և որում նշված էր հետևյալ արտահայտությունը. «ես զղջում եմ իմ արարքի համար և խնդրում եմ վերանայել իմ գործը»: Մ. Գասպարյանը ստորագրել է փաստաթղթի տակ: Նույն օրը Վերաքննիչ դատարանի նախագահը քննել է բողոքը և որոշել կալանքը փոխարինել երկու հազար դրամ վարչական տուգանքով: Նույն օրը Մ. Գասպարյանն ազատ է արձակվել կալանքից՝ անազատության մեջ մնալով երեք օր: Հետագայում փորձել է վիճարկել առաջին ատյանի դատարանի որոշման օրինականությունը, սակայն նրա բոլոր բողոքները մերժվել են այն պատճառաբանությամբ, որ վերջինս բաց էր թողել բողոքարկման համար սահմանված 10-օրյա ժամկետը:

Դատարանի որոշումը

Եվրոպական դատարանը մերժել է Մ. Գասպարյանի բոլոր գանգատները, որոնք ներկայացվել էին ազատությունից զրկելու և դատավարական խախտումների հիմքերով՝ պատճառաբանությամբ, որ գանգատն այդ մասով բերվել էր 6-ամսյա ժամկետի խախտումով: Սակայն Եվրոպա-

կան դատարանը վճռել է, որ հանրահավաքին մասնակցելու հիմքով Մ. Գասպարյանին վարչական կալանքի ենթարկելը հանգեցրել էր Կոնվենցիայի 11-րդ հոդվածի խախտմանը, քանի որ այնպիսի պայմաններում, երբ պետությունը չի արգելում հանրահավաքը, սակայն հետագայում հանրահավաքի մասնակիցներին ենթարկում է պատասխանատվության, նման միջամտությունը խախտում է քաղաքացիների հանրահավաքների իրավունքը: Իսկ ինչ վերաբերում է հանրահավաքն արգելված չլինելու մասին եզրահանգմանը (չնայած գործի նյութերում նշված է եղել, որ հանրահավաքն արգելված է եղել), ապա Եվրոպական դատարանը վկայակոչել է Արմեն Մկրտչյանի գործով իր որոշումը, որում սահմանել էր, որ նշված ժամանակահատվածում Հայաստանում չկար հանրահավաքների անցկացումը կարգավորող օրենք: Որպես արդարացի փոխհատուցում՝ Եվրոպական դատարանը սահմանել է 1,000 եվրո ոչ նյութական վնասի և 2,000 հազար եվրո դատական ծախսերի և ծախքերի դիմաց:

Վարույթը Նախարարների կոմիտեում

Սույն գործով վարույթն իրականացվում է Գալստյանի գործով վճռի կատարողական վարույթի հետ համատեղ: Տե՛ս Գալստյանի գործով վարույթը ՆԿ-ում:

Եզրահանգում

Անհատական միջոցներ

ՀՀ կառավարությունը տրամադրել է վճռով սահմանված ոչ նյութական վնասի դիմաց փոխհատուցումը: Հետևաբար, Հայաստանը կատարել է վճռով սահմանված դրամական փոխհատուցում տրամադրելու պարտավորությունը (ՀՀ կառավարության 09.07.2009թ. N 748-Ա որոշում):

Գործի վերաբացման առնչությամբ, տե՛ս մեր դիտարկումները Հետևություններ և առաջարկություններ բաժնում:

Տե՛ս Գալստյանի գործով համապատասխան եզրահանգումը՝ ՀՀ կառավարությունը խախտում է ՆԿ կանոնակարգը՝ 2008թ.-ի հունիսից ի վեր չտրամադրելով անհատական բնույթի միջոցների մասին տեղեկատվություն:

Ընդհանուր միջոցներ

Վճիռը թարգմանվել ու հրապարակվել է պաշտոնական տեղեկագրում և առաքվել է Սահմանադրական դատարան, ՀՀ վճռաբեկ դատարան, ՀՀ վերաքննիչ դատարան և ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարաններ: Վճռի հայերեն տարբերակը հրապարակվել է ՀՀ արդարադատության նախարարության ինտերնետ կայքում և ՀՀ դատական համա-

կարգի ինտերնետ կայքում: Այս ամենը վկայում է, որ ՀՀ-ն կատարել է թիվ Rec(2002)13 հանձնարարականի պահանջները:

Վճիռը ներառված է ՀՀ դատական դպրոցի և ՀՀ դատախազության դպրոցի ուսումնական ծրագրերում: Հետևաբար, սույն գործով ՀՀ-ն կատարել է թիվ Rec(2004)4 հանձնարարականի պահանջները:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի բոլոր հոդվածները, այդ թվում նաև ՎԻՎՕ 172-րդ հոդվածը, որը կիրառվել է Մ. Գասպարյանի նկատմամբ, վերացվել են: Սահմանադրության 16-րդ հոդվածի հիման վրա 16.12.2005թ. փոփոխության է ենթարկվել ՎԻՎ օրենսգիրքը և վարչական կալանք հասկացությունն ամբողջությամբ վերացվել է օրենսգրքում: Սահմանադրական բարեփոխումներից հետո անձին կարելի է ազատությունից զրկել միայն հանցագործություն կատարելու կասկածի հիման վրա: Այսինքն, բացի քրեական բնույթի արարք կատարելուց, վարչական կամ կարգապահական բնույթի իրավախախտման համար արգելվում է անձին ազատությունից զրկելը: Ավելին, թեև վարչական կալանքի պրակտիկան ինքնին չի խախտում Կոնվենցիայի պահանջները, ՀՀ-ն որոշել է ներպետական իրավունքից հսպառ վերացնել օրենսդրական բոլոր այն հիմքերը, որոնք նախատեսում են ժողովներ, հանրահավաքներ, երթեր և ցույցեր անցկացնելու կարգի խախտման դեպքում կիրառել վարչական տույժ՝ ազատությունից զրկելու տեսքով: Նման հանգամանքներում գտնում ենք, որ ՀՀ-ն կատարել է թիվ Rec(2004)5 հանձնարարականի, մասնավորապես՝ հանձնարարականի երկրորդ և երրորդ սկզբունքների պահանջները:

14
Ամիրյանն ընդդեմ Հայաստանի

Գործի համարը. 31553/03
Վճիռը կայացվել է. 13.01.2009
Ուժի մեջ է մտել. 13.04.2009

Պաշտոնապես
Հրապարակվել է. ՀՀՊՏ 2009.08.19/41(707)

Փաստերը

Սարգիս Ամիրյանը 2003 թվականի ՀՀ նախագահական ընտրություններում հանդիսացել է ընդդիմության թեկնածուի վստահված անձ: 2003 թվականի փետրվարի 21-ին մասնակցել է Երևանում տեղի ունեցած ցույցին: Հաջորդ օրը երկու ոստիկաններ այցելել են նրա տուն և տարել նրան Երևանի Կենտրոն համայնքի ոստիկանության բաժին, որտեղ նրա նկատմամբ վարչական վարույթ է հարուցվել 2003թ.-ի փետրվարի 21-ի ցույցին մասնակցելու համար: Նույն օրը՝ մի քանի ժամ անց, նա տարվել է Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարան: Կարճատև նիստից հետո դատարանը, ղեկավարվելով ՎԻՎՕ 180.1-րդ հոդվածով, դատապարտել է նրան 15 օր ժամկետով վարչական կալանքի՝ գտնելով, որ Ս. Ամիրյանը *«2003թ.-ի փետրվարի 21-ին Երևանում մի խումբ անձանց հետ (դիմումատուն) մասնակցել է չարտոնված ցույցի»*: 2003թ.-ի փետրվարի 27-ին Ս. Ամիրյանի փաստաբանը դիմում է ներկայացրել ՀՀ գլխավոր դատախազին՝ պահանջելով բողոքարկել առաջին ատյանի դատարանի որոշումը: 2003թ.-ի մարտի 1-ին ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանի նախագահը վերանայել է դատապարտումը և որոշել է փոփոխել կալանքի վարչական տուգանքը 1,000 դրամ վարչական տուգանքով և կարգադրել է ազատ արձակել Ս. Ամիրյանին: Նույն օրը նա ազատ է արձակվել՝ 7 օր պատիժը կրելուց հետո:

Դատարանի որոշումը

Եվրոպական դատարանն անընդունելի է համարել գանգատի այն հատվածները, որոնք վերաբերում էին ձերբակալման, կալանավորման և դատավարության հետ կապված մի շարք խախտումների առումով պնդումներին, քանի որ գտել է, որ գանգատը նշված հիմքերով ներկայացվել էր դիմումի ընդունելիության 6-ամսյա ժամկետի խախտումով: Ինչ վերաբերում է հավաքների իրավունքի մասին պնդումներին, ապա գանգատն այս մասով համարել է ընդունելի, քանի որ պահպանվել է նշված 6-ամսյա ժամկետը: Ըստ էության քննելիս, Եվրոպական դատարանը վկայակոչել է, որ

նույնանման բողոք քննել է Մկրտչյանն ընդդեմ Հայաստանի գործի շրջանակներում, որտեղ Դատարանը գտել էր, որ ՎԻՎՕ-ի 180.1-րդ հոդվածը ձեւակերպված չէր այնպիսի ճշգրտությամբ, որ հնարավորություն տար դիմումատուին կանխատեսել իր գործողությունների հնարավոր հետեւանքները այնքանով, որքանով դա ողջամտորեն հնարավոր էր տվյալ իրավիճակում, քանի որ չկար Հայաստանում կիրառելի որևէ իրավական ակտ, որը կպարունակեր այն «սահմանված կարգը», որին հղում է կատարում այդ դրույթը: 1988թ.-ի հոկտեմբերի 28-ի ԽՍՀՄ օրենքն այլևս չէր կիրառվում, իսկ հավաքների և ժողովների վերաբերյալ նոր օրենքն ընդունվել էր միայն 2004թ.-ի ապրիլի 28-ին: Ս. Ամիրյանին պատասխանատվության ենթարկելը նույնպես տեղի է ունեցել մինչև հավաքների և ժողովների մասին նոր օրենքն ուժի մեջ մտնելը: Դրանից ելնելով՝ Եվրոպական դատարանը որոշել է, որ սույն գործում անհրաժեշտ է ցուցաբերել նույնանման մոտեցում, ինչ Մկրտչյանի գործով վճռում (տե՛ս նաև Գասպարյանի գործով երկրորդ վճիռը), և որ, հետևաբար, տեղի է ունեցել Կոնվենցիայի 11-րդ հոդվածի խախտում՝ միջամտությունը Ս. Ամիրյանի խաղաղ հավաքների ազատության իրավունքին չի եղել օրենքով նախատեսված կարգով, քանի որ հանրահավաքները կարգավորող օրենք գոյություն չի ունեցել: Արդարացի փոխհատուցման մասով Եվրոպական դատարանը սահմանել է 1,000 եվրո ոչ նյութական և 2,000 եվրո դատական ծախսերի դիմաց:

Վարույթը Նախարարների կոմիտեում

Սույն գործով վարույթն իրականացվում է Գալստյանի գործով վճռի կատարողական վարույթի հետ համատեղ: Տե՛ս Գալստյանի գործով վարույթը ՆԿ-ում:

Եզրահանգում

Անհատական միջոցներ

ՀՀ կառավարությունը տրամադրել է վճռով սահմանված ոչ նյութական վնասի դիմաց փոխհատուցումը: Հետևաբար, Հայաստանը կատարել է վճռով սահմանված դրամական փոխհատուցում տրամադրելու պարտավորությունը (ՀՀ կառավարության 09.07.2009թ. N 748-Ա որոշում):

Գործի վերաբացման առնչությամբ, տե՛ս մեր դիտարկումները Հետևություններ և առաջարկություններ բաժնում:

Տե՛ս Գալստյանի գործով համապատասխան եզրահանգումը՝ ՀՀ կառավարությունը խախտում է ՆԿ կանոնակարգը՝ 2008 թվականի հունիսից ի վեր չտրամադրելով անհատական բնույթի միջոցների մասին տեղեկատվություն:

Վճիռը թարգմանվել ու հրապարակվել է պաշտոնական տեղեկագրում և առաքվել է ՀՀ սահմանադրական դատարան, ՀՀ վճռաբեկ դատարան, ՀՀ վերաքննիչ դատարան և ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարաններ: Վճռի հայերեն տարբերակը հրապարակվել է ՀՀ արդարադատության նախարարության ինտերնետ կայքում և ՀՀ դատական համակարգի ինտերնետ կայքում: Այս ամենը վկայում է, որ Հայաստանը կատարել է թիվ Rec(2002)13 հանձնարարականի պահանջները:

Այդուհանդերձ, թեև որպես ընդհանուր միջոց վճիռը թարգմանվել ու պաշտոնապես հրապարակվել է, սակայն պետք է հաշվի առնել այն հանգամանքը, որ թարգմանությունների հրապարակումն տեղի է ունեցել վերանայման վարույթ հարուցելու ժամկետի լրանալուց հետո: Այսինքն, եթե իրավունքի խախտման զոհը ցանկանար վերանայման վարույթ հարուցելու մասին դիմում ներկայացնել, ապա նա իր վրա պետք է վերցներ անհամաչափ ծանրաբեռնվածություն իր գործով կայացրած վճիռը նոտարական կարգով հայերեն թարգմանելու և այդ ձևով դատարան ներկայացնելու համար: Այլ պարագայում դատարաններն ուղղակի օտարալեզու փաստաթուղթ չէին ընդունի, իսկ պաշտոնական թարգմանությանը սպասելու պարագայում անձը բաց է թողնում վերանայման վարույթ հարուցելու օրենքով սահմանված ժամկետը: Ուստի, վճռի թարգմանությունը և պաշտոնական հրապարակումն իր մեջ ներառում է ոչ միայն վճռի կատարման ընդհանուր միջոց, այլ նաև, առաջին հերթին, անհատական միջոց:

Բացի այդ, պետք է հաշվի առնել նաև այն հանգամանքը, որ Հայաստանում Եվրոպական դատարանի վճիռները որպես նոր հանգամանք կարող են հանդիսանալ նաև այլ անձանց նկատմամբ, որոնց վրա ևս տարածվում է վերանայման վարույթ հարուցելու ժամկետային սահմանափակումը: Ուստի, ժամկետի պահպանության և հայերենով վճիռը ներկայացնելու պարտադիր պայմանների համադրությունն ապահովելու համար անհրաժեշտ է, որպեսզի Եվրոպական դատարանի վճիռները թարգմանվեն ու հրապարակվեն այնպես, որպեսզի անձինք նոր հանգամանքի հիմքով դիմելու եռամսյա ժամկետը չկորցնեն կամ օրենսդրորեն ամրագրել, որ եռամսյա ժամկետի մեկնարկը սկսում է պաշտոնական հրապարակման պահից:

Վճիռը ներառված է ՀՀ դատական դպրոցի և ՀՀ դատախազության դպրոցի ուսումնական ծրագրերում: Դատախազության դպրոցում դասընթացները մատուցվում են դատախազներին, ՀՔԾ քննիչներին և թեկնածուներին: Դատական դպրոցում դասընթացները մատուցվում են դատավորներին, դատական ծառայողներին և թեկնածուներին: Դասախոսական կազմի կողմից երկու դպրոցներում վճիռը ներկայացվում է քննարկումների, թեստերի, իրավիճակային խնդիրների միջոցով: Վճռում բարձրացված հարցերը ներառված են նաև նշված խմբերի քննությունների հարցաթեր-

թիկներում: Հետևաբար, սույն գործով Հայաստանը կատարել է թիվ Rec(2004)4 հանձնարարականի պահանջները:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի բոլոր հոդվածները, այդ թվում նաև ՎԻՎՕ 180[1]-րդ հոդվածը, որը կիրառվել է Ս. Ամիրյանի նկատմամբ, վերացվել են: Սահմանադրության 16-րդ հոդվածի հիման վրա 16.12.2005թ. փոփոխության է ենթարկվել ՎԻՎ օրենսգիրքը, և վարչական կալանք հասկացությունն ամբողջությամբ վերացվել է օրենսգրքում: Սահմանադրական բարեփոխումներից հետո անձին կարելի է ազատությունից զրկել միայն հանցագործություն կատարելու կասկածի հիման վրա: Այսինքն, բացի քրեական բնույթի արարք կատարելուց, վարչական կամ կարգապահական բնույթի իրավախախտման համար արգելվում է անձին ազատությունից զրկելը: Ավելին, թեև վարչական կալանքի պրակտիկան ինքնին չի խախտում Կոնվենցիայի պահանջները, Հայաստանը որոշել է ներպետական իրավունքից հնարավոր վերացնել օրենսդրական բոլոր այն հիմքերը, որոնք նախատեսում են ժողովներ, հանրահավաքներ, երթեր և ցույցեր անցկացնելու կարգի խախտման դեպքում կիրառել վարչական տույժ՝ ազատությունից զրկելու տեսքով:

Հիմք ընդունելով նշված համակարգային փոփոխությունները օրենսդրության մեջ՝ կարծում ենք, որ Հայաստանը կատարել է թիվ Rec(2004)5 հանձնարարականի, մասնավորապես՝ հանձնարարականի երկրորդ և երրորդ սկզբունքների պահանջները:

15
Գասպարյանն ընդդեմ Հայաստանի (2)

Գործի համարը. 22571/05
Վճիռը կայացվել է. 16.06.2009թ.
Ուժի մեջ է մտել. 16.09.2009թ.

Պաշտոնապես
Հրապարակվել է. ՀՀՊՏ 2010.10.13/50(784)

Փաստերը

2004 թվականի մայիսի 20-ին Մ. Գասպարյանը բերման է ենթարկվել Երևան քաղաքի ոստիկանության Շենգավիթի բաժին: Ըստ բերման ենթարկելու արձանագրության, նա *«բերման է ենթարկվել Նժդեհ փողոցից երեկոյան ժամը 7 անց 45-ին ... հասարակական կարգը խախտելու համար»* (ՎԻՎՕ 182-րդ հոդվածի հիմքով): Ըստ Մ. Գասպարյանի ոստիկանության բաժնում հարցաքննվել է երթերին մասնակցելու և ընդդիմությանն աջակցելու կապակցությամբ: Նա խնդրել է, որպեսզի թույլատրեն իրեն փաստաբան հրավիրել, ինչը, սակայն, մերժվել է ոստիկանների կողմից: Կառավարության պնդմամբ, ոստիկանության աշխատակիցները ներկայացրել են Մ. Գասպարյանին իր դատավարական իրավունքները և խորհուրդ են տվել վերջինիս օգտվել փաստաբան հրավիրելու իր իրավունքից, որից սակայն նա հրաժարվել է: Այնուհետև, Մ. Գասպարյանին երեկոյան ժամը 10-ին տարել են Երևան քաղաքի Շենգավիթ համայնքի առաջին ատյանի դատարան, որտեղ կարճատև նիստից հետո դատարանը նրան մեղավոր է ճանաչել ՎԻՎՕ 182-րդ հոդվածի համաձայն և դատապարտել 8-օրյա վարչական կալանքի, ինչը նա կրել է ամբողջությամբ:

Դատարանի որոշումը

Հիմնվելով նույնանման փաստացի հանգամանքներով արդեն կայացրած իր մի շարք վճիռների վրա՝ Եվրոպական դատարանը որպես հաստատված փաստ է համարել, որ Մ. Գասպարյանը ոստիկանության բաժնում պահվել է առանց արտաքին աշխարհի հետ որևէ կապի, որտեղ նրան ներկայացվել է մեղադրանք և, այնուհետև, մի քանի ժամվա ընթացքում նա տարվել է դատարան և դատապարտվել: Դատարանը, կրկին վկայակոչելով նույնանման հանգամանքներով ընդդեմ Հայաստանի կայացրած նախադեպերը, որոշեց, որ որևէ պատճառ չի տեսնում հանգելու այլ եզրահանգմանը, քան այն, որ տվյալ հանգամանքներում խախտվել է Մ. Գասպարյանի՝ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված իրավունքները՝ նույն հոդվածի 3-րդ մասի «բ»-կետի համակցությամբ, մասնա-

վորապես, որ Մ. Գասպարյանը չի ունեցել արդար դատաքննություն, քանի որ նրան չի տրամադրվել բավարար ժամանակ ու հնարավորություն իր պաշտպանությունը նախապատրաստելու համար: Ավելին, հիմնվելով *Գալստյանն ընդդեմ Հայաստանի* գործով կայացրած վճռի վրա՝ Դատարանը նաև որոշել է, որ Մ. Գասպարյանը զրկված է եղել իր դատապարտումն արդյունավետ կերպով բողոքարկելու հնարավորությունից, քանի որ ՎԻՎՕ-ի 294-րդ հոդվածով նախատեսված վերանայման ընթացակարգն անձին չի ընձեռում բողոքարկելու հստակ և մատչելի իրավունք: Այդ հոդվածը նախատեսում է առաջին ատյանի դատարանի որոշումը վերաղաս դատարանի նախագահին բողոքարկելու իրավունք, սակայն օրենսդրության մեջ բացակայում է նման բողոք բերելու հստակ ձևակերպված ընթացակարգ և ժամկետներ, ինչպես նաև բացակայում է դրա կիրառության հետևողական պրակտիկա: Դատավճռի դեմ բողոքարկման նման ընթացակարգը չի համապատասխանում Կոնվենցիայի Թիվ 7 արձանագրության 2-րդ հոդվածի պահանջներին, հետևաբար, տեղի է ունեցել նաև նշված հոդվածի խախտում: Խախտումն արձանագրելուց բացի Եվրոպական դատարանը սահմանել է նաև 2,000 եվրո ոչ նյութական վնասի և 3,000 եվրո դատական ծախսերի դիմաց:

Վարույթը Նախարարների կոմիտեում

Սույն գործով վարույթն իրականացվում է Գալստյանի գործով վճռի կատարողական վարույթի հետ համատեղ: Տե՛ս Գալստյանի գործով վարույթը ՆԿ-ում:

Եզրահանգում

Անհատական միջոցներ

ՀՀ կառավարությունը տրամադրել է վճռով սահմանված ոչ նյութական վնասի դիմաց փոխհատուցումը (ՀՀ կառավարության 03.12.2009թ. N 1398-Ա որոշում): Հետևաբար, ՀՀ-ն կատարել է վճռով սահմանված դրամական փոխհատուցում տրամադրելու պարտավորությունը:

05.02.2010թ.-ին Մաքսիմ Գասպարյանը դիմել է ՀՀ վերաքննիչ քրեական դատարան՝ խնդրելով հարուցել Երևան քաղաքի Շենգավիթ համայնքի առաջին ատյանի դատարանի 20.05.2004թ.-ի որոշման վերանայման վարույթ, ճանաչել Կոնվենցիայի 6-րդ, 10-րդ, 11-րդ և Թիվ 7 արձանագրության 2-րդ հոդվածներով սահմանված իրավունքների խախտման փաստը, վերանայել նշված որոշումը և կայացնել իր նկատմամբ արդարացման դատավճիռ: Վերաքննիչ դատարանը 05.02.2010թ.-ին կայացրել է «Նոր հանգամանքով դատական ակտի վերանայման վարույթ հարուցելու և դատարանում գործի քննությունը նշանակելու մասին» որոշում, իսկ 15.03.2010թ.-ին որոշել է բեկանել Մաքսիմ Գասպարյանի վերաբերյալ

ՎԻՎՕ 182-րդ հոդվածով Երևան քաղաքի Շենգավիթ համայնքի առաջին ատյանի դատարանի 20.05.2004թ.-ի որոշումը և գործը ուղարկել Շենգավիթի վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարան՝ նոր քննության: Սույն որոշումը բողոքարկվել է ՀՀ վճռաբեկ դատարան այն հիմքով, որ Վերաքննիչ դատարանը պարտավոր էր գործը քննել ըստ էության, ապահովել իրավունքի խախտման զոհի նկատմամբ կայացված դատավճռի՝ վերադաս դատական ատյանի կողմից վերանայման իրավունքը, համաձայն Կոնվենցիայի Թիվ 7 արձանագրության 2-րդ հոդվածի և կարճել գործը՝ հանցակազմի բացակայության հիմքով: Միևչդեռ, Վերաքննիչ դատարանը գործը քննել է վճռաբեկության կարգով և որոշել է գործն ուղարկել ստորադաս դատարան՝ նոր քննության:

Վճռաբեկ դատարանը 07.06.2010թ.-ի որոշմամբ մերժել է վարույթ ընդունել վճռաբեկ բողոքը:

Երևան՝ քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանը 23.06.2010թ.-ի թիվ ԵՇԴ-0001/05/10 քաղաքացիական գործն ըստ ընդդատության ՀՀ վարչական դատարան ուղարկելու մասին որոշմամբ Մաքսիմ Գասպարյանին վարչական պատասխանատվության ենթարկելու պահանջի մասին գործն ուղարկել է ՀՀ վարչական դատարան՝ պատճառաբանելով, որ խնդիրն ունի վարչահիրավական բնույթ և ենթակա է լուծման ՀՀ վարչական դատարանում:

ՀՀ վարչական դատարանը 26.07.2010թ.-ի «Գործը վերադարձնելու մասին» որոշմամբ գործը վերադարձրել է Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարան՝ պատճառաբանելով, որ տվյալ գործով Մաքսիմ Գասպարյանին մեղսագրվող արարքը և նրա նկատմամբ կիրառված պատիժը Եվրոպական դատարանի կողմից դասակարգվել է որպես «քրեական», իսկ ազգային դատարաններում նոր հանգամանքներով դատական ակտերի վերանայման վարույթ է հարուցվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426[1]-րդ հոդվածի պահանջին համապատասխան՝ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի որոշմամբ: Մ. Գասպարյանի բողոքների քննություններն ինչպես Վերաքննիչ քրեական դատարանում, այնպես էլ Վճռաբեկ դատարանի քրեական պալատում իրականացվել է քրեական դատավարության ընթացակարգով: Որ նման պայմաններում ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանը պետք է գործը քննի՝ հիմք ընդունելով վերադաս ատյանի դատարանի իրավական դիրքորոշումը: Վարչական դատարանը գտել է, որ վարչական արդարադատության կարգով գործը քննելիս հնարավոր չի լինի կիրառել ինչպես Եվրոպական դատարանի, այնպես էլ վերադաս դատարանի քրեահրավական բնույթի դիրքորոշումները: Այս իրավական դիրքորոշումների հաշվառմամբ Վարչական դատարանը գտել է, որ Գասպարյանի նկատմամբ կայացված ներպետական դատական ակտի վերանայման հարցի լուծումը հնարավոր է միայն քրեական դատավարության ընթացակարգով, հետևաբար այն ենթակա է վերադարձման Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարան:

Հարկ է ուշադրություն դարձնել այն հանգամանքի վրա, որ Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանի 23.06.2010թ. քաղաքացիական գործն ըստ ընդդատության ՀՀ վարչական դատարան ուղարկելու մասին որոշման մասին Գասպարյանին հայտնի է դարձել ՀՀ վարչական դատարանի 26.07.2010թ. «Գործը վերադարձնելու մասին» որոշումից՝ այն ստանալուց հետո. 23.06.2010թ. որոշումը Գասպարյանին չի ուղարկվել:

Գործի վերաբացման վարույթ հարուցելը և վիճահարույց որոշման բեկանելը բխում է թիվ R (2000) 2 հանձնարարականի պահանջներից և ՀՀ վճռաբեկ դատարանի՝ արդեն կայուն հաստատված դատական պրակտիկայից, ըստ որի խախտված իրավունքը վերականգնելու ամենապատշաճ եղանակն այն դեպքում, երբ Եվրոպական դատարանի կողմից արձանագրվել է Կոնվենցիայի 6-րդ հոդվածով սահմանված երաշխիքների խախտում, որպես կանոն, հանդիսանում է վարույթի պատշաճ վերաբացումը և արդար դատաքննության բոլոր պահանջների պահպանմամբ գործի վերաքննության անցկացումը (տե՛ս, օրինակ՝ դատարանի մատչելիության իրավունքի խախտման դեպքում Վճռաբեկ դատարանի ՎԴ/5438/05/08/2009թ. որոշումը): Միևնույն ժամանակ, անհրաժեշտ է նկատել, որ գործի վերաբացման վարույթը հարուցվել է մոտ մեկ տարի առաջ, սակայն մինչև այժմ դատարանները վիճահարույց դատական ակտի՝ Երևան քաղաքի Շենգավիթ համայնքի ընդհանուր իրավասության դատարանի 20.05.2004թ. որոշման ըստ էության քննություն դեռ չեն իրականացրել. դատարանները մինչև այժմ լուծել են միայն ընթացակարգային խնդիրներ: Մինչդեռ, Հայաստանի դատարաններն արդեն բավական փորձ ունեն ՄԻԵԴ որոշումների հիման վրա ոչ միայն վերաբացման վարույթ հարուցելու, այլ նաև գործի վերաքննություն անցկացնելու հարցերում՝ և՛ քրեական, և՛ քաղաքացիական գործերով (օրինակ՝ Միշա Հարությունյանն ընդդեմ Հայաստանի, Նիկողոսյանը և Մելքոնյանն ընդդեմ Հայաստանի, «Պայքար և հաղթանակ» ՍՊԸ-ն ընդդեմ Հայաստանի գործերով): Հետևաբար, քանի դեռ վերաբացման վարույթն ընթացքի մեջ է, մենք կարող ենք միայն նշել, որ վարույթը չի իրականացվում պատշաճ արագությամբ, իսկ ամբողջական գնահատական կարելի է տալ միայն վարույթի ամբողջությամբ ավարտվելուց հետո:

Տե՛ս Գալստյանի գործով համապատասխան եզրահանգումը՝ ՀՀ կառավարությունը խախտում է ՆԿ կանոնակարգը՝ 2008 թվականի հունիսից ի վեր չտրամադրելով անհատական բնույթի միջոցների մասին տեղեկատվություն:

Ընդհանուր միջոցներ

Տե՛ս Գալստյանի գործով համապատասխան եզրահանգումը:

16
Մինասյանը և Սեմերջյանն ընդդեմ Հայաստանի

Գործի համարը. 27651/05
Վճիռը կայացվել է. 23.06.2009
Ուժի մեջ է մտել. 23.09.2009

Պաշտոնապես
Հրապարակվել է. Չի հրապարակվել

Փաստերը

Առաջին հայցվորը (Մինասյանը) համարվում էր Փ. Բյուզանդի 9 հասցեի 26 քմ բնակարանի սեփականատեր: Երկրորդ հայցվորը (Սեմերջյանը) առաջին հայցվորի դուստրն էր և բնակվում էր նույն բնակարանում: Կառավարության թիվ 1151-Ն որոշման հիման վրա նրանց բնակարանն օտարվել է Գլխավոր պողոտայի շինարարության նպատակով: Կառուցապատող ընկերությունը (Գլենդեյլ Հիլզ) երկու հայցվորներին առաջարկել է փոխհատուցում, որից նրանք հրաժարվել են՝ որոշելով օտարման օրինականությունը վիճարկել դատարաններում: Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ ընդհանուր իրավասության դատարանի որոշումով առաջին և երկրորդ հայցվորները զրկվել են սեփականության և օգտագործման իրավունքներից՝ 7,000 և 2,000 դոլարին համարժեք ՀՀ դրամի չափով փոխհատուցման դիմաց: Վերաքննիչ և Վճռաբեկ դատարաններն առաջին ատյանի դատարանի որոշումը թողել են անփոփոխ:

Դատարանի որոշումը

«Սեփականություն» հասկացությունը Կոնվենցիայի ներքո չի սահմանափակվում միայն նյութական առարկաների նկատմամբ սեփականության իրավունքով: Ունեցվածքի նկատմամբ որոշ այլ իրավունքներ և շահեր նույնպես կարող են համարվել «գույքային իրավունքներ» և, հետևաբար, «սեփականության իրավունք» Կոնվենցիայի իմաստով: ՀՀ օրենսդրության համաձայն, գույքի օգտագործման իրավունքը ճանաչված է որպես առանձին գույքային իրավունք (ՀՀ քաղ. օր.-ի 135, 225-րդ հոդվածներ), և նույնիսկ սեփականության իրավունքի փոխանցման դեպքում անձը շարունակում է պահպանել օգտագործման իրավունքը (ՀՀ քաղ. օր.-ի 225-րդ հոդվածի 5-րդ մաս): Այդ իրավունքը կարելի է դադարեցնել միայն փոխհատուցում վճարելու միջոցով (ՀՀ քաղ. օր.-ի 225-րդ հոդվածի 2-րդ մաս): Հետևաբար, գույքի օգտագործումը երկրորդ հայցվորի կողմից առանձին գույքային իրավունք էր, որն ընդգրկում էր նյութական շահ, և այդ իմաստով երկրորդ հայցվորը գույքի նկատմամբ ուներ «սեփականութ-

յան» իրավունք Կոնվենցիայի իմաստով: Գործի փաստերը հաստատում են նշվածը: Այսպես՝ դատական վարույթի ընթացքում երկրորդ հայցվորին նույնպես տրամադրվել է փոխհատուցում գույքի դիմաց, իսկ դատարանները գույքից զրկելու մասին որոշում կայացնելիս վկայակոչել են նաև Քաղաքացիական օրենսգրքի 225-րդ հոդվածի 2-րդ մասը, որը վերաբերում է օգտագործման իրավունքի դադարեցմանը: Հետևաբար, ներպետական դատարանները հստակորեն ճանաչել են երկրորդ հայցվորի իրավունքը գույքի նկատմամբ:

Տվյալ ժամանակահատվածում գույքի օտարումը կարգավորվում էր միայն Սահմանադրության 28-րդ հոդվածով: Այս հոդվածի պահանջներից մեկն էր, որպեսզի գույքի օտարումը հանրային կարիքների համար կատարվի օրենքի հիման վրա: Սահմանադրական դատարանի 1998 թվականի որոշման համաձայն, օտարումը պետք է կատարվի կոնկրետ գույքի նկատմամբ ընդունված օրենքով, իսկ «օրենք» բառը նշանակում է ոչ թե ցանկացած իրավական ակտ, այլ Ազգային ժողովի կողմից ընդունված օրենսդրական ակտ: Դրանով Սահմանադրական դատարանը գույքի օտարման համար որոշում կայացնելու իրավունքը վերապահել է միայն օրենսդրին: Այս մեկնաբանությունն ավելի է ամրապնդվում Սահմանադրական դատարանի պնդումով, որ կառավարությունն իրավունք չունի որոշում կայացնել սեփականության օտարման մասին: Սույն գործում առաջին հայցվորի գույքի օտարման ժամանակ չի եղել ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունված օրենք՝ ըստ Սահմանադրության 28-րդ հոդվածի, իսկ օտարման ամբողջ գործընթացը, այդ թվում նաև փոխհատուցման ընթացակարգը, կարգավորվել են ենթաօրենսդրական ակտերով:

Ինչ վերաբերում է երկրորդ հայցվորին, ապա Քաղաքացիական օրենսգրքի 225-րդ հոդվածը հստակորեն նշում է, որ օգտագործողի իրավունքը կարող է դադարեցնել միայն սեփականատերը: Տվյալ դեպքում երկրորդ հայցվորի գույքային իրավունքները դադարեցվել են այնպիսի իրավական նորմերի հիման վրա, որոնք վերաբերելի չէին նրա դեպքին: Հետևաբար, չի կարելի ասել, որ երկու հայցվորների գույքային իրավունքների դադարեցումը, ըստ Կոնվենցիայի Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի, եղել է օրինականության սկզբունքի պահպանմամբ:

Փոխհատուցման հարցի վերաբերյալ Դատարանը նշել է, որ դեռ պատրաստ չէ որոշում կայացնել և որոշել է այդ հարցին անդրադառնալ առանձին որոշումով:

Վարույթը Նախարարների կոմիտեում

14.09.2010թ.-ի դրությամբ ՀՀ կառավարությունը չի տրամադրել որևէ տեղեկություն սույն գործի վերաբերյալ:

ՆԿ-ի որոշումը

- Հաշվի առնելով, որ սույն գործի վերաբերյալ դեռ տեղեկություն չի տրամադրվել, Տեղակալները մեկ անգամ ևս հրավիրել են իշխանություններին տրամադրել Գործողությունների ծրագիր/զեկույց վճռի կատարման վերաբերյալ և որոշել են սույն գործի քննությունը վերսկսել.
  - 2010թ.-ի դեկտեմբերի 1100-րդ նիստում՝ իշխանությունների կողմից Գործողությունների ծրագրի/զեկույցի տրամադրման հարցի լույսի ներքո,
  - անհատական բնույթի միջոցների կիրառության մասով՝ այն պահից, երբ Դատարանը կայացնի իր որոշումը Կոնվենցիայի 41-րդ հոդվածի հիմքով:

Եզրահանգում

Հաշվի առնելով, որ վճիռն ուժի մեջ մտնելուց մեկ տարի անց ՀՀ կառավարությունը ՆԿ-ին դեռ չի տրամադրել անհատական և ընդհանուր բնույթի միջոցների մասին Գործողությունների ծրագիր, Հայաստանը չի կատարում Ուղեցույցի 3-րդ կետով սահմանված ժամկետները (ըստ որի պահանջվում է Գործողությունների ծրագիրը ներկայացնել Քարտուղարությանը վճիռն օրինական ուժի մեջ մտնելուց հետո վեց ամսվա ընթացքում):

Վճիռը դեռ չի հրապարակվել, թեև օրինական ուժի մտնելուց հետո անցել է մոտ մեկ տարի և երկու ամիս: Միևչդեռ, հաշվի առնելով, որ սա Հյուսիսային պողոտայի գործերով առաջին վճիռն էր, դրա թարգմանումը և հրապարակումը ունի մեծ նշանակություն: Այս առումով նշում ենք, որ Հայաստանը չի կատարում թիվ Rec(2002)13 հանձնարարականի պահանջը:

Ի պատասխան Գործողությունների ծրագիր տրամադրելու մասին ՆԿ-ի պահանջի՝ ՀՀ կառավարությունը զուտ հայտնել է, որ վճիռը թարգմանվել է և շուտով հրապարակվելու է: ՆԿ-ն նկատել է, որ դա չի ներառում Գործողությունների ծրագրով նախատեսված ամբողջ տեղեկությունը, և այդ քայլը չի կարող համարվել որպես Գործողությունների ծրագիր: Հետևաբար, ՆԿ-ն կրկնել է իր պահանջը նշված փաստաթուղթը պատշաճ կերպով տրամադրելու մասին և որոշել է սույն հարցին անդրադառնալ 2011թվականի մարտին:

17

Բայաթյանն ընդդեմ Հայաստանի

Գործի համարը. 23459/03
Վճիռը կայացվել է. 27.10.2009
Վճիռը բողոքարկվել է. 10/05/2010

Պաշտոնապես
հրապարակվել է. Չի հրապարակվել

Փաստերը

Վահան Բայաթյանը հրաժարվել է ծառայել ազգային բանակում՝ պատճառաբանելով, որ հանդիսանում է Եհովայի վկա և իր հավատքն արգելում է ծառայել զինված ուժերում: 2001 թվականի հոկտեմբերին նրան առաջադրվել է մեղադրանք, իսկ 2002 թվականի հոկտեմբերին նա դատապարտվել է մեկ տարի և վեց ամսվա ազատազրկման, որն ավելի ուշ Վերաքննիչ դատարանի կողմից խստացվել է մինչև երկու և կես տարվա ազատազրկման: 2003 թվականի հուլիսին պատիժը կրելուց տաս ու կես ամիս անց Վ. Բայաթյանը պայմանական վաղաժամկետ ազատվել է բանտարկությունից: Եվրոպական դատարանում վիճարկում էր, որ իրեն դատապարտելը հանդիսացել է Կոնվենցիայի 9-րդ հոդվածով սահմանված հավատքի և խղճի ազատության իրավունքի միջամտություն և խախտում: Թեև Կոնվենցիան ուղղակիորեն չի երաշխավորում հավատքի և խղճի ազատության իրավունքի հիմքով ազգային բանակում ծառայելուց հրաժարվելու նյութական իրավունք, սակայն իրավունքը զարգանում է, և հնարավոր է, որ Կոնվենցիան մեկնաբանվի ներկա իրողությունների լույսի ներքո: Արձանագրվի, որ Կոնվենցիան երաշխավորում է նման նյութական իրավունք, քանի որ ԵԽ անդամ պետությունների մեծամասնությունում նման նյութական իրավունք ներպետական իրավունքում սահմանվել է:

Դատարանի որոշումը

Ինչպես իր նախկին որոշումներում, սույն որոշման շրջանակներում նույնպես Եվրոպական դատարանը սահմանել է, որ Կոնվենցիայի 9-րդ հոդվածը խնդրո առարկա հարցի առնչությամբ պետք է մեկնաբանվի Կոնվենցիայի 4-րդ հոդվածի 3-րդ մասի բ-կետի համատեքստում, որի տեքստից բխում է, որ պետություններն հայեցողություն ունեն իրենց ներպետական իրավունքում սահմանել և ճանաչել հավատքի հիմքով ազգային բանակում չծառայելու նյութական իրավունք: Հետևաբար, եթե Կոնվենցիայի անդամ պետություններն այս ոլորտում ունեն հայեցողություն, 9-րդ հոդվածը չի կարող պետություններին պարտադրել ճանաչել այդ իրավունքը: Այլ

բան է, եթե պետություններն իրենց կամքով ճշված իրավունքը ճանաչում են իրենց ներպետական օրենսդրությամբ: Ինչ վերաբերում է փաստերին, ապա այն պահին, երբ Վ. Բայաթյանին առաջադրվել էր մեղադրանք, ՀՀ-ն դեռ չէր ճանաչել ճշված իրավունքն իր ներպետական համակարգում: Հետևաբար, Կոնվենցիայի 9-րդ հոդվածի խախտում տեղի չի ունեցել:

Վարույթը Նախարարների կոմիտեում

Հաշվի առնելով, որ սույն վճիռը Բայաթյանի կողմից 10.05.2010թ.-ին բողոքարկվել է Մեծ Պալատ, և այդ պատճառով վճիռն օրինական ուժի մեջ չի մտել, գործը չի փոխանցվել ՆԿ, և վերջինս վճռի կատարման վարույթ չի հարուցել: Հետևաբար, անհրաժեշտություն չկա որևէ եզրահանգում տրամադրել սույն գործով վճռի կատարման առնչությամբ:

18

Կարապետյանն ընդդեմ Հայաստանի

Գործի համարը. 22387/05
Վճիռը կայացվել է. 27.10.2009
Ուժի մեջ է մտել. 27.01.2010

Պաշտոնապես
Հրապարակվել է. ՀՀՊՏ 2010.10.13/50(784)

Փաստերը

Սույն գործի փաստերը, մասնավորապես՝ ձերբակալվելու և դատապարտվելու հանգամանքները նման են Լ. Կիրակոսյանի և Ա. Մխիթարյանի (տե՛ս Լ. Կիրակոսյանի և Ա.Մխիթարյանի գործը) գործի փաստերին, քանի որ նրանք համագյուղացիներ էին և ձերբակալվել, դատապարտվել ու պատիժը կրել են միասին:

Դատարանի որոշումը

Դատարանը սահմանել է, որ կալանքի պայմանների առումով Զ. Կարապետյանը ենթարկվել է անմարդկային վերաբերմունքի: Կալանքի պայմանների վերաբերյալ իր դատողությունները Դատարանը հիմնել է Լ. Կիրակոսյանի գործով վճռի հիման վրա, քանի որ Զ. Կարապետյանը և Լ. Կիրակոսյանը վարչական կալանքի ժամկետը կրել են միասին՝ միևնույն խցում: Դատարանը սահմանել է Կոնվենցիայի 3-րդ հոդվածի խախտում:

Վկայակոչելով Գալստյանի գործով վճիռը՝ Դատարանը հայտարարել է, որ խախտվել էր նաև Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասը՝ նույն հոդվածի 3-րդ մասի զուգակցությամբ, քանի որ այս գործում էլ անձը տարվել և պահվել է ոստիկանության բաժնում՝ առանց արտաքին աշխարհի հետ շփման հնարավորության, որտեղ էլ նրան մեղադրանք է առաջադրվել, և մի քանի ժամ անց նա տարվել է դատարան և դատապարտվել: Հետևաբար, սույն գործով Դատարանը որևէ պատճառ չի տեսել այլ եզրահանգման հանգելու համար, քան հանգել էր Գալստյանի գործով և եզրակացրել է, որ խախտվել է Զ. Կարապետյանի արդար դատաքննության իրավունքը, մասնավորապես կապված այն բանի հետ, որ վերջինիս չի տրամադրվել պատշաճ ժամանակ և հնարավորություն իր պաշտպանությունը նախապատրաստելու համար: Եվ վերջում, նորից հղում կատարելով Գալստյանի գործով վճռի վրա՝ Դատարանը որոշել է, որ խախտվել էր նաև Թիվ 7-րդ արձանագրության 2-րդ հոդվածը, քանի որ Զ. Կարապետյանի տրամադրության տակ չի եղել դատավարական ընթացակարգ առաջին ատյանի դատարանի դատավճիռը բողոքարկելու համար: Արդարացի փոխհատուց-

ման մասով Դատարանը սահմանել է 4,500 եվրո ոչ նյութական վնասի և 3,000 եվրո դատական ծախսերի ու ծախքերի դիմաց:

Վարույթը Նախարարների կոմիտեում

Տե՛ս Լ. Կիրակոսյանի գործով վարույթը ՆԿ-ում: Սույն գործով վարույթն իրականացվում է Լ. Կիրակոսյանի վճռի կատարողական վարույթի հետ համատեղ:

Եզրահանգում

Անհատական միջոցներ

ՀՀ կառավարությունը տրամադրել է վճռով սահմանված փոխհատուցումը (ՀՀ կառավարության 11.03.2010թ. N 232-Ա որոշում): Հետևաբար, Հայաստանը կատարել է վճռով սահմանված դրամական փոխհատուցում կատարելու պարտավորությունը:

Զ. Կարապետյանը «նոր հանգամանքի» հիմքով գործի վերաբացման դիմում չի ներկայացրել: Նման դիմումի բացակայությունը չի կարող հիմք հանդիսանալ, որպեսզի ՀՀ իշխանություններն իրենց նախաձեռնությամբ հարուցեն գործի վերաբացման վարույթ, քանի որ ներպետական օրենսդրությունը որևէ մարմնի (օրինակ՝ դատախազությանը) նման լիազորությամբ չի օժտել (տե՛ս Գալստյանի և Կիրակոսյանի գործերով համապատասխան եզրահանգումները: Տե՛ս նաև մեր դիտարկումը Հետևություններ և առաջարկություններ բաժնում:

ՀՀ կառավարությունը խախտում է ՆԿ կանոնակարգը՝ տևական ժամանակ ՆԿ-ին չտրամադրելով անհատական բնույթի միջոցների մասին տեղեկատվություն:

Ընդհանուր միջոցներ

Ի կատարումն թիվ Rec(2002)13 և թիվ Rec(2004)4 հանձնարարականների պահանջների՝ վճիռը թարգմանվել ու հրապարակվել է ՀՀ Պաշտոնական տեղեկագրում, ՀՀ արդարադատության նախարարության ինտերնետ կայքում, ինչպես նաև ներառվել է ՀՀ դատական դպրոցի և ՀՀ - դատախազության դպրոցի ուսումնական ծրագրերում:

Կալանավայրի պայմանների առնչությամբ՝ տե՛ս համապատասխան եզրակացությունը Լ. Կիրակոսյանի գործով:

Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասի «բ» կետի և Թիվ 7 արձանագրության 2-րդ հոդվածի հիմքով վճռի կատարման համար անհրաժեշտ համակարգային փոփոխությունների առնչությամբ՝ տե՛ս Լ. Կիրակոսյանի գործով համապատասխան եզրակացությունը:

19
Ստեփանյանն ընդդեմ Հայաստանի

Գործի համարը. 45081/04
Վճիռը կայացվել է. 27.10.2009
Ուժի մեջ է մտել. 27.01.2010

Պաշտոնապես
Հրապարակվել է. ՀՀՊՏ 2010.10.13/50(784)

Փաստերը

Ստեփան Ստեփանյանը որպես ընդդիմադիր կուսակցության անդամ և դիտորդ մասնակցել է 2003 թվականի խորհրդարանական ընտրություններին: 10.04.2004 թվականի հանրահավաքին մասնակցելուց հետո 20.05.2004 թվականին ենթարկվել է 8-օրյա վարչական կալանքի Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 182-րդ հոդվածի հիման վրա *«հասարակական կարգը խախտելու և ոստիկանության ծառայողի օրինական պահանջներին չենթարկվելու համար»*: Դիմողն առաջին ատյանի դատարանի որոշումը, որն ուժի մեջ էր մտել հրապարակման պահից, բողոքարկել է Քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանի նախագահին: 08.06.2004թ. դատարանի նախագահը մերժել է դիմումը՝ հիմնավորելով, որ դիմողը «կատարել է նշված արարքը»:

Դատարանի որոշումը

Եվրոպական դատարանը նշել է, որ Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի համապատասխան հոդվածների վերլուծությունից պարզ չէ, թե արդյոք Վերաքննիչ դատարանի իրավազորությունը սահմանափակվում էր միայն իրավունքի մասին հարցի քննությամբ, և թե արդյոք վերջինս կարող էր կատարել նաև գործի ըստ էության քննություն: Դատական ակտի տեքստից պարզվում է, որ դատարանի նախագահը քննել էր ոչ միայն իրավունքի մասին հարցերը, այլ նաև գործի փաստերը: Եվրոպական դատարանը որոշել է, որ, ելնելով գործի հանգամանքներից, արդար դատաքննության իրավունքն ապահովելու համար անհրաժեշտություն կար, որպեսզի դատարանը քններ նաև այն ապացույցները, որոնք դիմողը ցանկանում էր անձամբ ներկայացնել դատարան, ինչպես նաև հարցաքննել երկու ոստիկաններին, ովքեր իր դեմ ցուցմունք էին տվել, և որոնց ցուցմունքների հիման վրա էլ առաջին ատյանի դատարանը դատապարտել էր իրեն: Եվրոպական դատարանը որոշել է, որ խախտվել էր դիմողի արդար դատաքննության իրավունքը Կոնվենցիայի 6-րդ հոդվածի ներքո, քանի որ վերջինս զրկվել էր դատաքննությանը մասնակցելու

իրավունքից: Դատարանը սահմանել է 1,200 եվրո ոչ նյութական վնասի և 1,000 եվրո դատական ծախսերի ու ծախքերի դիմաց:

Վարույթը Նախարարների կոմիտեում

15.09.2010թ.-ի դրությամբ Կառավարությունը դեռ չի ներկայացրել վճռի կատարման Գործողությունների ծրագիր: 15.09.2010թ.-ին ՆԿ-ն որոշել է երկրորդ անգամ դիմել ՀՀ կառավարությանը Գործողությունների ծրագիրը ներկայացնելու պահանջով: Որոշվել է սույն գործին անդրադառնալ 2010 թվականի դեկտեմբերի թիվ 1100-րդ նիստի ընթացքում:

Եզրահանգում

Անհատական միջոցներ

Հաշվի առնելով, որ վճիռն ուժի մեջ մտնելուց մոտ ութ ամիս անց ՀՀ կառավարությունը ՆԿ-ին դեռ չի տրամադրել անհատական և ընդհանուր բնույթի միջոցների մասին Գործողությունների ծրագիր, Հայաստանը չի կատարում Ուղեցույցի 3-րդ կետով սահմանված ժամկետները (ըստ որի պահանջվում է Գործողությունների ծրագիրը ներկայացնել Քարտուղարությանը վճիռն օրինական ուժի մեջ մտնելուց հետո վեց ամսվա ընթացքում):

Այդուհանդերձ, ՀՀ կառավարությունը տրամադրել է վճռով սահմանված ոչ նյութական վնասի դիմաց փոխհատուցումը (ՀՀ կառավարության 11.03.2010թ. N 229-Ա որոշում): Հետևաբար, Հայաստանը կատարել է վճռով սահմանված դրամական փոխհատուցում տրամադրելու պարտավորությունը:

Ս. Ստեփանյանը «նոր հանգամանքի» հիմքով գործի վերաբացման դիմում չի ներկայացրել: Նման դիմումի բացակայությունը չի կարող հիմք հանդիսանալ, որպեսզի ՀՀ իշխանություններն իրենց նախաձեռնությամբ հարուցեն գործի վերաբացման վարույթ, քանի որ ներպետական օրենսդրությունը որևէ մարմնի (օրինակ՝ դատախազությանը) նման լիազորությամբ չի օժտել (Տե՛ս Գալստյանի գործը: Տե՛ս նաև մեր դիտարկումները Հետևություններ և առաջարկություններ բաժնում):

Ընդհանուր միջոցներ

Վճիռը թարգմանվել ու հրապարակվել է պաշտոնական տեղեկագրում և Հայաստանի արդարադատության նախարարության ինտերնետ կայքում: Այս ամենը վկայում է, որ Հայաստանը կատարել է թիվ Rec(2002)13 հանձնարարականի պահանջները: Այդուհանդերձ, թեև որպես ընդհանուր միջոց վճիռը թարգմանվել ու պաշտոնապես հրապարակվել է, սակայն պետք է հաշվի առնել այն հանգամանքը, որ թարգմանութ-

յունների հրապարակումը տեղի է ունեցել վերաձայման վարույթ հարուցելու ժամկետի լրանալուց հետո:

Վճիռը ներառված է ՀՀ դատական դպրոցի և ՀՀ դատախազության դպրոցի ուսումնական ծրագրերում: Հետևաբար, սույն գործով ՀՀ-ն կատարել է թիվ Rec(2004)4 հանձնարարականի պահանջները:

Կոնվենցիայի 6-րդ հոդվածի առնչությամբ (հրապարակային դատական քննություն) տե՛ս Գալստյանի գործով համապատասխան եզրահանգումը համակարգային խնդիրները վերացնելու առնչությամբ:

Ի պատասխան Գործողությունների ծրագիր տրամադրելու մասին ՆԿ-ի պահանջի՝ ՀՀ կառավարությունը զուտ հայտնել է, որ վճիռը թարգմանվել է և ուղարկվել համապատասխան մարմինների: ՆԿ-ն նկատել է, որ դա չի ներառում Գործողությունների ծրագրով նախատեսված ամբողջական տեղեկատվությունը, և այդ քայլը չի կարող համարվել որպես Գործողությունների ծրագիր: Հետևաբար, ՆԿ-ն կրկնել է իր պահանջը Գործողությունների ծրագիրը պատշաճ կերպով ներկայացնելու համար և որոշել է սույն հարցին անդրադառնալ 2011թվականի մարտին:

20

Խաչատրյանն ընդդեմ Հայաստանի

Գործի համարը. 31761/04
Վճիռը կայացվել է. 01.12.2009
Ուժի մեջ է մտել. 01.03.2010

Պաշտոնապես
Հրապարակվել է. ՀՀՊՏ 2010.10.13/50(784)

Փաստերը

Միխայել և Էլյանորա Խաչատրյանները ամուսիններ են, ովքեր աշխատել են «Հրազդանմաշ» փակ բաժնետիրական ընկերությունում: 1998-2000թթ.-ին ընկերությունը չի վճարել աշխատավարձեր և կարգադրել է անձնակազմի մեծամասնությանը, ներառյալ նաև Խաչատրյան ամուսիններին, ամորոշ ժամկետով իրենց հաշվին արձակուրդ գնալ: 17.05.2001թ.-ին արհմիությունը չվճարված աշխատավարձը և այլ օգուտները բռնագանձելու նպատակով անձնակազմի անունից «Հրազդանմաշ»-ի դեմ հայց է հարուցել Կոտայքի մարզի առաջին ատյանի դատարան: 02.07.2001թ.-ին Կոտայքի մարզի առաջին ատյանի դատարանը բավարարել է հայցը և կարգադրել, որ «Հրազդանմաշ»-ը վճարի 58,060,925 ՀՀ դրամ՝ ներառյալ 211,864.51 և 221,157.08 ՀՀ դրամ գումարներ՝ համապատասխանաբար Միխայել Խաչատրյանին և Էլյանորա Խաչատրյանին: Դատարանի որոշման դեմ վերաքննիչ բողոք չի բերվել, և որոշումը մտել է ուժի մեջ ու դարձել վերջնական: Հետագայում, ԴԱՀԿ-ը մի քանի անգամ վերսկսել ու կասեցրել է վճռի կատարման վարույթը, որը կապված էր հիմնականում այն հանգամանքի հետ, որ ՀՀ կառավարությունը որոշել էր սեփականաշնորհել ընկերությունը և այդ նպատակով հրահանգել էր վաճառքից ստացված գումարը հանձնել պետական բյուջե՝ ընկերության պարտքերը մարելու նպատակով: 05.01.2004թ.-ին Խաչատրյանները ԴԱՀԿ-ի անգործությունը վիճարկել են Կոտայքի մարզի առաջին ատյանի դատարան: Դատարանը մերժել է հայցը և իր որոշումը հիմնավորել հետևյալ կերպ. *«... կատարողական վարույթը Կոտայքի մարզի ԴԱՀԿ բաժնի կողմից կասեցվել է ՀՀ կառավարության 27.03.2003թ. թիվ 329-Ա որոշման հիման վրա: Համաձայն ՀՀ ԴԱՀԿ մասին օրենքի 38 հոդ. հարկադիր կատարողն իրավունք ունի կասեցնել կատարողական վարույթը, եթե պարտապանը ներգրավվել է որևէ պետական հանձնարարության մեջ, ուստի ԴԱՀԿ բաժնի գործողությունները օրինական են և հիմնավորված»:* Խաչատրյանների վերաքննիչ և վճռաբեկ բողոքները նույնպես մերժվել են համապատասխան դատարանների կողմից: Արդյունքում,

2001թվականին օրինական ուժի մեջ մտած դատական վճիռը մնացել է անկատար:

Դատարանի որոշումը

Թեև «Հրազդանմաշ»-ը մասնավոր ընկերություն է և ոչ պետական մարմինների կողմից Կոնվենցիայի դրույթների խախտումները չեն կարող վերագրվել պետությանը, սակայն տվյալ դեպքում «Հրազդանմաշ» ընկերությունը չի ունեցել բավարար ինստիտուցիոնալ և գործառնական անկախություն պետությունից, որպեսզի վերջինիս ազատեր Կոնվենցիայով սահմանված պատասխանատվությունից: Հետևաբար, Պետությունը պետք է պատասխանատվություն կրի «Հրազդանմաշ»-ի աշխատավարձի պարտքերի համար: Այս հիմքով Դատարանը որոշել է ընդունելի համարել գանգատը:

Ինչ վերաբերում է նյութական իրավունքին, ապա իրենց օգտին կայացված և օրինական ուժի մեջ մտած վճռի կատարման համար անհրաժեշտ միջոցներ չձեռնարկելով՝ հայաստանյան իշխանությունները սահմանափակել են Խաչատրյանների «դատարան դիմելու իրավունք»-ի իմաստը և զգալի ժամանակահատվածով խոչընդոտել են ու դեռ խոչընդոտում են նրանց՝ գումարն ամբողջությամբ ստանալուն, որի իրավունքը նրանք ունեին: Նման պայմաններում խախտվել է ոչ միայն Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասը՝ դատարանի իրավունքը, այլ նաև Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածով սահմանված գույքից՝ տվյալ դեպքում աշխատավարձից անարգել օգտվելու իրավունքը:

Արդարացի փոխհատուցման մասով Դատարանը սահմանել է 365 եվրո Միխայել Խաչատրյանին և 380 եվրո էլյանորա Խաչատրյանին նյութական վնասի դիմաց, իսկ երկուսին միասին՝ 1,000 եվրո ոչ նյութական վնասի դիմաց:

Վարույթը Նախարարների կոմիտեում

Գործը գտնվում է ՆԿ-ի վարույթում, սակայն վերջինս դեռ որևէ ընթացակարգային որոշում չի կայացրել: ՆԿ-ն իր վերջին՝ 14.09.2010թ.-ի նիստում հայտարարել է, որ հաշվի առնելով, որ ՀՀ կառավարությունը դեռ չի ներկայացրել Գործողությունների ծրագիր կամ Գործողությունների մասին զեկույց, ուստի սույն գործին կանդրադառնա իր հաջորդ՝ 2010 թվականի դեկտեմբերի թիվ 1100-րդ նիստում:

Եզրահանգում

09.14.2010թ.-ի դրությամբ ՀՀ կառավարությունը դեռ չի ներկայացրել Գործողությունների ծրագիրը ՆԿ-ին: Այդուհանդերձ, 2010 թվականի դեկտեմբերի դրությամբ Գործողությունների ծրագիրը դեռ ներկայացված

չի եղել, որն արդեն բարձրացնում է ՆԿ-ի կանոնակարգը խախտելու մասին հարց:

Այդուհանդերձ, վճռի կատարման ուղղությամբ արդեն ձեռնարկվել են որոշ քայլեր, մասնավորապես, կառավարությունը տրամադրել է վճռով սահմանված փոխհատուցումը (ՀՀ կառավարության 11.03.2010թ. N 232-Ա որոշում): Հետևաբար, Հայաստանը կատարել է վճռով սահմանված դրամական փոխհատուցում կատարելու պարտավորությունը: Վճիռը թարգմանվել ու հրապարակվել է պաշտոնական տեղեկագրում և ՀՀ արդարադատության նախարարության ինտերնետ կայքում: Այս ամենը վկայում է, որ Հայաստանը կատարել է թիվ Rec(2002)13 հանձնարարականի պահանջները: Վճիռն ընդգրկված է ՀՀ դատավորների դպրոցի ուսումնական ծրագրում և արդեն ներկայացվել է դասընթացների մասնակիցներին՝ դատավորներին, դատական ծառայողներին և թեկնածուներին 2010 թվականի դասընթացների ընթացքում: Հետևաբար, ՀՀ-ն կատարել է Rec(2004)4 հանձնարարականի պահանջները:

Հաշվի առնելով, որ վարույթը ՆԿ-ում փաստորեն դեռ չի սկսվել և գտնվում է սկզբնական փուլում, հետագա եզրահանգումներ կատարելու կարիք առայժմ չկա:

21
Ասատրյանն ընդդեմ Հայաստանի

Գործի համարը. 24173/06
Վճիռը կայացվել է. 09.02.2010
Ուժի մեջ է մտել. 09.05.2010

Պաշտոնապես
Հրապարակվել է. ՀՀՊՏ 2010.10.13/50(784)

Փաստերը

2005 թվականի սեպտեմբերի 23-ին ժամը 17:50-ին Սիլվա Ասատրյանը ձերբակալվել է սպանության փորձի կասկածանքով, իսկ սեպտեմբերի 26-ին ներկայացվել է մեղադրանք: Նույն օրը Կենտրոն և Նորք-Մարաշ ընդհանուր իրավասության դատարանը բավարարել է քննիչի միջնորդությունը նրա նկատմամբ երկու ամսով խափանման միջոց կալանք կիրառելու մասին: 14.11.2005թ.-ին քննիչը ներկայացրել է միջնորդություն կալանքի ժամկետը երկարաձգելու հիմքով, սակայն դատարանը մերժել է միջնորդությունը: 23.11.2005թ.-ին Ս. Ասատրյանի փաստաբանը որոշման պատճենը ներկայացրել է քրեակատարողական հիմնարկի պետին, սակայն վերջինս հրաժարվել է ազատ արձակել կալանավորին: Նույն օրը դատախազը բողոքարկել է առաջին ատյանի դատարանի որոշումը Վերաքննիչ դատարան: Դատարանը նիստը հրավիրել է 17:30-ին, սակայն հնարավոր չի եղել այդ օրն ավարտել դատական քննությունը, քանի որ Ս. Ասատրյանի առողջական վիճակը վատացել է: Դատարանը ստիպված էր դադարեցնել դատական նիստը երեկոյան 20:30-ին և տեղափոխել նիստը հաջորդ օրը ժամը 13:00-ին: Թեև Ս. Ասատրյանի կալանքի ժամկետը ժամը 17:50-ից սպառվել էր, սակայն նա ազատ չի արձակվել, այլ դատարանից տարվել է կալանավայր: Հաջորդ օրը Վերաքննիչ դատարանը վերսկսել է դատական նիստը ժամը 13:00-ին և որոշում է կայացրել երկարաձգել խափանման միջոց կալանքի ժամկետը ևս երկու ամսով: Ս. Ասատրյանը բողոքարկել է որոշումը Վճռաբեկ դատարան, սակայն վերջինս վերադարձրել է բողոքը:

Դատարանի որոշումը

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 139-րդ հոդվածի համաձայն, քննիչը պարտավոր է կալանքի ժամկետի երկարաձգման համար միջնորդությունը ներկայացնել ժամկետի սպառվելուց առնվազն տասն օր առաջ, իսկ դատարանն էլ պարտավոր է որոշում կայացնել ժամկետի սպառվելուց առնվազն հինգ օր առաջ: Ի հավելումն, նույն օրենսգրքի 141-

րդ հոդվածի համաձայն, կալանավայրը պարտավոր է անմիջապես ազատ արձակել այն կալանավորին, ում կալանքի ժամկետը սպառվել է: Քննիչը և դատարանը չեն պահպանել նշված ժամկետները, իսկ կառավարությունն էլ որևէ բացատրություն չի ներկայացրել նշված ուշացումների վերաբերյալ: Իր հերթին, Վերաքննիչ դատարանը նույնիսկ կալանքի ժամկետի սպառվելուց հետո շարունակել է Ս. Ասատրյանին վերաբերվել որպես կալանավորի՝ հրահանգելով իրավապահ մարմիններին վերադարձնել նրան կալանավայր: Դատարանը եզրահանգել է, որ սույն գործը վերաբերում է ոչ թե իրավասու մարմինների կողմից դատավարական ընթացակարգերի ճգճգումներին, այլ այդ մարմինների, այդ թվում նաև դատարանների կողմից քրեադատավարական իրավունքի նորմերին չենթարկվելուն: Արդյունքում, Ս. Ասատրյանը մոտ 19 ժամ մնացել է անազատության մեջ առանց իրավասու մարմնի՝ դատարանի որոշման: Հետևաբար, խախտվել է Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին մասի «գ» կետով սահմանված օրինականության սկզբունքը: Արդարացի փոխհատուցման մասով Դատարանը սահմանել է 2,000 եվրո ոչ նյութական վնասի և 500 եվրո դատական ծախսերի դիմաց:

Վարույթը Նախարարների կոմիտեում

Գործը գտնվում է ՆԿ-ի օրակարգում, սակայն վերջինս դեռ որևէ ընթացակարգային որոշում չի կայացրել: ՆԿ-ն իր վերջին՝ 14.09.2010թ. նիստում հայտարարել է, որ հաշվի առնելով, որ ՀՀ կառավարությունը դեռ չի ներկայացրել Գործողությունների ծրագիր, սույն գործին կանդրադառնա իր հաջորդ՝ 2010 թվականի դեկտեմբերի թիվ 1100-րդ նիստում:

Եզրահանգում

14.09.2010թ.-ի դրությամբ գործողությունների ծրագրի չներկայացնելը ՆԿ-ի Ուղեցույցով սահմանված 6-ամսյա ժամկետի շրջանակներում է, քանի որ վճիռն ուժի մեջ է մտել 09.05.2010թ.-ին: Հետևաբար, չի կարելի ասել, որ կառավարությունը ցուցաբերել է անգործություն վճռի կատարման ներկա փուլում:

Վճռի կատարման ուղղությամբ արդեն ձեռնարկվել են որոշ ընդհանուր բնույթի քայլեր, մասնավորապես, կառավարությունը տրամադրել է վճռով սահմանված փոխհատուցումը (ՀՀ կառավարության 05.08.2010թ. N 960-Ա որոշում): Հետևաբար, Հայաստանը կատարել է վճռով սահմանված դրամական փոխհատուցում կատարելու պարտավորությունը: Վճիռը թարգմանվել ու հրապարակվել է պաշտոնական տեղեկագրում և ՀՀ արդարադատության նախարարության ինտերնետ կայքում՝ ի կատարումն Rec(2002)13 հանձնարարականի պահանջների: Վճիռն ընդգրկված է ՀՀ դատավորների դպրոցի և դատախազության դպրոցի ուսումնական ծրագրերում և արդեն ներկայացվել է 2010 թվականի երկրորդ կեսի դասընթաց-

ների մասնակիցներին: Հետևաբար, Հայաստանը կատարել է Rec(2004)4 հանձնարարականի պահանջները:

Այդուհանդերձ, 2010 թվականի դեկտեմբերի դրությամբ Գործողությունների ծրագիրը դեռ ներկայացված չի եղել, որն արդեն բարձրացնում է ՆԿ-ի կանոնակարգը խախտելու մասին հարց: ՆԿ-ն կրկնել է իր պահանջը և որոշել է խնդրին անդրադառնալ 2011թվականի մարտին:

22
Մամիկոնյանն ընդդեմ Հայաստանի

Գործի համարը. 25083/05
Վճիռը կայացվել է. 16.03.2010
Ուժի մեջ է մտել. 04.10.2010

Պաշտոնապես
Հրապարակվել է. Չի հրապարակվել

Փաստերը

2003 թվականի օգոստոսի 17-ին Վարդան Մամիկոնյանի նկատմամբ հարուցվել է քրեական գործ ճանապարհային պատահարի փաստի առթիվ, որի արդյունքում մահ է պատճառվել: Նրան առաջադրվել է մեղադրանք ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի 2-րդ մասով՝ ճանապարհային երթևեկության կանոնները խախտելու համար, որն անզգուշությամբ առաջացրել է մարդու մահ: Քննության ժամանակ մի շարք վկաներ, այդ թվում՝ երեք ականատես վկաներ Զ.-ն, Մ.-ն և Օ.-ն, ցուցմունքներ են տվել Վ. Մամիկոնյանի դեմ, մասնավորապես, որ նա մեքենան վարում էր բարձր արագությամբ: Ի տարբերություն առաջին երկու վկաների՝ երրորդ վկայի հետ նախաքննության և դատաքննության փուլերում առերեսումներ չեն անցկացվել: Առաջին ատյանի դատարանը բավարարվել է միայն վկա Օ.-ի նախաքննական ցուցմունքի հրապարակումով՝ գտնելով, որ վկայի ցուցմունքը գործի ելքի վրա էական ազդեցություն չէր կարող թողնել, քանի որ բովանդակությամբ նույնանման էր մյուս երկու վկաների ցուցմունքներին: Վերաքննիչ դատարանը դատավճիռը թողել է անփոփոխ: Վճռաբեկ դատարանը բողոքը թողել է առանց քննության ժամկետանց լինելու պատճառաբանությամբ: Վ. Մամիկոնյանը պնդում էր, որ Վճռաբեկ դատարանը հաշվի չէր առել, որ բողոքը ժամկետանց էր բերվել այն պատճառով, որ Վերաքննիչ դատարանն իր որոշումն ուղարկել էր սահմանված ժամկետների ուշացումով:

Դատարանի որոշումը

Դատարանը գտել է, որ վկա Օ.-ի ցուցմունքը չի հանդիսացել այն միակ ապացույցը, որի հիման վրա դատարանները եզրակացություն են արել, որ դիմողը խախտել է ճանապարհային երթևեկության կանոնները: Վկա Օ.-ի ցուցմունքն էական հակասություն չի ունեցել երկու այլ ականատես վկաների կողմից տրված ցուցմունքների հետ: Այն փաստը, որ Վ. Մամիկոնյանը հնարավորություն չի ունեցել հարցաքննել վկա Օ.-ին, չի խախ-

տել նրա պաշտպանության իրավունքը այն աստիճան, որպեսզի հանգեցներ 6-րդ հոդվածի 3-րդ մասի «գ» կետի խախտման:

Ինչ վերաբերում է Վճռաբեկ դատարանի կողմից բողոքի մերժման փաստին, ապա դատարանը գտել է, որ վճռաբեկ բողոքը ժամկետանց է ներկայացվել մեղադրյալի կամքից անկախ հանգամանքների ներքո, քանի որ Վերաքննիչ դատարանը որոշումն առաքել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 402-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջների խախտմամբ: Հետևաբար, տեղի է ունեցել դատարանի մատչելիության իրավունքի խախտում Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի ներքո:

Վարույթը Նախարարների կոմիտեում

Վարույթը ղեռ չի սկսել, քանի որ վճիռն ուժի մեջ է մտել 04.10.2010թ.-ին:

23
Աշոտ Հարությունյանն ընդդեմ Հայաստանի

Գործի համարը. 34334/04
Վճիռը կայացվել է. 15.06.2010
Ուժի մեջ է մտել. 15.09.2010

Պաշտոնապես
Հրապարակվել է. Չի հրապարակվել

Փաստերը

Աշոտ Հարությունյանը ձերբակալվել է 2003 թվականի մայիսին, առաջադրվել է մեղադրանք խարդախության հիմքով, և խափանման միջոց ընտրվել է կալանքը, 2004 թվականի հունվարին դատապարտվել է յոթ տարվա ազատազրկման: Մինչ դատապարտվելը նա պահվել է Նուբարաշենի քրեակատարողական հիմնարկում (ՔԿՀ), իսկ դատապարտվելուց հետո՝ Կոշի ՔԿՀ-ում: Նուբարաշենի ՔԿՀ ընդունվելուց քիչ անց տեղափոխվել է դատապարտյալների հիվանդանոցում, որտեղ հետազոտվելուց հետո բժիշկները եզրակացրել են, որ անհրաժեշտ է Ա. Հարությունյանին ենթարկել վիրահատության, քանի որ վերջինս տառապում էր աղեստամոքսային սուր հիվանդությամբ: Սակայն վիրահատություն չի իրականացվել: Ի հավելումն, 2004 թվականի հուլիսին տարել է ինֆարկտ, որի առնչությամբ նույնպես անհրաժեշտ մասնագիտական բժշկական միջամտության չի ենթարկվել: Ի պատասխան խափանման միջոց կալանքը փոփոխելու և մասնագիտացված բժշկական հաստատությունում անհրաժեշտ բժշկական խնամք և բուժում ապահովելու նպատակով փաստաբանի միջնորդությունների՝ կալանավայրի ղեկավարությունը շարունակ պատասխանել է, որ կալանավայրի բժշկական անձնակազմն ի վիճակի է վերջինիս համար ապահովել մասնագիտացված խնամք և բուժում: 2007 թվականի հունվարին Ա. Հարությունյանը պայմանական վաղակետ ազատ է արձակվել դրական վարք դրսևորելու համար, սակայն դատախազի բողոքի հիման վրա վերադաս դատարանը վերանայել է առաջին ատյանի դատարանի որոշումը և հրահանգել Ա. Հարությունյանին վերադարձնել կալանավայր, որտեղ էլ նա մահացել է 2009 թվականի հունվարին: Նրա մահանալուց հետո որպես դիմումատու Եվրոպական դատարանում հանդես է եկել նրա դուստրը: Եվրոպական դատարանում վիճակում էր, որ ՀՀ քրեական վերաքննիչ դատարանում դատական նիստերի ընթացքում պահվել է երկաթե ճաղավանդակի մեջ, որի հետևանքով ենթարկվել է նվաստացուցիչ վերաբերմունքի Կոնվենցիայի 3-րդ հոդվածի հիմքով: Ի հավելումն, պնդում էր, որ ենթարկվել է անմարդկային վերաբերմունքի տարիներ շարունակ անհրաժեշտ բժշկական խնամք և բուժում չստանալու

հիմքով: Ի վերջո, 6-րդ հոդվածի հիմքով վիճարկում էր, որ դատաքննության ընթացքում ճաղավանդակի մեջ պահվելու հետևանքով խախտվել է անմեղության կանխավարկածի և կողմերի հավասարության սկզբունքները, որի հետևանքով խախտվել է նաև դատավարության արդարացիությունն իր ամբողջության մեջ:

Դատարանի որոշումը

Հաշվի առնելով, որ Ա. Հարությունյանը տառապում էր մի շարք հիվանդություններով, որը չէր հերքում նաև պատասխանող կողմը, ակնհայտ է, որ նա կարիք է ունեցել մասնագիտացված բժշկական խնամքի և բուժման, որը տրամադրելու հնարավորություն չեն ունեցել քրեակատարողական հիմնարկները: Ի հակադրություն կառավարության պնդումների, որ Ա. Հարությունյանը ենթարկվել էր վիրահատման, գործի նյութերից չի բխում, որ նման վիրահատություն իրականում իրականացվել էր: Հատկապես մտահոգիչ է այն հանգամանքը, որ ինֆարկտ տանելու ժամանակահատվածում, ի պատասխան փաստաբանի մի շարք գրությունների՝ կալանավայրի ղեկավարությունը և այլ իրավասու մարմինները կամ չէին պատասխանում նրա գրավոր պնդումներին, կամ էլ պատասխանում էին խիստ ֆորմալ ձևակերպումներով՝ առանց ըստ էության գործուն միջոցներ ձեռնարկելու, որպեսզի Ա. Հարությունյանին տրամադրվեր անհրաժեշտ բժշկական միջամտությունը:

Ինչ վերաբերում է երկաթե ճաղավանդակում պահվելուն, ապա տվյալ դեպքում նման վերաբերմունքը համարվում է արժանապատվության նվաստացնող, քանի որ կառավարությունը չի հիմնավորել, որ անվտանգության նկատառումներն իսկապես գերակայում էին: Իսկ 6-րդ հոդվածի առնչությամբ Եվրոպական դատարանը որոշել է, որ դատաքննության ընթացքում երկաթե ճաղավանդակում պահելն ինքնին չի հանգեցնում անմեղության կանխավարկածի կամ կողմերի հավասարության սկզբունքների խախտմանը: Արդարացի փոխհատուցման մասով դատարանը սահմանել է 16,000 եվրո փոխհատուցում ոչ նյութական վնասի դիմաց:

Վարույթը Նախարարների կոմիտեում

Վարույթը դեռ չի սկսվել, քանի որ վճիռն ուժի մեջ է մտել 15.09.2010թ.-ին: Այդուհանդերձ, 2010 թվականի դեկտեմբերի դրությամբ Գործողությունների ծրագիրը դեռ ներկայացված չի եղել, որն արդեն բարձրացնում է ՆԿ-ի կանոնակարգը խախտելու մասին հարց: ՆԿ-ն կրկնել է իր պահանջը Գործողությունների ծրագիր ներկայացնելու անհրաժեշտության մասին և որոշել է խնդրին անդրադառնալ 2011թվականի մարտին:

24

Հովհաննիսյանը և Շիրոյանն ընդդեմ Հայաստանի

Գործի համարը. 5065/06
Վճիռը կայացվել է. 20.07.2010
Ուժի մեջ է մտել.

Պաշտոնապես
Հրապարակվել է. Չի հրապարակվել

Փաստերը

Դիմողները երեք անձ են: Նրանք բնակվել են Երևանի Բյուզանդի 17 հասցեում: Բնակարանը սեփականության իրավունքով պատկանել է իրենց ազգականին, սակայն նրանք բնակվել են օգտագործման իրավունքով: 2002թ.-ի օգոստոսի 1-ին կառավարության 1151-Ն որոշումով տարածքը համարվել է օտարման գոտի քաղաքաշինության նպատակով: 2004թ.-ի հունիսի 17-ին կառուցապատող «Վիզկոն» ՍՊ ընկերությունը ծանուցել է երկու դիմողներին տունն օտարելու կառավարության որոշման մասին և առաջարկել է ընտանիքի յուրաքանչյուր անդամին 3,500 ԱՄՆ դոլարին համարժեք փոխհատուցում: Դիմողները հրաժարվել են առաջարկությունից: 30.06.2005թ.-ին առաջին ատյանի դատարանը բավարարել է ընկերության դիմումը դիմողների սեփականության և օգտագործման իրավունքը դադարեցնելու և նրանց տարածքից վտարելու մասին (դատական վարույթի ընթացքում երրորդ դիմողին նույնպես առաջարկվել է փոխհատուցում նույն չափով): Սույն որոշումն ուժի մեջ են թողել Վերաքննիչ և Վճռաբեկ դատարանները:

Դատարանի որոշումը

Թեև դիմողները սեփականատերեր չեն, սակայն որպես օգտագործողներ նույնպես ունեն գույքային իրավունք, հետևաբար, նրանց իրավունքին նույնպես միջամտություն տեղի ունեցել է (տե՛ս *Մինասյանը և Սեմերջյանն ընդդեմ Հայաստանի* վճիռը): Ինչ վերաբերում է նյութական իրավունքի մասին հարցին, ապա, կրկին հղում կատարելով *Մինասյանի և Սեմերջյանի* գործով վճռին՝ Դատարանը նշել է, որ նմանատիպ գործ արդեն քննել է, որտեղ նույնպես վեճի առարկան հանդիսանում էր ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 225-րդ հոդվածի հիմքով օգտագործման իրավունքի դադարեցումը և գտել, որ նման միջամտությունն իր բնույթով կամայական է և անօրինական: Ի հավելումն, Դատարանը նկատել է, որ տվյալ դեպքում օգտագործման իրավունքը դադարեցվել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 218-րդ հոդվածի 1-ին մասի վկայակոչմամբ, որը, սակայն, վերաբերում է միայն

հողատարածքի նկատմամբ սեփականության իրավունքի դադարեցմանը և որևէ կերպ չի վերաբերում բնակարանի օգտագործման նկատմամբ իրավունքի դադարեցմանը: Հետևաբար, դատարանները վկայակոչել են մի հողված, որը վերաբերելի չէ, և այդ հանգամանքը նույնպես հիմնավորում է Դատարանի եզրակացությունը, որ միջամտությունը եղել է կամայական բնույթի և, հետևաբար՝ անօրինական: Արդյունքում, տեղի է ունեցել Կոնվենցիայի Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի խախտում: Փոխհատուցման հարցի վերաբերյալ Դատարանը նշել է, որ դեռ պատրաստ չէ որոշում կայացնելու և որ այդ հարցին կանդրադառնա առանձին որոշումով:

Վարույթը Նախարարների կոմիտեում

Վարույթը չի սկսվել:

25
Երանոսյանն ու այլոք ընդդեմ Հայաստանի

Գործի համարը. 13916/06
Վճիռը կայացվել է. 20.07.2010
Ուժի մեջ է մտել. 20.10.2010

Պաշտոնապես
Հրապարակվել է. Չի հրապարակվել

Փաստերը

Դիմողները բնակվել են Երևանի Բյուզանդի 15 հասցեում: Բնակարանը սեփականության իրավունքով պատկանել է իրենց ազգականին, սակայն նրանք բնակվել են օգտագործման իրավունքով: 2002թ.-ի օգոստոսի 1-ին կառավարության 1151-Ն որոշումով տարածքը համարվել է օտարման գոտի քաղաքաշինության նպատակով: 2004թ.-ի հունիսի 17-ին կառուցապատող «Վիզկոն» ՍՊ ընկերությունը ծանուցել է դիմողներին տունը օտարելու կառավարության որոշման մասին և առաջարկել է ընտանիքի յուրաքանչյուր անդամին 2,000 ԱՄՆ դոլարին համարժեք փոխհատուցում: Դիմողները հրաժարվել են առաջարկությունից: 30.06.2005թ.-ին առաջին ատյանի դատարանը բավարարել է ընկերության դիմումը դիմողների սեփականության և օգտագործման իրավունքը դադարեցնելու և նրանց տարածքից վտարելու մասին: Սույն որոշումն ուժի մեջ են թողել Վերաքննիչ և Վճռաբեկ դատարանները:

Դատարանի որոշումը

Թեև դիմողները սեփականատերեր չեն, սակայն որպես օգտագործողներ նույնպես ունեն գույքային իրավունք, հետևաբար, նրանց իրավունքին նույնպես միջամտություն տեղի ունեցել է (տե՛ս *Մինասյանը և Սեմերջյանն ընդդեմ Հայաստանի* վճիռը): Ինչ վերաբերում է նյութական իրավունքի մասին հարցին, ապա նորից հղում կատարելով *Մինասյանի և Սեմերջյանի* գործով վճռին՝ Դատարանը նշել է, որ նմանատիպ գործ արդեն քննել է, որտեղ նույնպես վեճի առարկան հանդիսանում էր ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 225-րդ հոդվածի հիմքով օգտագործողի իրավունքի դադարեցումը և գտել, որ նման միջամտությունն իր բնույթով կամայական է և անօրինական: Ի հավելումն, Դատարանը նկատել է, որ տվյալ դեպքում օգտագործման իրավունքը դադարեցվել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 218-րդ հոդվածի 1-ին մասի վկայակոչմամբ, որը, սակայն, վերաբերում է միայն հողատարածքի նկատմամբ սեփականության իրավունքի դադարեցմանը և որևէ կերպ չի վերաբերում բնակարանի օգտագործ-

ման նկատմամբ իրավունքի ղաղարեցմանը: Հետևաբար, դատարանները վկայակոչել են մի հոդված, որը վերաբերելի չէ, և այդ հանգամանքը նույնպես հիմնավորում է Դատարանի եզրակացությունը, որ միջամտությունը եղել է կամայական բնույթի և, հետևաբար՝ անօրինական: Արդյունքում, տեղի է ունեցել Կոնվենցիայի Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի խախտում: Փոխհատուցման հարցի առնչությամբ Դատարանը սահմանել է, որ այդպիսի պահանջ չի ներկայացվել, քանի որ դիմումատուները փոխհատուցման պահանջը ներկայացրել են ժամկետանց:

Վարույթը Նախարարների կոմիտեում

Վարույթը դեռ չի սկսվել:

Հետևություններ և առաջարկություններ

Հայաստանի Հանրապետության կողմից Եվրոպական դատարանի վճիռների կատարման ընթացքի ուսումնասիրության արդյունքում կարելի է հանգել հետևության, որ

- բոլոր գործերով իրավունքի խախտման զոհին վճարվել է վճռով սահմանված արդարացի փոխհատուցման գումարները՝ վճռով սահմանված ժամկետի ավարտին մոտ. գումարները հատկացվել են ՀՀ կառավարության որոշմամբ՝ Կառավարության պահուստային ֆոնդից,
- չնչին բացառությամբ, բոլոր գործերով վճիռները թարգմանվել և հրապարակվել են,
- գրեթե բոլոր գործերով իրականացվել են Նախարարների կոմիտեի կողմից սահմանված ընդհանուր միջոցները,
- իրավունքի խախտման զոհերից քչերն են (25 գործերից 5-ը), որ նոր հանգամանքով վերպետական դատական ակտերի վերանայման պահանջ են ներկայացրել դատարան,
- միայն մեկ հոգի է՝ չհանդիսանալով Եվրոպական դատարանի վճռի կողմ՝ նոր հանգամանքով վերպետական դատական ակտերի վերանայման պահանջ ներկայացրել դատարան,
- այն գործերով, որոնց դեպքում իրավունքի խախտման զոհերը նոր հանգամանքով վերպետական դատական ակտերի վերանայման պահանջ են ներկայացրել դատարաններ, վերանայման վարույթ հարուցելու մասին որոշումները, բոլոր դեպքերում, կայացվել են դատավարական օրենսգրքերով սահմանված ժամկետներից շատ ավելի ուշ,
- այն գործերով, որոնց դեպքում իրավունքի խախտման զոհերը նոր հանգամանքով վերպետական դատական ակտերի վերանայման պահանջ են ներկայացրել դատարաններ՝ գործերից մի մասի դեպքում դատական ակտերի վերանայում իրականացվել է, սակայն, որևէ դեպքում նախկին դատական ակտով խնդրին տրված լուծումից տարբերվող լուծում չի տրվել՝ գործի ելքը չի փոխվել,
- որևէ գործով վճռի պաշտոնական հրապարակումը չի համընկել նոր հանգամանքով դատական ակտի վերանայման համար սահմանված ժամկետի միջակայքի հետ,
- որևէ գործով ռեգրեսիվ հայց չի ներկայացվել Կոնվենցիայով երաշխավորված իրավունքի խախտման պատճառով պետական բյուջեից դրամական միջոցների վատնման համար,
- որևէ քրեական գործով գլխավոր դատախազը նոր հանգամանքով դատական ակտի վերանայման պահանջով չի դիմել դատարան՝ Կոնվենցիայով երաշխավորված իրավունքի խախտմամբ

դատապարտված անձի իրավունքները վերականգնելու նպատակով:

Սույն հետազոտության ընթացքում, մեր կարծիքով, բացահայտել ենք համակարգային խնդիրներ, որոնք խոչընդոտում են Եվրոպական դատարանի վճիռների արդյունավետ կատարմանը, և որոնց լուծումը մեծապես կբարելավի Հայաստանի կողմից ստանձնած պարտավորությունների կատարմանը: Ստորև ներկայացնում ենք մեր կողմից բացահայտված համակարգային խնդիրների լուծումների վերաբերյալ առաջարկություններ:

1. Հայաստանի մասնակցությամբ Եվրոպական դատարանի վճիռների գերակշռող մեծամասնությունը թարգմանվել է և պաշտոնապես հրապարակվել է, սակայն այդ վճիռները ՀՀ Պաշտոնական տեղեկագրում հրապարակելու պարտադիր պայմանի վերաբերյալ իրավանորմերը բացակայում են: Վճիռների ՀՀ Պաշտոնական տեղեկագրում հրապարակելը հանդիսացել է, գերազանցապես, վճռի կատարման ընդհանուր միջոց: Իրավունքի խախտման զոհերից ոչ մեկը, հետևաբար՝ նաև դատարանները, դատական ակտի վերանայման համար նախատեսված դատավարական ժամկետի ընթացքում իր ձեռքի տակ չի ունեցել վճռի պաշտոնական հրապարակման տեքստը: Ինչպես ասվել էր սույն հետազոտության տեսական մասում, դատավարական օրենքներով ընդլայնվել է Եվրոպական դատարանի վճիռների հիման վրա նոր հանգամանքով դատական ակտերը վերանայելու պահանջ ներկայացնելու իրավունք ունեցող անձանց շրջանակը, իսկ քրեական գործերով՝ դրանց թվում են նաև գլխավոր դատախազը և նրա տեղակալները, որոնց միջազգային դատարանը չի ուղարկում իր դատական ակտի օրինակը: Սակայն մեզ միայն մեկ դեպք է հայտնի, երբ անձն իրացրել է դատավարական օրենքներով երաշխավորված իրավունքը: Մեր կարծիքով նման ցածր ցուցանիշը, ի թիվս այլոց, պայմանավորված է Եվրոպական դատարանի վճիռների պաշտոնական հրապարակման ժամկետների և դրանց հիմքով բողոք բերելու ժամկետների չհամընկնելու հանգամանքով:

Առկա խնդիրը լուծելու նպատակով առաջարկում ենք, որպեսզի.

ա) «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքում կատարվեն փոփոխություններ և լրացումներ՝ Հայաստանի իրավական համակարգում որպես դրա բաղկացուցիչ մաս արձանագրվի Հայաստանի մասնակցությամբ միջազգային դատարանների դատական ակտերը, որտեղ մի կողմը Հայաստանն է (այնպես, ինչպես միջազգային պայմանագրերն են, ՀՀ սահմանադրական դատարանի որոշումները և այլն): Այդ օրենքով սահմանվի Եվրոպական դատարանի վճիռների թարգմանության և հրապարակման կարգը (հնարավոր հղումներով՝ «Միջազգային պայմանագրերի մասին» ՀՀ օրենքին), դրա համար պատասխանատու մարմինը և այն:

բ) Դատավարական օրենքներում փոփոխություն և լրացումներ կատարվեն, որպեսզի նոր հանգամանքով դատական ակտերը վերանայելու

պահանջ ներկայացնելու դատավարական ժամկետը մեկնարկի Եվրոպական դատարանի վճիռների պաշտոնական հրապարակումից հետո:

2. Քրեական գործերով նոր հանգամանքի հիմքով վերանայման դիմում ներկայացվելու ընդհանուր ժամկետը սահմանափակված է 3 ամսով, այն դեպքում, երբ «նոր երևան եկած» հանգամանքի ինստիտուտի իրավակարգավորումների համաձայն՝ այն դատական ակտի վերանայումը, որով մեղադրական դատավճիռ է կայացված այնպիսի հանգամանքներ ի հայտ գալու հետևանքով, որոնք ցույց են տալիս դատապարտյալի անմեղությունը կամ նրա կողմից ավելի թեթև հանցանք կատարելը, քան այն, որի համար նա դատապարտվել է, ժամկետներով սահմանափակված չէ: Այդպիսի վերանայման համար նույնիսկ դատապարտյալի մահը արգելք չէ դատապարտյալի կամ այլ անձանց իրավունքների վերականգնման նպատակով նոր երևան եկած հանգամանքների հետևանքով դատական ակտը վերանայելու համար:

Այս սկզբունքները տեղ չեն գտել «նոր հանգամանքների» համապատասխան ընթացակարգում, ինչն ըստ մեզ, խախտում է քրեական իրավունքի միջազգայնորեն ընդունված նշված սկզբունքները:

Առկա խնդիրը լուծելու նպատակով առաջարկում ենք, որպեսզի.

ա) ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի «նոր հանգամանքի» ինստիտուտի իրավակարգավորումներից վերանայման պահանջ ներկայացնելու ժամկետային սահմանափակումը հանվի (վերացվի) այն դեպքերի համար, երբ Եվրոպական դատարանի վճռով արձանագրած Կոնվենցիայով երաշխավորված իրավունքի խախտման վերացումը կարող է հանգեցնել դատապարտյալի արդարացմանը կամ նրա կողմից ավելի թեթև հանցանք կատարած լինելուն, քան այն, որի համար նա դատապարտվել է:

բ) ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 52-րդ հոդվածի 2-րդ մասում սահմանված դատախազի պարտականությունների մեջ՝ «արարքի հանցավորությունը վերացնող, պատիժը մեղմացնող կամ հանցանք կատարած անձի վիճակն այլ կերպ բարելավող օրենքն ուժի մեջ մտնելուց հետո, եթե դատապարտյալը նեռամսյա ժամկետում չի դիմում դատարան դատական ակտի վերանայման նպատակով, ապա դատախազը նեռամսյա ժամկետը լրանալուց հետո՝ մեկամսյա ժամկետում, համապատասխան միջնորդություն է ներկայացնում դատարան», բացի օրենքից նախատեսել նաև միջազգային դատարանի վճիռը, որով ներպետական վարույթում արձանագրվել է միջազգային պայմանագրով երաշխավորված դատավարական կամ նյութական իրավունքի խախտում:

3. Ներպետական դատական ակտը վերանայելու լիազորություն ունեցող դատարանները որոշ գործերով նոր հանգամանքի հիմքով դատական ակտերը վերանայելու պահանջով բողոքները մերժել են, իսկ դատական ակտերը թողել են անփոփոխ, ինչը դատավարական օրենսգրքերով

սահմանված նրանց լիազորություններից է: Նման լիազորության առկայությունը դատավարական օրենսգրքերում էական խոչընդոտ է հանդիսանում Եվրոպական դատարանի վճիռների, մասնավորապես՝ անհատական միջոցների կատարման ճանապարհին: Նոր հանգամանքի առկայության պարագայում նախկին դատական ակտն ուժի մեջ թողնելու իրավակարգավորման ՀՀ Սահմանադրությունը հակասելու վերաբերյալ որոշումներ է կայացրել ՀՀ սահմանադրական դատարանը, որոնք վկայակոչվել են սույն հետազոտության տեսական վերլուծությունների բաժնում: Միևնույն ժամանակ, ինչպես փաստվեց տեսական վերլուծությունների բաժնում, Կոնվենցիայով երաշխավորված իրավունքի խախտման հարցի քննարկումը և այդպիսի խախտումը բացահայտելն ու հետևանքները վերացնելն առաջին հերթին ներպետական ատյանների խնդիրներն են, սակայն, ներպետական դատական ակտը վերանայելու լիազորություն ունեցող դատարանին վերապահված լիազորությունների շարքում բացակայում է իրավունքի խախտման փաստը ճանաչելու լիազորություն:

Առկա խնդիրը լուծելու նպատակով առաջարկում ենք, որպեսզի.

ա) դատավարական օրենսգրքերում կատարվեն փոփոխություններ, նոր հանգամանքով դատական ակտերի վերանայման իրավակարգավորումները համապատասխանեցվեն ՀՀ սահմանադրական դատարանի որոշումներին ու դատարանի լիազորությունների շարքից բացառվեն դատական ակտի վերանայման վարույթ հարուցելուց հետո, բողոքը մերժելու և այդ դատական ակտն ուժի մեջ թողնելու լիազորությունը:

բ) նոր հանգամանքով դատական ակտի վերանայման դիմումին ներկայացվող վավերապայմանները սահմանող դատավարական նորմերում ավելացվեն միջազգային պայմանագրով երաշխավորված իրավունքի խախտման փաստի ճանաչման պահանջի ձևակերպումը կամ այդպիսի դատական ակտը վերանայելու լիազորություն ունեցող դատարանի լիազորությունների շարքում սահմանվի, անկախ դիմումում նման պահանջի առկայության հանգամանքից, ի պաշտոնե միջազգային պայմանագրով երաշխավորված իրավունքի խախտման փաստի ճանաչման պարտականություն:

4. Եվրոպական դատարան դիմելու նախապայմաններից է ներպետական պաշտպանության միջոցների սպառումը և դրանից հետո վեցամսյա ժամկետում գանգատի ներկայացնելը: Վեցամսյա ժամկետի հոսքը սկսվելու շուրջ հնարավոր տարակարծությունները և թյուրիմացությունները բացառելու նպատակով առաջարկում ենք դատավարական օրենսգրքերում պարտադիր պայման նախատեսել Վճռաբեկ դատարանի դատական ակտերը հանձնման մասին ծանուցմամբ դրանց հասցեատերերին առաքելու վերաբերյալ:

5. Եվրոպական դատարանի վճիռներով սահմանված գումարային փոխհատուցումը, որպես կանոն, իրավունքի խախտման զոհին տրամադ-

րելու համար հատկացվում է ՀՀ կառավարության պահուստային ֆոնդից՝ համաձայն ՀՀ կառավարության որոշման: Եվ, որպես կանոն, իրավունքի խախտման զոհը գումարային փոխհատուցումը ստանում է այն տրամադրելու համար սահմանված ժամկետի ավարտին մոտ: Այս աշխատառճը ունի և' դրական, և', մեր կարծիքով, բացասական կողմեր: Եվրոպական դատարանի յուրաքանչյուր որոշման վրա ՀՀ կառավարության և, վերջինիս որոշումով պայմանավորված, հասարակության ուշադրությունը սևեռելու տեսակետից դրական ենք համարում ՀՀ կառավարության որոշումներով փոխհատուցման ենթակա գումարների հատկացման պրակտիկան: Սակայն, գործող պրակտիկայի արդյունքում լրացուցիչ ծանրաբեռնվածություն է ընկնում Կառավարության վրա, գումարի հատկացումը՝ պայմանավորված Կառավարության որոշում ընդունելու ընթացակարգերի առանձնահատկություններով, տեղի է ունենում ուշացումով: Ֆորմալ առումով փոխհատուցումը տրամադրվում է սահմանված ժամկետի միջակայքում, սակայն իրավական պետությունում գործող արագ գործելու սկզբունքը ենթադրում է, որ հանրային իշխանությունները պարտավոր են գործել արագ: Ուստի, առաջարկում ենք ՀՀ պետական բյուջեով ՀՀ արդարադատության նախարարությանը հատկացվող գումարների մեջ նախատեսել Եվրոպական դատարանի վճիռներով սահմանված փոխհատուցման ենթակա գումարները:

6. Որպես համակարգային խնդիր Եվրոպական դատարանն արձանագրել է ազատազրկման վայրերում կալանքի պայմանների ևվազագույն չափորոշիչներին համապատասխանության հարցի վերաբերյալ իրավական պաշտպանության միջոցների բացակայությունը (տես՝ Կիրակոսյանն ընդդեմ Հայաստանի գործի մոնիթորինգի բաժինը): Մեկ այլ գործով, կարծում ենք, որպես համակարգային խնդիր է արձանագրվել կալանավորվածի (ազատազրկվածի՝ ընդհանրապես) հիվանդության պատճառով ազատազրկումը կրելու անհնարինության խնդրի լուծման իրավական պաշտպանության միջոցների բացակայությունը:

Առկա խնդիրը լուծելու նպատակով առաջարկում ենք, որպեսզի.

ա) Վարչական դատավարության օրենսգրքով (կամ մեկ այլ դատավարական օրենսգրքով, սակայն վարչական իրավահարաբերություններին ներհատուկ սկզբունքների պահպանմամբ) նախատեսել ազատազրկվածի՝ կալանքի ընթացքում ծագած վեճերի լուծման ընթացակարգեր, այդ թվում՝ կալանքի պայմանների և ազատազրկման հետ անհամատեղելի հիվանդությունների առկայության դեպքում կալանքից ազատվելու շուրջ ծագած վեճերի:

ԲԱԺԻՆ 3.

Հավելվածներ

Հավելված 1

Ոչ պաշտոնական թարգմանություն

Նախարարների կոմիտեի վճիռների և բարեկամական կարգավորման պայմանների կատարման վերահսկման կանոնակարգ

(ընդունված է Նախարարների կոմիտեի կողմից 2006 թվականի մայիսի 10-ին, Նախարարների մշտական ներկայացուցիչների 964-րդ նստաշրջանի ընթացքում)

I. Ընդհանուր դրույթներ

Կանոն 1

1. Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 46-րդ հոդվածի 2-րդ և 5-րդ կետերով և 39-րդ հոդվածի 4-րդ կետով Նախարարների կոմիտեի լիազորությունների իրականացումը կարգավորվում է սույն Կանոններով:

2. Եթե այլ բան նախատեսված չէ սույն Կանոններով, ապա այս լիազորությունների իրականացման ժամանակ պետք է կիրառվեն Նախարարների կոմիտեի և Նախարարների մշտական ներկայացուցիչների նստաշրջանների ընդհանուր ընթացակարգային կանոնները:

Կանոն 2

1. Նախարարների կոմիտեի վճիռների և բարեկամական կարգավորման պայմանների կատարման վերահսկումը, որպես կանոն, իրականացվում է մարդու իրավունքների հատուկ նիստերի ընթացքում, որոնց օրակարգը հրապարակվում է:

2. Եթե Նախարարների կոմիտեի նախագահությունն իրականացվում է այն Բարձր պայմանավորվող կողմի ներկայացուցչի կողմից, ով քննվող գործի կողմ է հանդիսանում, ապա այդ գործի քննության ընթացքում ներկայացուցիչը հրաժարվում է նախագահությունից:

Կանոն 3

Եթե վճիռը կամ որոշումը Կոնվենցիայի 46-րդ հոդվածի 2-րդ կետի կամ 39-րդ հոդվածի 4-րդ կետի հիման վրա ուղարկվում է Նախարարների կոմիտե, ապա գործն անմիջապես ընդգրկվում է կոմիտեի օրակարգում:

Կանոն 4

1. Նախարարների կոմիտեն առաջնահերթության կարգով վերահսկում է այն վճիռների կատարումը, որով Դատարանը գտել է, այսպես կոչված, համակարգային խնդիր՝ համաձայն համակարգային խնդիրը բացահայտող վճիռների մասին Նախարարների կոմիտեի թիվ Res(2004)3 բանաձևի:

2. Սույն Կանոնի առաջին կետի հիման վրա քննվող գործերին տրված առաջնահերթությունը չպետք է արգելակի այլ կարևոր գործերի՝ առաջնահերթության կարգով քննությանը, հատկապես այն գործերի, որոնցով սահմանված խախտումը ծանր հետևանք է առաջացրել տուժող կողմի համար:

Կանոն 5

Նախարարների կոմիտեն Կոնվենցիայի 46-րդ հոդվածի 2-5-րդ կետերի և 39-րդ հոդվածի 4-րդ կետի հիման վրա հաստատում է իր գործունեության մասին տարեկան հաշվետվություն, որը հրապարակվում է և ուղարկվում Դատարան և Գլխավոր քարտուղարին, Խորհրդարանական վեհաժողովին և Եվրոպայի խորհրդի Մարդու իրավունքների հանձնակատարին:

II. Վճիռների կատարման վերահսկողությունը

Կանոն 6
Վճռի կատարման մասին Նախարարների կոմիտեին տրամադրվող տեղեկատվությունը

1. Եթե Դատարանը Կոնվենցիայի 46-րդ հոդվածի 2-րդ կետի հիման վրա Նախարարների կոմիտե ուղարկված վճռում որոշում է, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի կամ դրան կից Արձանագրությունների խախտում և/կամ Կոնվենցիայի 41-րդ հոդվածի հիման վրա տուժած կողմին արդարացի փոխհատուցում է տրամադրում, ապա Կոմիտեն առաջարկում է շահագրգիռ Բարձր պայմանավորվող կողմին տեղեկացնել այն միջոցների մասին, որոնք Բարձր պայմանավորվող կողմը ձեռնարկել է կամ մտադրված է ձեռնարկել կայացված վճռի կապակցությամբ՝ հաշվի առնելով Կոնվենցիայի 46-րդ հոդվածի 1-ին կետի հիման վրա ստանձնած իր պարտավորությունները:

2. Վճռի կատարման վերահսկման ընթացքում Բարձր պայմանավորվող կողմը Կոնվենցիայի 46-րդ հոդվածի 2-րդ կետի հիման վրա ստուգում է.

ա. արդյոք վճարվել է Դատարանի կողմից տրամադրված արդարացի փոխհատուցումը, այդ թվում՝ չկատարման դեպքում հաշվարկվող տոկոսադրույքը, և

բ. անհրաժեշտության դեպքում և հաշվի առնելով վճռի կատարման հարցում շահագրգիռ Բարձր պայմանավորվող կողմին տրամադրված միջոցների ընտրության հայեցողությունը՝ արդյոք.

(i) ձեռնարկվել են անհատական միջոցներ[1]՝ խախտումը դադարեցնելու և, որքան հնարավոր է, տուժող կողմի՝ մինչև Կոնվենցիայի խախտումը եղած դրությունը վերականգնելու համար,

(ii) ընդունվել են ընդհանուր միջոցներ[2]՝ կանխելու նոր խախտումները, որոնք նման են արդեն իսկ ճանաչվածներին կամ կասեցնելու շարունակական խախտումները:

Կանոն 7
Վերահսկման պարբերականությունը

1. Մինչև շահագրգիռ Բարձր պայմանավորվող կողմը չի տրամադրում Դատարանի կողմից սահմանված արդարացի փոխհատուցման վճարման կամ հնարավոր անհատական միջոցների վերաբերյալ տեղեկատվություն, գործն ընդգրկվում է Նախարարների կոմիտեի մարդու իրավունքների յուրաքանչյուր նստաշրջանի օրակարգում, եթե Կոմիտեն հակառակը չի որոշում:

2. Եթե շահագրգիռ Բարձր պայմանավորվող կողմը տեղեկացնում է Նախարարների կոմիտեին, որ դեռ չի կարող Կոմիտեին տեղեկացնել վճռի կատարման համար ձեռնարկված անհրաժեշտ ընդհանուր միջոցների մասին, ապա գործը կրկին ընդգրկվում է Նախարարների կոմիտեի նստաշր-

[1] Օրինակ՝ դատվածության ցուցակից հանվել է անհիմն քրեական դատապարտումը, կացության թույլտվության տրամադրումը կամ համապատասխան ներպետական դատավարության վերաբացումը (տե՛ս վերջին այս կետի վերաբերյալ անդամ պետությունների՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռների հիման վրա ներպետական մակարդակով որոշակի գործեր վերաքննելու կամ վերաբացելու մասին Նախարարների կոմիտեի թիվ R (2000) 2 հանձնարարականը, որն ընդունվել է 2000 թվականի հունվարի 19-ին Նախարարների մշտական ներկայացուցիչների 694-րդ նստաշրջանի ընթացքում):

[2] Օրինակ՝ օրենսդրական կամ նորմատիվ ակտերը, դատական կամ վարչական պրակտիկայի փոփոխությունները կամ պատասխանող պետության լեզվով Դատարանի վճռի հրապարակումը և դրա տարածումը շահագրգիռ իշխանության մարմիններին:

ջանի օրակարգում, որը կայանում է ոչ ուշ քան վեց ամիս հետո, եթե Կոմիտեն հակառակը չի որոշում. նույն կանոնը կիրառվում է այս ժամանակաշրջանի ավարտման դեպքում՝ յուրաքանչյուր հաջորդ ժամանակաշրջանի համար:

Կանոն 8
Տեղեկատվության մատչելիությունը

1. Սույն Կանոնի դրույթները չեն հակասում Նախարարների կոմիտեի քննարկումների կոնֆիդենցիալ բնույթին՝ համաձայն Եվրոպայի խորհրդի Կանոնադրության 21-րդ հոդվածի:

2. Հետևյալ տեղեկատվությունը մատչելի է հանրության համար, եթե Կոմիտեն հակառակը չի որոշում՝ հանրային կամ մասնավոր օրինական շահերի պաշտպանության համար.

ա. Կոնվենցիայի 46-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ Բարձր պայմանավորվող կողմից Նախարարների կոմիտեին տրամադրված տեղեկատվությունը և դրան առնչվող փաստաթղթերը,

բ. սույն Կանոնների համաձայն՝ տուժող կողմից, մարդու իրավունքների աջակցությամբ և պաշտպանությամբ զբաղվող ոչ կառավարական կազմակերպությունների կամ ներպետական հաստատությունների կողմից Նախարարների կոմիտեին տրամադրված տեղեկատվությունը և դրան առնչվող փաստաթղթերը:

3. Սույն Կանոնի 2-րդ կետի համաձայն որոշում կայացնելու դեպքում Կոմիտեն, *inter alia*, հաշվի է առնում.

ա. տեղեկատվության ներկայացման ընթացքում կոնֆիդենցիալության պաշտպանության վերաբերյալ հիմնավոր հարցումները, որոնք կատարվել են Բարձր պայմանավորվող կողմից, տուժող կողմից, մարդու իրավունքների աջակցությամբ և պաշտպանությամբ զբաղվող ոչ կառավարական կազմակերպությունների կամ ներպետական հաստատությունների կողմից,

բ. կոնֆիդենցիալության պաշտպանության վերաբերյալ հիմնավոր հարցումները, որի մասին ցանկացած շահագրգիռ այլ Բարձր պայմանավորվող կողմ տեղեկացնում է անհապաղ, սակայն ոչ ուշ, քան համապատասխան տեղեկատվության վերաբերյալ Կոմիտեի առաջին քննարկումից առաջ,

գ. տուժող կողմի կամ երրորդ կողմի շահը, որոնք չեն ցանկանում բացահայտել իրենց ինքնությունը կամ որևէ այլ բան, որը թույլ կտար նույնականացնել նրանց:

4. Նախարարների կոմիտեի յուրաքանչյուր նստաշրջանից հետո Կոմիտեին ներկայացված կատարման վերահսկման օրակարգը՝ անոտացիաներով, մատչելի է նաև հանրության համար և հրապարակվում է ընդունված որոշումների հետ միասին, եթե Կոմիտեն հակառակը չի որոշում: Հնարավորության դեպքում, Կոմիտեին ներկայացված հանրության համար մատչելի այլ փաստաթղթերը հրապարակվում են, եթե Կոմիտեն հակառակը չի որոշում:

5. Բոլոր դեպքերում, եթե տուժող կողմին շնորհվել է անանունություն՝ Դատարանի Կանոնների 47-րդ կանոնի 3-րդ կետի հիման վրա, ապա նրա անանունությունը պահպանվում է կատարման ընթացքում, եթե նա ցանկություն չի հայտնում հրաժարվել դրանից:

Կանոն 9
Հաղորդումները Նախարարների կոմիտե

1. Նախարարների կոմիտեն քննարկում է արդարացի փոխհատուցման վճարման կամ ձեռնարկված անհատական միջոցների վերաբերյալ տուժող կողմի ցանկացած հաղորդում:

2. Նախարարների կոմիտեն իրավունք ունի քննարկել մարդու իրավունքների աջակցությամբ և պաշտպանությամբ զբաղվող ոչ կառավարական կազմակերպությունների, ինչպես նաև ներպետական հաստատությունների կողմից վճիռների կատարման առնչությամբ ներկայացված ցանկացած հաղորդում՝ համաձայն Կոնվենցիայի 46-րդ հոդվածի 2-րդ կետի:

3. Քարտուղարությունը սույն Կանոնի 1-ին կետի հիման վրա պատշաճ կարգով Նախարարների կոմիտեին տեղեկացնում է ցանկացած հաղորդման մասին: Քարտուղարությունը սույն Կանոնի 2-րդ կետի հիման վրա ստացված ցանկացած հաղորդում՝ շահագրգիռ պատվիրակության(ների) դիտողություններով հանդերձ, ուղարկում է Կոմիտեին՝ պայմանով, որ վերջիններս դրանց ծանուցման պահից սկսած հինգ աշխատանքային օրվա ընթացքում ուղարկվում են Քարտուղարություն:

Կանոն 10
Վճռի մեկնաբանության հարցի հանձնումը Դատարանին

1. Եթե Կոնվենցիայի 46-րդ հոդվածի 3-րդ կետի հիման վրա Նախարարների կոմիտեն գտնում է, որ վերջնական վճռի կատարման վերահսկողությա-

նը խոչընդոտ է հանդիսանում վճռի մեկնաբանության որևէ խնդիր, ապա կարող է այդ հարցը վճռի մեկնաբանության համար հանձնել Դատարանի քննությանը: Դատարանի քննությանը հարցը հանձնելու որոշումը կայացվում է Կոմիտեի իրավասու ներկայացուցիչների ձայների երկու երրորդի մեծամասնությամբ:

2. Դատարանի քննությանը հարցը հանձնելու որոշումը կարող է կայացվել Նախարարների կոմիտեի կողմից վճիռների կատարման վերահսկողության իրականացման ցանկացած պահին:

3. Դատարանի քննությանը հարցը հանձնելու որոշումը կայացվում է միջանկյալ բանաձևի տեսքով: Այն պետք է լինի պատճառաբանված և արտացոլի Նախարարների կոմիտեի շրջանակում եղած տարբեր տեսակետները, մասնավորապես՝ շահագրգիռ Բարձր պայմանավորվող կողմի տեսակետը:

4. Անհրաժեշտության դեպքում, Նախարարների կոմիտեն Դատարանում ներկայացվում է իր նախագահի միջոցով, եթե Կոմիտեն չի որոշում ներկայացուցչության այլ ձևի մասին: Այս որոշումը կայացվում է քվեարկող ներկայացուցիչների ձայների երկու երրորդի մեծամասնությամբ և Կոմիտեի իրավասու ներկայացուցիչների ձայների մեծամասնությամբ:

Կանոն 11
Պետության կողմից իր պարտավորությունների խախտման հարցը Դատարանի քննությանը հանձնելու ընթացակարգը

1. Եթե Կոնվենցիայի 46-րդ հոդվածի 4-րդ կետի հիման վրա Նախարարների կոմիտեն գտնում է, որ որևէ գործով որպես կողմ հանդես եկող Բարձր պայմանավորվող կողմը հրաժարվում է կատարել այդ գործով կայացված վերջնական վճիռը, ապա կարող է տվյալ Կողմին պաշտոնապես ծանուցելուց հետո, Կոմիտեի իրավասու ներկայացուցիչների ձայների երկու երրորդի մեծամասնությամբ ընդունված որոշմամբ, տվյալ Կողմի ստանձնած պարտավորության կատարումը ձախողելու մասին հարցը հանձնել Դատարանին:

2. Պետության կողմից իր պարտավորությունների խախտման հարցը Դատարանի քննությանը հանձնելու ընթացակարգը կիրառվում է միայն բացառիկ դեպքերում: Այն չի նախաձեռնվում, եթե շահագրգիռ Բարձր պայմանավորվող կողմը պաշտոնապես չի ծանուցվել Կոմիտեի կողմից նման ընթացակարգ հարուցելու մտադրության մասին: Նման պաշտոնական ծանուցումը ուղարկվում է պետության կողմից իր պարտավորությունների խախտման հարցը Դատարանի քննությանը հանձնելուց ոչ ուշ, քան վեց ամիս առաջ, եթե Կոմիտեն հակառակը չի որոշում, և կայացվում է միջանկ-

յալ բանաձևի տեսքով: Այդ բանաձևն ընդունվում է Կոմիտեի իրավասու ներկայացուցիչների ձայների երկու երրորդի մեծամասնությամբ:

3. Պետության կողմից իր պարտավորությունների խախտման հարցը Դատարանի քննությանը հանձնելու որոշումը կայացվում է միջանկյալ բանաձևի տեսքով: Այն պետք է լինի պատճառաբանված և հակիրճ արտացոլի շահագրգիռ Բարձր պայմանավորվող կողմի տեսակետը:

4. Նախարարների կոմիտեն Դատարանում ներկայացվում է իր նախագահի միջոցով, եթե Կոմիտեն չի որոշում ներկայացուցչության այլ ձևի մասին: Այս որոշումը կայացվում է քվեարկող ներկայացուցիչների ձայների երկու երրորդի մեծամասնությամբ և Կոմիտեի իրավասու ներկայացուցիչների ձայների մեծամասնությամբ:

III. Բարեկամական կարգավորման պայմանների կատարման վերահսկողությունը

Կանոն 12
Բարեկամական կարգավորման պայմանների կատարման մասին Նախարարների կոմիտեին տրամադրվող տեղեկատվությունը

1. Եթե որոշումը Կոնվենցիայի 39-րդ հոդվածի 4-րդ կետի հիման վրա ուղարկվում է Նախարարների կոմիտե, ապա Կոմիտեն հրավիրում է շահագրգիռ Բարձր պայմանավորվող կողմին տեղեկատվություն տրամադրելու բարեկամական կարգավորման պայմանների կատարման մասին:

2. Նախարարների կոմիտեն ստուգում է, թե արդյոք բարեկամական կարգավորման պայմանները, ինչպես որ դրանք սահմանված են Դատարանի որոշմամբ, կատարվել են:

Կանոն 13
Վերահսկման պարբերականությունը

Մինչև շահագրգիռ Բարձր պայմանավորվող կողմը չի տրամադրում Դատարանի որոշմամբ սահմանված բարեկամական կարգավորման պայմանների կատարման վերաբերյալ տեղեկատվություն, գործն ընդգրկվում է Նախարարների կոմիտեի մարդու իրավունքների յուրաքանչյուր նստաշրջանի օրակարգում,[3] կամ, եթե հնարավոր է, ոչ ուշ, քան վեց ամիս հետո, եթե Կոմիտեն հակառակը չի որոշում:

[3] Մասնավորապես, եթե բարեկամական կարգավորման պայմանները ներառում են այնպիսի պարտավորություններ, որոնք իրենց բնույթով չեն կարող ի կատար ածվել կարճ ժամանակաշրջանում, ինչպիսին է՝ նոր օրենսդրության ընդունումը:

Կանոն 14
Տեղեկատվության մատչելիությունը

1. Սույն Կանոնի դրույթները չեն հակասում Նախարարների կոմիտեի քննարկումների կոնֆիդենցիալ բնույթին՝ համաձայն Եվրոպայի խորհրդի Կանոնադրության 21-րդ հոդվածի:

2. Հետևյալ տեղեկատվությունը մատչելի է հանրության համար, եթե Կոմիտեն հակառակը չի որոշում՝ հանրային կամ մասնավոր օրինական շահերի պաշտպանության համար.

ա. Կոնվենցիայի 39-րդ հոդվածի 4-րդ կետի համաձայն՝ Բարձր պայմանավորվող կողմից Նախարարների կոմիտեին տրամադրված տեղեկատվությունը և դրան առնչվող փաստաթղթերը,

բ. սույն Կանոնների համաձայն՝ դիմողից, մարդու իրավունքների աջակցությամբ և պաշտպանությամբ զբաղվող ոչ կառավարական կազմակերպությունների կամ ներպետական հաստատությունների կողմից Նախարարների կոմիտեին տրամադրված տեղեկատվությունը և դրան առնչվող փաստաթղթերը:

3. Սույն Կանոնի 2-րդ կետի համաձայն որոշում կայացնելու դեպքում՝ Կոմիտեն, *inter alia*, հաշվի է առնում.

ա. տեղեկատվության ներկայացման ընթացքում կոնֆիդենցիալության պաշտպանության վերաբերյալ հիմնավոր հարցումները, որոնք կատարվել են Բարձր պայմանավորվող կողմից, դիմողից, մարդու իրավունքների աջակցությամբ և պաշտպանությամբ զբաղվող ոչ կառավարական կազմակերպությունների կամ ներպետական հաստատությունների կողմից,

բ. կոնֆիդենցիալության պաշտպանության վերաբերյալ հիմնավոր հարցումները, որի մասին ցանկացած շահագրգիռ այլ Բարձր պայմանավորվող կողմ տեղեկացնում է անհապաղ, սակայն ոչ ուշ, քան համապատասխան տեղեկատվության վերաբերյալ Կոմիտեի առաջին քննարկումից առաջ,

գ. դիմողի կամ երրորդ կողմի շահը, որոնք չեն ցանկանում բացահայտել իրենց ինքնությունը կամ որևէ այլ բան, որը թույլ կտար նույնականացնել նրանց:

4. Նախարարների կոմիտեի յուրաքանչյուր նստաշրջանից հետո Կոմիտեին ներկայացված կատարման վերահսկման օրակարգը՝ անոտացիա-

ներով, մատչելի է նաև հանրության համար և հրապարակվում է ընդունված որոշումների հետ միասին, եթե Կոմիտեն հակառակը չի որոշում: Հնարավորության դեպքում, Կոմիտեին ներկայացված հանրության համար մատչելի այլ փաստաթղթերը հրապարակվում են, եթե Կոմիտեն հակառակը չի որոշում:

5. Բոլոր դեպքերում, եթե դիմողին շնորհվել է անանունություն՝ Դատարանի Կանոնների 47-րդ կանոնի 3-րդ կետի հիման վրա, ապա նրա անանունությունը պահպանվում է կատարման ընթացքում, եթե նա ցանկություն չի հայտնում հրաժարվելու դրանից:

Կանոն 15
Հաղորդումները Նախարարների կոմիտե

1. Նախարարների կոմիտեն քննարկում է բարեկամական կարգավորման պայմանների վերաբերյալ դիմողի ցանկացած հաղորդում:

2. Նախարարների կոմիտեն իրավունք ունի քննարկելու մարդու իրավունքների աջակցությամբ և պաշտպանությամբ զբաղվող ոչ կառավարական կազմակերպությունների, ինչպես նաև ներպետական հաստատությունների կողմից բարեկամական կարգավորման պայմանների կատարման առնչությամբ ներկայացված ցանկացած հաղորդում:

3. Քարտուղարությունը սույն Կանոնի 1-ին կետի հիման վրա պատշաճ կարգով Նախարարների կոմիտեին տեղեկացնում է ցանկացած հաղորդման մասին: Քարտուղարությունը սույն Կանոնի 2-րդ կետի հիման վրա ստացված ցանկացած հաղորդում՝ շահագրգիռ պատվիրակության(ների) դիտողություններով հանդերձ, ուղարկում է Կոմիտեին՝ պայմանով, որ վերջիններս դրանց ծանուցման պահից սկսած հինգ աշխատանքային օրվա ընթացքում ուղարկվում են Քարտուղարություն:

IV. Բանաձևեր

Կանոն 16
Միջանկյալ բանաձևեր

Վճռի կամ բարեկամական կարգավորման պայմանների կատարման վերահսկողության ընթացքում Նախարարների կոմիտեն իրավունք ունի ընդունելու միջանկյալ բանաձևեր, հատկապես, որպեսզի տեղեկատվություն տրամադրի կատարման ընթացքի վերաբերյալ կամ, անհրաժեշտության դեպքում, մտահոգություն հայտնել և/կամ առաջարկություններ ներկայացնել կատարման առնչությամբ:

Կանոն 17
Վերջնական բանաձև

Այն բանից հետո, երբ Նախարարների կոմիտեն համոզվում է, որ շահագրգիռ Բարձր պայմանավորվող կողմը ձեռնարկել է բոլոր անհրաժեշտ միջոցները վճռի կամ բարեկամական կարգավորման պայմանների կատարման առնչությամբ, Նախարարների կոմիտեն ընդունում է բանաձև՝ եզրակացնելով, որ պետությունը կատարել է Կոնվենցիայի 46-րդ հոդվածի 2-րդ կետի կամ 39-րդ հոդվածի 4-րդ կետի հիման վրա ստանձնած իր գործառույթները:

Հավելված 2

Ոչ պաշտոնական թարգմանություն

ԵՎՐՈՊԱՅԻ ԽՈՐՀՈՒՐԴ
ՆԱԽԱՐԱՐՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ

Նախարարների կոմիտեի թիվ R (2000) 2 հանձնարարականը անդամ պետություններին «Մարդու իրավունքների եվրոպական դատարանում կայացված վճիռների հիման վրա ներպետական մակարդակով որոշակի գործեր վերաքննելու կամ վերաբացելու մասին»[1]

(Ընդունվել է Նախարարների կոմիտեի կողմից 2000թվականի հունվարի 19-ին, Նախարարների տեղակալների 694-րդ նստաշրջանի հանդիպման ընթացքում)

Նախարարների կոմիտեն, գործելով Եվրոպայի խորհրդի կանոնադրության 15-րդ հոդվածի «բ» կետի դրույթների հիման վրա,

Հաշվի առնելով, որ Եվրոպայի խորհրդի նպատակն է ապահովել անդամ պետությունների միջև ավելի սերտ միության կայացմանը,

Հաշվի առնելով Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության կոնվենցիան (այսուհետ՝ Կոնվենցիա),

Նշելով, որ Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 46-րդ հոդվածի համաձայն՝ Պայմանավորվող կողմերը պարտավորություն են ստանձնել կատարելու Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (այսուհետ՝ Դատարան) վերջնական վճիռները ցանկացած գործերի վերաբերյալ, որոնցում նրանք կողմեր են, և որ վճիռների կատարման նկատմամբ վերահսկողությունն իրականացվում է Նախարարների կոմիտեի կողմից,

Նկատի ունենալով, որ որոշ հանգամանքներում նշված պարտավորության կատարման համար կարող է պահանջվել որոշակի միջոցառումների իրականացում՝ ի լրումն Կոնվենցիայի 41-րդ հոդվածի հիման վրա Դատարանի կողմից նշանակված արդարացի փոխհատուցման և/կամ ընդհանուր բնույթի միջոցառումների, որպեսզի տուժող կողմը հնարավորինս վերադարձվի նույն իրավիճակի մեջ, որում նա գտնվել է նախքան Կոնվենցիայի խախտումը (*restitutio in integrum)*,

---

[1] Հաշվի առնելով, որ Նախարարների կոմիտեի՝ Կոնվենցիայի նախկին 32-րդ հոդվածով նախատեսված կիսադատական գործառույթները մոտ ապագայում կդադարեն գոյություն ունենալ, այստեղ չի նշվում Նախարարների կոմիտեի որոշման մասին: Սակայն հասկանալի է, որ եթե որոշ գործեր քննության փուլում լինեն սույն հանձնարարականն ընդունելու պահին, ապա դրանց նկատմամբ նույնպես կտարածվեն սույն հանձնարարականում զետեղված սկզբունքները:

Նկատի առնելով, որ պատասխանող պետության իրավասու մարմինների խնդիրն է որոշել, թե որ միջոցառումներն են առավել հարիր *restitutio in integrum* ապահովելու համար՝ հաշվի առնելով ազգային իրավական համակարգում առկա միջոցները,

Նկատի ունենալով, սակայն, որ Դատարանի վճիռների կատարման նկատմամբ վերահսկողություն իրականացնելու՝ Նախարարների կոմիտեի փորձը ցույց է տվել, որ բացառիկ դեպքերում է, որ գործի վերաքննությունը կամ վարույթի վերաբացումը հանդիսացել է *restitutio in integrum* ապահովելու ամենաարդյունավետ, եթե ոչ միակ միջոցը,

I. Նշված հանգամանքների հիման վրա կոչ է անում Պայմանավորվող կողմերին երաշխավորել ազգային մակարդակով *restitutio in integrum* հնարավորինս ապահովելու համար անհրաժեշտ համարժեք հնարավորությունների առկայությունը,

II. Խրախուսում է Պայմանավորվող կողմերին, մասնավորապես, վերլուծել իրենց ազգային իրավական համակարգերը՝ նպատակ հետապնդելով երաշխավորել գործի վերաքննության համար անհրաժեշտ համարժեք հնարավորությունների գոյությունն այն դեպքերի համար, երբ Դատարանը հայտնաբերել է Կոնվենցիայի խախտում, հատկապես երբ.

(i) Ներպետական որոշման պատճառով տուժող կողմը շարունակում է շատ ծանր բացասական հետևանքներ կրել, որոնք համարժեքորեն չեն շտկվում արդարացի հատուցման տրամադրմամբ և չեն կարող շտկվել, բացառությամբ՝ գործի վերաքննության կամ վերաբացման միջոցով և

(ii) Դատարանի վճիռը հանգեցնում է այն եզրակացության, որ.
(ա) վիճարկվող ներպետական որոշումն ըստ էության հակասում է Կոնվենցիային կամ
(բ) հայտնաբերված խախտումը հիմնված է այնպիսի ծանրության դատավարական սխալների կամ թերությունների վրա, որ լուրջ կասկածի տակ է հայտնվում բողոքի առարկա ներպետական վարույթի ելքը:

Հավելված 3

Ոչ պաշտոնական թարգմանություն

ԵՎՐՈՊԱՅԻ ԽՈՐՀՈՒՐԴ
ՆԱԽԱՐԱՐՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ

Նախարարների կոմիտեի Rec(2002)13 հանձնարարականն անդամ պետություններին «Անդամ պետություններում Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի տեքստի և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի հրապարակման և տարածման մասին»

(ընդունված է Նախարարների կոմիտեի կողմից 2002 թվականի դեկտեմբերի 18-ին, Նախարարների մշտական ներկայացուցիչների 822-րդ նստաշրջանի ընթացքում)

Նախարարների կոմիտեն, Եվրոպայի խորհրդի կանոնադրության 15-րդ հոդվածի «բ» կետի համաձայն,

Հաշվի առնելով Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) կարևորությունը՝ որպես Եվրոպայում հասարակական կարգի և, մասնավորապես, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (այսուհետ՝ Դատարան) նախադեպային իրավունքի պահպանման մի սահմանադրական գործիքի,

Հաշվի առնելով, որ Դատարանի նախադեպային իրավունքի մատչելիությունը էական պայման է հանդիսանում ներպետական մակարդակում Կոնվենցիայի արդյունավետ իրականացման համար, քանի որ այն հնարավորություն է տալիս ապահովելու ներպետական որոշումների համապատասխանությունը նախադեպային իրավունքի հետ և կանխելու խախտումները,

Հաշվի առնելով Դատարանի, Դատարանի վճիռների կատարման վերահսկողության շրջանակներում Նախարարների կոմիտեի և անդամ պետությունների Դատարանի նախադեպային իրավունքի հրապարակման և տարածման ոլորտում համապատասխան պրակտիկան,

Հաշվի առնելով, որ Մարդու իրավունքների հարցերով Նախարարական վեհաժողովի ընթացքում (2000 թվականի նոյեմբերի 3-4, Հռոմ) անդամ պետություններին խրախուսվել է *«ապահովել Կոնվենցիայի տեքստի թարգմանությունը և լայն տարածումն ազգային մարմինների, հատկապես՝ դատարանների շրջանակներում, և որ Դատարանի նախադեպային իրավունքի զարգացումները բավականաչափ մատչելի են այդ պետության լեզվով(լեզուներով)»,*

Հաշվի առնելով անդամ պետությունների՝ դատական ակտերի հրապարակման և տարածման սովորույթների և պրակտիկայի բազմազանությունը,

Հիշեցնելով Եվրոպայի խորհրդի կանոնադրության 12-րդ հոդվածը՝ համաձայն որի՝ Եվրոպայի խորհրդի պաշտոնական լեզուներն են անգլերենը և ֆրանսերենը,

Առաջարկում է, որպեսզի անդամ պետությունների կառավարությունները վերանայեն ստորև ներկայացված փաստաթղթերի հրապարակման և տարածման վերաբերյալ իրենց պրակտիկան.

- Կոնվենցիայի տեքստը՝ տվյալ պետության լեզվով (լեզուներով),

- Դատարանի վճիռները և որոշումները,

Հետևյալ նկատառումների լույսի ներքո:

* * *

Կարևոր է, որ անդամ պետությունների կառավարությունները հնարավորություն ունենան.

(i) ապահովելու, որպեսզի Կոնվենցիայի տեքստը տվյալ պետության լեզվով (լեզուներով) հրապարակվի և տարածվի այնպիսի եղանակով, որը կարող է արդյունավետորեն մատչելի լինել և որը ազգային իշխանությունները՝ հատկապես դատարանները, կարող են կիրառել,

(ii) ապահովելու, որպեսզի այն վճիռները և որոշումները, որոնք հիմք են հանդիսանում նախադեպային իրավունքի զարգացման համար կամ պահանջում են պատասխանող պետություններից իրենց հերթին հատուկ միջոցառումների իրականացում, արագ և լայնորեն հրապարակվեն՝ պետական կամ մասնավոր նախաձեռնությունների շնորհիվ, ամբողջությամբ կամ նվազագույնը էական համառոտագրերի կամ քաղվածքների տեսքով (բնօրինակ տեքստերին համապատասխան հղումների հետ միասին), տվյալ պետության լեզվով (լեզուներով), մասնավորապես՝ պաշտոնական տեղեկագրերում, իրավասու նախարարությունների տեղեկատուներում, իրավաբանական ամսագրերում կամ իրավաբանական հանրության կողմից սովորաբար օգտագործվող այլ լրատվամիջոցներում, ներառյալ՝ անհրաժեշտության դեպքում, ինտերնետային կայքերի միջոցով,

(iii) խրախուսելու, անհրաժեշտության դեպքում, դասագրքերի և այլ հրապարակումների կանոնավոր հրապարակմանը տվյալ պետութ-

յան լեզվով (լեզուներով), թղթային և/կամ էլեկտրոնային տեսքով, Կոնվենցիայի համակարգի և Դատարանի կարևոր նախադեպային իրավունքի մասին գիտելիքների բարձրացմանը,

(iv) հրապարակելու Դատարանի ինտերնետային հասցեն (http://www.echr.coe.int), մասնավորապես ապահովելով, որպեսզի այդ կայքին հղումները տեղ գտնեն իրավական հետազոտություններ իրականացնելու համար լայնորեն օգտագործվող ներպետական կայքերում,

(v) ապահովելու, որպեսզի դատարաններն ունենան համապատասխան նախադեպային իրավունքի օրինակները՝ թղթային և/կամ էլեկտրոնային տեսքով (CD-Rom, DVD, այլն) կամ ինտերնետի միջոցով նախադեպային իրավունքին ծանոթանալու համար անհրաժեշտ սարքավորումները,

(vi) ապահովել, անհրաժեշտության դեպքում, այն վճիռների և որոշումների արագ տարածումը հանրային մարմիններին, ինչպիսիք են դատարանները, ոստիկանական մարմինները, կալանավայրերի ղեկավարությունը կամ սոցիալական մարմինները, ինչպես նաև, անհրաժեշտության դեպքում, ոչ պետական մարմիններին, ինչպիսիք են փաստաբանական միությունները, մասնագիտական միավորումները և այլն, որոնք կարող են որոշակի կարևորություն ունենալ իրենց գործունեության համար, անհրաժեշտության դեպքում, պարզաբանող գրության կամ շրջաբերականի հետ միասին,

(vii) ապահովելու, որպեսզի կոնկրետ գործով ուղղակիորեն ներգրավված ներպետական այլ մարմինները արագ տեղեկացվեն Դատարանի վճռի կամ որոշման մասին, օրինակ՝ ստանալով դրանց պատճենները,

(viii) հաշվի առնել համագործակցության հնարավորությունը՝ նպատակ ունենալով հրապարակել Դատարանի վճիռների և որոշումների ժողովածուները՝ թղթային և/կամ էլեկտրոնային տեսքով, որոնք մատչելի են Եվրոպայի խորհրդի ոչ պաշտոնական լեզուներով:

Հավելված 4

Ոչ պաշտոնական թարգմանություն

ԵՎՐՈՊԱՅԻ ԽՈՐՀՈՒՐԴ
ՆԱԽԱՐԱՐՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ

Նախարարների կոմիտեի Res(2004)3 բանաձևը «Համակարգային խնդիր բացահայտող վճիռների մասին»

(ընդունված է Նախարարների կոմիտեի կողմից 2004 թվականի մայիսի 12-ին, 114-րդ նստաշրջանի ընթացքում)

Նախարարների կոմիտեն, Եվրոպայի խորհրդի կանոնադրության 15-րդ հոդվածի «բ» կետի համաձայն,

Հաշվի առնելով, որ Եվրոպայի խորհրդի նպատակն է իր անդամների միջև առավել սերտ միասնության հասնել, և որ այդ նպատակին հասնելու համար ամենակարևոր միջոցներից է մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանությունը և հետագա զարգացումը,

Վերահաստատելով իր համոզմունքը, որ Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին Կոնվենցիան (այսուհետ՝ Կոնվենցիա) պետք է մնա Եվրոպայում մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում էական վկայակոչման կետը և հիշեցնելով միջոցներ ձեռնարկելու իր հանձնառության մասին՝ Կոնվենցիայով հիմնված վերահսկողության համակարգի երկարաժամկետ արդյունավետությունն ապահովելու նպատակով,

Հիշեցնելով Կոնվենցիայով հիմնված վերահսկողության համակարգի օժանդակ (սուբսիդիար) բնույթը, որը, վերջինիս 1-ին հոդվածին համապատասխան, ենթադրում է, որ Կոնվենցիայով երաշխավորված իրավունքները և ազատությունները առաջին հերթին պետք է պաշտպանվեն ազգային մակարդակում և կիրառվեն ազգային մարմինների կողմից,

Ողջունելով, որ այս կապակցությամբ Կոնվենցիան բոլոր անդամ պետությունների ներպետական իրավական համակարգի մաս է կազմում,

Հիշեցնելով, որ Կոնվենցիայի 46-րդ հոդվածի համաձայն, Բարձր պայմանավորվող կողմերը պարտավորվում են կատարել Մարդու իրավունքների եվրոպական դատարանի («Դատարան») վերջնական վճիռները իրենց մասնակցությամբ վեճերով, և որ Դատարանի վերջնական վճիռները ուղարկվում են Նախարարների կոմիտե, որը վերահսկում է դրանց կատարումը,

Ընդգծելով համակարգային խնդիրների բացահայտման և անհրաժեշտ կատարման միջոցների կապակցությամբ շահագրգիռ պետությանն օգնություն տրամադրելու կարևորությունը,

Գտնելով, որ վճիռների կատարման համար խթան կհանդիսանար, եթե համակարգային խնդրի առկայությունն արդեն բացահայտված լիներ Դատարանի վճռով,

Նկատի ունենալով Նախարարների կոմիտեի 2002 թվականի նոյեմբերի 7-ի նստաշրջանի ընթացքում այս հարցի շուրջ ներկայացված Դատարանի սեփական հայտարարությունը,

Դատարանին խնդրում է.

I. որքան հնարավոր է, Կոնվենցիայի խախտում արձանագրած իր վճիռներում բացահայտել այն, ինչը նա համարում է համակարգային խնդիր և այդ խնդրի սկզբնաղբյուրը, մասնավորապես, երբ հավանական է, որ այդ խնդիրը հիմք է հանդիսացել մի շարք գանգատների համար, որպեսզի հնարավոր լինի աջակցել պետություններին գտնելու համապատասխան լուծում և Նախարարների կոմիտեին՝ վերահսկել վճիռների կատարումը,

II. Բացի շահագրգիռ պետությունից, հատուկ ծանուցել նաև Խորհրդարանական վեհաժողովին, Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարին և Եվրոպայի խորհրդի Մարդու իրավունքների հանձնակատարին ցանկացած վճռի մասին, որը նշումներ է պարունակում համակարգային խնդրի առկայության և խնդրի սկզբնաղբյուրի մասին ու պատշաճ կարգով լուսաբանել նման վճիռները Դատարանի տվյալների բազայում:

Հավելված 5

Թարգմանությունը տրամադրել է
ՀՀ Արտաքին գործերի նախարարությունը:

ԵՎՐՈՊԱՅԻ ԽՈՐՀՈՒՐԴ
ՆԱԽԱՐԱՐՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ

Նախարարների կոմիտեի Rec(2004)4 հանձնարարական-առաջարկությունն անդամ պետություններին «Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիան համալսարանական ուսուցման և մասնագիտական պատրաստման մեջ»

(ընդունված է Նախարարների կոմիտեի կողմից 2004 թվականի մայիսի 12-ին, իր 114-րդ նստաշրջանի ընթացքում)

Նախարարների կոմիտեն, Եվրոպայի խորհրդի կանոնադրության 15-րդ հոդվածի «բ» կետի համաձայն,

Հաշվի առնելով, որ Եվրոպայի խորհրդի նպատակն է իր անդամների միջև առավել սերտ միասնության հասնել, և որ այդ նպատակին հասնելու համար ամենակարևոր միջոցներից է մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանությունը և հետագա զարգացումը,

Վերահաստատելով իր համոզմունքը, որ Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին Կոնվենցիան (այսուհետ՝ Կոնվենցիա) պետք է մնա Եվրոպայում մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում էական վկայակոչման կետը և հիշեցնելով իր հանձնառությունը միջոցներ ձեռնարկել՝ Կոնվենցիայով հիմնված վերահսկողության համակարգի երկարաժամկետ արդյունավետությունն ապահովելու նպատակով,

Հիշեցնելով Կոնվենցիայով հիմնված վերահսկողության համակարգի օժանդակ (սուբսիդիար) բնույթը, որը, վերջինիս 1-ին հոդվածին համապատասխան, ենթադրում է, որ Կոնվենցիայով երաշխավորված իրավունքները և ազատությունները առաջին հերթին պետք է պաշտպանվեն ազգային մակարդակում և կիրառվեն ազգային մարմինների կողմից,

Ողջունելով, որ այս կապակցությամբ Կոնվենցիան բոլոր անդամ պետությունների ներպետական իրավական համակարգի մաս է կազմում,

Ընդգծելով այն կանխարգելիչ դերը, որ խաղում է Կոնվենցիայի սկզբունքների, նրա նորմերի և դրանից բխող դատական նախադեպի ուսուցումը,

Հիշեցնելով, որ եթե անդամ պետություններում Կոնվենցիայի տեքստի և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի («Դատարան») դատական նախադեպի լայն հրապարակումը և տարածումը դյուրացնող միջոցները կարևոր են ազգային մակարդակում Կոնվենցիան իրականացնելու

համար, ինչպես որ նշված է (2002)13 հանձնարարական-առաջարկությունում, անհրաժեշտ է, որ այդ միջոցները լրացվեն այլ միջոցներով՝ ուսուցման և պատրաստման ոլորտում, որպեսզի դրանք հասնեն իրենց նպատակին,

Ընդգծելով համապատասխան համալսարանական ուսուցման և մասնագիտական պատրաստման ծրագրերի առանձնահատուկ կարևորությունը՝ Կոնվենցիայի, Դատարանի դատական նախադեպի լույսի ներքո, պետական ատյանների կողմից, հատկապես իրավակիրառության և արդարադատության իրականացման համար պատասխանատու բոլոր սեկտորներում, արդյունավետ կիրառումն ապահովելու նպատակով,

Հիշեցնելով մարդու իրավունքների ուսուցման հարցի տարբեր ասպեկտների վերաբերյալ իր ընդունած բանաձևերը և հանձնարարական-առաջարկությունները, մասնավորապես, «Մարդու իրավունքների ուսուցման մասին» թիվ (78) 41 Բանաձևը, Մարդու իրավունքների ոլորտում ուսումնասիրությունների և հետազոտությունների համար Եվրոպայի խորհրդի թոշակների մասին կանոնակարգի վերաբերյալ թիվ (78) 40 Բանաձևը, «Եվրոպայի խորհրդի անդամ պետություններում մարդու իրավունքների վերաբերյալ հետազոտությունների խթանման մասին» թիվ (79) 16 հանձնարարական-առաջարկությունը, «Դպրոցներում մարդու իրավունքների ուսուցման և դասավանդման մասին» թիվ (85) 7 հանձնարարական-առաջարկությունը, ինչպես նաև դրա հավելվածը, որում նշվում են առաջարկություններ դպրոցներում մարդու իրավունքների ուսուցման և դասավանդման համար,

Հիշեցնելով այն դերը, որ կարող են խաղալ Մարդու իրավունքների խթանման և պաշտպանության ազգային հաստատությունները և այդ ոլորտի ոչ կառավարական կազմակերպությունները, հատկապես իրավակիրառության համար պատասխանատու անձնակազմի պատրաստման գործում և ողջունելով այս ոլորտում արդեն իսկ ձեռնարկված նախաձեռնությունները,

Հաշվի առնելով անդամ պետությունների՝ Կոնվենցիայի համակարգի վերաբերյալ համալսարանական ուսուցման, մասնագիտական պատրաստման և իրազեկման ավանդույթների և գործելակերպերի բազմազանությունը,

Առաջարկում է անդամ պետություններին.

I. ապահովել, որ ազգային մակարդակում գոյություն ունենան Կոնվենցիայի և Դատարանի դատական նախադեպի վերաբերյալ համարժեք համալսարանական ուսուցում և մասնագիտական պատրաստում և որ դրանք ներառվեն հատկապես.

- որպես իրավաբանական և, անհրաժեշտության դեպքում, քաղաքական և վարչական գիտությունների դիպլոմների ընդհանուր

ծրագրերի բաղկացուցիչ մաս և առաջարկվեն որպես ֆակուլտատիվ առարկա նրանց, ովքեր ցանկանում են մասնագիտանալ դրանում,

- տարբեր իրավաբանական մասնագիտությունների համար ազգային և տեղական ընդունելության քննությունների պատրաստման ծրագրերում և դատավորների, դատախազների և փաստաբանների սկզբնական պատրաստման և վերապատրաստման մեջ,
- իրավակիրառության համար պատասխանատու սեկտորների անձնակազմի և/կամ ազատությունից զրկված անձանց հետ շփվող անձնակազմի (օրինակ՝ ոստիկանությունը, անվտանգության ուժերի անդամները, քրեակատարողական և հիվանդանոցային անձնակազմերը), ինչպես նաև ներգաղթային ծառայությունների անձնակազմի սկզբնական պատրաստման և վերապատրաստման մեջ, ըստ իրենց հատուկ կարիքներին հարմարեցված ձևերի,

II. ամրապնդել այս ոլորտում համալսարանական ուսուցման և մասնագիտական պատրաստման արդյունավետությունը, մասնավորապես,

- հետևելով, որ ուսուցումը և պատրաստումը ընդգրկվեն պետական և մասնավոր կայուն կառույցներում և իրականացվեն բարձր մակարդակով, Կոնվենցիայի և դատարանի դատական նախադեպի սկզբունքներին լավ տիրապետող, ինչպես նաև ուսուցման տեխնիկայի համապատասխան իմացություն ունեցող անձանց կողմից,
- օժանդակելով այս ոլորտում մասնագիտացած ուսուցանողների և վերապատրաստողների պատրաստելու նախաձեռնությունները,

III. խրախուսել Կոնվենցիայի համակարգի իրազեկումը և իմացությունը խթանելուն ուղղված ոչ պետական նախաձեռնությունները, ինչպիսիք են մարդու իրավունքների ոլորտում ուսուցման և հետազոտություններում մասնագիտացած կառույցների ներդրումը, դատական ճառերի մրցույթները և իրազեկման արշավները:

Հանձնարարում է Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարին սույն հանձնարարական-առաջարկությունը փոխանցել Եվրոպական մշակութային կոնվենցիայի անդամ պետություններին, որոնք Եվրոպայի խորհրդի անդամներ չեն:

Ներածություն

1. Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի («Կոնվենցիա») 50-ամյակը նշելու նպատակով 2000 թվականի նոյեմբերի 3-4-ը Հռոմում կայացած Նախարարական կոնֆերանսը հրավիրեց Եվրոպայի խորհրդի անդամ պետություններին՝ «Ձեռնարկել բոլոր անհրաժեշտ միջոցները հասարակության բոլոր սեկտորներում, մասնավորապես՝ իրավաբանական մասնագիտություն ունեցողների շրջանում, մարդու իրավունքների վերաբերյալ կրթությունը ու իրազեկումը զարգացնելու և խթանելու նպատակով»[1]:

2. Ազգային մարմիններից պահանջվող ջանքը Կոնվենցիայով հաստատված վերահսկողության մեխանիզմի օժանդակ բնույթի հետևանքն է միայն, որը ենթադրում է, որ Կոնվենցիայով երաշխավորված իրավունքները պետք է լիարժեքորեն պաշտպանվեն առաջին հերթին ներպետական իրավունքով և կիրառվեն ազգային մարմինների կողմից[2]: Նախարարների կոմիտեն արդեն իսկ ընդունել է Բանաձևեր և հանձնարարական-առաջարկություններ, որոնք վերաբերում են այս հարցի տարբեր ասպեկտների[3] և խրախուսում են նախաձեռնությունների ընդունումը, հատկապես մարդու իրավունքների ազգային հաստատությունների և ՈԿԿ-ների կողմից, որպեսզի բարելավվի Կոնվենցիայի և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի («Դատարան») դատական նախադեպի ըմբռնումը և իմացությունը:

3. Կոնվենցիայի համակարգի երկարաժամկետ արդյունավետության ապահովումը Եվրոպայի խորհրդի ներկա առաջնահերթությունների մաս է կազմում և, այս համատեքստում, Կոնվենցիայի լավագույն կիրառման անհրաժեշտությունը համարվում է կենսական: Արդյունքում, անհրաժեշտ է դառնում, որ բոլոր անդամ պետություններն ապահովեն, որ Կոնվենցիայի վերաբերյալ համարժեք ուսուցում տարածվի, մասնավորապես, իրավաբան և իրավակիրառ մասնագետների շրջանում: Սա կարող է նպաստել, մի կողմից, Կոնվենցիայով երաշխավորված իրավունքների խախտումների,

---

[1] Մարդու իրավունքների վերաբերյալ Նախարարական կոնֆերանս, Բանաձև II, կետ 40:
[2] Տե՛ս Կոնվենցիայի 1-ին հոդվածը:
[3] Մասնավորապես՝ «Մարդու իրավունքների ուսուցման մասին» թիվ (78) 41 Բանաձևը, Մարդու իրավունքների ոլորտում ուսումնասիրությունների և հետազոտությունների համար Եվրոպայի խորհրդի՝ թոշակների մասին կանոնակարգի վերաբերյալ թիվ (78) 40 Բանաձևը, «Եվրոպայի խորհրդի անդամ պետություններում մարդու իրավունքների վերաբերյալ հետազոտությունների խթանման մասին» թիվ (79) 16 հանձնարարական-առաջարկությունը, «Դպրոցներում մարդու իրավունքների ուսուցման և սովորեցման մասին» թիվ (85) 7 հանձնարարական-առաջարկությունը, ինչպես նաև նրա հավելվածը, որում նշվում են առաջարկություններ դպրոցներում մարդու իրավունքների ուսուցման և սովորեցման համար:

երբ դրանք Կոնվենցիայի անբավարար իմացության արդյունք են, մյուս կողմից, ընդունելիության չափանիշներն ակնհայտորեն չբավարարող գանգատների ներկայացման կրճատմանը :

4. Սույն հանձնարարական-առաջարկությունը վերաբերում է երեք տիպի լրացուցիչ գործողությունների, այսինքն՝

(i) Կոնվենցիայի և Դատարանի դատական նախադեպի վերաբերյալ համարժեք ուսուցման և պատրաստման ներմուծումը հատկապես իրավաբանական և քաղաքական գիտությունների համալսարանական ուսուցման, ինչպես նաև իրավաբանական և իրավակիրառ մասնագետների պատրաստման շրջանակներ,
(ii) տարածվող ուսուցման և պատրաստման արդյունավետության երաշխավորում, ինչը պարտադրում է, մասնավորապես ուսուցաողների և պատրաստողների համարժեք պատրաստում-վերապատրաստում, և
(iii) Կոնվենցիայի համակարգի լավագույն իմացության և/կամ իրազեկման խթանմանն ուղղված նախաձեռնությունների աջակցություն:

5. Հաշվի առնելով անդամ պետություններում Կոնվենցիայի համակարգի վերաբերյալ համալսարանական ուսուցման, մասնագիտական պատրաստման և իրազեկման ավանդույթների ու պրակտիկայի բազմազանությունը, անդամ պետություններն իրենք պետք է ուսումնական ծրագրերը ձևավորեն իրենց ազգային իրավիճակից ելնելով՝ սուբսիդիարության սկզբունքին համապատասխան. հետևելով, որ Կոնվենցիայի չափանիշները ներկայացված լինեն ամբողջական տեսքով:

Համալսարանական ուսուցում և մասնագիտական պատրաստում

6. Անդամ պետությունները իրավիրվում են ապահովել, որ Կոնվենցիայի և դատարանի դատական նախադեպի վերաբերյալ համարժեք ուսուցումն ընդգրկվի իրավաբանական ֆակուլտետների ծրագրերում, փաստաբանների որակավորման քննություններում, ինչպես նաև դատավորների, դատախազների և փաստաբանների վերապատրաստման մեջ:

Համալսարանական ուսուցում

7. Կարևոր է, որ Կոնվենցիայի վերաբերյալ ուսուցումը լիարժեքորեն ընդգրկվի իրավաբանական ֆակուլտետների ծրագրերում, ոչ միայն որպես ինքնուրույն առարկա, այլ նաև հորիզոնական կերպով այլ իրավաբանական առարկաներում (քրեական իրավունք, քաղաքացիական իրավունք և այլն), որպեսզի ուսանողները, անկախ իրենց մասնագիտացումից, իրենց

ուսումնառության ավարտին իմանան իրենց ոլորտում Կոնվենցիայի պահանջները:

8. Կոնվենցիայում մասնագիտացման մագիստրոսական կուրսերի ստեղծումը, ինչպիսիք են մագիստրոսի որոշ ծրագրերը կամ «մարդու իրավունքների և ժողովրդավարացման եվրոպական մագիստրոս» ծրագրերը (EMA), որին մասնակցում են 15 եվրոպական երկրներում բաշխված քսանյոթ համալսարաններ, ինչպես նաև ավելի կարճ համալսարանական ծրագրերը, ինչպիսիք են Ռըներ Կասենի անվան Մարդու իրավունքների միջազգային ինստիտուտի (Ստրասբուրգ) և Եվրոպական իրավունքի ինստիտուտի (Ֆլորենցիա) ամառային կուրսերը, պետք է խրախուսվեն:

Մասնագիտական պատրաստում

9. Մասնագիտական պատրաստումը կդյուրացնի Կոնվենցիայի նորմերի և Դատարանի դատական նախադեպի ներմուծումը ներպետական դատարանների կողմից կայացվող վճիռների հիմնավորման մեջ: Ավելին, Կոնվենցիայի համարժեք իմացություն ունեցող փաստաբանների կողմից պոտենցիալ գանգատարկուներին տրվող իրավաբանական խորհրդատվության շնորհիվ կարելի կլինի խուսափել այն բանից, որ ընդունելիության չափանիշներն ակնհայտորեն չբավարարող գանգատները չներկայացվեն դատարան: Ավելին, Կոնվենցիայի լավագույն իմացությունն իրավաբանների կողմից կնպաստի Դատարան ներկայացվող գանգատների թվի կրճատմանը:

10. Կոնվենցիայի և նրա նորմերի վերաբերյալ հատուկ պատրաստումը պետք է ընդգրկվի փաստաբանական դպրոցներում, ինչպես նաև դատավորների և դատախազների համար դպրոցներում: Դա կարող է իրականացվել փաստաբանների, դատավորների և դատախազների մասնագիտական պատրաստման շրջանակներում սեմինարների (կլոր սեղանների, աշխատանքային խմբերի) կազմակերպման ճնով: Ինչ վերաբերում է փաստաբաններին, ապա այդ սեմինարները կարող են, օրինակ, կազմակերպվել փաստաբանական միությունների նախաձեռնությամբ: Կարելի է նշել Փաստաբանների միջազգային միությունում ընթացող մի նախագիծ, որը Դատարանի աջակցությամբ ներդնելու է փաստաբանների պատրաստումը Դատարանի կանոնակարգի, դատական վիճաբանության, ինչպես նաև վճիռների կատարման վերաբերյալ: Որոշ անդամ պետություններում արդարադատության նախարարությունը պատասխանատու է եվրոպական դատարանի նախադեպին դատավորների իրազեկմանը մասնակցելու և պատրաստումն իրականացնելու համար. գործող դատավորները կարող են մասնակցել մեկ կամ երկու օր տևողությամբ իրենց իսկ դատարաններում կազմակերպվող դասընթացների կամ ամենամյա մեկ շաբաթ տևող ստաժերի, արդարադատության աուդիտորները (ուսանող

դատավորները) օգտվում են Մագիստրատուրայի ազգային դպրոցում կազմակերպված պատրաստումից: Կլոր սեղաններ կարող են պարբերաբար կազմակերպվել դատավորների սկզբնական պատրաստման և վերապատրաստման շրջանակներում:

11. Բացի այդ, Կոնվենցիայի վերաբերյալ սեմինարներ և քոլոքվիումներ կարող են պարբերաբար կազմակերպվել դատավորների, դատախազների և փաստաբանների համար:

12. Ավելին, կարող են պարբերաբար հրապարակվել դատավորներին և փաստաբաններին ուղղված՝ դատարանի դատական նախադեպի վերաբերյալ լրագրեր: Որոշ անդամ պետություններում արդարադատության նախարարությունը հրապարակում է տեղեկագրեր, որոնք պարունակում են տեղեկանքներ Դատարանի նախադեպի և Կոնվենցիայի հետ կապված հարցերի վերաբերյալ: Այդ հրապարակումները բաժանվում են բոլոր դատարաններին:

13. Առաջարկվում է անդամ պետություններին ապահովել, որպեսզի Կոնվենցիայի նորմերը հաշվի առնվեն նաև իրավակիրառ և կալանք կիրառող այլ մասնագետների սկզբնական պատրաստման և վերապատրաստման մեջ, ինչպիսիք են անվտանգության ուժերը, ոստիկանները, քրեակատարողական ծառայողները, ինչպես նաև ներքաղթային ծառայությունների և հիվանդանոցների աշխատակիցները: Կոնվենցիայի նորմերի վերաբերյալ վերապատրաստումը հատկապես կարևոր է՝ հաշվի առնելով այդ նորմերի կիրառման և մեկնաբանման վերաբերյալ դատարանի դատական նախադեպի էվոլյուցիոն բնույթը: Ազատազրկված անձանցով զբաղվող մարմինների անձնակազմը պետք է լավ իմանա այդ անձանց՝ կոնվենցիայով երաշխավորված և դատարանի կողմից մեկնաբանվող իրավունքները, որպեսզի կանխարգելվի ցանկացած խախտում, հատկապես՝ 3-րդ, 5-րդ և 8-րդ հոդվածների: Ուրեմն, մեծապես կարևոր է բոլոր անդամ պետություններում այս մասնագետների համարժեք պատրաստման ներդրումը:

14. Կոնվենցիայի և նրա նորմերի, և մասնավորապես, ազատազրկված անձանց վերաբերող ասպեկտներով, հատուկ պատրաստումներ կարող է ընդգրկվել ոստիկանական և քրեակատարողական ծառայողների դպրոցներում: Աշխատանքային խմբեր կարող են կազմակերպվել նաև ոստիկանական ուժերի, քրեակատարողական ծառայողների և այլ համապատասխան մարմինների ծառայողների վերապատրաստման շրջանակներում:

Համալսարանական ուսուցման և մասնագիտական պատրաստության արդյունավետությունը

15. Այս նպատակով, առաջարկվում է անդամ պետություններին ապահովել, որ համալսարանական ուսուցումը և մասնագիտական պատրաստումն այս ոլորտում իրականացվեն կայուն կառույցներում (պետական կամ մասնավոր) բարձր մակարդակի դասախոսների և վերապատրաստողների կողմից:

16. Այս առումով, դասախոսներին և վերապատրաստողներին պատրաստելը առաջնահերթություն է: Հատկապես պետք է ապահովել, որ նրանց իմացության մակարդակը կապված լինի Դատարանի դատական նախադեպի էվոլյուցիայի հետ և համապատասխանի այն մասնագիտական սեկտորների հատուկ կարիքներին, որոնց հասցեագրված է: Անդամ պետությունները հրավիրվում են խրախուսել նախաձեռնություններ (Կոնվենցիայով ծածկված ոլորտներում հետազոտություններ, ուսուցման մեթոդներ և այլն), որոնք ուղղված են այս զարգացող և զգայուն ոլորտում մասնագիտացած դասախոսների և վերապատրաստողների լավագույն պատրաստմանը երաշխավորելուն:

Կոնվենցիայի համակարգի իմացության և/կամ իրազեկման խթանումը

17. Անդամ պետությունները վերջապես հրավիրվում են քաջալերելու Կոնվենցիայի իմացության և/կամ իրազեկման խթանմանն ուղղված նախաձեռնությունները: Այս նախաձեռնությունները, որոնք կարող են տարբեր ձևեր ստանալ, համարվում են շատ դրական ամենուր, որտեղ կազմակերպվել են անցյալում և պետք է ուրեմն խրախուսվեն անդամ պետությունների կողմից:

18. Օրինակ կարող են ծառայել Կոնվենցիայի և Դատարանի դատական նախադեպի վերաբերյալ դատական պրոցեսների մրցույթը՝ իրավունք ուսումնասիրող ուսանողների համար, որում միաժամանակ մասնակցում են ուսանողները, համալսարանական դասախոսները և պրակտիկ իրավաբանները (դատավորներ, դատախազներ, փաստաբաններ), օրինակ Նորդիկ անդամ պետությունների գերագույն դատարանների կողմից կազմակերպվող Սպոռռոնգ և Լյոնռոթ մրցույթը և Եվրոպայի խորհրդի կառույցներում Յուրիս Լյուդի Ասոցիացիայի կողմից կազմակերպվող ֆրանկալեզու և համաեվրոպական «Ռըննե Կասին» մրցույթը:

Հավելված 6

Թարգմանությունը տրամադրել է
ՀՀ Արտաքին գործերի նախարարությունը:

ԵՎՐՈՊԱՅԻ ԽՈՐՀՈՒՐԴ
ՆԱԽԱՐԱՐՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ

Նախարարների կոմիտեի Rec(2004)5 հանձնարարական-առաջարկությունն անդամ պետություններին «Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայով ամրագրված չափանիշների հետ օրենքի նախագծերի, գործող օրենքների և վարչական գործելակերպի համապատասխանության ստուգման մասին»

(ընդունված է Նախարարների կոմիտեի կողմից 2004 թվականի մայիսի 12-ին, իր 114-րդ նստաշրջանի ընթացքում)

Նախարարների կոմիտեն, Եվրոպայի խորհրդի կանոնադրության 15-րդ հոդվածի «բ» կետի համաձայն,

Հաշվի առնելով, որ Եվրոպայի խորհրդի նպատակն է իր անդամների միջև առավել սերտ միասնության հասնել և որ այդ նպատակին հասնելու համար ամենակարևոր միջոցներից է մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանությունը և հետագա զարգացումը,

Վերահաստատելով իր համոզմունքը, որ Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին Կոնվենցիան (այսուհետ՝ Կոնվենցիա) պետք է մնա Եվրոպայում մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում էական վկայակոչման կետը և հիշեցնելով իր հանձնառությունը միջոցներ ձեռնարկել՝ Կոնվենցիայով հիմնված վերահսկողության համակարգի երկարաժամկետ արդյունավետությունն ապահովելու նպատակով,

Հիշեցնելով Կոնվենցիայով հիմնված վերահսկողության համակարգի օժանդակ (սուբսիդիար) բնույթը, որը, վերջինիս 1-ին հոդվածին համապատասխան, ենթադրում է, որ Կոնվենցիայով երաշխավորված իրավունքները և ազատությունները առաջին հերթին պետք է պաշտպանվեն ազգային մակարդակում և կիրառվեն ազգային մարմինների կողմից,

Ողջունելով այս կապակցությամբ, որ Կոնվենցիան բոլոր անդամ պետությունների ներպետական իրավական համակարգի մաս է կազմում,

Հիշեցնելով, որ Կոնվենցիայի 46-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն, Բարձր պայմանավորվող կողմերը պարտավորվում են կատարել Մարդու իրավունքների եվրոպական դատարանի («Դատարան») վերջնական վճիռներն իրենց մասնակցությամբ վեճերով,

Համարելով այնուամենայնիվ, որ լրացուցիչ ջանքեր պետք է իրականացվեն անդամ պետություններում Կոնվենցիային ամբողջական ընթացք

տալու համար, մասնավորապես, վերջինիս ստանդարտներին՝ Դատարանի դատական նախադեպի լույսի ներքո, ազգային նորմերը մշտապես համապատասխանեցնելու միջոցով,

Համոզված լինելով, որ կոնվենցիայի հետ օրենքների նախագծերի, գործող օրենքների և վարչական գործելակերպի համապատասխանության ստուգումն անհրաժեշտ է մարդու իրավունքների խախտումների կանխարգելմանը և Դատարան ներկայացվող գանգատների քանակի սահմանափակմանը նպաստելու նպատակով,

Ընդգծելով տարբեր իրավասու և անկախ ատյանների, այդ թվում մարդու իրավունքների խթանման և պաշտպանության ազգային հաստատությունների և ոչ կառավարական կազմակերպությունների հետ խորհրդակցելու անհրաժեշտությունը,

Գիտակցելով համապատասխանության ստուգման առումով անդամ պետությունների գործելակերպերի բազմազանությունը.

առաջարկում է անդամ պետություններին, հաշվի առնելով հավելվածում նշված լավ գործելակերպերը.

I. ապահովել, որ գոյություն ունենան Կոնվենցիայի հետ՝ Դատարանի դատական նախադեպի լույսի ներքո, օրենքների նախագծերի համապատասխանության կանոնավոր ստուգման համար համարժեք և արդյունավետ մեխանիզմներ,

II. ապահովել, որ գոյություն ունենան նման մեխանիզմներ, երբ դա անհրաժեշտ համարվի, գործող օրենքների և վարչական գործելակերպի, որը դրսևորվում է հատկապես կանոնակարգերի, որոշումների և շրջաբերականների ձևով, համապատասխանությունը ստուգելու համար.

III. ապահովել հնարավորին սեղմ ժամկետներում իրենց օրենքների և վարչական գործելակերպի հարմարեցումը Կոնվենցիային՝ Կոնվենցիայի խախտումներից խուսափելու նպատակով:

Հանձնարարում է Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարին անհրաժեշտ միջոցներ հատկացնել անդամ պետություններին համապատասխան աջակցություն տրամադրելու համար, որոնք սույն հանձնարարական-առաջարկությունն իրականացնելու համար նման աջակցություն կխնդրեն:

Հավելված
Rec(2004)5 հանձնարարական-առաջարկության

Ներածություն

1. Չնայած 11-րդ արձանագրությամբ Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայով («Կոնվենցիա») հիմնված վերահսկողության մեխանիզմի բարեփոխմանը՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարան («Դատարան») ներկայացվող գանգատների թիվը մշտապես աճում է, ինչը բերում է գործերի քննարկման զգալի ուշացումների:

2. Այս զարգացումն արտացոլում է եվրոպական դատարանի առավել դյուրին մատչելիությունը և Եվրոպայում մարդու իրավունքների մշտապես կատարելագործվող պաշտպանությունը, բայց չպետք է մոռանալ, որ Կոնվենցիայի կողմերն են առաջին հերթին մնում դրանում ամրագրված իրավունքների երաշխավորները, համաձայն սուբսիդիարության սկզբունքի: Կոնվենցիայի առաջին հոդվածի համաձայն՝ բարձր պայմանավորվող կողմերը ճանաչում են իրենց իրավազորության ներքո գտնվող յուրաքանչյուր անձի՝ Կոնվենցիայի 1-ին բաժնում սահմանված իրավունքները և ազատությունները: Ուստի, ազգային մակարդակով է, որ պետք է ապահովվի Կոնվենցիայով նախատեսված իրավունքների և ազատությունների արդյունավետ և ուղղակի պաշտպանությունը: Այս պարտավորությունը վերաբերում է պետության բոլոր մարմիններին, մասնավորապես, դատարաններին, վարչական մարմիններին և օրենսդրին:

3. Կոնվենցիայով մարդու իրավունքների արդյունավետ ապահովման նախնական պայմանն այն է, որ անդամ պետություններն իրենց իրավական համակարգում կոնվենցիան կյանքի կոչեն՝ Դատարանի դատական նախադեպի լույսի ներքո: Սա հատկապես պահանջում է, որ նրանք պետք է ապահովեն, որ իրենց օրենքները և վարչական գործելակերպը համապատասխանեն կոնվենցիային:

4. Սույն հանձնարարական-առաջարկությունը խրախուսում է անդամ պետություններին ներդնել մեխանիզմներ, որոնք թույլ են տալիս ստուգել Կոնվենցիայի հետ օրենքների նախագծերի, ինչպես նաև գործող օրենքների և վարչական գործելակերպի համատեղելիությունը (համապատասխանությունը): Լավագույն գործելակերպի օրինակներ բերվում են ստորև: Հանձնարարական-առաջարկության իրականացումը այսպիսով պետք է նպաստի անդամ պետություններում մարդու իրավունքների խախտումների կանխարգելմանը և հետևապես պետք է օգնի պահել դատարան հասնող գործերի հոսքը:

Օրենքի նախագծերի համապատասխանության ստուգումը

5. Առաջարկվում է, որ անդամ պետությունները հիմնեն օրենքի նախագծերի համապատասխանության ստուգման մեխանիզմ, հատկապես այն օրենքների, որոնք կարող են ազդել Կոնվենցիայով պաշտպանվող իրավունքների և ազատությունների վրա: Սա շատ կարևոր կետ է. ընդունելով մի օրենք, որի համապատասխանությունը ստուգված է՝ Պետությունը նվազեցնում է այն ռիսկը, որ Կոնվենցիայի խախտման աղբյուրը գտնվի հենց օրենքի մեջ և Դատարանը հաստատի կոնվենցիայի նման խախտում: Ավելին, Պետությունն այսպիսով իր վարչական մարմինների համար ստեղծում է Կոնվենցիային համապատասխանող պարտադիր շրջանակ՝ նրանց իրավազորության ներքո գտնվող յուրաքանչյուր անձի նկատմամբ իրականացվող գործողությունների համար:

6. Որոշ դեպքերում այդ ստուգումը իրականացնելու համար կարող է նախատեսվել Եվրոպայի խորհրդի աջակցությունը: Նման աջակցություն արդեն իսկ առկա է կրոնական ազատության, համոզմունքի պատճառով զինծառայության մերժման, տեղեկատվության ազատության, միավորման ազատության և այլնի մասին օրենքների նախագծերին վերաբերող դեպքերում: Սակայն, պետություններին է միայն պատկանում այս շրջանակներում նրանց տրված տեխնիկական փորձաքննության եզրակացությունները հաշվի առնելու կամ չառնելու իրավունքը:

Գործող օրենքների համապատասխանության ստուգումը

7. Համապատասխանության ստուգումը պետք է իրականացվի նաև, եթե դա անհրաժեշտ է դառնում գործող օրենքների առումով: Փաստորեն, Դատարանի զարգացող դատական նախադեպը կարող է ազդեցություն ունենալ Կոնվենցիային սկզբնապես համապատասխանող օրենքի վրա կամ այն օրենքի վրա, որն իր ընդունումից առաջ համապատասխանության տեսակետից չի ստուգվել:

8. Այս ստուգումը հատկապես կարևոր է դառնում այն օրենքների համար, որոնք վերաբերում են այնպիսի ոլորտների, որոնցում, ինչպես փորձն է ցույց տալիս, գոյություն ունի մարդու իրավունքների խախտման հատուկ վտանգ, ինչպիսիք են ոստիկանությունը, քրեական դատավարությունը, կալանքի պայմանները, օտարերկրացիների իրավունքը և այլն:

Վարչական գործելակերպի համապատասխանության ստուգումը

9. Սույն Հանձնարարական-առաջարկությունը տարածվում է նաև, երբ դա անհրաժեշտ է դառնում, կանոնակարգային (ենթաօրենսդրական) ակտերի՝ Կոնվենցիային համապատասխանության ստուգման վրա և նպատակ

ունի, դրանով իսկ ապահովել մարդու իրավունքների պահպանումը առօրեական պրակտիկայում: Էական է, որ պետական մարմինները, հատկապես նրանք, որոնք մարդու իրավունքները սահմանափակելու լիազորություններ ունեն, անհրաժեշտ միջոցների տիրապետեն իրենց գործունեության՝ Կոնվենցիային համապատասխանությունը ապահովելու համար:

10. Պետք է հստակեցնել, որ հանձնարարական-առաջարկությունը վերաբերում է նաև վարչական գործելակերպին, որն իր հիմքում կանոնակարգային տեքստեր չունի: Կարևոր է հատկապես, որ պետությունները ապահովեն նաև դրանց՝ Կոնվենցիային համապատասխանությունը:

Իրականացված ստուգմանն ընթացք տալու համար ընթացակարգեր

11. Որպեսզի ստուգումն ունենա կոնկրետ և գործնական հետևանքներ և չսահմանափակվի Կոնվենցիայով նախատեսված դրույթի հետ անհամապատասխանության արձանագրմամբ, կարևոր է, որ անդամ պետություններն այդպիսի ստուգման հետագա ընթացքն ապահովեն:

12. Հանձնարարական-առաջարկությունը շեշտը դնում է անդամ պետությունների անհրաժեշտ ռեակտիվության վրա, որպեսզի հասնի իր նպատակին: Այսպես, երբ դա անհրաժեշտ է, անդամ պետությունները պետք է ստուգումից հետո արագ քայլեր ձեռնարկեն գործող օրենքները և վարչական գործելակերպը փոփոխելու համար, որպեսզի դրանք համապատասխանեն Կոնվենցիային: Դա անելու համար, անհրաժեշտության դեպքում, նրանք պետք է բարելավեն կամ ներդնեն վերանայման համարժեք մեխանիզմներ, որոնք անհամապատասխանություն հայտնաբերումից հետո պետք է իրականացվեն պարբերաբար և արագորեն: Այնուամենայնիվ պետք է նշել, որ հաճախ, համապատասխանությունը ապահովելու համար, բավարար է փոփոխություններ կատարել դատական պրակտիկայում կամ գործելակերպում: Որոշ անդամ պետությունների իրավական համակարգին համապատասխան՝ համապատասխանությունը կարող է ապահովվել պարզապես վիճարկելի օրենսդրական դրույթները չկիրառելով:

13. Հարմարակման նման կարողությունը կարող է դյուրացվել և խրախուսվել, հատկապես խնդրո առարկա խախտմանն առնչվող շահագրգիռ մարմինների շրջանում Դատարանի վճիռների արագ և արդյունավետ տարածման միջոցով և որոշում կայացնողների վերապատրաստման միջոցով: Նախարարների կոմիտեն ընդլրել է այս կարևոր ասպեկտներին երկու հատուկ հանձնարարական-առաջարկություններ, կոնվենցիայի և դատարանի դատական նախադեպի հրապարակման և տարածման մասին թիվ (Rec(2002)13) և մյուսը «Կոնվենցիան համալսարանական ուսուցման և մասնագիտական պատրաստման մեջ» թիվ (Rec(2004)4):

14. Այն դեպքում, երբ որևէ դատարան եզրակացնի, որ հնարավոր չէ անհրաժեշտ հարմարեցում ապահովել խնդրո առարկա օրենքի բովանդակության պատճառով, որոշ պետություններ նախատեսում են արագացված օրենսդրական ընթացակարգեր:

15. Ելնելով վերոհիշյալից, ներքոշարադրյալ նկատառումները կարող են հաշվի առնվել :

Լավ գործելակերպի օրինակներ

16. Յուրաքանչյուր պետություն հրավիրվում է ներկայացնելու իր գործելակերպը և դրա զարգացումները, հատկապես այդ մասին տեղեկացնելով Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարին: Վերջինս իր հերթին պարբերաբար կտեղեկացնի բոլոր անդամ պետություններին գոյություն ունեցող լավ գործելակերպերի մասին:

I. Մարդու իրավունքների պաշտպանության համակարգի վերաբերյալ հրապարակումը, թարգմանությունները, տարածումը և վերապատրաստումը

17. Որպես սկիզբ, պետք է հիշեցնել, որ արդյունավետ ստուգումը նախապես պահանջում է ներպետական մակարդակում Կոնվենցիայի և դատարանի համապատասխան նախադեպի՝ երկրի լեզվով կամ լեզուներով հրապարակում և համարժեք տարածում, մասնավորապես էլեկտրոնային միջոցներով, ինչպես նաև մարդու իրավունքներին վերաբերող համալսարանական ուսուցման և մասնագիտական պատրաստման ծրագրերի մշակում:

II. Օրենքների նախագծերի ստուգումը

18. Օրենքների նախագծերի կանոնավոր ստուգումն ընդհանուր առմամբ իրականացվում է ինչպես գործադիր իշխանության մակարդակով, այնպես էլ խորհրդարանական՝ դիմելով նաև անկախ ատյանների խորհրդատվությանը:

- Գործադրի կողմից

19. Ընդհանրապես, Կոնվենցիայի և նրա Արձանագրությունների հետ համապատասխանության ստուգումը սկսվում է այն նախարարությունում, որն օրենքի նախագծի հեղինակն է: Ավելին, որոշ անդամ պետություններում հատուկ պարտականություն և պատասխանատվություն ունեն որոշ նախարարություններ կամ դեպարտամենտներ, օրինակ՝ Կառավարության Գրասենյակը, արդարադատության նախարարությունը և/կամ արտաքին

գործերի նախարարությունը: Որոշ անդամ պետություններ Մարդու իրավունքների եվրոպական դատարանում կառավարության լիազոր ներկայացուցչին օժտում են, ի թիվս այլ լիազորությունների, նաև Կոնվենցիայի հետ օրենքի նախագծերի համապատասխանության վերաբերյալ կարծիք հայտնելու լիազորությամբ: Այս հիմքով, լիազոր ներկայացուցիչն իրավասու է գոյություն ունեցող օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու կամ նոր օրենքների նախագծերի վերաբերյալ առաջարկություններ ներկայացնել:

20. Բազմաթիվ պետությունների ազգային իրավունքը նախատեսում է, որ խորհրդարան ուղարկվող օրենքի նախագիծը պետք է ուղեկցվի մանրամասն բացատրական զեկույցով, որը նաև պետք է նշի և ներկայացնի Սահմանադրության և/կամ Կոնվենցիայի հետ կապված հնարավոր հարցերը: Որոշ անդամ պետություններում օրենքի նախագիծը պետք է ուղեկցվի Կոնվենցիային համապատասխանության մասին պաշտոնական հայտարարությամբ: Անդամ պետություններից մեկում օրենքի նախագծի համար պատասխանատու նախարարը Խորհրդարանում պետք է պաշտոնապես հավաստի, որ նախագծի դրույթները, իր կարծիքով, համապատասխանում են Կոնվենցիային կամ նա չի կարող նման հայտարարություն անել, բայց, այնուամենայնիվ, նա ցանկանում է, որ խորհրդարանը քննարկի նախագիծը:

- Խորհրդարանի կողմից

21. Բացի կառավարության կողմից ստուգման, քննարկում տեղի է ունենում նաև խորհրդարանի իրավաբանական ծառայությունների և/կամ տարբեր մշտական հանձնաժողովների միջոցներով:

- Այլ խորհրդատվություններ

22. Մարդու իրավունքների ոլորտում չափանիշներին համապատասխանությունն ապահովելու համար նախատեսված են խորհրդատվություններ օրենսդրական գործընթացի տարբեր փուլերում: Որոշ ոլորտներում խորհրդատվությունը կամընտիր է: Որոշներում, մասնավորապես, եթե օրենքի նախագիծը կարող է ազդել հիմնարար իրավունքների վրա, խորհրդատվությունը օրենքով նախատեսված կարգով պարտադիր է սահմանված ատյանում, օրինակ՝ Պետական խորհրդում որոշ անդամ պետություններում: Երբ կառավարությունը չի իրականացրել պարտադիր խորհրդատվություն, ընդունված ակտը կհամարվի ձևականորեն՝ ապօրինի: Եթե խորհրդատվությունից հետո կառավարությունը որոշում է հաշվի չառնել ստացված կարծիքը, նա ստանձնում է բոլոր իրավական և քաղաքական հետևանքների պատասխանատվությունը, որոնք կարող են բխել այդպիսի որոշումից:

23. Կամընտիր կամ պարտադիր խորհրդատվություններ կարող են նախատեսվել նաև մարդու իրավունքների ոլորտի ոչ դատական ատյաններում: Խոսքը վերաբերում է հատկապես մարդու իրավունքների խթանման և պաշտպանության ազգային անկախ հաստատություններին, Մարդու իրավունքների պաշտպանին, տեղական և միջազգային ոչ կառավարական կազմակերպություններին, ինստիտուտներին, մարդու իրավունքների կենտրոններին, փաստաբանական կազմակերպություններին և այլն:

24. Եվրոպայի խորհրդի փորձագետները կամ մարմինները, մասնավորապես «Ժողովրդավարություն իրավունքի միջոցով» եվրոպական հանճնաժողովը («Վենետիկի հանճնաժողով») կարող են հրավիրվել իրենց կարծիքը տալ մարդու իրավունքներին առնչվող օրենքների նախագծերի՝ Կոնվենցիային համապատասխանության մասին: Սակայն նման կարծիքի խնդրանքը չպետք է փոխարինի Կոնվենցիային համապատասխանության ներպետական քննարկմանը:

III. Գործող օրենքների և վարչական գործելակերպի ստուգումը

25. Եթե հնարավոր չէ պահանջել անդամ պետություններից՝ կանոնավորապես ստուգել ամբողջ գործող օրենսդրությունը, կանոնակարգերը և վարչական գործելակերպը, կարող է անհրաժեշտ դառնալ նման վարժության (ուսումնասիրության) կատարումը, օրինակ՝ ի հետևանք որևէ օրենքի կամ կանոնակարգի կիրառման ազգային փորձի կամ այլ պետությանը վերաբերող Դատարանի նոր վճռի: Այն դեպքում, երբ վճիռը վերաբերում է ուղղակիորեն տվյալ պետությանը, վերջինս պարտավոր է, Կոնվենցիայի 46-րդ հոդվածի ուժով, միջոցներ ձեռնարկել այդ վճիռը կատարելու համար:

- Գործադրի կողմից

26. Որոշ պետություններում նախարարությունը, որը տվյալ օրենսդրության նախաձեռնողն է, պատասխանատու է գործող կանոնակարգերի և վարչական գործելակերպի ստուգման համար, որը պարտադրում է իմանալ դատարանի նախադեպի վերջին զարգացումները: Որոշ պետություններում, կառավարական մարմիններն են անկախ ատյանների և հատկապես դատարանների ուշադրությունը հրավիրում դատական նախադեպի որոշ զարգացումների վրա: Այս ասպեկտը կարևորում է Կոնվենցիայի համակարգի վերաբերյալ սկզբնական ուսուցումը և վերապատրաստումը: Պետության իրավասու մարմինները պետք է ստուգեն, որ տեղական և կենտրոնական մարմինների պատասխանատուները հաշվի առնեն Կոնվենցիան և դատարանի դատական նախադեպը՝ խախտումներից խուսափելու համար:

- Խորհրդարանի կողմից

27. Համապատասխանության ստուգման պահանջներ կարող են արվել խորհրդարանական քննարկումների շրջանակում:

- Դատական հաստատությունների կողմից

28. Խոսքը վերաբերում է իրավական շահ ունեցող անձանց կողմից հարուցված դատական ընթացակարգերի շրջանակներում ստուգմանը, այսինքն պետական մարմինների, դրան ուղղակիորեն չառնչվող անձանց կամ ատյանների կողմից (օրինակ, սահմանադրական դատարանում).

- Ոչ դատական անկախ հաստատությունների կողմից

29. Բացի իրենց այլ գործառույթներից, երբ նրանց դիմում են կառավարությունը կամ խորհրդարանը, ոչ դատական անկախ հաստատությունները, հատկապես մարդու իրավունքների խթանման և պաշտպանության ազգային անկախ հաստատությունները, Մարդու իրավունքների պաշտպանը, եռանդուն ղեր են կատարում ստուգելու համար, թե ինչպես են օրենքները և հատկապես ներպետական իրավունքի մաս կազմող Կոնվենցիան կիրառվում: Որոշ անդամ պետություններում այս հաստատությունները կարող են նաև որոշ պայմաններով քննարկել անհատական բողոքներ և ուսումնասիրություններ սկսել իրենց նախաձեռնությամբ: Այդ ուսումնասիրությունների նպատակն է հավաստիանալ, որ օրենսդրության արձանագրված թերությունները ուղղվեն, և այդ նպատակով կարող են պաշտոնական հաղորդումներ ուղարկել խորհրդարանին և կառավարությանը:

Հավելված 7

Թարգմանությունը տրամադրել է
ՀՀ Արտաքին գործերի նախարարությունը:

ԵՎՐՈՊԱՅԻ ԽՈՐՀՈՒՐԴ
ՆԱԽԱՐԱՐՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ

Նախարարների կոմիտեի Rec(2004)6 հանձնարարական-առաջարկությունն անդամ պետություններին «Իրավական պաշտպանության ներպետական միջոցների բարելավման մասին»

(ընդունված է Նախարարների կոմիտեի կողմից 2004 թվականի մայիսի 12-ին, իր 114-րդ նստաշրջանի ընթացքում)

Նախարարների կոմիտեն, Եվրոպայի խորհրդի կանոնադրության 15-րդ հոդվածի «բ» կետի համաձայն,

Հաշվի առնելով, որ Եվրոպայի խորհրդի նպատակն է իր անդամների միջև առավել սերտ միասնության հասնել, և որ այդ նպատակին հասնելու համար ամենակարևոր միջոցներից է մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանությունը և հետագա զարգացումը,

Վերահաստատելով իր համոզմունքը, որ Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին Կոնվենցիան (այսուհետ՝ Կոնվենցիա) պետք է մնա Եվրոպայում մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում էական վկայակոչման կետը և հիշեցնելով իր հանձնառությունը միջոցներ ձեռնարկել՝ Կոնվենցիայով հիմնված վերահսկողության համակարգի երկարաժամկետ արդյունավետությունն ապահովելու նպատակով,

Հիշեցնելով Կոնվենցիայով հիմնված վերահսկողության համակարգի օժանդակ (սուբսիդիար) բնույթը, որը, վերջինիս 1-ին հոդվածին համապատասխան, ենթադրում է, որ Կոնվենցիայով երաշխավորված իրավունքներն և ազատություններն առաջին հերթին պետք է պաշտպանվեն ազգային մակարդակում և կիրառվեն ազգային մարմինների կողմից,

Ողջունելով այս կապակցությամբ այն, որ Կոնվենցիան բոլոր անդամ պետությունների ներպետական իրավական համակարգի մաս է կազմում,

Ընդգծելով, որ ինչպես Կոնվենցիայի 13-րդ հոդվածն է պահանջում, անդամ պետությունները պարտավորվում են ապահովել, որ յուրաքանչյուր ոք, ով գանգատվում է Կոնվենցիայով ճանաչված իր իրավունքների և ազատությունների խախտման առիթով, ազգային որևէ ատյանի առջև արդյունավետ իրավական պաշտպանության իրավունք ունենա,

Հիշեցնելով, որ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի («Դատարան») դատական նախադեպի իմաստով իրավական պաշտպանության նման արդյունավետ միջոցի գոյությունն ապահովելու պարտավոր-

ությունից բացի, Պետությունները ընդհանուր պարտավորություն ունեն հարթել հաստատված խախտումների հիմքում ընկած խնդիրները,

Ընդգծելով, որ անդամ պետություններն իրենք պետք է ապահովեն, որ իրավական պաշտպանության ներպետական միջոցները արդյունավետ լինեն ինչպես իրավունքում, այնպես էլ պրակտիկայում, և որ այդ միջոցները հանգեցնեն ըստ էության որոշման կայացման և հաստատված խախտման համարժեք հատուցման,

Նշելով, որ Դատարան ներկայացված գանգատները և Դատարանի կողմի կայացված վճիռները ցույց են տալիս, առավել քան երբևիցե, որ անդամ պետությունները պետք է արդյունավետ և կանոնավոր կերպով ապահովեն, որ իրավական պաշտպանության նման միջոցները գոյություն ունենան բոլոր հանգամանքներում, և մասնավորապես, դատավարության գերազանցող տևողության դեպքում,

Գտնելով, որ Կոնվենցիայի ենթադրյալ խախտումների համար իրավական պաշտպանության ներպետական միջոցների առկայությունը թույլ կտա կրճատել Դատարանի աշխատանքի ծանրաբեռնվածությունը, մի կողմից, Դատարանում հարուցվող գործերի կրճատման պատճառով, մյուս կողմից, այն փաստի պատճառով, որ գործերի հանգամանալի քննարկումն ազգային մակարդակում կդյուրացնեն դրանց հետագա քննարկումը Դատարանի կողմից,

Ընդգծելով, որ իրավական պաշտպանության միջոցների բարելավումն ազգային մակարդակում, մասնավորապես կրկնվող գործերի առումով, կնպաստի նաև Դատարանի աշխատանքի ծանրաբեռնվածության կրճատմանը,

առաջարկում է անդամ պետություններին, հաշվի առնելով հավելվածում նշված լավ գործելակերպը,

I. ապահովել, մշտական վերահսկողության միջոցով, դատարանի դատական նախադեպի լույսի ներքո, որ իրավական պաշտպանության ներպետական միջոցները գոյություն ունենան յուրաքանչյուր անձի համար, ով բողոքում է Կոնվենցիայի ենթադրյալ խախտման առթիվ, և որ միջոցները հանգեցնեն ըստ էության որոշման կայացման և հաստատված խախտման համարժեք հատուցման,

II. վերանայել, Պետության իրավունքում կամ գործելակերպում կառուցվածքային կամ ընդհանուր թերություն հայտնաբերած Դատարանի վճիռների հիման վրա, գոյություն ունեցող իրավական պաշտպանության ներպետական միջոցների արդյունավետությունը և, անհրաժեշտության դեպքում, ներդնել իրավական պաշտպանության ներպետական միջոցներ՝ կրկնվող գործերը Դատարան ներկայացնելը բացառելու նպատակով,

III. հատուկ ուշադրություն դարձնել նշված I և II կետերի շրջանակում դատավարության գերազանցող տեղողության համար պաշտպանելի հայտարարությունների դեպքում իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների գոյությանը:

Հանձնարարում է Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարին անհրաժեշտ միջոցներ հատկացնել անդամ պետություններին համապատասխան աջակցություն տրամադրելու համար, որոնք սույն հանձնարարական-առաջարկությունն իրականացնելու համար նման աջակցություն կխնդրեն:

Հավելված
Rec(2004)6 հանձնարարական-առաջարկության

Ներածություն

1. Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի («Կոնվենցիա») 50-րդ տարեդարձը նշելու համար Հռոմում 2000 թվականի նոյեմբերի 3-4-ը կայացած նախարարական կոնֆերանսը[1] ընդգծել է Կոնվենցիայով ամրագրված իրավունքների և ազատությունների պահպանումն ապահովելու անդամ պետությունների առաջնային պատասխանատվությունը, որոնք պարտավոր են ունենալ անհրաժեշտ իրավաբանական գործիքներ, որպեսզի կանխեն խախտումները և անհրաժեշտության դեպքում վերականգնեն խախտված իրավունքները: Դա, մասնավորապես, պահանջում է, Կոնվենցիայի 13-րդ հոդվածին համապատասխան, ներդնել Կոնվենցիայի բոլոր խախտումների համար իրավական պաշտպանության արդյունավետ ներպետական միջոցներ[2]: Մարդու իրավունքների եվրոպական դատարանի («Դատարան») դատական նախադեպը[3] զարգացրել է Կոնվենցիայի անդամ պետությունների համար պարտադիր այս պահանջի կիրառման շրջանակը՝ հատկապես նշելով.

---

[1] Մարդու իրավունքների վերաբերյալ նախարարական կոնֆերանսի թիվ մեկ Բանաձևի 14 (i) կետ («Ազգային և եվրոպական մակարդակներում մարդու իրավունքների պաշտպանության ինստիտուցիոնալ և ֆունկցիոնալ իրականացումը»), Բաժին A («Բարելավել Կոնվենցիայի իրականացումը անդամ պետություններում»):

[2] 13-րդ հոդվածը նշում է «Յուրաքանչյուր ոք, ում Կոնվենցիայով ճանաչված իրավունքները խախտվել են, իրավունք ունի որևէ ազգային ատյանում իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի»: Հարկ է նշել, որ սույն հավելվածը չի պարունակում հատուկ ընթացակարգային երաշխիքները, որոնք բխում են Կոնվենցիայով երաշխավորված նյութական իրավունքներից, ինչպիսին օրինակ 2 և 3 հոդվածները:

[3] Տե'ս, օրինակ, Կոնկան ընդդեմ Բելգիայի գործով 2002 թվականի պետրվարի 5-ի վճիռը (64 և հաջորդող կետերը):

- 13-րդ հոդվածն ապահովում է ներպետական իրավունքում պաշտպանության միջոցների գոյությունը, որը թույլ է տալիս Կոնվենցիայում ամրագրված իրավունքները և ազատությունները պաշտպանել.

- Այս հոդվածը, հետևաբար, պահանջում է, որ լինի իրավական պաշտպանության միջոց, որը հնարավորություն է տալիս ըստ էության քննարկել Կոնվենցիայի վրա հիմնված բողոքը և համարժեքորեն վերականգնել խախտված իրավունքը: Այս պարտավորության շրջանակը տարբերվում է կախված դիմողի հայցի (դիմումի) բնույթից: Այնուամենայնիվ, իրավական պաշտպանության պահանջվող միջոցը պետք է արդյունավետ և իրական լինի ինչպես իրավունքում, այնպես էլ պրակտիկայում:

- Սա ենթադրում է, հատկապես, որ այդ միջոցները խոչընդոտեն Կոնվենցիային չհամապատասխանող միջոցառումների կատարմանը, որի հետևանքները պոտենցիալ անուղղելի են:

- Մարմինը, որի մասին խոսվում է 13-րդ հոդվածում, պարտադիր չէ, որ լինի դատական մարմին, բայց նրա լիազորությունները և նրա կողմից տրամադրվող երաշխիքները պետք է համապատասխան լինեն գնահատելու համար, թե ինչքանով է նրա կողմից տրամադրված իրավական պաշտպանության միջոցն արդյունավետ:

- 13-րդ հոդվածի իմաստով «իրավական պաշտպանության միջոցի» «արդյունավետությունը» կախված չէ այն բանից, թե ինչքանով է այն դիմումատուի համար նպաստավոր որոշման հանգեցնելու, ընդհակառակը, այն նվազագույնս պահանջում է, որ գործն արագ քննարկվի:

2. Մոտ անցյալում հատուկ շեշտվել է դատավարության գերազանցող տևողության կապակցությամբ պաշտպանության միջոց ունենալու կարևորությունը[4], հիմնախնդիր, որը Դատարան ներկայացված բազմաթիվ գանգատների հիմքում է, նույնիսկ, եթե այն միակ հիմնախնդիրը չէ:

3. Դատարանն առճակատվում է մշտապես աճող գանգատների հետ: Այս իրավիճակը վարկաբեկում է համակարգի արդյունավետությունը երկարաժամկետ կտրվածքով, ուստի և պահանջում է անդամ պետություններից

[4] Կույլան ընդդեմ Լեհաստանի գործով՝ 2000 թվականի հոկտեմբերի 26-ի վճիռ:

ուժեղ հակազդեցություն[5]: Հենց հստակորեն այս համատեքստում է իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի առկայությունը հատուկ կարևորություն ստանում: Իրավունքի պաշտպանության առկա ներպետական միջոցների բարելավումը մեծ հավանականությամբ դատարանի աշխատանքի վրա կունենա թե' քանակական, թե' որակական ազդեցություն՝

- Մի կողմից, քննարկման ենթակա գանգատները պետք է որ պակասեն, ավելի քիչ դիմումատուներ ստիպված կլինեն Դատարան գանգատներ ներկայացնել, եթե նրանց բողոքները բավարար չափով խորապես քննարկված լինեն ազգային ատյաններում,

- Մյուս կողմից, Դատարանի կողմից գանգատների քննարկումը կդյուրացվի, եթե նրան ներկայացված գործերը նախօրոք ըստ էության քննարկված լինեն ազգային որևէ ատյանի կողմից՝ շնորհիվ իրավական պաշտպանության ներպետական միջոցների բարելավման:

